



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines



Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>



Digitized by Google

~~Jagannathpur~~

440111 21-X-933


1059

(907)

R U B U H S F C

Հայութեան
=
Հայութեան

Հ Ա Յ Մ Ի Տ Վ Ք Ը Լ



*Tous les discours sont des softises,
Parlant d'un homme sans éclat;
Ce seraient paroles exquises
Si c'était un grand qui parlait.*

MOLIÈRE



Վ Ե Կ Ե Տ Ի Կ

Ս . Պ Ա Զ Ա Ր Մ Խ Ի Թ . Տ Պ Ա Ր Ա Ն

1906

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

G R A D
E R E A V
G C T
B u K r

ԻՐԱՀՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀՆԱԼ

GRAD
EREN
907
02/09/98

ՑԱՆԿ ՀԱՏՈՐԻՍ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

42

Բ

ՑԱՆԿԱՉԱԲԱՆ

- | | | |
|----------|---|---------|
| Գլուխ Ա. | Մամուչ, Կրօնք, Օրէնք, Գիտութիւն, Կրթութիւն, Վարժարան. | 1-79 |
| > Բ. | Աէր, Ճաշակ, Պահանջ, Առվորութիւն . . . | 80-107 |
| > Գ. | Զուարթութիւն, Զանձրոյթ, Հասոյք, Աղօթք . . . | 108-116 |
| > Դ. | Խորամանկութիւն, Կեղծաւորութիւն, Խարեւութիւն, Փառախրութիւն, Ծաղր . . . | 117-141 |
| > Ե. | Ժլատութ. Մատնութիւն, Խարդախութիւն, Ախու, Լրբութիւն, Բամբասանք, Խառնուիլ ուրիշի գործին . . . | 142-163 |
| > Զ. | Բարեկամութիւն, Միութիւն, Անմիաբանութիւն . . . | 164-182 |
| > Է. | Գեղեցկութիւն, Տգեղութիւն, Հարսութիւն, Հայ Ֆեսինիզմ . | 183-190 |
| > Ը. | Բարերարութիւն, Աջակցութիւն, Վաստակ, Արդիւնք, Պարզեւ, Աղքատութիւն . . . | 191-201 |

Էջ

- Գլուխ թ. Ներողաւթիւն, Անէծք Մարդա-
սիրութիւն, Ատելութիւն, Դա-
տողութիւն 202-228
- > Փ. Բարի և վատ համբաւ, Համե-
տութիւն, Պատիւ և գովեստ,
Յոյս, Յուսահատութիւն, Յու-
սախաբութիւն 229-246
- > ԺԱ. Բարիք, Զարիք, Աւերում, Խան-
դար, Արդարութիւն, Համբե-
րութիւն, Խոհեմութիւն, Ճը-
մարսութիւն. 247-260
- > ԺԲ. Բարի և Զար Ծնկերութիւն,
Գաղտնիք, Զրպարտութիւն,
Անարգանք, Խրատք, Որբեր. 261-267
- > ԺԳ. Սփոփանք, Յուշք անցեալ փա-
ռաց, Ժողովուրդ 268-276
- > ԺԴ. Յորդոր, Խիզճ, Աշխատանք,
Մուլութիւն, Պատիժ, Վահա-
նայ, Եկեղեցի, Մահ 277-305
- > ԺԵ. Հաստատակամութիւն, Փոփո-
խամտաթիւն, Անձարակու-
թիւն, Յարատեռութիւն, Վա-
ջասրտութիւն, Դիւցազնու-
թիւն 306-317
- > ԺԶ. Անձնականութիւն, Ապերակ-
տութիւն, Երախտագիտութիւն. 318-328
- > ԺԵ. Մնազք, Մանուկ, Կիր, Պատկ,

Էջ

Գլուխ	Երիտասարդութիւն, Աղջկէ,	
	Մշերութիւն, Թմբութիւն	329-352
> ԺԸ.	Բարկութիւն, Պառակոռում,	
	Կոփւ, Խաղաղութիւն, Տժգու-	
	հութիւն, Պատմական դի-	
	պուածք	353-361
> ԺԹ.	Խօսք ու Գործ, Պանդխոտու	
	թիւն, Գաղթականութիւն, Ա-	
	զատութիւն, Գերութիւն, Հա-	
	լածանք	362-390
> Ի.	Երջանկութիւն, Թշուառու-	
	թիւն, Հպարտութիւն, Բազդ .	391-407
> ԻԱ.	Հաւատարմութիւն, Ազգա-	
	տեցութիւն, Երկմոռութիւն,	
	Հախանձ, Ունայնութիւն,	
	Վատնում	408-418
> ԻԲ.	Ցափտակութիւն, Անիրաւու-	
	թիւն, Բռնակալութիւն,	
	Վրէժխնդրութիւն	419-427
> ԻԳ.	Հայրենիք, Հայութիւն, Տերու-	
	թիւն	428-464

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Առածներ 465

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Թափառելով գրականութեան բուքաստանները, փնջեցի մտքի ծաղիկներ. վարպետ ու ճարտար փնջող մը համարուելու յաւակնոտութիւնը չունիմ: Ճաշակիս թելադրութեան հայմեմատ քաղեցի մեր մտքերուն գեղեցիկը. բայց աւելի՛, կենսականը: Նպատակս գեղեցկագիտութեան էջեր ու պատառիկներ հաւաքել չեր, այլ ամենուն նաշակին եւ ճարտասանութեան օգտակար փաստեր գտնել այն մտքերէն, որոնք գըրքերու երեսներուն մէջ կը շողան. բնական է որ անոնք իրենց ցոլքերով ինծի պէս շատերը հրապուրած են. բայց առաջին անգամ կը փափաքիմ ես ըլլալ խտացու-

ցիչը այդ նոգեւկան գոյներուն . չի խնայելով ջանքը, ինչ որ կը թափէ Վեհնետկեցին իր մուզայիքէ պատկերները յօրինելուն : Աշխատանքիս մէկ մասը – հայկական բաժնը միայն կը հրատարակեմ . Միջազգայինը առ այժմ կը թողում մեռած : Մեր հին եւ նոր մատենագիրները ազգիս գաղափարներուն նամեմատ գրած են . աւելի առաջնորդող եղած են, քան թէ հրապուրող . անտարակոյս հաստորիս մէջ պիտի գտնուին ցուրտ մոքեր, սակայն անոնց բարոյական նոգին տաք է եւ կազմուրիչ . նպատակս եղած է ԱՄԷՆ ԴԱՊԱԿԱՐԴԻ, բարի եւ ազնիւ գաղափարներու տէր ամուսնոց՝ շահնեկան ընել այս հաւաքածոյս : Ողջ հեղինակներէն օրինակ չեմ բերած, քանի որ նախանձի խընդիրը մեր մէջ շատ եւ շատ բւնկած է տակաւին . մեռելիներուն նախանձող չի կայ, անոնց ամենէն գնահատելի գործերը խնծի առաջնորդ առփ . հաստորիս մէջ հարազատ հայ հեղինակին նետ, կը գտնուին նաեւ օտար մոքեր, որ սակայն ի վաղուց մեզի համար հայացած են . Եզորոսը տիեզերահլու-

չակ, հայ չէ, սակայն Թարգմանչին յօրինած տաղաջափական առակներուն առթիւ հիւրընկալուած է։ Իմ այս վիճակը կը դընեմ մեր գրագէտներու գրասեղանին վրայ, Թող հոտուլտան զայս, բուրումը Հայաստանի բուրաստանէն է։



ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՄՈՒԼ. ԿՐՕՆՔ, ՕՐԵՆՔ, ԳԻՏՈՒԹԻՒՆ,
ԿՐԹՈՒԹԻՒՆ, ՎԱՐԺԱՐԱՆ:

1

Բանաստեղծ Ռ. Պատկանեան « Բարի
խրատ » քերթուածովլը մեր գրագէսներուն
շատ բարի ու խելացի խրատներ կու տայ:
Մատենագիրները , մանաւանդ մերազնեայ
մատենագիրները իրենց գրական գործին մէջ
շատ փափկանկատ պէտք են ըլլալ : Բա-
նաստեղծը ըմբռնած է հայ մատենագրի վի-
ճակը , ըմբռնած է թէ հայ մատենագիրը
ինչ կերպով , ինչպէս կընայ սիրելի ըլլալ.
կը յորդորէ .

Հայ Միտքը

1

Դեռ չի գըրած՝ առաջ դու լաւ միտք արա,
Ո՞վ է խեղճիդ զըրուածները առնողը.
Ճեսոյ՝ և այն մասին փոքր ինչ հոգս արա,
Որ քեզ սիրէ քու յարգելի կարդողը.

Բանաստեղծը կը պատուիրէ, յիշել այս
հանդամանքը, կը պատուիրէ չի վստահիլ
անձնական տաղանդին վրայ, պէտք է հայ
մատենագիրը սիրելի լլայ, թէ ո՛չ կ'ըսէ.

Եղիր թէկուզ Խորենացի, Եղիշէ, —
Զը սիրելով քեզ՝ զըրֆերըդ չեն գընիլ:

Կր զգուշացընէ մեր մատենագիրները.

Գըրքիդ մէջ պարսաւանք մի տալ Հային,
Հայը խըրատ (թէեւ խելօք) ատում է.
Մի ծիծաղիլ նորա տիմար գործերին,
Որ նա աւանդ հօրենական կարծում է.

(Պատմաբանութիւն էջ 69).

Փառասէր հեղինակը այս զգուշութիւնը
ընելով, շողոմած կ'լլայ մեր տահմային հիւ-
ւանկութիւնները. բայց լաւ է պահ մը ա-
աելի լլալ նազարեանցի և Գ. Արծրունիի
պէս, փոյթ չէ, թող մեր հեղինակները, մա-

նաւանդ հրապարակագիր գրագէտները ար-
համարհեն այդ տեսակ զգուշութիւնները, ինչ-
պէս արհամարհած է նոյն ինքն բանաստեղ-
ծը և այսօր Ռուսահայ ամենէն սիրուած քեր-
թողն է գարձած և պաշտիլի ամենուն։ Հա-
սարակութիւնը անաշառ մատենագրին վի-
րահաս սուրէն միամտօրէն կը խորշի, կը
զգուի, բայց վերջապէս շուտով կ'ըմբռնէ իր
բժշկին բարի նպատակը ու ատելութիւնը
սիրոյ կը փոխէ։ Փաթիպան՝ յիշեալ երգի-
ծական քնարին վերջին առևները կ'որոտա-
ցընէ անաշառութեան, ճշմարտութեան ձայ-
նով. բանաստեղծը՝ հայ գրչին կը պատուիլէ
ատել, ինչ որ ատելի է։

Դու նըմանիր ազատախօս թոշնակին,
Որ երգում է անանձնասէք յոյսերով.
Ինչո՞ւ ձիրքը քու երկնային ու հոգին,
Զբաղեցնում ես երկրի չընչին գործերով...
(Նոյե եջ 70).

Կրօնքի իսկութիւնը շըմբռնող հայուն՝ ուղ-
ղուած են այս երգիծական սողերը.

Մաքուր կրօնն է, ասեն, պասը,
Ժամուց տալը յարգոյ հարց,
Կուշտ ուտելը, ճոխ ապրիլը —
Այս է վախճան մեր կենաց.

(Ոտանաշորներ էջ 77).

4

Հայկական բարեպաշտ, եկեղեցաւէր, կրօ-
նասէր գեղեցիկ յատկութեան երաշխաւոր
են այս տողերը.

Նա քաջ գիտէր, որ Հայը յանուն իր սուրբ հա-
(ւատին)
Միշտ պատրաստ է զոհելու գանձը, տունը և
(որդին).
Աւանդութեան մըտերիմ իր պաշտելի հին նախ-
(նեաց'
Համհաւասար սըրբերուն յարգում է հոգեւոր
(հարց.
(Նոյն էջ 116)).

5

Ամէն գիրք մի և նոյն արժէքը չունի :
Ուսկի է ոսկետառ Եղիշէի Վարդանանց պա-
տերազմի նկարագրական գրքուկը, որուն եր-
գեր նուիրած են Գամառ Քամիպա և ուրիշ

ազգային բանաստեղծներ։ Ուկիրերան եկեղեցական բեմէն ոսկի բառեր կիրաւեր ու ցաներ է հաւատացիալներու սրաերուն վըրայ. իսկ մեր Եղիշէն պատերազմի նահատակներու դաշտին մէջ ընկճեալ հայութեան հնչեցուցեր է իր ոսկի շեփորը։ Կ'ըսէ Քաթիպա.

Գեղ կարդալով՝ կը մոռանամ
Ես թերութիւնք մեր ազգին,
Դէպ Հայ եղբարքս գութ ու սիրով
Միշտ կը լըցուի իմ հոգին . . .
Եղիշէն Հայք կարդալով,
Նոյն յոյսերով կը լըցուին, . . .
Հայ պատանի շուտ շուտ կարդա
Այս գըրքուկը ոսկետառ,
Որ համոզուիս՝ թէ մեր Հայը՝
Կորչելու ազգ չէ՛ իսպառ։
(Նոյն էջ 133-4).

6

Բանաստեղծը՝ Հայ օրիորդներու համար
Կ'ըսէ.

Հայ ախջկան պէտք չէ՛ գուրցել
Զաթուա-փաթուա ֆռանցուզնակ,

Կօգուէ եփօր կըրել – կարդալ
Թէմիզ գիտէ նա հայնակ :

(Նոյն էջ 299).

7

Գրականութիւնը ազգի մը գեղեցիկ փառ-
քերէն մին է. Պատկանեան կը յարգէ զայն
իր այս երկու տողերով .

Անմահ մեր փառքը կըլայ կըտոր թուղթ,
Որին կաւանդենկ սուրբ միտք ու խորհուրդ :

(Նոյն էջ 329).

8

Բայց ամէն թուղթ ու գրիչ նոյն տպաւո-
րութիւնը չունի.

Խալէմ կայ՝ մարդու սիրտ կը ցընծացընէ,
Խալէմ կայ սիրտը արուն կը լըցնէ :
(Նոյն էջ 383).

9

Սակայն գիտութիւնը, գրիչը խեղճ գրա-
գէտին գրպանը կը ծակէ, անոր սկրտը ծակ-
ծկուած կ'ըլլայ նիւթական տաժանքներու

սլաքներով։ անոր կեանքը շատ չարաստանջ կ'ըլլայ, ու ճակատագիրը յաւիտենական-օրէն տառապանք, քաղցածութիւն. որուն մեծ զոհեր եղան Պէշիկթաշլեան, Դուրեան, Բափ-Փի, և այլ շատեր. որոնց մէջ ինքզինքը կը դնէ և Պատկանեան, «ա իր մէկ կեղծ անունով, կը յիշատակէ».

Մինակ Սիւլիւկն է, որ ինատ կ'անէ,
իմիշ՝ ուսումն է վեր ամէն բանէ ...
խեւ խելքըդ աղեմ, խեղճ Սիւլիւկ աղա
Որ մինչի օրըս մընացիր տղայ.
Հալիսը ունեցաւ միւլք, ոիսաք, քառէթ,
Տու չունիս հարուր ու քառառւն մանէթ.

(Նոյն էջ 341).

10

Հաւատքի մասին՝ Բաֆֆի կը յիշատակէ
քնքուշ միջադէպ մը։ իր « Խենթի » հերոս-
ներէն մին՝ խաշօն, ունի չքնաղ կոյս մը
Սօնա անուն, զոր հարուստ ազնուական
քուրդ մը կը յափշտակէ։ Սօնան անոր
ձեռքէն ազատելու համար, կը կաշառէ քըր-
դուհի մը. իր գլխի արախչինի (թէփէլուն)

ոսկի դրամները կու տայ անոր, որ իրեն թոյն գնէ. կը կատարուի փափաքը։ Սօնան թոյնը առնելով կը մեռնի։ Քրդերը զայն իրենց գերեզմանին մէջ չեն թաղեր, վասն զի ան յամահելով քրիստոնեայ մնացեր է, երբէք չեն կրցած իր հաւատքը փոխել տալ։ նա միշտ զիմապրեր է ըսելով.

Ես քրիստոնեայ եմ. հաւատս չեմ փոխի.
(Խենք, էջ 111).

Մարմինը անթաղ կը մնայ. քիւրտ մը,
խմանալով որ ան խաչօյի աղջիկն է, զայն
կը տանի իր հօր. եկեղեցականները զայն չեն
թաղեր իբրև անձնառպան պիղծ համա-
րելով. հայրը կը սահիպուի իր տան մէջ թա-
ղել իր սիրելի Սօնային դիակը, որ իր կու-
սութեան ու հայ հաւատքին համար անձնա-
ռպան եղեր էր։

11

Յաւիտենական տրտունջ մըն է հայ ժո-
ղովրդեան տգիտութիւնը. Բաֆֆի կը գրէ.

Մեր ժողովուրդը խաւարի մէջն է. պէտք է

դուրս բերել նրան դէպի լոյս աշխարհ։ Դպրոցը
միայն կը փրկէ նրան։

(Խեթք, Էջ 226)։

12

Բայց ինչու յուսահատիլ, կը գտնուին
ուղղամիտ առաջնորդներ, որոնք կ'ուզեն
կրթել ազգը, թէեւ արդիւնքի քաղումը ա-
պագայի խնդիր է։ Կ'ըսէ Ռաֆֆի։

Մենք, այժմ միայն սերմանացանի պաշտօն
պիտի կատարենք, բայց ոչ հնձողի։ Հունձքը
պիտի թողնենք ապագայ սերունդին։

(Խեթք Էջ 305)։

13

Ասկայն կրթելու համար, կրթուած ա-
ռաջնորդ պէտք է. ախուր է Ռաֆֆիի խօսքը։

Մենք որ յանձն ենք առել ժողովուրդ կրթե-
լու գործը, դեռ եւս անկիրթ ենք, դեռ եւս շատ
քան պիտի սովորենք նոյն ժողովրդից։

(Խեթք Էջ 305)։

14

**Մեր վարժարաններու դաստիարակութեան
մասին Գ. Արծրունի կ'ըսէ.**

Մեր դաստիարակութեան արժանաւորութիւնը
այն է, որ սպանում է երեխի մէջ առողջ միտք,
բարոյականութիւն և մարմինը։ Ուսումնարանի
մէջ դաստիարակութեան ուղղութիւնը անտա-
նելի է. տան մէջ ուսումնարանից էլ վատ։

(Գ. Արծրունաց աշխատութիւնները
Հաս. I. էջ 10-11)։

Եւ շատ լաւ զիտել կու տայ. « որ ծնող-
ներից պէտք է պահանջել աւելի հոգացո-
ղութիւն իրանց երեխերանց համար քան թէ
ուսումնարանից »։ Սակայն հայ մայրերու
կրթութիւնը քանի որ խիստ սահմանափակ
է . . .

15

**Գ. Արծրունի բնական գիտութեան ու-
սուցումը մեր ազգին շահեկան համարելով,**
գեղեցիկ առաջնորդող յօդուած մը իբրեւ
գրուագ այդ գիտութեան նոսիրած է. Ագոլֆ
կոլաչէկէ, կարլ Ֆոխտէ շատ մը հանճարեղ

փաստեր կը բերէ, և յօդուածը կը վերջացընէ այս առղեքով.

Բնական գիտութիւնները ազատում են մեզ սնութիապաշտութիւնից և նախապաշարմունքներից, որոնց մէջ եթէ կմնայ ազգը, նա չէ կարող անել ոչ մի քայլ դէպի յառաջադիմութիւն:

(Նոր Էջ 13-14).

Եւ պէտք է գիտնալ որ յառաջադիմութեան համար ոչ միայն շատ բան պէտք է ամբարել մեր գլխին մէջ, այլ անկից շատ նախապաշարումներ, առասպելական ճշմարտութիւններ արտաքսելու է. այս առթիւ Գ. Արծրունի կը յիշատակէ Հերշելի սա նախադասութիւնը. թէ. « Յառաջադիմութեան համար ոչ թէ միայն շատ բաններ է հարկաւոր ուսանել մարդուս, բայց և հարկաւոր է նրան շատ բաններ մոռանալ » : Բնական գիտութիւնը ապահովապէս այդ աւելորդ « շատ բանները » մեզ մոռցընել կու տայ:

16

Արծրունին՝ աղջկանց կրթութեան նուիրած իր մէկ առաջնորդող յօդուածին մէջ կը գրէ.

Եւրոպացիների կրթութիւնից մենք սեփական նացրել ենք մեզ միայն արտաքին կողմը. իսկ կրթութեան հիմունքը դարձեալ ասիականն են: (Նոյն էջ 20).

Աւանդական ճշմարառութիւնն դարձաւ այն խօսքը որ կ'ըսուի թէ հայր ուր որ երթայ հետը կը տանի եկեղեցի ու մամուլ. և անոր համար երբ տիսուր պարագաներու առթիւ՝ մեր գաղղթավայրերը բազմացան, սկսան աճիլ նաև պարբերական թիրթերը, առանց սակայն մտածելու որ

Օրագիր հրատարակելը հայերի մէջ նշանակում է իւր անձը քաղցած մահին զոհել: (Նոյն էջ 105).

Թէեւ գրեթէ ամէն անփորձ հրատարակիչ կ'ըմբռնէ այս նախադասութեան լեզի ստուգութիւնը:

Արծրունի հայութիւնը կամ ազգասիրութիւնը եսական ճղճիմ ու ստորին վիճակէն

դուրս հանելու և վեր բարձրացընելու դիտումով, գրած է.

Օրագիր հրատարակեցէք ոչ թէ այն նպատակով, որ ընթերցողներից «հայասէրներ» և «ազգասէրներ» շինէք, – բայց այն նպատակով, որ հայերից «մարդիկ» շինէք:

(Նոյն էջ 105).

19

Գ. Արծրունի իր գրական գործունէութեան արշալուսային շրջանին, երկար յօդուածով ցոյց տուած է որ չունինք նոր գրականութիւն, այլ ունինք հինը. բայց այն մեր կենսական նոր պահանջներուն ոչ նպաստաւոր է և ոչ ալ միջոց մը յառաջադիմութեան. կը գրէ.

Նոր գրականութիւն չկայ, իսկ հին գրականութիւնը թէպէտեւ կայ և հարուստ է մինչեւ անգամ, բայց մեր այժմեան հարկաւորութիւններին յարմար չէ, չէ կարող բաւականացնել մեր այժմեան պահանջմունքին ու մեր մտաւոր և նիւթական աշխատանքին օրինաւոր ուղղութիւն չէ կարող տալ:

(Նոյն էջ 137).

20

Ու գրականութեամբ հարուստ, իսկ նիւթական պահանջներով սովլեալներու մասին գրական այս մարգարէութիւնն ալ կ'ընէ.

Մեր մէջ ոչ ոք չէ կարող ապրել ու իւրեան կերակրել ոչ հայկական գրքեր գրելով կամ թարգմանելով, և ոչ եւս հայկական օրագիր հրատարակելով:

(Առյա էջ 137).

21

Հայրենիք դարձող ուսումնաւարտ ուսանողներու համար՝ Արծրունին կը գրէ.

Հայրենիք վերադարձած ուսումնաւարտ երիտասարդներից շատերը, թէ բժիշկներ, թէ իրաւաբաններ, թէ բնագէտներ, այնքան թոյլ, երեխայական զարգացում ունին, որ ոչ թէ միայն գրել չեն կարող մի օրինաւոր յօդուած, այլ խօսակցութեան մէջ եւս չեն կարող որոշ մէկ միտք յայտնել:

(Առյա էջ 158).

22

Յառաջադիմութեան, հասարակական սթա-

փեցուցիչ զարգացումին համար պէտք է հայ գիտնականներու բանակներ , ուսեալներու գործունէութիւն . հարկաւոր է այս .

Եթէ հարկաւոր ենք համարում մեր մէջ ուսեալ մարդիկ ունենալու , — կարող ենք այդ բանին հասնել միայն մի միջոցով . այն է գումարներ կազմել , ընկերութիւններ հիմնելով : — Ուրեմն ի՞նչի չենք հիմնում :

(Նոյե Էջ 179) .

Բայց կը շարժին , ու հիմնելու փափաք կայ , սակայն գործ , արդի՞նք . . .

23

Պարբերական օրագրութեան մասին Արծորունիի սա նախաղասութիւնը շատ ճիշդ գրուած է .

Օրագրութիւնը երկսայրի զէնք է : Վաս կերպով գործածված նա մնաս կարող է բերել հասարակութեանը . հասկանալով իւր հասարակական պաշտօնը , նա օգուտ է բերում ժողովը . . .

(Նոյե Էջ 193) .

24

**Ու գրագէտներու համար հիանալի է սա
բարոյական պատուէրը.**

Գրողը չ'պէտք է նայէ իւր հակառակորդի վե-
րայ ինչպէս թշնամու վերայ :

(Կոյճ Էջ 194).

25

**Կարելի է յարգել Արծրունիի սա սկրզ-
բունքը.**

Հայերի մէջ շատ յօդուածներ են տպւում, ու
րոնք ոչ մի ուղղութիւն չունենալով, արժանի
չեն քննադատութեան :

(Կոյճ Էջ 195).

26

Արծրունին եւս ունի իր հաւատքի դրօշը.

Քրիստոնէութիւնը ճշմարտութիւն է, – և նա
բացարձակ յայտնեց իւր ուսումը մարդին և
կնոշ հաւասարապէս :

(Կոյճ Էջ 221).

Քրիստոնէութեան մասին հիանալի ճշմարտութիւն կը բավանդակեն Արծրունիի սատողերը.

Քրիստոնէութիւնը, կամ աւելի լաւ ասեմ Աւետարանը, բովանդակում է իւր մէջ երեք մեծ գաղափար, սէր, հաւասարութիւն և ազատութիւն, որոնք ազգերի հասարակական կեանքում ծնել են աշխատանք, օրէնք և անհատութիւն:

(Նոյն էջ 301).

Մեր կրօնքի, Քրիստոնէութեան համար Գ. Արծրունի շատ վեհ գաղափարներով կը խօսի. նա կը յայտնէ իր այս համոզումները.

Քրիստոնէութիւնը վեր է քան աստուածաբանութիւնը ... - Քրիստոնէութեան սկիզբները, այսինքն ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն ամեն մարդի, ամեն կազմվածքի, ամեն կլիմայի, ամեն ազգի, ամեն ցեղի, ամեն ժամանակի համար ճշմարտութիւն են և կմնան ...

(Նոյն էջ 314).

Գ. Արծրունի 1870 ապրիլ 27ին, ներկայ կ'ըլլայ վենետիկի Միաբաններուն ի պատիւ իրենց հիմնադրին կարդացուած ճառախօսութեան, այդ ճառը գրաբար ըլլալով, զայն չի կրնար ամբողջապէս հասկնալ, սակայն ըմբռնած ըլլալով որ Միհիթարայ ամբողջ գործունէութիւնը կենդանութիւն է, նոյն հանդէսը նկարագրած իր գրութեան մէջ սա դիտողութիւնը կ'ընէ.

Ինչի՞ մի կենդանարար երեւոյթը պատմվում է մեռած լեզով:

(Կոյք Էջ 239).

Երբ տեղ մը մեռած է այս լեզուն, բնականարար պէտք է յարգուի Արծրունիին գաղափարը, որ սակայն Միհիթարեաններուն համար չէ, վասն զի մեզի համար մեռած չէ այդ լեզուն:

Գրիգոր Արծրունիի մէկ յօկուածին մէջ մեր մամուլը խիստ լաւ կը քննակատուի.

Մեր գրական ասպարէզում գործող մարդիկը, ոչ թէ միայն չպատրաստված, այլ և չպատրաստվող գրողներ են:

Եւ լաւ ու օգտակար օրագրական մամուլ մը ունենալու համար, պէտք է գիտնալ, որ.

Ազգային օրինաւոր օրագրութիւնը միայն այն ժամանակ կհիմնվի, երբ խմբագրութիւնը կազմող գրողներից ամեն մէկը գիտութեան մի որ և է ճիւղին մասնաւորապէս տեղեակ կլինի:

(Նոյն էջ 311).

31

Մեր աշխարհաբար լեզուի մասին Գ. Արծրունի կը գրէ.

Մեր աղքատ, անտաշ աշխարհաբարը նմանապէս արդիւնք է մեր աղքատ հասարակական կեանքի:

(Նոյն էջ 338).

32

Մի և նոյն հրապարակագիրը մեր հեղինակներուն համար սա գեղեցիկ յորդորը յայտնած է.

Հեղինակը պիտի հասարակութեան և ժողովրդի կեանքի կենսական երեւոյթների մէջ միշտորդ լինի:

(Կոյք էջ 392).

33

Ճռոռո՞մ ծրագիրներով պերճաշուք և արդիւնքով սնանկ վարժարաններուն համար կարելի է գործածել Յ. Պարոնեանի այս երգիծանքը.

Վարժարաններու մէջ ամեն բան կը գտնվէր բացի ուսումնեացի:

(Ագդ. Զոյեր էջ 25).

34

Պարոնեան դատարկ գրքերը կը հետնէ այս տողերով.

Լաւագոյն դասագրքերն անոնք են, որ շատ վաստակ կը ձգեն անոնց հեղինակներուն:

(Կոյք էջ 196).

35

Կրթարաններու մէջ ծեծը դաստիարակու-

թեան գործիք ընող կոպիտ վարժապետներուն համար, հեղնական առած կարելի է ընդունիլ Պարոնեանի առ Միսաքեան ընծայած այս երկու տողերն.

Ճեմարանի աշակերտներուն դաս տալու տեղ սկսաւ ապտակ տալ:

(Կոյճ Էջ 209).

36

Անհոգի, անզաղափար, ունայնամիտ սահայն կոկիկ գրուածներու առթիւ, կրնանք գործածել առ Միսաքեան ուղղեալ Պարոնեանի հետագայ այս տողերը.

Խօսքերու վարսավիրայ մ'է, որ ասդիէն անդիէն խօսքեր հաւաքելով զանոնք կը սանտրէ, կը կոկէ, անուշաբոյր իւղով կօծէ և հրապարակ կը հանէ, և երկու տողով հասկանալի բան մը իւր գրչին թակ երկու էջի մէջ անհասկնալի կըլլայ:

(Կոյճ Էջ 213).

37

Սովալլուկ խեղճ խմբագիրներու երգիծական նկարագիրը կարելի է համարել Պարո-

Նեանի սա տողերն . կ'ըսէ . Աստուած աշխարհ-քիս վրայ անպէտ բան չէ ստեղծած .

Խմբագիրներ ստեղծած է՝ ցոյց տալու համար թէ մարդս չէ կարող իւր ճակտին քրտինքովը ապրիլ :

(Նոյն էջ 321) .

38

Իսկ կրթական առաջնորդներու , աղքատ դասատուներու դիրքը կը հեգնէ այսպէս .

Քաղաքագէտներն մնժ գործ մը ըրած կըլլան , եթէ կախվելու անձերն թուրքիա խրկեն դասա-տուութիւն ընելու :

(Նոյն էջ 324) .

39

Եւ յետոյ սա ախուր երգիծանքն ալ կը կարդանք .

Վարժապետի , տնօրէնի մը համար քիչ մը ստա-խօսութիւն և քիչ մ'ալ չողոքորթութիւն ան-հրաժեշտ պէտք է , և այն տնօրէնն , որ այս եր-կու առաքինութիւններէ զուրկ է՝ անպատճառ օր մը հեռանալ պիտի ստիպվի այդ ասպարէ-գէն :

(Նոյն էջ 327-8) .

40

Ու տպարանները որ մեր կրթութեան մտաւորական զարգացումին հոգի կը ներշնչեն, անոնց մասին ալ Պարոնեան կը նուիրէ սա երկտողը, ակնարկելով Միւհէնախիսեանի տպարանը.

Ինչպէս բոլոր հայ տպարանները, չէր կարող իւր ծախփը գոցել հայերէն հրատարակութիւններ ի լոյս ածելով ... կեցցէն ազգային գրականութիւն և անօթութիւն:

(Նոյն էջ 349).

41

Հ. Ալիշան բնիկ և օտար կրթարաններու մասին սա գեղեցիկ գաղափարը յայտնած է.

Օտար վարժապետք թէ շատ՝ խնամակալ եւեթ են աշակերտացն, իսկ ազգայինն հայր և դայեակ:

Եւ առաջ տանելով իր գրութիւնը կ'ըսէ. «Նոքա ձեռամբ՝ սա սրտիւն ջամբէ. նոքա բազում այն է զի վարձկանք են ըստ Տեառն բանի, իսկ սա հովիւ ճշմարիտ՝ որ ոչ ինայէ յանձն վասն հօտին սիրելոյ ... »:

(Բագրագեա 1846 էջ 345).

Հ.

Հ. Ալիշան կրօնական ոգեւորութեամբ բռնկած, երբ նկատողութեան կ'առնէ համալսարանական ինչ ինչ սկզբունքները որ հոգեկան կործանում կը պատճառեն, կը զգուշացընէ հայ աշակերտները.

Փախերոնուք հայրենիք իմ, փախերուք մանկուք թորգումայ յայդպիսեաց ուսուցչաց, զի մի վարձ աշակերտութեան ձերոյ հոգիք ձեր լինիցին:

Նախ քան այս յորդորը՝ կը պարզէ համալսարանի ազդեցութիւնը. հայրենասէր է Հ. Ալիշան, սակայն հայ կրօնքը և հոգեկան սկզբունքը քանի որ համալսարանի մէջ վլտանգի ենթարկուելիք կը համարի, շատ երկիւղածութեամբ կը զգուշացընէ։ Ահա իր անձնական ըմբռնումը. իր գրութիւնը իր գաղափարներուն թարգմանը թող ըլլայ. «Մի ծանր թուեսցին ձեզ բանքս թէպէտ և ահաւորք. օրինակք առաջի կան մեր յԵւրոպա՝ որում ի գովելիսն ջանամք նմանել. քաջ իսկ քննեսցուք զնա, զի մի գայթակղութեան մեզ եղեալ քար՝ փոխանակ շի-

նութեան առ նովաւ գթիցեմք : Ահա համալսարանք գերապանծք և համբակք լրացեալք վարժիւք, և յաղթանակաւն իսկ պսակեալք . այլ երանի՛ թէ բնաւ և չէր իսկ մտեալ նոցա ընդ դպրոցին դուռն . երանի՛ թէ ընդ պարզամիտ խուժանին շփոթէին բաղդիւն այլ ոչ հոգւովքն ընդ շարախուժ դիւաց , բաժակ գեղեցիկ թուին նոքա լի ամենայն զզուանօք , քան զարտաքին երեւոյթն և զպսակսն ինչ չունելով աւելի ի բարեաց . յոր եթէ մօտ մատչիցիս , ժահք ապականեալ վարուց անարգել արբանեկութեամբ կրից՝ ընդ ուղիղսդ բաղխիցին , հոտ մահուն աստուածդիտութեան զսիրա հարկանիցէ , և ընդ մեղու օրինակաւ թոյն ամենադառն սփոհիցի ... առաջք նոցա զրախս փափկութեան և վերջք նոցին աւերածք մահու... »

(Բագմավեպ 1846 էջ 357).

43

Յանձնապաստան գիտուններու , համալսարանականներու և վարիչներու մասին Հ. Ալիշան եռանդուն կրօնականութեամբ կը գրէ.

Ի զուր են համալսարանքդ և նախաթոռք կըր-
թարանաց ձերոց . սուտ պարծին փիլիսոփայքդ՝
որ լուսով բանին իւրեանց ասեն առաջնորդել
մարդկութեան . երկիւղ տեառն է կարապետ մը-
տաց :

(Նոյն էջ 358) .

44

**Վերոյիշեալ տողերը գրողը կը պատուիրէ
մեր գաստիարակներուն .**

Ցուցէ՛ք նոցա (աշակերտաց) գճանապարհս զոր
կոինեցին աշակերտք Մեսրովպայ և Սահակայ և
Ներսիսի , զորոց զաթոռն ունիք :

(Նոյն էջ 358) .

45

**Հ. Ալիշան կը խրախուսէ. զհայ մանկտի
ուսանողները .**

Քաջալերեանց արդ քաջալերեաց ուսումնավարժ
մանկտի Հայաստանեայց . դոյզն և սակաւ են
Ժամանակք քրտանց և վաստակոց , յաւերժա-
կանք են վայելք հանգստեանն :

(Նոյն էջ 374) .

46

Հ. Ալիշան իր Ռափայէլեան վարժարանի

աւարտավարժ սաներուն ուղղած մէկ ճառին
մէջ կը յայտնէ սա միտքը.

Անսպառ են գիտութիւնք, և մարդս միշտ համ-
բակ, և միշտ կարօտ և կարող յուսանել. քայլ
զոր յառաջէ նա ի գիտութեան՝ խոստովանի
զյետամնացութիւնն. ասպարէզ զոր կարճէ՝ նոր
և ընդարձակագոյն եւս բանայ նմա. և որ յե-
րէկն գիտուն էր ըստ ժամուն կարծեաց կամ
պիտոյից՝ այսօր ընդ տգէտս դասի՝ եթէ ոչ ժո-
ղովեաց զսերկեանս գիւտ:

(Բագմագեա 1848 էջ 166).

47

Հ. Ալիշան իր աշակերտաց կը յիշեցը-
նէ որ ինչպէս ուսանողք, այսպէս և ուսու-
ցիչք կրնան թերանալ. երկու կողմանէ պէտք
է ներողամսութիւն, և աշակերտք աւելի նե-
րողամիտ պիտի ըլլան, վասն զի ծանր է
դաստիարակին պաշտօնը.

Քան զդաստիարակաց արուեստ չիք ինչ դժբն-
դակ և բազմազգոյշ:

Ինքը իբրեւ փորձ կը խօսի. «Ո՛հ, ո՛հ,
զի ի փորձոյ ուսայ. որքան ամենօգուտ
իր, այնքան խիթալի »:

(Նոյն էջ 166).

48

Կրօնականին հոգին է բարեպաշտութիւնը .
հայը միշտ երկիւղած ասառածասէր եղած
է . Հ . Ալիշան հայուն բարեպաշտութեան
վրայ կը գուրզուրայ . այդ առաքինութենէն
վեր բան չի կայ . հայրենասէր բանաստեղծը
իր սաներուն կը պատուիրէ .

Բարեպաշտութիւն, ո՛ սիրելիք, բարեպաշտու-
թիւն եւեթ . « Այս է մարդն ամենեւին » :

Սա անփոխանակելի է . ասոր՝ եթէ հարկ
ըլլայ, Հ . Ալիշան կը պատուիրէ որ զոհենք
նոյն իսկ սիրելի Հայաստանը . կ'ըսէ աշա-
կերտներուն որ բարեպաշտութիւնը – « Սա
լիցի և ձեզ զլուխ ըղձալեաց, ընդ որում ոչ
փոխանակեսջիք և ոչ մի ինչ . այլ, ոհ, և
զհայրենիս անգամ, եթէ հարկ ինչ այնպէս
լինէր ապախտ առնել ի գիւտ սորա , ես
ինքն փութացուցանէի զձեզ զոհել և զհայ-
րենիս . ես ինքն համարձակեալ կորզէի և
տայի ձեզ զջահսն եթերականս՝ հուր հա-
րուլ խանձել զՀայաստան և ծխով նորին
որպէս զհրեշտակն գեղէովնեան վերանալ ի
յերկինս » :

(Նոյն էջ 183) .

49

**Հ. Ալիշան պարզ և ժողովրդական բա-
ցատրութիւններով ապացուցած է, որ**

Օտարի կրթութիւնն կամ քիչ կամ ոչինչ կը
յաջողի, կամ կրթուողն իր ազգային ոգին կը
կորսընցընէ:

(Բագմ. 1849 էջ 34).

50

**Ազգային կրթութիւնը՝ ազգասիրութեան
հմայքը կը ներշնչէ հայ պատանիներուն.**

Լաւ դաստիարակութիւնը կ'իմացընէ մարդուս՝
որ ինքը միայն իրեն համար, կամ միայն իր ըն-
տանեացը համար չէ երկրիս վրայ. աւելի մեծ
ընտանիք մ'ալ ունի որ է Ազգը:

(Բագմ. 1849. էջ 129).

51

**Կրօնքը, հաւատքի տարածայնութիւնները
ներքին ահռելի կոխներու և երկպառակու-
թեանց պատճառ եղած են:** Հ. Ալիշան կը
յորդորէ.

Զանանք որ ամէնքս ալ միակրօն ըլլանք ուղ-
ղութեամբ, բայց քանի որ փափազնիս չէ յա-

Ճողած՝ նախ մէջերնէս ատելութիւնը վերցընենք :
(Բառմ. 1849 էջ 132).

52

Մինչդեռ չի կար տպագրական այն մուգական գիւրութիւնները, մենք Հայքս գրական մեծ խանդավառութեամբ ճոխացուցեր ենք հայ մատենագրութիւնը. թանդարաններու մէջ այժմ դիզած ենք նախնեաց գրչագիրները, որոնք վկայ են մեր քրտնաշան գրագէտներու բեղմնաւոր գործունէութեան։ Հայ միաք ու լեզուն կարծես երկինք օրհնած է. և այսպէս կ'երգէ Նահապես.

ՑԱՄՈՒԾՈՅ առեր ըզլեզուն ու զգիր,
Թարգմաներ յամեն ազգէ գիրք ընտիր.
Ճարպիկ տղայք զըրկել ի Ստըմպօլ, յԱթէնք,
Հայն հոռոմ լեզւով յաղթել է զՀելլէնք.
Շատ գըրփունք գըրեր մեր հարքն ու մազդաթ
Զէտ ցորեն դիզել քանց բարձր Արարատ։
(Հայուսքի էջ 273).

53

**ՄԵՐ կրօնքին, մեր հաւատքին համար
կ'ըսէ Նահապես.**

Հայոց հաւատս է փրկչին հաւատ,
Յառապելոց բերած նախընծայ,
Լուսաւորիչըն տընկեց հաստատ
Ուր մեր արիւմկս ոռոգեն ըզնայ:
(Նոյե Էջ 353-4).

54

Անաստուածներ հազուագիւտ են և աս-
առածասէրներ շատեր, ու ամէն ազգ ըստ
իր վարդապետութեան կը դաւանի իր Աս-
տուածը, իր բարութեան աղքիւրը. սակայն
մարդկային բարքը լուրջ քննութեան առնե-
լով, կը աեսնենք որ աստուածապաշտներու
միջեւ պէաք է խարութիւն դնել. շատերուն
գործը չի համապատասխաներ իր հոգեկան
սկզբունքներուն. շատերը ըստ աստուածա-
բան ճշմարտութեան

Խոստանան գիտել զԱստուած, և գործովք իւ-
րեանց ուրացեալ են ի նմանէ:

(Եղեկ Էջ 110).

55

Հոգերանական և աստուածաբանական
ինդրոց մէջ, քմածին բաջաղանքներու հա-

**մար հոգեբաններն և աստուածաբանները
Մարկիոնի սեփական Եղնիկի սա խօսքը
կրնան դործածել.**

Թողեալ զճշմարտութիւն հոգւոյն և նստի ա-
ռասպելս կարկատէ:

(Նոյն էջ 253).

56

Եղնիկ կրօնական սա խրատները կու տայ.

Աստուածասէրն յիւր կամացն որպէս ի թըշ-
նամնոյ զգուշանայ:

(Նոյն էջ 299).

57

**Կրօնաւոր մարմնասէր՝ խոզի նման է, ի ծո-
վացեալ մեղացն հեղձնու:**

(Նոյն էջ 300).

Արտասուս լուացումն է մնդաց, և հոգւոց հա-
նելն ապաշխարութիւն:

(Նոյն էջ 300).

Եւ զոր Աստուած խնդրէ զայն ոչ ունիմք, զսէր,
զխոնարհութիւն. շրթամբք սիրեմք զԱստուած,
և ի զուր աշխատիմք:

(Նոյն էջ 301).

**Մանուկ կրօնաւոր, որ ոչ էառ ոտս ծերոց,
անջան որս է սատանայի:**

(Նոյե Էջ 302).

**Մանկագոյն կրօնաւորի մի ասեր զծածուկսն
քո, զի մահ է նորա:**

(Նոյե Էջ 302).

**Մի սիրեր զյագուրդ կերակրոց կամ զըմպե-
լեաց. ապա թէ ոչ՝ զմարմինդ քաղաք պոռնկու-
թեան շինես և ամրոց սատանայի:**

(Նոյե Էջ 303).

**Գինի զբազմութիւն ախտից զարթուցանէ, և
զերկիղն Աստուծոյ հալածէ:**

(Նոյե Էջ 303).

**Մի թիւնաթափ լինիր յեղբայրն խրատու-
պատճառաւ:**

(Նոյե Էջ 303).

**Զվէրն՝ կակուղ դեղն բժշկէ, և զախոս՝ բա-
րեգործութիւնն:**

(Նոյե Էջ 303).

Կրօնաւոր պճնող ասպնջական է դիւաց:

(Նոյե Էջ 303).

**Որ մարմնական ընչից ցանկայ պոռնկութիւն
է:**

(Նոյե Էջ 304).

58

Պատմիչները գրած ու նկարագրած են բարելոնական լեզուաց խառնակութիւնը, աշտարակի կանգնումը և խորտակումը աստուածասատ : Ազաթանգեղոս նկարելով զայն սա հոգեպատում ճարտասանութիւնը կ'ընէ, թէ .

Փոխանակ բարձրաբերձ և վաղաւեր աշտարակին՝ խաչն ճշմարտութեան կանգնեցաւ . որոյ զօրութիւնն մշտնջենական է :

(Ագարանգեղոս 432) .

59

Մեր սկզբունքները, մեր գիտութիւնը առանց խոր արմատի կարող չեն կեանք ունենալ, քննալապատական լուրջ, և ոյժին հարուածով ջախջախուելու վտանգի մէջ են ամէն թեթեւ գիտութիւն և զաղափար : Առակախօս Միհթարը՝ մեզի աւանդած է հետագայ խելացի օրինակը .

Խոհեմ ոք եհարց զծառս, եթէ զի՞նչ են պատճառք՝ զի որքան բարձրանայք, այնքան արմատսի խոր ձգէք . և նոքա ասեն . Խոհական գոլով

զիարդ ոչ գիտես՝ եթէ ոչ կարէաք այսպան ոստո
բառնալ և ընդդիմանալ հողմոց բոնութեան,
եթէ ոչ զարմատս ի խոր՝ և բազմոսոս առնէաք.
տեսանես զեղբարսն մեր զհանարի և զփիճի, զի
ոչ են բազմոսաք, և ոչ ընդդիմանալ հողմոց կա-
րեն, ի խոր արմատս ոչ ունելովք:

(Միհր. Գոշ. Առակ 25).

60

Մեր ազգին անուսումնասիրութիւնը կա-
րելի է խնդրոյ նիւթ ըլլալ, սակայն պատ-
մական վկայութիւններ զայն գժբաղդաբար
կը հաստատեն. ահա մեր պատմահայրն կը
գրէ.

Այլ ինձ թուի, որպէս այժմ՝ և առ հինսն
հայաստանեայց լեալ անսիրելութիւն իմաստու-
թեան և երգարանաց բանաւորաց:

(Խորեն. Գատմուք. Էջ 21).

61

Լաւ դաստիարակը կը սիրէ աշակերտնե-
րու ընտրութիւն. արհեստի յարմարը՝ ար-
հեստի, ուսմանը՝ ուսման կը յատկացնէ. այս
կը պահանջէ բարձրագոյն կրթարանին լուրջ
սկզբունքը. մեր նախնիք առաջին անգամ

որ հայկական տառերով սկսան ուսումներ աւանդել, տգէտը զիտուն աշակերաէն զատեցին. ուսմանց յարմար, ընդունակ աշակերտներով բացին վարժարանը: Կը գրէ Խորենացին Մովսէս. « Եկեալ Մեսրոպայ, և բերեալ զնշանագիր մերոյ լեզուիս, և հրամանաւ Վուամշապհոյ և մեծին Սահակայ »

Ժողովեալ մանկունս ընտրեալս, ուշեղս և քաջասունս, փափկաձայնս և երկարոգիս, և դպրոցս կարգեաց յամենայն գաւառու:

(Նոյն էջ 499).

62

Գրքերու թշնամին ալ գժբաղջաբար դարձեալ մեր ձեռքերն եղած են: Ս. Գ. Լուսաւորիչ կրօնական սկզբունքով հրատոչոր՝ կ'այրէ մեհենական գրքերը. յոյն գրքերը Հայաստանի մէջ լոյս կը տարածէին. յունատեաց Մերուժանը զանոնք մոխիր կը դարձնէ.

Ի Մերուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք:

(Նոյն էջ 500).

63

Գրոց գիւտէն առաջ, դպրութեան կարեւոր լեզուն յունարէնն էր. ինչպէս հայերէնը այժմ, այնպէս ալ յունարէնը հին ատեն կը խարանուէր մեր ոստիներու բռնութեամբ։ Պարսիկներն էին թշնամին. նպատակը գիւտանագիտական էր. կը վկայէ պատմագիրը թէ.

Չտային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել դպրութիւն ումեք յիւրեանց մասինն, այլ միայն ասորի։

(Կոյճ Էջ 501)։

64

Պատմութիւնը իրրեւ ափառ կրթիչ և դաստիարակ, մեզի կու տայ Մեսրոպը. որ վարձկան վարժապետի մը պէս չէր աշխատեր.

Ոչ որպէս արուեստ ուսուցանէր, այլ իբրեւ զհողի առաքելաբար աշակերտելոցն տայր։

(Կոյճ Էջ 518)։

65

Երբ ուսման լոյսը տառերու գիւտով կը լուսաւորէ Հայաստանը . ուսման նախանձը կը վառի ամէն ուսումնատենչ սրտերու մէջ :
Սուրբ է այդ նախանձը . ոմանք փութով Բիւ- զանդիոն կ'երթան .

Նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց :

66

Ուրիշներ ալ ուսման նախանձով ճամբայ կ'ելլեն, բայց նպատակնին հետաքրքրական ուղեւորութիւնն է . Սահակ և Մեսրոպ զա- նոնք, որ է ըսել Յովհան և Արձան կանխաւ ուսման համար ճամբայ կը հանեն, բայց անոնք ըստ Խորենացիին,

Ցուլաբար ուղեւորեալ, և ծուլաբար դեգերեալք պատաղեցան ի կեսարիայ :

Նման ուսանողներ Եւրոպայի մէջ այժմ եւս անպակաս չեն :

(Խոր. Պատ. 520-1).

67

Երբ Խորենացիին ուսուցիչները կը վախ-

ճանին, Պատմահայրն, ըմբռնելով ուսմունքը յարգող և ուսման յորդորող վարժապետներուն և առաջնորդներուն թանկագին նշանակութիւնը, կ'ափսոսայ.

Ո՞վ այսուհետեւ զմերս յարգեսցէ զուսումն. ո՞վ ուրախասցի ընդ առաջադիմութիւն աշակերտիս :

(Նոյն Էջ 550).

68

Հայաստանի ողբալի կացութեան հետ ողբալի են և վարժարանները. Խորենացին այդ առթիւ կը գրէ.

Աշակերտք հեղք առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն ասուուածաբանք :

(Նոյն Էջ 553).

69

Մոքին գործիքներն գրքերն են, ուակայն ամէն միտք հաւասարապէս այդ զէնքերով մտաւորական հրաշագործութիւն չի կրնար ընել. տաղանդ, յիշողութիւն մեծ դեր կը

խաղան . այս պարզ ճշմարտութեան կարող ենք իբր առակ գործածել սա սովորական առածը .

Բեր զայն աջն, որ բռնէ զայս խաչս :

Այս է պատմութիւնը . կը գրէ առակախօսն Վարդան . « Իշխանի միոյ որդին մեռաւ . և բերին զխաչն ի վերայ սպասաւորք խաչին . և յարեաւ որդի իշխանին . զի էին ընտիրք սպասաւորքն այնորիկ : Եւ եղեւ զի այլ ումեմն իշխանի որդի մեռաւ . և բերին զնոյն խաչն ի վերայ . և ոչ յարեաւ : Եւ աղաղակէր հայր մանկանն և ասէր, թէ խաչս այն խաչն է և աստուած այն աստուած է . զիանդ ոչ յարեաւ մեռեալս : Եւ հրեշտակն երեւեալ ասաց, թէ խաչս այն է և աստուած այն է . բեր զայն աջն, որ բռնէ զայս խաչս » :

(Փողով . Առակ . Վարդ . Էջ 213) .

Աստուածային , հոգերանական և իմաստասիրական խնդրոց համար , անինք ազգային մատենագրութիւն մը , ուսկից հոգեկան

ինպիրները կարող են օգտուիլ, երբ հարկ ըլլայ զանոնք պաշտպանել կամ ջատագովել։ Եզնիկ իր գիրքը կը սկսի։

Յորժամ զաներեւութէն և զնորին զմշտնջենաւոր գօրութենէն ճառիցէ ոք, քանզի մարմնաւոր լեալ է, պարտի զմիտս յստակել և զխորհուրդս սրբել . . .

(Եթէհ Էջ 5)։

71

Մեր պատմութիւնը թէեւ ունի անմիաբանութեան, աիրանենգ գործերու տխուր եղերերգական էջեր, ունի պառակտումէ և ներքին թշնամութիւններէ ծագած ահաւոր ազգակործան հարուածներու ողբերգական աւերումներ, սակայն ճշմարիտ է նոյնպէս, որ ասիական ազգաց մէջ աւելի ընդունակ եղած ենք բարեկարգութեանց և բարեշրջումի ու սիրած ենք ինչ որ լոյս է և յառաջապիմութիւն. սիրած ենք իրաւունքը, և ատած ապօրէն վարչութիւնը։ Աահակ հայրապետի մահուլնէ վերջը, այլ եւս մեր երկրի կրօնական ու քաղաքական ընթացքը շատ սրտաճմլիկ շրջաններէն անցնելով,

Հայրենիքի բարոյական կործանումը ակն
յայտնի կ'ըլլայ։ Պարսից Յազկերտ թագա-
ւորի վեցերորդ տարին, Շահապիլանի ժո-
ղովը կը գումարուի, ուր մեր նախնիք, լրջա-
խոհ եկեղեցականք և զօրականոք միաբանած,
կը զնեն « Սահմանք և կանոնք միաբանու-
թետմբ աւագ Հայոց . ի հինգերորդ ամի-
վախճանելոյն Սահակայ »։ Անոնք Ս. Գրի-
գոր Լուսաւորչէն՝ մինչեւ Սահակ Պարթեւ
եղած ծանօթ կարգ ու կանոնը կը հաստա-
տեն, և միաբերան կը փափաքին որ « Ա-
ռաքելական կանոնն և Նիկիականն հաստա-
տուն կացցէ, և մենք հնազանդեալք եմք .
և որ ինչ պիտոյ է ի նոսա ի լրութիւն, և
մանաւանդ ի մէջ առանս թորգոմայ և կող-
մանց արեւելեայց՝ հառատեսցուք . . . »
ամէն կարդ ու կանոն երբ կը հաստատուի
ու կը կարդացուի, զօրքերը, զօրագլուխնե-
րը, և իշխանները միաբերան կը կոչեն.

Այու, այու. կարգք և օրէնք այդ կացցեն, ինչ
որ վասն մեր օգտի ի փրկութիւն հոգւոց և
մարմնոց մերոց :

Ու այս միաբերան համերաշխ օրինասիւ-

բութիւնը մեր մէջ գեղեցիկ առակ կրնայ
մնալ:

(Հայաստանում Բ., էջ 159).

72

Մեր ազգին կրօնականութիւնը, յատուկ
անկեղծ վեհութեամբ միշտ դիւցազնական
երեւցած է: Կուապաշտ հայը արիւն թափած
է իր Աշտիշատի աստուածներուն համար.
Քրիստոնեայ հայը արիւնով ողողեր է հայ-
րենի՝ գաշտերը իր Քրիստոսին համար: Ա-
ւարայրի պատերազմէն վերջը, տարօրինակ-
օրէն կը ջլատուին հայկական ջղերն. սա-
կայն հայը լքեալ չէ՝, տիսուր չէ՝, անխոր-
տակելի յուսով կ'ապրի և ուրախ է: Իրեն
սրտին մէջ կը տիրէ երկնային անպատում
միիթարանք. Եղիշէ՝ անսէր և կործանուած
հաւատացեալ ամբոխին համար կ'ըսէ.

Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն
ինքն քահանայ. մարմինք իւրաքանչիւր սուրբ
սեղան, և ոգիք նոցունց՝ պատարագ ընդունելի:

ինչու այսպէս. « Քանզի ոչ ոք ի նոցանէ ողբայր յուսահատութեամբ զանկեալոն ի սրոյ, և ոչ ոք հեծեծելով հառաչէր ի վերայ մերձաւոր սիրելեաց իւրոց։ Խնդութեամբ ընկալան զյափշատակութիւն ընչից բազմաց..» Հայեր են ասոնք հայրենի կրօնքի եռանգուն նախանձախնդիր. որոնք՝ « Թողին այնուհետեւ իւրաքանչիւր զգեօղս և զաւանս և զագարակս. ելին հարսունք յառագաստից և փեսայք ի սենեկաց, անկան ծերք յաթոռոց և աղայք ի գրկաց. երթային երիտասարդք և կուռանք և ամենայն բազմութիւն արանց և կանանց, հասեալ ունէին զամուրս անապատին և զանիար տեղիս բազում լերանց ». պատմիշը կը յաւելու.

Լաւ համարէին զգազանաբար բնակութիւնն՝ աստուածպաշտութեամբ ի քարանձաւս կելոյ, քան ուրացութեամբ փափկանալ յիւրաքանչիւր շինուածս։

(Ետէ էջ 219-20) .

Այս է ճշգրիտ պատկերը հայութեան բնագրոշմ կրօնականութեան. պատկեր մը, որ ամէն դարերու մէջ անջնջելի մնացած է։

73

**Մտաւորական լոյսի և յառաջադիմութեան
պապակող Անանիա Շիրակացին՝ ըսած է.**

Ի Հայս ոչ գտի մարդ՝ որ գիտակ էր իմաս-
տասիրութեան, և ոչ գիրք արուեստից ուրեք
գտի յաշխարհիս :

(Հայապատում Բ. Էջ 232).

Որով կը դիմէ Յունաստան։ Այն վաղե-
մի ժամանակներէն ի վեր Հայաստանի այդ
տիսուր զրութիւնը՝ բարւոքումն չունեցաւ՝
այն ամեն տաղանդաւոր ուսումնասէր հա-
յերուն համար, որ մայրենի երկրէն ար-
տասահման կը դիմեն և հետամուտ կ'ըլլան
բարձր գիտութեանց :

74

Նոյն վարդապետը ոչ միայն գիտութեամբ
կ'ուզէ ճոխանալ, այլ իր մտքի՝ լուսով կ'ուզէ
լուսաւորել նա և հայրենի մանկտին. կը գրէ.
« Ես տրսւապս ի հայաստանեայց, ուսայ ի
նմանէ (Տրապիզոնի Տիւքիկոս հմուտէն)
հզօր արհեստս զայս, (չափաբերութիւն) որ
թագաւորաց է ցանկալի, և բերի յաշխարհն

Ճեր , առանց ուրուք ձեռնտու լինելով » : Սակայն Հայաստանի մէջ գիտութեան սէր , կրակ չի գտներ .

Ոչ ոք եղեւ շնորհակալ և մեծարող իմոյ աշխատութեանս . և ոչ սիրեն Հայքս զիմաստ գիտութեան , այլ ծոյլք են և ձանձրացողք :

Յօդս զրպարտութիւն մը չէ այս : Անանիա Շիրակացին առաջ տանելով իր խօսքը կ'ըսէ . « Զի իբրեւ եկի ի հայս , բազումք եկին առ իս ի յուսումն , և սուզ ինչ խելամսեալ՝ ոչ մնացին կատարման արուեստին . թողին զիս և մեկուսացան , և սկսան ուսուցանել զոր ոչն զիտէին և ոչ էին հասու . » . և այդ իմաստակ գիտուններուն համար կ'ըսէ նաեւ

Կեղծաւորք և սնափառք , ցուցանել կերպարանս զիտութեան . և կոչիլ ի մարդկանէ Ռաբբի :
(Հայապատում Բ. Էջ 233).

75

Հայ եկեղեցին ազգային տանջանքներով շատ կրեր ու առւժեր է . ու երբ հայ հոգին վերակենդանացած շունչ քաշեր է ,

եկեղեցին ալ իրեն հետ պայծառացեր է .
Սովերքի մէջ Ներսէս կլայեցւոյ կենսագրութենէն այս տողերը վկայ են մեր խօսքին .

Լուսաւոր կարգ եկեղեցւոյ ի սուրբ լուսաւորչացն հաստատեալ՝ յանիշնանութենէ ազգիս մերոյ բարձեալ, և խաւարաւ մոռացութեանն նսեմացեալ խրթնատենակ անզարդութեամբ :

(Սովերք ԺԴ. Էջ 37) .

76

Հոգեշնորհ տաղանդաւոր քահանայից յարմար է Շնորհալի Ս. Ներսէսին սեփհականասա տողերը .

Լցեալ անթերի լրմամբ շնորհաց Հոգւոյն Սըրբոյ, իբրև զծով համատարած ինքն առ ինքեան ծփայր միշտ :

(Տոյու Էջ 41) .

77

Ուսման և զիտութեան նուիրուած , հազուագիւտ անխոնջ պարապողներուն համար, կրնայ ըսուիլ Շնորհալոյն սեփհական սաբացատրութիւնը .

Յարաժամ մելան և քարտէս պատրաստական
լինէր մերձ նմա առ ի գրել:

(Կոյմ Էջ 42).

78

Ժողովրդասէր գրագէտը շատ անգամ կը
զոհէ իր իմաստութեան մէկ մասը : Միի-
թար Հերացի անտարակոյս կարող էր պերճ
գրաբարով մը գրել իր բժշկարանը, սակայն
այնպէս չըներ. կը գրէ յառաջարանին մէջ.

Եւ արարի զսա գեղջուկ և արձակ բարբառով,
զի դիրահաս լիցի ամենայն ընթերցողաց:
(Միիր. Հեր. Զերմանց գիրք).

79

Գիրք մը որ ամենուն կրնայ օգտակար
ըլլալ, անոր ճակատը արձանագրելու է Միի-
թար Գոշի դատաստանագրի սա հիանալի
բացատրութիւնը. մէկը չի պարսաւէ – կ'ըսէ
– ըսածներս.

Զի եթէ ախմար ոք իցէ՝ ուսցի, և եթէ ամե-
նակատար իմաստուն՝ զթերին լցցէ:
(Հայոպատում Բ. Էջ 406).

80

Դատապարտուած է մեր ազգային անուսումնասիրութիւնը. Աբովեան կը գրէ.

Ում հետ էլ որ խօսում էի, էն էին թանիսայ տալիս՝ թէ մեր ազգը ուսումնասէր չի, կարդալը նրա համար գին չունի, բայց ես տեսնում էի, որ էս մեր կարդալ չի սիրող ազգը Ռոպէնսոնի պատմութիւնը, Պղնձէ քաղաքի յիմար գիրքը ձեռնէծեռ էր ման ածում։

(Վերք Հայոստանի էջ 7-8).

Ուրեմն այս խօսքերէն պէսք է հետեւի որ մեր ազգը ուսումնասէր է բայց ընթերցումի ընարութիւնը պակաս է։

81

Աբովեան եւս կը խոստովանի՝ մեզի համար առակ եղած սա ճշմարտութիւնը թէ.

Մէկ ազգի պահողն էլ լեզուն առ հաւատը, թէ սրանց էլ կորցնենք, վայն էկել ա մեր օրին։
(Նոյն էջ 9).

82

Տաղանդները երբ խանդավառորէն նուիւրուած են ուսման և գրքի, անզսպելի է ա-

Հայ Միաբը

4

նոնց այդ մտաւորական արշաւը։ Աքովեան ընդ երկար կը առշորուի գիտութեան և գրական արտավրութեան բուռն փափագովը. բարեկամ մը կը սքանչանայ անոր տաղանդին, վիպասանը կը քաջալերուի և շուտով գրիչը առած՝ այն շատ սիրուած հոչակաւոր վէպը կը շարագրէ. Հայաստանը հրեշտակի պէս իր առջեւը կանգնած, իրեն « Թեւ էր տալիս »։ ա՛լ աշխարհքը մոռցած, անձնատուր կ'ըլլայ իր սիրած գրչին.

Գիշերվան մինչեւ սհաթի հինգը ո՛չ հացի մտիկ արի, ո՞չ չայի, չիբուխն էր իմ կերակուրը, գրիշը իմ հացը։

(Վէրք Հայաստանի Էջ 9)։

Ճնեցւոց խնդրանքին անունկնդիր՝ անընդհատ կը գրէ։

83

Աքովեան ամբողջ գիտաթեամբը՝ իր ազգին նուիրուած է. կը գրէ.

Թո՛ղ ինձ այսուհետեւ տգէտ կանչեն. լեզուս բաց ա էլէլ՝ իմ ընտիր, ազիզ, իմ սրտի սիրեկան ազգ։ Թո՛ղ՝ տրամաբանութիւն գիտցողը իրան

Համքեարի համար գրի, ես, քո կորած, շվարած
որդին՝ քեզ համար:

(Կոյն Էջ 10).

84

Իր կարծիքով մենք նախ պէտք ենք զար-
դանալ, յետոյ ժամանակին՝ կարելի է մտքի
դժուարամարս գիտութիւններ ալ ներկայացը-
նել. «Երբ որ կմեծանամ, խրթին լեզով էլ
կիօսանք»: Սակայն առ այժմ կ'աղաշէ.

Թաք ըլի գու, գու իմ պատուական ազգ՝ քո
որդու արածը՝ քո որդու խակ լեզուն սիրես,
ընդունիս, ինչպէս հէրը իր մանուկի կմկմալն,
որ աշխարքի հետ չ' փոխել:

(Կոյն Էջ 11).

85

Արարշին բարութիւնը, հրաշագործութիւն-
ները Աքովեանին բերնէն կը լսեն սա հիա-
ցումի օրհնենքը:

Ա՛խ՝ ո՞վ ես դու՝ ո՞վ՝ եարաղանիդ դուբբան՝
Աստուած՝ որ էսքան բարիքը ստեղծել ես մեզ
համար:

(Կոյն Էջ 18).

86

ՄԵՐ ազգը իր հաւատքով կը պարծի. կը գրէ Աքովիեան.

Էլի Աստուած օրէնի մեր հողը, մեր ջուրը,
Էլի թէ հոգի կայ, հաւատ մեզանում ա:
(Նոյն էջ 32).

87

**Հայը իր հաւատքը մարտիրոսութեամբ
զնեց, և հալածանքով պահպանեց.**

Ազատութիւն, թագաւորութիւն, իշխանութիւն, մեծութիւն, բոլոր, բոլոր կորցրեց, իր հաւատին մատաղ տվեց:

Եւ «աղքատութիւն, նսքարութիւն, գերութիւն, դարիբութիւն, տանջանք, չարչարանք, սովլ, մահ յանձն առաւ, որ իր սուրբ եկեղեցին, իր լիս, լուսաւորչական օրէնքը՝ ամուր հաստատ ու անխախտ պահի: Է՛ս ա հսկայութիւն...»:

(Նոյն էջ 89-90).

88

Եւ քնիքօրէն կը բացազանչէ.

Ան՝ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի, մարդ
ընչի՞նման կըլի։ Մէկ ազգի պահողը, իրար հետ
միացնողը լեզուն է ու հաւատը։

(Կոյճ Էջ 91)։

Լեզուդ փոխիր, հաւատդ ուրացիր. Էլ ինչով
կարես ասել, թէ որ ազգիցն ես։

Լաւ կը զբէ այդ միեւնոյն վիպասանը։
« Ինչ քաղցր, պատուական կերակուր էլ
տաս երեխին, էլի իր մօր կաթը նրա հա-
մար շաքարից էլ ա անուշ, մեղրից էլ »։

(Կոյճ Էջ 91)։

89

Ու հայ երիտառարդաց կ'ուղղէ իր գորո-
վալի աղաչանքը։

Զեզ եմ ասում՝ ձեզ Հայոց նորահաս երիտա-
սարդք՝ ձեր անումին մեռնիմ. ձեր արեւին զուր-
բան, տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր
հաւատը դայիմ բռնեցէք։

Եւ կը շարունակէ. « Մէկ գարդակ լե-
զուն ի՞նչ ա, որ մարդ չկարենայ սովորել։
Բաս չէք ուզիլ, որ գուք էլ գրքեր գրէք,
ազգի միջումն անուն թողաք, ձեր գրքերն
էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը

յաւիտեանս յաւիտենից մնայ անմահ։ Ինչ
կ'ուզէ ֆրանցուզերէն, նեմեցերէն գիտենանք,
մենք չենք կարող էնպէս բան գրել, որ
նրանց միջումն անուն ունենայ, չունքի նրանց
միտքն, նրանց սիրտն ուրիշ ա, մերն սւ-
րիշ... Աստուած կեանք տայ էն ծնողացը՝
որի որդիքը ինձ մօտ են։ Նրանց առաջին
խնդիրն միշտ էն ա էլել, որ նրանց որդիքը
հայերէն լաւ գիտէնան։ Գերեզմանն էլ որ
մտնիմ, նրանց էս սուրբ խօսքը մաքիցս չի
գնալ»։

(Կոյճ Եջ 93)։

90

Հայը իր հաւատքին կուռ, որտապինդ է,
անխախտ. այսպէս եղած է հին հայութիւնը
և նորը որ կը ներշնչէ նախնեաց կրօնական
անտեղիաալի հոգին. այսպիսիներուն համար
թերեհաւատութեան ամէն պատրանք ծաղր
ու ծիծաղ են։ Աքովեան կը գրէ.

Իր հաւատին պինդ մարդի գլխին քար էլ ա-
ղայ, հէնց կիմանայ, թէ դափ (տէֆ) ու զուռնայ
ես ածում։

(Կոյճ Եջ 103)։

91

Նոյն վիպասանը դարձեալ հայ հաւատացեալին համար կը գրէ.

Հայ ազգը ոչ թրից ա վախէնում, ոչ թվանքից, ոչ թօփից։ Կրակն ես քցում՝ էլի իր հաւատն ա պաշտում, ծառին ես կախ անում, միսը պոկում, բերանը տալիս՝ էլի իր խաչն ա պաշտում, իր Փրիստոսի անունը տալիս։

Ու այլազգին կը զարմանայ Ս. Խաչի զօրութեան վրայ. « Ես մէկ կտոր փէկն ի՞նչ ա ախր, որ սրանք էսպէս ապաւինել են. որդին ես քաշում՝ ինքն ա հետը կրակն ընկնում, հօրն ես բռնում՝ որդին ա գլուխը մահի տալիս » :

(Նոյն էջ 188-89) .

92

Ո՛րքան նախանձելի է երբ ազգութիւն մը մտքով և հոգով համերաշխ, միաբան կ'ապրի, միտսին կը գործէ. հայը իր նահապետական կարերու ատեն վայելած է այդ երանութիւնը. բերթողն թագրատունի կ'երգէ.

Ով դարուն երանութեան, ուր միախոհ միտք ընդ սըրտից

Միհաբան կային սերտիւ ակն յանդիման սուրբ արարչին

Սեռըն սիրոյ հաւատոց մատուցանել աննենգ պաշտօն :

(Հայկ դիւցագն 484).

93

Մատաղ հասակէն պէտք է պողպատել գեռափթիթ մտքերը . Միսիթար Աքբան կը գրէ . « Որպէս եթէ դարբին զերկաթն հրացեալ ոչ կոանեսցէ առժամայն՝ պաղի և ոչ կոփի , այսպէս ,

Եթէ համբակ ոչ վաղ զուսմամբ բերցի՝ բթանայ :

(Հատք Էջ 84).

94

Գիտուն մնալու համար , գիտութենէն երբէք պէտք չէ հեռանալ : Միսիթար Աքբահայր կը գրէ .

Որպէս միով բախմամբ կոանի՝ ոչ կակղի երկաթ , այսպէս և յուսման ստէպ դարձ պիտի :

(Նոյն Էջ 84).

95

Ազգն իսկ միարեան կը խոսառվանի
Միիթթարեան մամուլի վերակենդանացուցիչ
նպատակը և Միիթթար Աքբահայլ յայտ
յայտնի քարոզած է, որ այդ նպատակը չէ
եղած շահասիրութիւն, այլ ազգասիրութիւն.

Մեք տպագրեցաք և տպագրեսցուք գրեանս,
ոչ ի շահ դրամոց, այլ յօգուտ ազգին:
(Կոյճ էջ 135).

96

Գործունէութիւնը և գործին գիտութիւնը
իրարու հետ սերտ յարաբերութիւն ունին.
Մէկը որ գեռ չէ սկսած գործել, բայց այդ
գործին ծանօթ է, պէտք չէ արհամարհել ա-
նոր գիտութիւնը։ Հայաստանցիք կ'ըսեն.

Թի որ (թէ որ) ցորեն (ցորենի հաց) չ'կերեր
ենք,
յերդի (յարդ) մէջ պարկեր ինք։

Ըստ «Ազգագրական հանդէս»ի կը մեկ-
նուի. «Ցոյց տալ թէ որչափ գործ մը ըրած
չ'ենք, բայց ծանօթութիւն ունինք վրան»։
(Առաջ. Հանդես Գիրք VII. VIII. 1901 էջ 465).

Սրուանձտեանցի համով հոտով գրիչը՝ իր «Թորոս Աղբար» զբքին մէջ տեղազրելով Մարսուան քաղաքը, կը յիշատակէ տեղացի հայ ազգութեան «Պաշտպան կրօնի և ազգութեան» անունով ընկերութիւնը։ Սըրբազանը գիտել կու տայ որ

Պաշտպան լինելէն աւելի՝ ես կը փափաքէի պաշտել գիտնային կրօնքն ու ազգութիւնը։

Այդ ընկերութեան նպատակն էր քաղաքակրթել և զարգացընել հայութիւնը. սակայն Սըրբազանը զայն այդ գործին ձեռնհասչի գանելով կը հեգնէ.

Խօսք մը՝ երբ խօսողն չհասկնայ, լսողին ինչպէս հասկըցընէ։

Խօսելով տեղական վարժարաններու վըրայ, կ'ողբայ անոնց միջնադարեան կոպառութիւնը. հայ տղաքները կրթելու համար կրթիչ պէտք է . . .

Իսկ վարժապետները ո՞վ կրթէր։

(Թորոս Աղբար Ա. էջ 17-21)։

98

Միեւնոյն հեղինակը հայկական կրթութեան համար կ'ըսէ.

Հայոց ազգ, քեզ երկու թեւ պիտոյ է ազատութեան բարձունքը թռչելու բարձրանալու համար. վարդապետ և վարժապետ, մեծերը առաջնորդելու, մանուկները դաստիարակելու ...

(Նոյն էջ 21).

99

Կրթական յառաջադիմութիւնը ամենէն աւելի մտածութեան նիւթ պիտի ըլլայ ծնողաց. ամէն ընտանիք իր զաւակներուն կրթութեան համար համախմբուած պէտք է մտածեն հասարակաց բարեկարգ վարժարաններ հաստատելու և հաստատուն պահելու։ Արբ. Սրուանձտեանց Փոքր Ասիոյ հայկական վարրաններու ջախջախիշ կացութիւնէն յուսահատ՝ կ'ողբայ «ազգային յուսոյ անյօյս յարկերը»։ ու կը հառաչէ.

Ա՛ն, Հայեր, ա՛ն, հայրեր ու մայրեր, ինչո՞ւ դուք ձեր ոտքով կը զարնէք ազգային յառաջադիմութիւնը և յետս կ'ընկրկէք։

(Նոյն էջ 52).

Հայ կրօնք և հաւաաք հաստարմատ ուռնացած են հայ սրտերու մէջ. փոթորիկը ուզած է խորտակել այդ նուիրական ծառը, շանթեր ուզած են կայծակնահար մոխիր դարձնել զայն, բայց քիչ անգամ յաջողած են. զիմակրողները կրօնական դիցազնութեան օրինակներ մնայած են պատմութեան մէջ. այդ զիցազներէն մին կ'անոմահացընէ Արուանձտեանց սրբազնի հետագայ պատմութիւնը. լստ աւանդութեան. «Կաշոցիք՝ թրքաց բռնութենէն ազատելու համար կ'որոշեն տաճկանալ, և կը տաճկանան. գեղի քահանայն այգի կը գտնուի այս ժամուս. երէցկինը կը վազէ գոյժ տալ երիցուն, թէ, փութա, գեղացիք ամէնիքը տաճկցան։ Երէցը կը դառնայ կը պատասխանէ. «Վայ, գարը սէն տահա կեալուռնա մը սէօյլէրս սըն, պէն չօդտան Տաճիկ օլմուշում»։ Խեղճ երէցկինը այլայլած, մազերը փետտելով կը թոփ ժայռի մը զլուխ, ձայն կ'արձակէ կամրկապցւոց.

Ես մինակ մնացի Հայ. ձեր Աստուած կը սիրէք, կամարկապցիք, իմ հոգւոյն խունկ ծըխեցէք, աղօթք ու պաշտօն կատարէք:

Եւ կամրկապցւոց աչքին առջեւ զի՞նքը կը գահավիժէ, Եփրատին հոսանաց մէջ կը սուզանի. կամրկապցիք անոր մարմինը կը հանեն կը թաղեն, ամեն տաղաւարին անոր գերեզմանը կ'օրհնուի և ամեն կիրակամտին կամրկապու մայրերը երբ աանիքը խունկ կը ծխեն, սոյն աղօթքը մրմնջելով, « Աստուած սղորմի հին ու նոր անցաւորաց, անօրէն սպանուածին, ծովին ու ցամաքը մեռածին, ճամբայ շինողին, աղբիւր բերողին, կամուրջ կապողին, քարերը իստակողին » են, կը յաւելուն ասել, « Աստուած սղորմի կաշոյի Երէցկին Մամային » :

(Նոյն էջ 250-1).

101

Կրթութեան ամենէն զօրաւոր զէնքը դաստիարակին կամ աեսչին ազնիւ ու կիրթ ճարտասանութիւնն է. մեր մէջ զժբախտաբար քաւազանը ու ֆալախան գերադաս համա-

րուած են. և Հայաստանի խորերը գեռ
մողցուած չեն այդ կոպիտ զէնքերու պաշ-
տամունքը: Եթե և կշտամբանք իրատիչ և
ուղղիչ կը համարուին, և ասոր համար
Խարբերդի Ս. Ստեփանոս եկեղեցիին վար-
ժարանին մէջ՝ դործածուած ֆալախան կը
կրէ սա բարոյական... արձանագրութիւնը.

Գանք և կշտամբանք վարուց ուղղութեան,
կարգեալ ի իրատ բարուց մանկութեան:

(Թորոս Աղբար Բ. Էջ 76.)

102

Ո՞վ որ հայութիւնը իրրեւ հայ սիրած է, ան
գուրգուրացեր է անոր լեզուին, և վրէժինզիր
եղած է այդ լեզուին պահպանումին ու զար-
գացումին. այդ հարազատ հայերէն է Սրու-
անձանեց սրբազնը. սա իր «Գրոց ու
բրոց»ին մէջ կը զրէ. «Այն օրութնէ,
երբ մեր դպրոցներու սեմէն ներս մտաւ
օտար լեզուաց ուսումը. և բաւական ուսա-
նողներ հասան, այդ լեզուաց մէջ իրենց
ունեցած յառաջդիմութեան հետ՝ նոր և
կարօտալիր ճաշակ մ'ալ ունեցան այն լե-

գուներով գրուած մատեաններուն, ծանօթացան և ընտելեցան անոնց պարունակած գաղափարին և նկարագրին . սիրեցին զայն, յարմարեցան անոնց, և յետս թողին իրենց բնիկն, հայրենին ազգայինն ու ընտանին :

Կը խօսին այդ պարոններն ու օրիորդները քաջ քաջ Եւրոպական լեզու մը. իսկ հայերէնն խօսելու ժամանակը՝ կը հանգոին ու կը կանգըռին, օժանդակ կը խնդրեն ու կը կոչեն գաղղիերէն մը, ուսւերէն մը, տաճկերէն մը...

Եւ կը մեղադրեն հայերէնը... թերի, անտաշ ըլլալն ու կը յանդինին ըսել. «Է՛հ սա մեր Հայերէն լեզուն ո՞րքան պակաս և կրծատ է» ...

(Գրոց ու Բրոց էջ 17-8).

103

Փափուկ է դժուտիարակին պաշտօնը վասն զի մատաղ ու զեռ սախ սրաւերու հետ է իր գործը. դաստիարակին բարքն ու գործը աշակերախն վրայ անմիջապէս կ'ազգէ, և կը տոգորուի: Յարութիւն քահանայ Ալամդարեան կը գրէ. «Եթէ աւաղս կարդայ

**Աստուածախօս Աւետարանն ի գլուխ որոյ
զմի ի մարդկանէ գայթակղեցուցանէ, ապա
զորպիսի պատիժ պատուհասի յանձն իւր
ձգէ՝ որ զպարականսն բարոյականութեամբ
ոչ միայն ի գուք գայթակղութեան խարդա-
ւանէ զբազմութիւն քնքուշ պատանեկաց,
այլ և միանգամ ապաւորեալ ի սիրոս նո-
ցա զբիծ խեղաթիւր վարուց՝ մինչեւ ցմահ
թշուառականս առնէ»։ Դաստիարակին բարո-
յականութիւնն կը պատուիրէ և միանգամայն
հայրութիւն։ Կը գրէ միեւնոյն բարեյիշատակ
քահանայն։**

Վարժապետն հայրագորով գթով սիրեսցէ զա-
մենայն աշակերտեալսն ինքեան. զորդիս մեծա-
տանց և աղքատաց միօրինակ ինամեսցէ զիւրա-
քանչիւրսն քաղցրութեամբ դաստիարակելով։

Եւ իսսառութեան ու քաղցրութեան մէջ,
դաստիարակը պէտք է յարգել չափաւորու-
թիւնը. Ալամկարեան կը գրէ.

Վարժապետին օրէնք են ի գով և ի պարսաւ
աշակերտին զկշիռ շրջանկատ չափաւորութեան
ի ձեռին ունել. ոչ յառաջնում դիպուածի ի
խորխորատ յանդզնութեան մղել զնա, և ոչ
յերկրորդումն ի յուսակուր լքումն։

(Պատմ. Ներսիս. Հայ. Հոգ. Դպր. էջ 93).)

Հայ հաւասաքը և կեանքը միշտ իր ճգնաժամի սահմոկող օրերով սոսկացեր է. Հայ հողը արիւնով ներկուելով, երբէք չի չորնար հայրենիքի հաստարմատ կոճղը. միայն, եթէ քաջ ենք պահպանել անոր հոգին. Խաղ՝ Ներսէս հայրապետի տեղապահը կը ճառախօսէ. « Հայրենիքը վտանգի մէջ է, այո՛, բայց աւելի մեծ վտանգի մէջ է եկեղեցին։ Պարսկական պղծութիւնը արդէն մուտք է գործել մեր տաճարներում։ Մեր սուրբ սեղանների վրայ վասվում է որմզգական կրակը ... Մեր նախարարներից ոմանք, պարսից արքային աւելի հաճոյանալու համար, իրանց աներում ատրուշաններ են կառուցել։ Մեր բազմաշարչար Լուսաւորիչ հօր գառն աշխատանքներով հիմնած եկեղեցին այժմ կործանուելու մօտ է։ Պարսիկը շատ անգամ արշաւել է մեր երկիրը, շատ անգամ յաղթել է մեզ, և շատ անգամ յաղթուել է մեզանից։ Մեր երկիրը միշտ ողողուած է եղել անընդհատ պատերազմների

արիւնոյլ։ Բայց անցել են կոիւի ու կոտորածի տխուր օրերը, և արեան հետքերի վրայ՝ կրկին ծաղկել է ժողովրդի կեանքը և նրա բարօրութիւնը։ Խսկ

Այժմ սպանվում է եկեղեցին, սպանվում է կրօնը, և իւր հետ դէպի յաւիտենական մահ է տանում ամբողջ ժողովրդին։

(Սամուել Էջ 474)։

Խաղը հայութեան մահը կը համարի հայ կրօնքի ջնջումն, բարձումն. կոտորած, աւեր ու քանդ նշանակութիւն չունին. հայ հոգին թող ողջ մնայ, այն ատեն չարշարուած հայ կոճղը դարձեալ կը ծլի, կը ծաղկի, կը պաղաքերէ։ Քրիստոնեայ կրօնքը եթէ խախտէ իր կրօնական սկզբունքները, ազգութեան շէնքը փլած է և կանդնումը անկարելի է. և այս պատճառաւ հայը ամրապինդ կը մնայ իր Քրիստոսին...»

105

Գրքի, գիտութեան սիրահար իմաստասէրը կ'արհամարհէ ամենայն ինչ, ուր չի կայ մտաւորական և հոգեկան կորուլի հրաշա-

գործութիւնը։ Զուարճութիւն, վայելք, փառայեղ կացութիւն, ընտանիք, սէր և մաերմութիւն և ամենայն ինչ անցաւոր է, ծուխմը որ կը բարձրանայ և որուն ետեւէն իմաստունին միաբը չի համնիր. «Բանք իմաստասիրաց» մտաւորական գանձարանին մէջ՝ հետաքրքրական է աւանդութիւնս .

ԶԱՂԵՓՍԱՆԴՐ յօժարեցուցանէին բարեկամքն ստանալ որդիս. և նա ասէ. Մի՛ տագնապիք, քանզի թողաւմ ձեզ յետամաց զբանս և զիմաստութիւն և զարիութիւնս իմ։

(Սովերք. Ա. Էջ 11).

106

ՄԵՆՔ ուրիշէն երբ գիտութիւն կը պահանջենք, մենք ինքնին զիառն ենք... Երբ Եմպեդոկրատես կ'ըսէ. «Ոչ գտի իմաստունս բանի. իրեն կը պատասխանեն.

Որ ինդը իմաստուն, նախ պարտ է զի ինքնիցէ իմաստուն։

(Նոյն Էջ 12).

107

Կարդալով, ճառեր լսելով չէ որ մարդ

գիտուն կ'ըլլայ, այլ հմտանալով, ամբարե-
լով գիտութիւնը։

Իմաստասիրաց առակներուն մէջ ուշագրաւ
է միջադէպս։

Դիմոկրիտէս՝ քանզի պատանի ոմն նստեալ ի
թէատրոնի ասէր զանձնէ իմաստուն գոլ, քան-
զի ընդ բազումս խօսեալ եմ իմաստունս. ասէ.
Եւ իմ ընդ բազում մեծատունս, բայց տակայն
մեծատուն ոչ եմ։

(Նոյն էջ 12)։

Է

108

Տգիտութիւն և արբեցողութիւն համա-
նման խեղճութիւններ են, խոհականը հաւա-
սարապէս կ'ուզէ հեռու մնալ երկուքէն ալ։
Իմաստուններուն պատուէրն է։

Զգաստից ընդ արբեցողս և իմաստից ընդ
անմիտս խօսել չէ պարտ։

(Նոյն էջ 13)։

109

Օրէնքը յարգուած է միշտ. թէ հեթա-
նոսը և թէ քրիստոնեան, կեանքը բարձրա-
ցուցած է օրէնքներու վրայ. և ըստ իմաս-
տասիրաց.

Որպէս մարմին առանց հոգւոյ մեռեալ է, նոյնպէս և հոգի առանց օրինաց մեռեալ է և աւերակ:

(Նոյե Էջ 46).

110

Նուիրական է եղած «Արդարոց օրէնք ոչ գոյ» բացատրութիւնը. նման է ատոր՝ իմաստասիրաց այս բնական եզրակացութիւնը.

Ուր օրէնքն յաճախեն, անդ և անօրէնութիւնք յոլովք:

(Նոյե Էջ 47).

111

Պատկանեան երկու համեստ տողերով կը խարազանէ ագիտութիւնը.

Հայի գըպրոցը դարձաւ մաքսատուն, Չունի և ոչ մի վարժապետ գիտուն:

(Պատկանեան. Բնատեղք. Էջ 235).

Յաւակնոտ մեծամիտները ընդհանրապէս հակառակ իրենց ագիտութեան, վարժապետի դեր կը կատարեն. Պատկանեան կը գրէ.

Զարմանք պան է՝ էնկ տըգէտը
Էղիլ է մեր վարժապետը:

(Ղոյթ էջ 327).

Մեր կարգ մը հայ ուսանողներու համար կարելի է դործածել սա նախադասութիւնը.

Ուսանողների համար հետաքրքիր չեն ազգային կեանքի երևոյթները, նոցա օգուտները համապատասխան չեն հասարակական օգուտներին:

(Գ.Արժրունու Աշխատութիւնները Հ. Ի. էջ 163).

112

Երբ գիտունները կը տեսնեն որ տղէաւները կը քննադատեն իրենց գործերը, կրնան յիշել և յիշեցնել վարդան առակախօսի գայլի սա խօսքը.

Ես իսկզբանէ մսայգործ էի և արդ ոյ արար զիս պայթար:

Ահա զուարձալի պատմութիւնը. «Գալն էգիտ էշմի գէր և կամեցաւ ուտել զնայ. և ասէ էշն. աղաշեմ զքեզ, ոլ զալ, հան զայս խոցս ի յիմ սրտէս և ապայ ուտես զիս. զի աստուած ետ զիս ի ձեռու քո կերակուր. քանզի բեւեռ չար հասաւ յոտս

իւր և տանջէ զիս։ Եւ անցեալ գալն յետոյ
կողմանէ, զի հանցէ զբեւեռն. և էջն ամե-
նայն զամենայն զաւրութեամբ իւրով կիցս
եհան և եհար զբերան զալուն, և ջախ-
ջախեցաւ իսամծերք նորա . և գալն լար
դառնապէս և ասէ. յիրաւի կրեցի զայս
ամենայն վիշտս. զի ես [ի սկ] զբանէ
մսայգործ էի. և արդ ոյ արար զիս պայ-
թար» :

(Ժողով. Առակ. Վարդ Էջ 56-7).

113

Անձ մը իր կարողութեան սահմանէն
անդին ուսնձգելսվ, անդտանգ չի մնար.
յայտնի է կապիկի սա օրինակը.

Կապիկն... ետես, զի ձկնորսն ձգել զուռկանսն
ի վերայ ձկանցն և զնաց ի հաց. և իշեալ ի
ծառէն կապիկն և էտո զուռկան և նման ձկնոր-
սի ձգել ի վերայ ձկանցն կամեցաւ և ինքնն
ըմբոնեցաւ ի նմայ և ասէ. յիրաւի ըմբոնեցայց.
զի յան ձեռն արկի, որ չէի հմուտ:

Կը մեկնէ. «Ճուցանէ առակս, թէ մի
ձեռն արկեր և մի ցանկար գործոյ, որ չես
հմուտ» :

(Նոյն Էջ 120).

114

Տգէտներու հետ բարեկամութիւնը վտանքաւոր է. կարելի է նկատողութեան առնել խիկարի սա իրատը.

Որդեակ լաւ է ընդ առն իմաստնոյ քարինս կրել, քան ընդ առն անմտի գինի ըմպել:

Դարձեալ կ'ըսէ.

Որդեակ ընդ իմաստունն մի անմտիր, և ընդ անմիտն մի իմաստնանար:

Կը յորդորէ նոյնպէս.

Որդեակ, կցորդ լեր առն իմաստնոյ, որ իմաստուն լինիս եքրեւ զնայ:

(Խիկար Եջ 18-4).

115

Բստ Աքովեանի, մեր տգիտութեան պատճառը՝ գիտուն վարիչներ, առաջնորդներ, խելահաս և կրթուած լուսաւորիչներ չունենալնիս է : Կը գրէ վիապասանը. «թէ սուտ եմ ասում՝ այ ջամհամ՝ մատըներգ կոխեցէք, աշխ հանեցէք թէ չէ՝ ախր մեր ազգը որ խեղճ ա մնացել, թրի, կրակի եսիր, բոլորի պատճառն էս ա՝ որ մեզ մէկ ասող չի ըլում՝ թէ

մենք ովկ ենք, մեր հաւատն ի՞նչ ա, ընչի՞ համար ենք եկել աշխարհ։

Քոռ գալիս ենք, քոռ գնում։

(Վերք Հայաստանի Էջ 34)։

116

Կարեւորը սորվիլ, անպէտքը զանցառնել,
այս իսելք է։ Հայաստանցին կ'ըսէ։

Գիշեր ու ցերեկ գինայ (գիտէ),
քաղքի ճամբախ չ'գինայ։

Բուն մեկնութիւնն է։ «Կարեւոր բաներ
անգիտանալ, և անկարեւորը սովլրել ու
միաք պահել»։ Այս առթիւ «Ազգագրական
Հանդէս»ը հետագայ միջադէպքն ալ կը
պատմէ։ «Եշի կարաւանատէր մը իւր էշե-
րով ցորեն կը տանի թաղէշ։ Մութը գիշե-
րին ճամբան կը կորսնցնէ, ու մինչեւ ա-
ռաւօտ լեռներու մէջ կը թափառի։ Ազօ-
թարան բացուելուն պէս էշը կը զռնչէ, իսկ
աէրը բարկանալով կը ծեծէ զայն ու կ'ըսէ,
«Գիշեր ու ցերեկ գինաս (գիտնաս), քաղ-
քի ճամբախ չ'գիտնան։»

(Աւար. Հանդէս. Գիրք VII VIII 1901 Էջ 460)։

117

Հայը կ'ընարէ գիտուն թշնամին, քան թէ
տղէտ բարեկամը. անոր համար ունի սա
առածը.

Գիտունին եղիր գերի
ոչ անգէտին սիրելի:

(Նոյն էջ).

118

Հանճար ու զաղափար անմահութեան ա-
թոռակից նախանձելի յատկութիւններ են.
ոսկին և ուժը կը փճանան, սակայն հանճարն
ու զաղափար յաւիտենակոնօրէն կը շողան,
կ'ապրին. շատ գեղեցիկ կը գանեմ Ռաֆֆիի
սա բացատրութիւնը.

Դուք սպանում էք իմ մարմինը, բայց չէք
կարող սպանել իմ սերմանած մտքերը ...
(Խեթք 307).

119

Հայ կանանց գաստիարակուելուն, կրթուե-
լուն համար, Արծրունին այսպէս կը հառաչէ.

Խեղճ հայոց կանայք, կարծում են թէ. ձեզ
հարկաւոր չէ կրթութիւնը. ձեր հայրերը չեն տուել
ձեզ կրթութիւն և չեն էլ տալիս մինչեւ հիմիք.
(Գ. Արքունու Աշխատութիւնները հատ. I. էջ 12).

120

Հ. Ալիշան հայկական հանճարին վրայ ճառելով, կ'ըսէ.

Ի մտաւորական ասեմ իմաստից, երեւին ինձ Հայք և ի սէր և ի բարգաւաճանս ուսմանց բարենշան գոլ յազինս ամենայն:

(Բազմավեց 1844 էջ 348).

121

Կը հարցընէ Նահապեալ.

Ո՞ւր ես Հայ հանճար. – անցե՞ր ես անցեր: . . .
Հին և երկայն դարք այլեւայլ բաղդով
Մեր հայ հայրենեաց վրայէն սահելով
Սեւ ու սրպիտակ քօղերով պատեր
Զաղլուրն այն ծածկեր
Անցե՞ր են անցեր:
(Հայրութիւն էջ 342).

122

Բայց մեր կեանքն է այդ հանճարը. ահա
կ'երդնու Նահապետ, կանչէ ձեզ Հայե՞ր,
Հանճարն է մեզ կեանք. ըզնա վառեցէք,
Մեծ պատիկ՝ այտոր սիրով վառուեցէք . . .
Ծագէ՛ Հայ հանճար, փայլէ՛ բիւր բոցեր,
իմանան ազգեր՝
թէ հայք չեն անցեր:
(Նոյն էջ 345).

123

**Հանճարներու, իմաստուններու յարմար է
սա զրոյցը.**

Իմաստուն մի ասաց, թէ այն է իմաստուն,
որ նման աղի համեմէշ զամենայն մարդ և նման
ճրագի լուսաւորէ զմերձակայքն և զանկեալքն ի
մեղս հոգեւոր խրատով կանգնէ և զտգէտսն ու-
սուցանէ:

(Ժողովածոյ Վարդ. Առակ Էջ 281).

124

**Հանճարեղ, յաջողակ ու կարողութիւն
ունեցող անձը՝ եթէ օգտակար չընէ իր մտքի
գեղեցիկ յատկութիւնը, մարդկութեան հա-
մար ներկայապէս այդ փառքը ծուխ մ'է, որ
ապազային յաւիտենականօրէն կը չքանայ
առանց նշան մը ձգելու. Եզնիկ լաւ կը գրէ.**

Որպէս ոք եթէ ճարտարութիւն իրաց ինչ գի-
տիցէ, եթէ զնուազածութեան և եթէ զբժշկու-
թեան, եթէ զիւսնութեան, և արդեամբք զնար-
տարութիւնն չցուցանիցէ. ի զուր ունի զհան-
գամանս ճարտարութեանն՝ ուստի ոչ ինքն վայե-
լեսցէ, և ոչ այլոց զգիտութիւն արուեստին ցու-
ցանիցէ:

(Եղեկ Էջ 236-7).

125

Հանճարեղներու, իմաստուններու համար լաւ և գեղեցիկ ճշմարտութիւն մը կրնանք ընդունիլ Միփթար Արբահօր, այս տաղանդաւոր բացատրութիւնը.

Որպէս կաթ մի մեղք միշտ ի մէջ ծովուն կորնչի, նոյնպէս և մի իմաստուն ի բազմութեան յիմարաց:

Ի՞նչ պատճառաւ «զի չունի վկայս . . . Եւ կորնչի ոչ ըստ ինքեան, այլ ըստ յիմարացն, զի ոչ հաւատալով ի նա՛ և ոչ շահին ի նմանէ, և այսպէս կորուսանեն զնառո յինքեանց» :

(Հատուկ էջ 82).

126

Հանճար ունենալով մարդ իմաստուն չըսուիր, այլ ուսումը մշակելով մարդ իմաստուն կ'ըլլայ. ըստ Միփթար Արբահօր.

Սողոմոն միհայն իմաստուն էր, այլ ոչ նաեւ իմաստութիւն:

(Նոյն էջ 84).

127

Չեռքը չէ որ կը հրաշագործէ, այլ խելքը:
Ալաշկերտցիք հետազայ գեղեցիկ առածը
ունին.

Մէկ մեռի՝ հազար շիւարի (շուարիլ):
Հազար մեռի՝ մէկ չ'շիւարի:
 (Ազգը. Հանդես Գիրք VII. VIII. 1901 էջ 473).

Կը մեկնուի. «**Ցոյց կը տրուի որ գործի**
մը աջողութեան մէջ գործողներու քանա-
կութիւնը նշանակութիւն չունի. այլ խելքը:
 (Այս առածը կ'ըսուի երբ չ'կայ այլ եւս
 խելացի գործողը, ու գործը խանգարուած է):

128

Հասարակաց համոզումն է որ խելքը աղ-
քատին է, ստակը հարուսախն. նման առած-
ներ շատ կան, այսպէս և հետազան.

Շորերս հին ա.
Խօսքս անգին ա:

Մեկնուած է. «**Շատ անզամ ցնցոտի-**
ներ հազած մարդերը ընսիր խօսքեր և մեծ
արժանիք կ'ունենան:

(Նոյն էջ 476).

129

Առվորական զրոյց մըն է դարձած, կ'ըսուի որ խելացին անօթի չի մնար. և անոր համար Ալաշկերտցիք կ'ըսեն.

Սարգիս, խելք ունի՞ս, կապրիս:
Ըսել կ'ուղեն. « Խելացիութիւնը և ո՛չ մէկ քանի կարօտ կ'ընէ մարդս »:
(Նոյե Էջ 481).

130

Հայու խելքին համար հանրացած է սա գեղեցիկ առ սկը.

Հարի (մինչեւ) հայուն յետին խելքն ի գայ,
առաջին խելք կ'երթայ:

Այսպէս է առակիս մեկնութիւնը. « Ամէն հայ առաջին գործողութեան կը սխալի :
Փորձը միայն լաւ խելք կը բերէ հային,
բայց այն ատեն գործելու առիթները ձեռքէ
կ'ելնեն : Ասոր կ'ըսեն « Հայու խելք »:
Քիւրանըը կ'ըսեն « հայու յետին խելք
ինձի եղներ » :

(Նոյե Էջ 495)

ԳԼՈՒԽ Բ.

ՍԵՐ, ՃԱՇԱԿ, ՊԱՀԱՆՁ, ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ,
ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

131

Գամառ Քաթիպա մեզ կը պատուիրէ, որ
եթէ, հայ ենք սիրենք հայութիւնը և Հայաս-
տանը մեր յուսոյ ասաղը նկատենք. Կ'ըսէ
Օտարինը դու մի՛ ատիլ, մի՛ էլ սիրիլ կուրօրէն,
Բայց դու հայի օգուտները միշտ վեր դասէ ա-
մենէն:

(Գամառ Քաթիպա. « Ոտանաւորներ » էջ 61).

132

Նոյն բանաստեղծը կը շարունակէ ազգա-
սիրական պատուէլները.

Սիրէ ազգը ոչ լոկ խօսքով, սիրէ ինչպէս քու
անձը
Նրա օգտին թէ պէտք լինի, զոհէ բոլոր քու
գանձը.

Մի ինայիլ կեանքըդ անգամ, արիւնըդ բեր նո-
րան զոհ.

Ո՛չ այն յուսով, որ քու ազգը իսկոյն լինի քեզ-
նից զոհ:

(Նոյն էջ 61).

133

**ՄԵՐ այդ կրակուբոց բանաստեղծը՝
անապարեր հայուն գլխուն անէծք կը կար-
դայ.**

**Բայց վայ նոցա, որք անզգայ են իւր ազգի վի-
ճակին,
Հազար անէծք նոցա վերայ, էրնե՛կ շան պէս
սատակին:**

(Նոյն էջ 61).

134

ԿԸ հարցընէ նոյն բաֆաստեղծը.
Դու պատրա՞մտ ես թողնել կայքըդ, ծընողք,
եղբարք սիրական,
Սիրելոյդ տեղ կըրծիդ սեղմել միշտ մահառիթ
հըրացան.
Դու պատրա՞մտ ես անվախ երթալ թշնամի սու-
րի դէմ,
Սարսափելի մահըդ տեսնել դու կարո՞դ ես ծա-
ղրադէմ:

Այն ժամանակ մենք հայ ենք ...

(Նոյն էջ 62).

135

**Բանաստեղծ Քաթիպան կ'ըսէ, տատաս-
կէն սէր վարդ մի սպասեր. այլ,
Հայ Սիսչը**

6

Սէրը նըմանից պէտք է պահանջել:
(Նոյն էջ 84).

136

**Գամառ Քաթիպա հայ պատանեկին կուրծ-
քը թնդացուցած է հետեւեալ խիզախ երգով.**

Մեր յոյսը միայն մեր վըրայ լինի,
Զեն պէտք մեզ նպաստ մնծատուններին,
Ողումութեամբ թող մուրացիկը ապրի,
Մուրացողըն միշտ ստրուկ է օտարին: . . .
Օտարի շահը թոյն է մահաբեր,
Աչք է կուրացնում, միտք է պըղտորում,
Գերի է դարձնում մարդ ազատասէր,
Ոսկի շըղթայով ձեռք ոտք է կապում:
(Նոյն էջ 110).

137

**Բանաստեղծը իր «Թէ իմ ալեւոր հերքս
սեւնային . . .» սրաատրոփ երգին մէջ,**
հայ օրիորդներուն կ'երգէ.

Ժանգոտած ու գուլ են մեր թըրերը:
Տուէք բեհեզեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը
Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից: -
Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը:
(Նոյն էջ 126).

138

Քաթիպայի ազգասիրութիւնը անկեղծ է, նա հայ կրօնք և ազգութիւն ուրացողը վայրի գազան կը համարի «Ազգուրացն», ասէք, չէ վայրի գազան. նա չի կրնար մոշոաւալ Աւարայրի նահատակները, չի կրնար հրաժարուիլ ազգէն, ինչպէս որ միսր ոսկրէն չի բաժնուիր.

Սինլըֆոր կը մնամ, ըստոր ու ատած,
Բայց ես չեմ լինել երբէք ազգուրաց:
(Նոյն էջ 168).

139

Բանասահեղծը «Ի՞նչ է մեզ պակաս» երգով, ցոյց կու տայ որ հայը բթամիտ չէ, ծոյլ չէ, անզործ չէ, կրօնազուրկ չէ, ունի Լոռիս Մէլիքովի սլէս քաջեր, շնորհալի հայեր, խելացիներ. Ժիր, համեստ հայութիւն մը, որուն կը պակսի միայն զիրար սիրել. կ'երգէ

Հայեր, չի լինիլ անտեղի գովեստ,
թէ ձեզ անուանեմ խելօք, ժիր, համեստ.
Սիայն կը մընայ ձեզ իրար սիրել
Ու աշխարհ տիրել:
(Նոյն էջ 175).

140

**Ոչ դրամասէր, այլ ազգասէր պէտք է ըլ-
լայ հայը.**

Ա՛ն, Հայեր, Հայեր. թէ որ ձեր ոսկին
կիսով չափ զոհուէր յօգուտ հայ ազգին,
Առ միշտ կը դադրէր ձեր լացն ու կական
Ու դրախտ երկրաւոր կ'ըլլար Հայաստան։
(Նոյն էջ 186).

141

**Նոյն բանաստեղծը ունայն սիրոյ մասին
կ'ակնարկէ.**

Իր ձեռքով բըռնել գիշերվայ խըպլիք –
Ճէպի զարար է – ամենքըդ գիտիք։
(Նոյն էջ 316).

142

**Գ. Արծրունի ազգասիրութիւնը Բ՞նչ է
հարցման կը պատասխանէ.**

Ազգասիրութիւնը այնպիսի զգացումն է, որով
մարդը պարտաւորում է «օգտաէտ» Ամել իւր
հասարակութեան։

(Գ. Արծրունու Աշխատութիւնները Հ. Ի. էջ 149)։

143

Առանց լուսաւոր պահանջներու չի կայ յառաջադիմութիւն. իրաւացի է Գ. Արծրունիի սա խօսքը.

Ինչքան լուսաւորվում է մի հասարակութիւն, այնքան բազմանում են հասարակութեան անդամների պահանջմունքը:

(Նոյն էջ 350).

144

Ձնայելով տիսուր և տկարացնող հանգամանքներուն, եթէ մէկը համեստ ուժերէն սեծամեծներ պահանջէ, կարելի է Ալիշանին հետ այսպէս պատասխանել.

Իսկ եթէ Խորենացին հոմերականս պահանջից բանահիւսութիւնս, այլ խնդիր է:

(Բազմավայ 1844 էջ 348).

145

Հ. Ալիշան՝ ազգատեացը անհետեղ հրէշ կ'անուանէ, իսկ անկեղծ ազգասէրին վրայ կը հիանայ, իրեն համար.

Անկեղծ հայրենասէրն՝ յանմահութիւն ճակատագրեալ է:

(Նոյն էջ 368)

146

**Թէ կը պանծանք հայրենասիրութեամբ ,
կը պատուիրէ Հ. Ալիշան .**

Պանծանք դուք ընդ հայրենասիրութիւն ձեր .
նորոգեցէք ապա զյիշատակս նախնեաց :
(Բազմ. 1845 էջ 334).

147

**Ամէն հայ իր կարողութեան համեմատ
պէտք է օգտակար ընել իր ազգասիրու-
թիւնը : Հ. Ալիշան կը պատուիրէ , որ , ոչ
ոք լքանի , այլ .**

Բուռն հարցէ ամենայն ոք յօգուտ ազգին ո-
րով իւիք և ձեռնաս իցէ , որ հանճարով՝ հան-
ճարով , որ իշխանութեամբ՝ իշխանութեամբ , որ
յարուեստէ՝ յարուեստէ , որ ընչիւք՝ ընչիւք :
(Նոյն էջ 335).

148

**Հ. Ալիշան անկեղծ ու բարի ազգասէր-
ներուն յորդոր կը կարդայ . « Առ ի՞նչ հայ-
րենասիրացդ նկրտիցի օգտակար ջան : Զի-
հայրենիս ունիցիք լնաիրս և բարեկեցիկս ...
Քանի անմարթ է բարւոյ իմիք . հաստա-**

առութիւն առնուլ ի հայրենիս և բարդաւաճել՝ մինչեւ ոչ քաղաքացիքն իցեն լարիք։ « Ուր չիք հայրենիք, ասէր ոմն փիլիսոփայ, շեն անդ և քաղաքացիք ». Սակայն Հ. Ալիշան աւելին ալ կ'ըսէ.

Ուր քաղաքացի չիք. չկան և հայրենիք, և են ինձ քաղաքացիք՝ ընտիրքն ի մարդկանէ, որ միայն են պատճառք շինութեան աշխարհի։

(Բազմ. 1895 Էջ 343)։

149

Միեւնոյն յուրդորախօսը իր միաբը հետագայ տողին մէջ աւելի լաւ կը բացարէ.

Բուն իսկ հայրենիք մնք եմք անձն իւրաքանչչւր, և լաւութիւնք մեր նեցուկք են նորա։

(Նոյն Էջ 343)։

150

Ազգասիրութեան, հայրենասիրութեան մասին Հ. Ալիշան Ռաֆայէլեան վարժարանի աւարտաւարժ աշակերտաց շատ անկեղծ և հրատապ սրտով կը խօսի . ով որ անարդեր է դէպ ի հայրենիքը, ան իրաւունք չունի ընկերութեան մէջ ապրիլ, դուրս ովէտք

է ելլել « յազգէս . ի բնաւ իսկ մարդկանէ , յանտառս յանապատս ի սառամանիս զիցէ զբոյն իւր » : Հ. Ալիշան իր ազգասիրական պրօշակին անձնանուէր քարոզիչն է . և կ'ըսէ , որ եթէ ինքը հայրենասիրութեան մէջ շափազանցէ , ու իր ազգասիրութեամբ եթէ վնասէ հայրենեաց՝ « թող կապեսցեն արկցին զիս ի ծծմբահոտ վիհս Մասեաց , անդ քաւեցից զառաւել սիրոյն իմոյ մեղանս » : Պակայն ինչ որ ալ ըլլայ , նա կը խոսսառվանի և կը քարոզէ .

Այլ ես սիրեմ և առաւել սիրեմ զշայաստան հայրենիսն իմ , և զնոյն սէր անխիղճ քարոզեմ ամենեցուն :

Եւ կ'ըսէ . « Պարաք են ձեզ որոյիք Հայկայ ճանաչել զի՞նչ են հայրենիք , և որպիսի ձերդ . և ի՞մ իմիք կարօտ , և դուք ուրով ձեռնհաս էք նմա յօգուտ . սիրել զազգս Հայոց առաւել քան զայլս յազգաց ; որպէս զանձն քան զայլոց անձինս . ճանաչել և պահել անվիթար զսեփական շնորհս ազգիս , զլեզու նորա , զպատմութիւն նորա , զսովուրութիւն և զախորժակս նորա անվիաս , զհա-

րազատ գպրութիւն նորա, զստացուածս նորա և զփառս անուան նորա: Զայսպիսի կամիմ հայրենասովորութիւն, և ի սմին վառել զամենեսին . . . »:

(Բազմավեց 1848 էջ 181).

151

« Քաջալերիշ և արիական օգի մը կայ Հ. Առաջանի այս խօսքերուն մէջ.

Արիութիւն առաջին օրէնք են հայրենասովորութեան:

Այս օրէնքը քարոզած է Ռափայէլեան վարժարանի աւարտավարժ սաներուն. կը պատուիրէ որ այդ ոգւալ երթան մտնեն Հայաստան. զանոնք կը խրախուսէ, անոնց վիտել կու տայ, որ « փառաւոր նահատակութիւնք » դժուարաւ ձեռք կը ձգուին: Աշտկերտաց արիասրատութիւն կը քարոզէ, « ի վատասսրատութենէ ի բազում չարիս կործանեցաւ ազգս մեր և հանապազօր ի նոյն տառապի »:

(Բազմ. 1848 էջ 182).

152

Հ. Ալիշան՝ մարդասիրութիւնը ազգասիրութենէն չի զանազաներ. կ'ըսէ. « Ասւա է այն փլխսոփայն որ ազգասիրութիւնը մարդասիրութեան դէմ կր կարծէ » : Նահապեար մարդասէր է, սակայն աւելի հայասէր. իրեն համար նախ ազգը, յետոյ օտար մարդկութիւնը . . .

Մարդկային բնութիւննիս մեզ կը սորէէցընէ մարդասէր ըլլալ, սիրել մեր ազգայինները քան զուրիշ ազգեր :

(Բազմավեց 1849. Էջ 98.)

Այդ էջերուն մէջ միջազգային և ազգային սիրոյ միջեւ՝ մանրամասնօրէն խաիրներ գնելով, կը պաշտպանէ կեզրոնացած ազգասիրութիւնը, այսինքն զուտ և միակ հայասիրութիւն :

153

Հայերէն լեզուն մեր ազգասիրութեան սուկի շղթան է . լեզուի մռացութիւննը, կը վտանգէ մեր ազգային ողին. այս առթիւ կը գրէ **Հ. Ալիշան.**

Ուր որ լեզուն մնացեր է՝ դեռ ազգասիրութիւն ալ կայ հոն, ուր որ բոլորովին լեզուակորոյս են եղեր՝ հոն նաեւ ազգասիրութիւնը բոլորովին կորածի պէս է:

(Բագր. 1849 էջ 130).

154

Խաղաղաբարոյ և համեստ Նահապետը ի սէր ազգային պատոյն զայրոյթ կը քարոզէ.

Կրակ դառնանք. երբոր մէկը մեր նախնիքը մեր ազգութիւնը կը նախատէ:

(Նոյն էջ 131).

155

Ազգասիրական ոգւոյ կոյր թշնամութիւն մը կրնանք համարիլ զաւառի ու մայրաքաղքի ազգայնոց միջեւ ծագած դրսեցի, ներս սրցի անիմաստ խարութիւնները։ Այդ ոգւոյն հակառակ է և Հ. Ալիշան. ինքն եւս ըլլալով մայրաքաղաքացի – Պոլսեցի, կը պախարակէ այն ատելութիւնը որ դէպ ի զաւացիններն ունի Պոլսեցի հայ հասարակութիւնը. պէտք է այս որոշ սկզբունքը ունենալ, որ

Մեր ազգին սկիզբը ոչ ի Պօլիս եղեր է, ոչ Գաղատիա, ոչ Կաֆա, ոչ Կալկադա. ամէնքս ալ մէկմէկէ առաջ ետեւ Հայաստանէն եկած ենք, և հիմայ ուր ալ որ ենք պանդուխտ ենք: Վերցընենք ուրեմն աս գաւառական զանազանութիւնները:

Ինչու, վասն զի անոնք «բարակ առուներ կը նմանին, շատերը տղմի մէջէն երթալով, և բուն աղբիւրը վնառենք ու միանանք մեր ազդակցութեան սիրովը՝ իմանանք որ ասոնք են մեր մէջ առակ եղած ու նզոված անմիաբանութիւնը սնուցանող»: Այսէ Հ. Ալիշանի նահապետական յորդորը:

(Բարե. 1849 էջ 131).

156

Օտար քնարը շեմ գիտեր կրցե՞ր է երգել և աստուածացընել սէրը, այն կուսական սէրը, ինչպէս որ բամբուահարեր է դրախտի մէջ կատարուած ամուսնական, սէրը մարտկութեան անդրանիկ անարատ կոյս ամոլներու օրհնեալ և քաղցրանայշ սէրը: Նահապետ իր «Հարսներդ առազաստի նախածընողացն յԵղեմն գրդարանի» հրաշահիւս

Քնարերգութեան մէջ, օրհնելով նախնական ամուսնութիւնը, կը հնչեցընէ սիրոյ զրուաշիքը.

Ե՛լ սէր, երեւեաց ի յարարածս ի քէն հաստեալս.
Համբուրեցէք ողիք գիշերույ զդէմս Աղամայ,
Շընչեսջիք սողուիք ի հոպոպիս մեղոյչն Եւայ.
Բուրեսցեն ծաղկունք բուրմունս անոյշ ի հարսնարանն . . .

Հընչէք մի լըռէք, օդք համասփիւռ ըզսէր հընչէք.
Ըզսէր՝ երկինք, ըզսէր՝ երկիր, ըզսէր՝ ով բնութիւն.

Համայն հաստուածք միաբարբառ հընչեցէք Աէր,
Աէր . . .

(Հայուռեկ Էջ 32).

157

Հ. Ալիշան դրախտի կուսական սէրէն աւելի ուրիշ գոռ սէր մը կը բոմբիսնէ. Հայրենիքի սէրը — ազգասիրութիւնը: Իր «Հայրունի» նուագները կ'որոտան Նահապետի սրտին այդ սէրը: Գրչով ու սրաով քաջամարտիկ զիւցազը կը յորդորէ ի զէն և ի յաղթ.

Ընթացուք ի զէն ի մարտ և ի յաղթ,
Հակրենեաց հիմունք ամրասցին անխախտ.

Հայոց հաւատք Հայոց տուն
կացցեն ազատ հաստատուն:

(Նոյն Էջ 101).

158

Իսկ լնդհանուր մարդասիրութեան գալով,
կրնանք յիշել Եզնիայ սա խօսքը, թէ
Եղբայրասէր կրօնաւոր ազգակցութիւն ունի
առ Քրիստոս.

(Եթիկ Էջ 304).

159

Ազգասիրութիւնը Աբովյեանի սրաին մէջ
շատ վեհ անկեղծութիւն մ'ունի: Իր «Վէրք
Հայաստանի» անունով վիպասանութեան
յառաջաբանին ոգին՝ վկայ է իրեն այդ սուրբ
զգացումին : Զինջ, պաղպաջուն բոց մը կը

հրդեհի իր ազգասէր սրաին մէջ, հայութեան
ամէն մէկ նշխարին պատրաստ է ողջակէղ
ըլլալ. կը գրէ.

Շատ անգամ մէկ Հայ տեսնելիս՝ ուզում էի՝
էլած շունչս էլ հանեմ, նրան տամ, բայց ախ
լեզուս փակ էր . . .

Ինքը բացաւ այդ փակ լեզուն, ինքը կըտ-
րեց ժողովուրդի համրութեան լարը. խօսե-
ցաւ, գրեց գեղջուկին լեզուվ. հայրենասի-րութիւնը, ազգասիրութիւնը զինքը մզեց նոր****

հայութեան նոր Մեսրոպը ըլլալ.

(Վէրք Հայաստանի Էջ4).

160

Ճաշակի գատաւոր կարելի չէ ըլլալ .
ամէն մարդ իր գաղափարին համեմատ կը
սիրէ, կը խորհի ու կը քննէ : Կը զրէ ոռւ-
սահայ ծանօթ վիպասանը Խ. Աբովեան .

Ամէն մարդ իր սրտի խարջ բան կ'ուզէ : Քո
դաբլու փլաւն ինձ ի՞նչ օգուտ, որ ես չեմ սի-
րում :

(Ակրք Հայաստանի Էջ 7).

161

Աբովեանի կուրծքին մէջ ազգասիրութիւնը
կաթոգին կը տրոփէ .

Հայոց ազգ, Հայոց ազգ, ձեր ջանին մեռնիմ.
Հայոց ազգ քո հողին մատաղ . . .

(Նոյն Էջ 78).

162

Օրինաւոր հարս ու փեսի սէրը կ'սղբերգէ
Աբովեան : Պանդուխա Աղասին է որ իր Նազ-
լուն կու լայ .

Գարունքը բացվել ա, դաշտեր կանաչել,
Ծառերը ծաղկել, սարեր զարդարել,

Բւբիւլն իր վարդի սիրովն կշտացել.
Հէնց ես՝ ախ՝ սիրոյդ կարօտ մնացել:

ԽԵՂՃՐ Կ'ԵՐԳՔ.

Ինչ քար տեսնում եմ՝ դու ես առաջիս,
ինչ խոտ կոխում եմ՝ դու միտս գալիս.
Աղբըի շուրն էլ քո՞ համն ա տալիս,
Հանդի ծաղիկն էլ իմ օրը լալիս. ախ՝ օրս
լալիս:

(Նոյն էջ 219).

163

Աքովիեան սիրոյ համար ըսած է. « Մեր
ու նշանած գլխիս կրակ են ածում, սար ու
ձոր ինձ ինչ ա մնում ուաեն, մէկ քար
շունինք, որ գլխներս վրէն զնենք. էլի դու
ով սէր, ով բնութիւն՝ ուզում ես ցոյց տալ
քո զօրութիւնը: Ա՛խ՝ ուր կորչի մարդ, որ
քո ձեռիցը պրծնի. քո ցաւը չը տեսնի.
առաջ վառում, բորբոքում ես մեր սիրտը,
յետոյ էրում, խորովում » . սէրը,

Առաջ վարդի հոտով գալիս՝ մեր սիրտը մըտ-
նում, յետոյ փուշ ու սուր դառնում, մեզ կտրա-
սում:

(Նոյն էջ 226).

164

**Ժողովրդական մուսայներու քնարը շատ
շիկնելով կը ձայնէ սէրը. մենաւոր, լքեալ
հոգին, իր տարամերժեալ եարը կարօտով
կ'երգէ. իր հարազատ սրատակիցը հեռու է,
ծովերովի բաժնուած. մատղաշ կինը կ'երգէ.
« Ծալը մահանայ կ'ընես . . . »**

**Թեւերս կարմունչ կապեմ,
Ծովեզերէն անցնիս ու գաս . . .**

**Տենչալով կը հրաւիրէ որ գայ իր պան-
դուխտ ամուսինը, իր երգով անոր կը պա-
տրաստէ խնջոյք. զինի կը հրամցնէ որ խմէ.
« Խըմէ. ուր ըսեմ, անոյշ . . . »**

(Համով-Հոռով էջ 296)

165

**Հայաստանցի հարսու փեսի սէրը կուսա-
կան է, անոնց վշաերը սրտաճմլիկ. վկայ
է Ակնայ « Անտունի » երգի հետազայ քնքուշ
բանախօսութիւնը, զոր կ'ընեն հարսն ու
կեսուր.**

**Հարսնուկ, քու ո՞ր տեղդ ցաւցեր,
Մարիկ, քու որդւոյդ սիրոյն**

Հայ Միաբը

7

իմ ամէն տեղիկս է ցաւցեր։
 Մի լար, ջահելուկ հարսնուկ,
 Գիր կանեմ որդիս կ'բերեմ։
 Գիր անես որդիդ բերես,
 Աստուծոյ լուսոյն տիրանաս.
 Գիր չանես որդիդ չ'բերես,
 Կանիծեմ ուր քար կու դառնաս։

Սարէն լուսիկ մը կը փրթի, հարսը ա-
նոր գանգատելավ կը պատուիրէ.

Գնա Ղարիբիս ըսէ,
 Չ'կենայ ու ելլայ զայ։
 Խօսքունքդ գլխուս վրայ,
 Դուռը չ'գիտեմ դարիբիդ։
 Եկոր նշանով ցոյց տամ.
 Բարձրը պատ ու ծառն ի վրան.
 Նստեր է ծառին շուքը
 Նոյշ դրեր, շաքար կու ծախէ,
 Ամենուն աժան աժան,
 Խս մոռցեր, նո՞ւշ կու ծախէ։

(Նոյն Էջ 298-9).

166

Հայ և Քիւրս ազգաց մէջ « Սիա-ման-
 դոն և Խըշէ-զարէ » երգը ողբերգական յի-
 շատակով շատ յուզիչ աւանդութիւն մը կեն-
 դանի պահած է . այդ լեռնական զաւակ-

Ներու ամուսնական սիրոյ նուիրականութիւնը
դիւցազնական վեհութեամբ քանդակուած է.
ուր որ սէրը անկեղծութեամբ ամրացած է,
մահ ու արհաւիրք չեն կարող ջախջախել
զայն։ Սիամանդոն հայ երիտասարդ մըն է,
Խըջէ-զարէն քրոգու աղջիկ, Զըռըգացի ցեղին
մեծասան ծնունդ։ Ատոնց երգը որ հայկա-
կան ու քրդական քարայրներու մէջ որտա-
շարժ եղանակով զեռ արձագանգ կու տայ,
մեղմիկ արձագանդ մը կ'ըլլանք անոր ամե-
նէն յուզիչ լարերուն։ Երկու սիրահար սըր-
տեր, Սիա-մանդոն և Խըջէ-զարէ, միեւնոյն
գիշերը կ'երազեն իրարու մատանի փոխա-
նակած։ Սիամանդոն արթնալուն, դէպ ու-
ղիղ կ'արշաւէ Զըռըգանցւոց ցեղին մօտ .
պառաւէ մը կը հաւրընկալուի։ Հոն կը լսէ
երգ ու պարի հանդիսական կոչն ու աղա-
ղակ. կը հարցնէ. « Ինչ՞ է այս ուրախու-
թիւնը, և որո՞յ համար այս հանդէսը, ո՞ մա-
միկ »։ Պառաւը կը պատասխանէ. « Խէջէ-
զարէի հարսնիքն է, որդի, անոր հարսնառն
էկեր է »։ Սիամանդոն կ'աղաչէ պառաւին .
« Որ նշան մը իրմէն տանի հասցունէ Խը-

ջէզարէին » ,ու երազափոխ մատանին մատանէն հանելով կը յանձնէ պառաւին : Ասիկա յանձն կ'առնէ , նախշուն թաշկինակի մէջ կը լեցընէ անկուտ չամիչ , որոնց հետ կը խառնէ մատանին . կ'երթայ աչքի լոյս հարսնութեան խըջէզարէին . սա ընծան կ'ընդունի , և մատանին աչքին հանդիպելով , կը ճանշնայ : « Կը հառաչէ խորին : Կ'ուշաթափի . աչքեր կը մթնին . կը թուլնայ . կ'իյնայ » : Քիչ վերջը , սղառաւին պաղուկ ափէն , կարեկից ձայնէն կը սթափի խըջէզարէն և կ'ըսէ . « Մամիկ , խըջէզարէն քեզ մատաղ , գիտե՞ս այս մատնեկին աէրն ուր է » : Պառաւը կը պատասխանէ . « Այդ մատնեկին տէրը իմ տունը իջեւանած է » : Խըջէզարէն կը պատուիրէ . « Գընա՞ , մամիկ , զընա Սիամանդոյին ասա՞ , մէկ օր կայ ու մէկ հնարք . — Վաղ առաւօտ մօրս գերեզմանին վրայ կ'երթամ՝ յուխա . մինակ կ'երթամ . — Թող այն տեղը գայ Սիամանդոյն » : Պառաւը տեսածը լսածը կը պատմէ Սիամանդոյին . սա զիշերանց կը զիմէ նշանակուած գերեզմանը , ուր կը սկսի խոր քնանալ . հսն կու գայ Խը-

ՃԵՂԱՐՔՆ : Եւ, Ճուխամակ մի սսկիէ ճան իր
ջոբէն կը հանէ անոր ջոբը կը զնէ և իր
հօր տունը կը դառնայ : « Արեւը կէսօրը
նըշներ էր, Սիամանդոն իր աշքերը բաց ա-
րաց, — Զորս կողմն նայեցաւ, գլուխը ծե-
ծեց, ու պառաւոյ տունը դարձաւ » : Խեղճ
Սիամանդոն երբ յաւսախար կը տիսրի, պա-
ռաւը կ'ըսէ անոր. « Որդի զու շաա միամիտ
ես : Փո ծոցն ու ջոբը որսնե՞ր ես » . Սիա-
մանդոն որոնելով, կը գանէ խըջէղէրի զրած
Ճուխամակ սոկիէ ճաները. ոա ի՞նչ կը նշա-
նակէր. ի՞նչ խորհսւրդ սւնէր . պառաւը կը
պատասխանէ . « Քեզ հասկըցուցեր է թէ՝
դու զեռ մանուկ ես, Սիրոյ մարդ չես » .
Սիամանդոն պառաւին միջնորդութեամբը խը-
ջէղարէն վերջին խօսք մը կը խնդրէ որ
կատարէ : Խըջէղարէն կը պատասխանէ . որ
եթէ Սիամանդոն մարդ է, վաղը զիս հարս
տանողներու ձեռքէն թող գայ կտրճութեամբ
զիս իլէ : Սիամանդոն իր քաջութիւնը ցոյց
կու աայ, կայծակի պէս հարսնեւորաց մէջ
կ'իյնայ . « Մէկ ձեռքով բոնեց խըջէղարէի
կակուղ մէջքէն, — Դըրաւ իր կըոնակը, ու

երեքօրեայ գնացքը քըշեցին մէկ լար » : Նշանածը անոնց ետեւէն կ'իյնայ . Սիամանդոն անոր կը զարնէ նետը . ան « Մըռուաց » : Ու ըզՍիամանդոն զընարէն ի վայր հոլովեց ». Խըջէզարէն կ'իյնայ իր սիրելի Սիամանդոյի ետեւէն . « Արձանացաւ , կեցաւ զընարի զլուխը . – Այնտեղը զպաւ իր ականջին Սիամանդոյի ցաւէն տըքնալու ձայնը , . . . Ա՛ի մի արքար , իմ Սիամանդոյ , մի տըքար . . . » : Սիամանդոյ կը պատասխանէ . « Մ՛ի լար իմ Խըջէչարէ , մի՞ լար . . . Քո լացը ինձ աւելի ցաւ է . . . մի լար . . . » Խըջէզարէն սրտաբեկ կը յիշեցընէ Սիամանդոյի , թէ պէտք չէր այդ որսին ետեւէն իյնալ . « Թէ քեզ որս պիտի , եռ քեզ որս հերիք եմ . Մի՞ երթար » : Յետոյ յուսաբեկ , և հարազատ գուրզուրանքէն մղուած , կ'ըսէ Սիամանդոյին :

Սիամանդոյ , ինձ ճամբայ մի տուր քովդ գալու , Ճամբայ մի ցոյց տուր , զամ քեզի հետ ճոգի տալու :

Փայտատ ու թի բերէք , բերէք պալեր ու զընարներ շըրջեցէք ,

ԽԾՀԵՂԱՐՔՆ Ու ՍԻԱՄԱՆԴՐՈՆ ՄԵԿՄԵՂ ՔԱՐԵՐՈՒՆ
ՄԱԿ ԹԱՂԵՑԵՔ ...

Այս սրաւառուչ երգը ողբերգելով, « ա-
չերը կը խըփէ, զինքն ի վայր կը հոսէ .
մէկ անդամ միայն կ'աւաշէ – իմ Սիամա-
դոյ . . . Եւ Սիամանդրոն հազիւ արձագանգ
մի կը տայ – իմ ԽԾՀԵՂԱՐՔ . . . » ու եր-
կուքը ի միասին հօն կը լուեն կը մեռնին,
հօն կը մնան : Սրուանձաեան կը յիշատակէ
հետեւեալը . « Աւանդութիւնը կ'ըսէ թէ . Այն
տեղը երկու ծաղիկներ կը բուսնին համա-
նըման ամեն գարնան, և երկու թիթեռնիկ-
ներ կու գան, կը թառին ու կը թըռուրուան
այդ խորհրդաւոր ծաղկանց շուրջն ու վրան » :

(Համով-Հոտով էջ 269-77).

167

Աէրը երբ կոյս է և անկեղծ, յագենալ
չունի.

Աշխարքն աշխարով կըշտացաւ, իմ սիրտըն
քիզանից սօվ ա:

(Ապյար-Նօվայ էջ 76).

168

Ուշ կ'ասէ, չի սիրուիր. սիրողը կը սիրուի.
Սայեաթ Նօվան շատ լաւ ըստած է.

Օվ օր ինձ չ'ի սիրի, իս էլ չ'իմ սիրի.
Աչքըն սէր կու բերէ . . .

(Ապար Նովայ էջ 180).

169

Գարաշար պահանջկոտներու համար Ա-
լաշկերացիք կը գործածեն սա առակը.

Կուզ (կզաքիս)
սովորաւ ի թուզ.

Այս. Հաճդես գիրք VII VIII, 1901 էջ 469).

170

Սիրողին ճաշակին համեմատ՝ կը սիրուի
իր մը. նման զնման կը սիրէ, թէեւ սիրածը
խորշելի ըլլայ ուրիշին համար։ Ալաշկերա-
ցիք այս առթիւ կը գործածեն սա առակը.

Ուսին ու բարդին
ամէն (իւրաքանչիւր) խըտ (հետ) ուր (իւր) մաղտին
(ախորժակ)։

(Նոյն էջ 477).

171

Աղքատը երբ անհամեսա պահանջներ
ունենայ, Հայաստանցին անոր կը յիշեցընէ.

Ուր (իւր) պապ (հայր) որ չ'տեսնէր.
գինէր (գիտէր) թէ ինք փաշի տղայ էր:

Կը մեկնուի. « Բարձր պահանջներ ընել,
մոռանալով իր ծագումը և արժանաւորու-
թիւնը » :

(Կոյճ Էջ 478).

172

Ըստանեկտն սէրը կրակ է, եթէ հա-
րազատ է ու անկեղծ. հեռաւորութիւնը չի
ցրացներ, այլ աւելի կը տոշորէ կարօտի
կրակով. սակայն Ալաշկերացիք իրենց հե-
տագայ առակով հակառակը կ'ըսեն.

Աչքէն հեռու.
'սրտէն հեռու:

Մեկնութիւնն է. « Շարունակ աշքին առ-
ջեւ չ'գտնուող բարեկամը կամ ազգականը
ցուրտ սէր կը վայելէ » :

(Կոյճ Էջ 488).

173

**Զափաւորութիւնը գերազասելի է . ըստ
առակին։**

Ճառ մի՛ սիրեր՝ ատել կայ,
շատ մի՛ ատեր, սիրել կայ:
(Նոյն էջ 399)։

174

**Երբ պառաւները կամ ծերացածները ան-
պարկեշտ մտքեր կ'ունենան, Հայաստանցին
պարկեշտ առակով կը հեգնէ զանոնք։**

Զուրն ընկեր առուըներ (առու)
սէրն ընկեր պառւըներ (պառաւ):
(Նոյն էջ 502)։

175

**Աէրը, գուրգուրանքը միայն բանաւորներուն
սեփականութիւնն չէ. ծաղիկն, սոխակն, և
լուսնակ իրարու կը տածեն սէր քնքոյշ և
անոյշ : Անոնք զիրար կը սիրեն և միմեանց
ցաւը կը սգան.**

Սոխակ լացաւ ու մարեցաւ.
Երբ իր սիրուն վարդ թօշնեցաւ,
գոհարիկ.

Լուսին տեսաւ, հեծեց լացաւ,
Երբ իր սիրուն սոխակ մեռաւ,
Գոհարիկ։

Սրտագրաւ աւանդութիւնը կ'իմացընէ .
« Աւանդութիւն է ի հայո, թէ երբ զրախ-
տին մէջ առաջին անգամ վարդ է թառա-
մեր, ցայզանուագ սոխակին ձայնն էլ մա-
րեր է, որուն վրայ լաւին եւս արաասուեր
է. այգուն շաղցօղը նոյն արցունքն է եղեր,
որ ցարդ կը շարունակուի ի սէր սոխակին
վաղամեռիկ լինելոյ առ սէր վարդին » :
(Հայկ. Յիսեակ առակ. Բ. Էջ 37).



ԳԼՈՒԽ Գ.

ԶՈՒԱՐԹՈՒԹԻՒՆ, ԶԱՅՐՈՅԹ, ՀԱՅՈՅՔ,
ՑԱԽ, ԱՂՅՈՅՔ.

176

Ա Յ քնարը երբ կ'երգէ քաջութիւնը,
չի մոռնար արքայութիւնը. մեր կրակոտ
բանսսաեղծ Գամառ Քաթիպան կը յիշէ մե-
ղաւոր եղբայրը. կը միշէ աղօթքը - հազե-
կան կենսական կրակը, և կ'ուզէ որ ան-
մեղը մեղաւորին համար աղօթէ.

Թէ որ անմեղը չաղօթէր իսկի
իրա մեղաւոր աղքօրը խաթրին,
երկիր կու ճաքուէր ահեղ ձէներով,
երկինք կու խոռվէր վերից մեր գլխին:
(Պատահաւորմեր էջ 71).

177

**Շուարած ու յուսահատ հայութիւնը կ'ող-
բայ.**

Սուրբ խորան չունենք, արդ ուր աղօթենք,
Հիմի՞ էլ լոենք:

(Նոյն էջ 96).

178

Երբ մեր մէջ անդստին մեր նախահարց
և նախնի գիւցազանց օրերէն՝ ճարակ գտաւ
կոռւարար հագին երկպառակութեան, շա-
րութեան ու նախանձի սաստանան Մըլուսը
յայտնեցաւ Հայաստանի վրայ, « ծնաւ հայ-
կական վիշտ ու ցաւ » : Գամառ Քաթիպա կը
հարցընէ
Եղբարք, ինչո՞ւ տիրել են մեզ այսքան վիշտ,
այսքան ցաւ . —
Էնդուր համար, որ մեր մէջ Մըլուս-Դեւը յայտ-
նեցաւ :
(Նոյն էջ 117) .

179

Երգը՝ զուարթութեան աղբիւրն է, ուսկից
ախուր սրտին մէջ կը հոսի կազդուրիչ ուրա-
խութիւնը . հեղինակները կը պատուիրեն եր-
գել, նաեւ բռնի երգել . սա ազդու միջոց
մըն է, որով անընկճելի տիրութեան կը յաղ-
թենք . կ'երգենք՝ նախ առանց յօժարութեան,
յետոյ յօժարակամ . բռնի երգելով, բռնաւոր
տիրութիւնը կը յաղթահարենք : Գամառ
Քաթիպան ալ՝ Փիլիպպոս Վարդանեանի

Նուիրած իր երգին մէջ, կը յորդորէ երգել,
թէ հարսանիքի և թէ բանտի մէջ.

Երգով յիշէ՛ մեր նախնեաց,
Երգով թող քնէ քո որդին,
Երգն է մարդուն անգին զանձ, —
Լոկ չար մարդիկ երգ չունին։
(Կոյճ էջ 138).

180

Պատկանեան զուարթութեան յորդոր կը
կարդայ. ու կը պարսաւէ տիրողները.

Նորան կասիմ ես ահմախ,
Որ ըստիք կեանք ուրախ.
Թուշերըս որ թոռմեցան,
Աւ ի՞նչ պէտք է կինի, տաղ։
(Կոյճ էջ 319).

181

Հոգեկան մատասանջութիւնները թշնամի
են ներգին ուրախութեան. Եզնիկ կը զրէ.
Որ լաւն է, և զուարթ երեւի։
(Երեկ էջ 308)

182

Աղօթողին համար Եզնիկ սա պատուէրը
կու տայ.

Լաւ է յստակ խորհրդով՝ ննջել, քան պիղծ
խորհրդով աղօթխ մատուցանել, և վարձս ոչ առ-
նուլ և ի զուր աշխատել:

(Նոյն Էջ 299)

183

Յաւը առհասարակ ամէնուն բաժինն է .
ոչ հարսաութիւն և ոչ քաջութիւն կրնան
այդ բաժինը մերժել. ամէն անհատ ըստ վի-
ճակին դատապարտած է կրելու.

Փարթամն ի սարսուռ, աղքատն ի մուր, մի-
ջակն ի հուր, այլքն ի ջուր, ամենեքին ունին
զիւրեանց խէթ:

(Հատոց Էջ 66).

184

Նարեկէն զուրս, մեր մատենագիրներու
մէջ չունինք սրաի լարերը հոգեւորսղ այն-
քան զիւթող աղօթասաց քնար մը հոգե-
զմայլ: Անկեղծ սրաերէ բզիսող աղերսներ կը
լսենք ժողովրդական բանահիւսութեան էջե-
րէն. հայ ժողովուրդը իր ամէն գաւառներու
մէջ ունի յատուկ պաղատանիքներ, սրով կը
խնդրէ երկինքի բարեխօսութիւնը . հայ ա-

Պօթքը ունի իր հոգեղբոշմ՝ յատկութիւնը ,
ոչ փափկահիւս , այլ բնական ու պարզ և
երբեմ ալ անէծքներով խառն։ Հայ աղօթքը
զուրկ չէ բառախաղերու քերթողական հը-
մայքէն։ Բորչալուի գաւառացին՝ արթննայուն
կ'աղօթէ։

Լուսացաւ լուսն է բարին ,
Ես հաւատամ տէր կենդանին
Ուսին , ուսին , էն սուրփ կուսին ,
Հրեղէն ծով ա , հրեղէն լուսին :

Հայ ջերմիուանկը աչքը բաց կ'երազէ որ

Մարիամը նստէր սուրփ սեղանին ,
Աստծու շնորհքն էր բերանին ,
Գիրկն էր առել Աստուածորթին ,
Մի խաչ սրտին , մի խաչ լերդին :

Մարիամը Աստուածածին՝ հայուն պաշա-
պանն է կաթոգին .

Եկեղեցու գուռն էր բաց ,
Աստուածածին մէջը չոփած ,
Աղօթք կանչէր լուս տաճարին ,
Ծիծն ու էրէսը վարթ ծիրանի .
Աղօթք կանչէր իր խաչորդուն ,
Որ ողորմի ամէն մարթուն ,
Փրկէ ցաւից՝ պատուհասից ,
Զար փորձանքից , սասում սասմից :

Եւ զայս լստ աղօթասացին,
Ով որ երեք բերան ասի,
Մեղքը չնջուի դատաստանին:
(Ազգագրական Հանդես գիրք XI էջ 33).

185

Հայը՝ շարին խափան առ սիրելին իր
Քրիստոս առտու կանուի կ'աղօթէ.

Սուրփ կուսը տանը քուն,
Սուրփ Սարքիսը կտերը զարթուն,
Կտուրը էկողը եղ դառնայ,
Դուռը էկողը փէտ դառնայ:
(Նոյն էջ 34).

186

Քնանալուն՝ հայը ունի իր քնքոյշ աղօթք-
ները. որոնք Դիեւերն ու Քաջերը կը հա-
լածեն.

Ճշմարտապէս քնանամ,
Դրախտի դուռը բանամ,
Մտնեմ անմահ դրախտը,
Անթառամ ծաղիկ ստանամ,
Փնջեմ դնեմ զլխիս տակը,
Ինձ պահպանի սուրբ հրեշտակը:
Քուն ըլեմ, քունս անուշ,

Հայ Միաբը

8

Հրեշտակիս հեաը մուշ-մուշ,
Զարթնեմ երազս բարի,
Ինչ որ խնդրեմ կատարի:

(Նոյն էջ 35).

187

Հայ հոռվմէական բարեպաշտը՝ անկողին
մտնելուն, լատին շրթունքով կ'աղօթէ. « Յի-
սուս, Մարիամ և Հայր Յուսէփ սիրտս հո-
գիս և մարմինս ձեզի կու տամ » . գաւառացի
հայը անոր նման, իրկնանման յատուկ տ-
ղօթքով մը կը պառկի.

Յիսուսի խաչը սրտիս,
Աւետարանը բարձիս,
Ընը մուայ գերեզման,
Իմ Տէրը Յիսուս աննըման,
Հոքիս քեզ ամանաթ,
Մարմինս գողն քին ամանաթ,
Հոգիս Գաբրէլ հրէշտակին,
Թող յանձնէ Յիսուս Փրկչին:

(Նոյն էջ 35).

188

Բարեպաշտ հայը Աստուածամօր կ'աղաշէ,
որ « Յիսուս որդու խաթեր համար » զինքը

մեղքերէն ազատէ. և կ'ուզէ որ իր փրկութեան համար,

Սուրփ կաթը Մարիամ կուսին,
Անգին արիւնը Տէր Յիսուսին,
Ծագիկ դառնան Թող վինջուին,
Բալքի մեղքերս ջնջուին:

(Նոյե 42 36).

189

Սխալը հասկնալէն վերջը, պէտք է շուտ զղջալ, թէ ոչ Հայաստանցին կը հեգնէ.

Համբարձման կը խմայ,
Վարդէվրին կը սարիօշնայ:

Մեկնութիւնն է. «Երբ մէկը չափազանց ուշ կը հասկանայ իր գործած սխալը, ու կը զղջայ անոր վրայ » :

(Աւտ. Հանդես գիրք VII, VIII, 1901 էջ 470).

190

Ամէն մարդ մի միայն իր ցաւը կ'ըմբռնէ և կ'ուզէ անգիտանալ ուրիշինը, սակայն իւրաքանչիւր անձ ունի իր ցաւը, վիշտը և պակերջանիկ համարուելու իրական կամ ե-

*

րեւակայական երազը. պէտք է հաւասար որ
ամէն մարդ ունի իր լացի առարկան.

Ամէն ոք իւր Պաւլօն կուլայ.

Կիւմիւշխանցւոց Պաւլօն . . . Սրուանձ-
տեանց կը հարցընէ: «Միլ է այս Պաւլօն,
և ի՞նչ մարդ է եղեր, զոր կ'ողբայ ամբողջ
քաղաքը»: Առատ ոսկի գտնուած բովին մէջ
քառասուն աշխատաւորներ փլածոյի մը տակ
կը մեռնին. «Քառասունն ալ էին Պաւլօ»:

(Թուվմաս Աղբար Բ. Էջ 38).



ԳԼՈՒԽ Դ.

ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ · ԿԵՂԾԱԽՈՐՈՒ-
ԹԻՒՆ · ԽԱԲԷՈՒԹ · ՓԱՌԱՍՆՐՈՒԹ · ԾԱՂՐ ·

191

Մենք մեր փոքր գործերը կը խոշորցը-
նենք, անոնցմոլ կը պարծինք, և չենք յա-
ռաջադիմեր, վասն զի անկատար վիճակի մէջ
թմրելոլ, կատարելութեան հասած կը հա-
մարուինք. կը խաբուինք սուտ պարծանքնե-
րէն, պարծանքը զմեզ շուարեցուցած է. կը
զրէ Գամառ Քաթիպա.

Սուտ պարծանքը հայերի խելքն է տարել:
(Ոտանառորմեր էջ 69).

192

Պատկանեան կը յորդորէ որ բանաստեղ-
ծը լաւ բան գրէ. ցաւալի են հայուն թերու-
թիւնները, և հեգնօրէն իր յորդորները կը
շարունակէ ու յուսահատ խաբերայ հայ մա-
մուլին ալ կ'ուղղէ իր քնարը.

Ուր և աչք դարձնես՝ անըսփոփ պատկեր —
Հայ սուրբ մամուլըն է կաշառակեր:

(Նոյե Եջ 235).

198

Պատկանեան իր «մի կարծէք որ ես...»
առ Պ. Գր. Զալիսուշիան նուիրած երգով,
ցոյց կու տայ որ փառասիրութեան համար
չէ որ կը հառաչէ, կ'ողբերգէ, կը ցնցէ հա-
յութիւնը.

Մի կարծէք որ ես ոին փառքի համար,
իմ հառաչանքով լրցրի ... աշխարհ.
Այս հէզ ամբոխի ծափին ու գովքին
կարօս չէր բընաւ իմ հըպարտ հոգին ...

(Նոյե Եջ 249).

194

Պատկանեան ցոյց կու տայ որ հայը խա-
բուելով, իր զլիսուն շատ ազաներ ստեղ-
ծած է.

Մեզի վով որ շատ խաբիլ է,
Մեր աղան ալ նա եղիլ է:

(Նոյե Եջ 327).

195

Անմոռանալի է Պօլսոյ Ամիրաներու և հայ պետական անձերու փառահեղ պատմական անցեալը, բայց կարելի՞ է ըսել որ այդ շըրջանը դատապարտելի, խարգախ, խորամանկ փառասիրութիւններով մոլեզնոտ, վընասներ չի հասցւց ազգին. ասոր կը թողունք որ ինքնին Պոլսեցի մը Բաֆֆիի բերնով պատասխանէ. «Մեզ մօտ էր նիւթական ուժը — արծաթը, — որ ամիրաների պալատներն էր միայն զարդարում և հայաստանցու բարորութեան համար մի փարայ անդամ չէր ծախսվում». և այս պոլսեցիին հետագայ խօսքերն կարելի է յատկացընել նաեւ այն ամենուն, որոնք շաա ծուռ մաքով ազգին ղեկավար ու առաջնորդ եղան.

Մի խօսքով մենք մեր ձեռքում բռնած ունէինք ազգի յառաջադիմութեան զեկը, կարծես, մի չար մտքով նրան մոլորեցնելու և դէպի կորուստ տանելու համար ...

(Խեցը Էջ 189).

196

Հեզութիւնը լաւ է, բայց ոչ կուրօրէն անզէն մնալ անակնկալ պատահարներու առ-

ջեւ, այլ խորամանկութիւն ալ պէտք է. ժողովուրդը լաւ կ'լսէ.

Շան հետ հաշտ եղիր, բայց փայտը ձեռքիցդ բաց մի թող:

(Խենքը Էջ 306).

197

ՄԵՐ ԺԱՆՈԹ ԵՐՊԻԾԱԲԱՆ Յ. ՊԱՐՈՆԵԱՆ՝
Խորէն Եպիսկ. Նար-Պէյին հեգնական կեն-
սագրութեան մէջ կը գրէ. « Այ ինքն է, որ
իւր վկայութեանը նայելով, երկու ամիս աշ-
խատելէն ետքը հետեւեալ զիւտն ըրաւ.

Զիւր անուան կոչ
Գիտե՞ս - ոհ. ոչ:

Թէպէտեւ պատմաբաններէն ոմանք Հո-
մերոսի կ'ընծայեն այս երեւելի գիւտն . . .
Արդարեւ այդ գիւտը մեր ազգին համար ա-
ւելի մեծ նշանակութիւն ունի քան Գիւտ
նշիւրաց »: Այս ծաղրածութենէն վերջը, կը
յաւելու սա հեգնական նախադասութիւնը.

Եւ կը զարմանանք թէ ինչո՞ւ այդ գիւտին
օրը կիրակի չեն բոներ . . . բանաստեղծները:

(Ագ. Զայեր Էջ 11).

198

Կան վեհանձներ որ հասարակաց մեծ բարիքի մը համար կը հրաժարին իրենց փառքէն, ու աթոռէն. բայց և կան անձինք որ բոնի կը հրաժարին, գուշակելով արդէն որ անհնար է այդ գործին կամ փառքին մէջ տոկալն, ատոնց համար կարելի է գործածել Պարոնհանի այս հեգնականը.

Խորէն յօժար կամքով հրաժեշտ տուաւ իւր պաշտօնին... երբ թաղեցիները վար առին զինքը: (Նոյն էջ 18).

199

Տաղտկալիօրէն երկարապատում, ճապաղ զրիշներու և ատենաբաններու համար, իրրեւ երգիծաբան առած՝ կարելի է գործածել Պարոնհանի այս նախադասութիւնը.

Շատերը կը յարգեն Եռևութեան էֆէնտիին ատենախօսութիւննեղն իբրեւ . . . քրտնեցուցիչ դեղ:

(Նոյն էջ 33).

200

Անխոհեմ և ո՛չ շրջահայեաց, կոռւարար խմբագիրներուն՝ յարմար է Պարոնհանի այս

նախաղասութիւնը, զոր գործածած է «Հայստան»ի խմբագիր Տէրոյենց Պատուելիին համար:

Այնպիսի ջարդ մը տուաւ ընթերցողներուն,
որ իրմէ զատ «Հայստան» կարդացող չմնաց:
(Կոյք էջ 65).

201

Անարժան եկեղեցական բարձրաստիճան
անձնաւորութեանց համար, շատ յարմար է
գործածել Տէրոյենցի հեղնականը.

Գաւազանը ասանկ մարդերու ձեռք տալու
տեղ կոնակը տալու է:

(Կոյք էջ 72).

202

Այն խմբագիրներուն Փրոնք աւելի իրենց
քմահաճոյքը կը մտածեն, քան թէ ժողովուրդ
կասարակութեան յառաջադիմական
պահանջները, կարելի է գործածել Պարու-
նեանի այս հեղնականը, զոր յատկացուցած
է խթիւնեանի, որ ըստած է

Լաւ է որ ընթերցողներո զսասին քան թէ Մասիսի լեզուն:

(Նոյն էջ 82).

203

Chantageի երկրպագու մամուլի գործիչներուն, ամենայարմար է այս նախադասութիւնը, զոր գործածած է Պարոնեան խթիւնեան խմբագրին համար.

Ո և է խնդիր մը անաշառութեամբ քննելու համար զայն կը պարզէ, անոր մէջ ճշմարտութենէ առաջ բաժանորդ կը փնտոէ:

(Նոյն էջ 84).

204

Գործը աւրող գործունեայներուն կարելի է սեպհականել Մկրտիչ Տիգրանեանի համար Պարսնեանի այս նախադառութիւնը.

Պատին վրայ բեւեռ մը գամնլու համար տանը հիմնրուն բեւեռները կը քակէր բարեկարգելու համար տուննեւ:

(Նոյն էջ 97)

Հասարակական պէս պէս կարեւոր գործերու մէջ, միշտ նոյն յորդորը՝ յարմար անյարմար նոյն խրատը տուողներուն համար, կարելի է ակնարկել և առակ դարձնել Պարոնեանի Այս չուրեկնի պատմութիւնը, զոր հնարած է իր երգիծանքին մէկ գիւցազին՝ Մկրտիչ Տիգրանեանի համար։ Պատմութիւնը ահա համառօտակի ։ Իր այդ գիւցազը Սամաթիոյ մէջ հրաշագործութիւններ կ'ընէր. « Կաղեր, կոյրեր, խուեր, համրներ, այսահարներ, անդամալոյներ կը բժշկէր։ Ամէն օր հիւանդներ կ'երթային իրեն։ — Հայր սուրբ, իմացանք որ դուք ամէն ցաւերը կը փարատէք։ — Հրամեր էք օրհնած։ — Փանի մը շաբաթէ ի վեր գլխու ցաւ ունիմ, կ'ուզեմ որ փարատէք։ — Գլուխդ թէ ցաւդ։ — Գլուխս, հայր սուրբ, գլուխս։ — Շատ լաւ ինծի համար երկուքն ալ մի և նոյն բանն են։ Եկուր խաչահանգիստ մը ընեմ։ — Մարդը կը մեկնի և քանի մը ժամէն ետքը անդիի աշխարհը կ'երթայ։ — Երորդ մը կը ներկայանայ։ — Հայր սուրբ,

սենեակին պատուհանը կոտրհցաւ: — Պատուհանը հոս բե՛ր, վրան բժշկութեան աւետարան մը կարդամ: Չորրորդ մը. — Հայր սուրբ, մազերս կը թափլիին: — Այս ջուրով գլուխդ լուա: Հինգերորդ մը կը մտնէ. — Հայր սուրբ, անձրեւ եկած օրը սենեակս կը վազէ, ինչ ընեմ: — Այս ջուրէն քիչ մը դի՞ր սենեակիդ վրայ: — Պատրիարքարանէն մէկը. — Հայր սուրբ . . . — Այս ջուրէն առ: — Պատրիարքը դրկեց զիս . . . — Պատրիարքին ալ այս ջուրէն: — Զեղի ըսելու որ . . . — Զեղի ալ այս ջուրէն: Քիչ մը . . . — Այս ջուրէն: — Պատրիարքարան հրամմէք: — Պատրիարքարանի ալ այս ջուրէն: — Եթէ չի գաք . . . — Եթէին ալ այս ջուրէն: — Նորէն բանտ պիտի երթաք: — Բանտին ալ այս ջուրէն: — Պիտի բերվիք Փրկիչ: — Փրկչին ալ այս ջուրէն: — Կառավարութիւնը . . . — Կառավարութեան ալ այս ջուրէն: — Վերջապէս ամեն ցաւերն ալ այս ջուրով կը բժշկէր: Միայն այսուհարներուն փորէն դեւերը կը հանէր, սակայն չկրնալով միշտ խոզեր գանել, որ

անոնց դրկէ , շատ անգամ իր փորին մէջ կը հիւրընկալէր գեւերը առժամանակայ կերպով . . . ». Պարոնեանի այս երեւելի անձնաւորութիւնը պարտատիրոջ ալ կը հրամցընէր .

Այս ջուրէն :

(Նոյն էջ 104-7) .

206

Պոսոտախօս , ինքնահաւան , սնամիտ , գոռող գրիչներու՝ կարելի է ուղղել Պարոնեանի այս հեգնականը .

Դողացէք ոտներուս տակ ով գուլպաներս :

(Նոյն էջ 137) .

207

Խսկ ունայնամիտ փառասէրներուն , կը նանք սեպհականել Պարոնեանի այս հեգնականը .

Եթէ մլուկ մը ճգմէ՛ Ենէականի մէջ՝ տեղ կը փնտոէ , որ գիւղազներուն մէջ երթայ նստի՞ :

(Նոյն էջ 236) .

208

**Պարսնեան փառասիրութեան համար կ'ը-
սէ.**

Փառասիրութիւնը այնպիսի ախտ հիւանդու-
թիւն մ'է, որուն ենթակայ եղողին հաճոյք կը
պատճառէ և վնասն ուրիշներուն կու տայ. ով
կ'ուզէ հաճոյքէ զրկվիլ:

(Նոյն էջ 287).

209

**Փառասիրութեան իբրեւ օրինակ կարելի
է յիշել Պարոնեանի Քրիստոսառ Ղազա-
րոսեանի առթիւ գրած այս խրատական տո-
ղերը.**

Մարդերն աւելի մեծ անուն վաստկելու մո-
լութիւնն ունին քան թէ մեծ մարդ ըլլալու ա-
ռափինութիւնն :

(Նոյն էջ 275).

210

**Երբ նենգաւսրներով պաշարուած ամբո-
խին մէջն ենք, մեր ամենէն կարեւոր զէնքն
է խմբամանկութիւնը: Կը գրէ առակախօսն
Մխիթար Գոշ.**

Ողոքէր ոմն զիսլինջիւն՝ ասելով. Առի եկ արտափս, զի մեծարեալ պատուեցից զքեզ բազմազան օրինակօք։ Եւ նա ասէ. Զիք ոք զքեզ տեսեալ պատուասէր առ այլս, զիա՞րդ և ինձ լինիցիս. ոչ է այլ, այլ զի արեան իմոյ ցանկաս։ Եւ ոչ ել արտափս, զերծեալ ի նմանէ զգուշութեամբ։

Պարզ է գաղափարը. սակայն լաւ է լսել նաեւ առակախօսին մեկնութիւնը. կը մեկնէ. «Զարթուցանէ զմեզ առակս, ամենեւին ոչ հաւատալ պատիր բանից այլազգեաց, յայտնի ունելով զմիտս յանցելոց խարէութեանց առ այլս. զի արեան և ստացուածոց ցանկան քրիստոնէից, և ոչ եթէ պատուեն»։

(ՄԿԻՒ. Գոռ. Առակ 67-8)։

211

Ամէն ազգ ունի իր վիթխարի ուժի տէր դիւցազներ, որոնց մասին այնպիսի քաջագործութիւններ կը պատմեն որ անկարեցի է հաւատալ։ Մենք ալ ունինք սոսկալիօրէն ուժեղ նահապեա մը՝ Ցորը, որ ըղբնգով քարեր կը քերէ, կը տաշէ։ Բայ Խորենացւոյն։ «Եւ յեզերս ծովուն Պոնտոսի դի-

պեալ նաւաց թշնամեաց, դիմէ ի վերայ. և
ի խաղալն նոցա ի խորն իբրեւ ասպարէզս
ութ, և սա ոչ ժամանեաց նոցա. առնու,
ասեն, վէմս բլրածեւս, և ձգէ զկնի. և ի
սասաիկ պատառմանէ ջուրցն ընկդմին նաւք
ոչ սակաւք, և ամրարձումն ալեացն, որ ի
պատառմանէ ջուրցն, վարէ զմացեալ նաւսն
բազում մլոնս ». ու Խորենացին ինքնին կը
բացազանչէ.

Ո՞հ, կարի է առասպելս, այլ և առասպելաց
առասպել:

(Խորեն. Պատմուք. Էջ 171).

212

Ծաղրածութեան լաւ օրինակ մը ունինք
Խորենացիէն: Շապուհ որսորդութեան ատեն
կրակով կը շրջապատի. չՅ որ ինքը կրա-
կապաշտ է, կրակը իրեն աստուածը. կը
դողայ Շապուհ. այն ատեն Ատոմ մոկացի
զինքը կը ծաղրէ.

Աստուածորդիդ Պարսից, ահա հայր քո և աս-
տուած, ընդդէ՛ր զանգիտես:

(Նոյն Էջ 503).

Հայ Միտքը

9

213

Խարերայ խոստումին՝ առակ մ'ունի Վարդան, զոր կրնան ընդօրինակել և հաստատուն մտքի մէջ պահել անոնք որ խարերայներուն խոսառւմներուն, կանխաւ կը փութան երախտագէտ և շնորհակալ ըլլալ։ Աղուէսին ձեռքէն երբ խորամանկ կաքաւը կը թոչի, աղուէսը շուարած կը բացագանչէ.

Ով անմիտս և յիմարս, յառաջն պարտ էր ինձ ուտել և ապայ գոհանանալ զաստուծոյ։

Այս է պատմութիւնը . «Աղուէս էառ կաքաւ մի ի բերանն և կամէր ուաել զնայ. և ասէ կաքաւն . աւրհնեալ է աստուած, որ կոչեաց զիս յիւր արքայութիւն. զի զերծանիմ ի յայս չարեացս. և ապայ գու, աղվէս, դոհացիր զԱստուծոյ և ապայ ոււես զիս. քեզ մեծ վարձ է. և աղուէսն կկզեցաւ և հայեցեալ յերկինս և բացեալ զբերանն՝ ասէ. գոհանամ զքէն, աստուած բարի, որ պատրաստեցեր ինձ սեղան բարութեան. և կաքաւն զերծաւ ի բերանոյն և թուաւ. և ասէ աղվէսն . ով անմիտս և յիմարս, յառաջն պարտ էր ինձ ուտել և ապայ գոհանանալ զԱս-

տուծոյ: — Յուցանէ առակս, թէ զիսստացեալ իրքն մի համարիր քեզ և մի շնորհայկալ մարդոյ լինիս, մինչեւ առնուս և թէ ջուր տան քեզ, ի նոյն ժամն ի գոզդ առ զինքն զի շատք ասեն և ոչ տան զասացեալն իրեանց, ով եղբար, և սուտ լինին»:

(Ժողով. Առակ. Վարդ. էջ 58–9).

214

Առակախօսները խորամանկ խաբեբայներէն զմարդ միշտ կը զգուշացընեն: Գրուածէ. «Ազուալը խորամանկ մարդու օրինակ է՝ որ միայն իր օգուտը կը նայի. ուստի զգոյշ կալու է անանկ խաբեբայէն, և խօսքին հաւատալու չէ. վասն զի ուզածն ընելէն ետեւ ծաղր կ'ընէ: Դիոզինէս փիլխսոփային հարցուցին թէ ո՞ր զագանը շատ վասակար է. պատասխան տուաւ թէ վայրենիներէն՝ օձը, իսկ ընտանիներէն՝ խաբեբայ մարդը»:

Երբ խորամանկ ոք քեզ խորհրդակցի,
Մի կարծեր թէ նա սակս քո խորհի.
Զամենայն օգուտ յինքեան վերբերեալ,
Կերակրի նովաւ ծաղրէ զկնի:

(Եղովրոս առակը էջ 102).

Փառասիրութեան համար շատ սովորական դարձած է աղուէս և ազոաւի սա ծանօթ առակը . ազոաւը բերանն ունէր կտոր մը պանիր . աղուէսն հոտն որ առաւ վազեց ազոաւին առջին և լսաւ զարմանալով . ի՞նչ բան է որ կը տեսնեմ . ես լսեր եմ որ քու փետուներդ սեւ են . ո՞հ տէր Աստուած , աս ի՞նչպէս ճերմակ են , որ կարապ թոշունը քեզմէ ճերմակ չի կրնար ըլլալ : Կ'աղաչեմ պարոն աղուաւ , ինծի ներէ որ քիչ մը վրագ նայիմ ուզածիս պէս . ճշմարիս կ'ըսեմ որ դու ինծի անանկ աղուոր կ'երեւնաս որ չեմ դիտեր ինչպէս զմայլիմ քու վրագ : Նորէն կ'ըսէր աւելի անուշ խօսքերով . Ես լաւ գիտեմ որ քու յատուկ կատարելութիւնդ միայն գեղեցկութիւնը չէ . այլ բնութիւնը որ կամեցաւ զքեզ ուրիշ թոշուններէն աւելի կատարեալ ընել , առանց կարծեաց քեզի տուաւ . հրեշտակային ձայն մը , երդում կ'ընեմ որ այնպէս գեղեցիկ երգիչ չկայ մեր անտառներուն մէջ , ինչպէս դուն և սոխակը : Այս խօսքերովս բոլորովին զուարճացաւ աղուաւը ,

և ուզեց իմացընել թէ աղուէսին ըսածը սուտ չէր . բացաւ բերանը որ երգէ , բանալովը ձգեց բերնէն պանիրը : Իսկ աղուէսը յափշտակեց զայն , ու շուտ մը երթալու հրաման ուզեց աղուէսն , և ծաղր ընելով ըսաւ . Շատ համ առի պանիրիդ անուշութենէն , քան թէ ձայնիդ գեղեցկութենէն :

Փառասէր մարդն երբոր գովուի ,
Շուտով հաւտայ ամէն խօսքի :

(Կ՞՞ Եջ 103).

216

Փառասիրական ախտով վարակուած խարերայներուն լաւ օրինակ է Եղովրոսի սա առակը . Սիրամարգը փետուր փոխելու ատենն իր փետուրները կը թափէ . իսկ կաշաղակը . զանոնք կը ժողվէ ու վրան կառնէ կը զարդարուի . և զինքը գեղեցկութեամբ շատ վեր կը դնէ քան զսիրամարգը , մինչեւ հապարտութեամբ փճանալով կը թողու իր ընկերներն ու կու զայ սիրամարգներուն ընկեր կ'ըլլայ : Բայց աս հպարառութիւնը շուտ մը խայտառակ եղաւ . վասն զի սիրամարգ-

ները ճանչցան անոր կեղծաւորութիւնն ու
սուտ փետուրները վրայէն փետացին, և
շատ քցըցելով վոնտեցին իրենց ընկերու-
թենէն : Իսկ կաչաղակը փետած և ծեծը
կերած՝ չկրցաւ մէկալ կաչաղակներէն ալ
ցաւակցութեան արժանի ըլլալ, որովհետեւ
զանոնք անարգեր էր առաջուց :

Կը յորդորէ թարգմանիշը.

Նայէ ըլլաս սիրուն խելքով,

Զես աղուորնար օտար զարդով :

(Նոյն էջ 129).

217

Տիմար փառասիրութեան իբր պատիժ ա-
ռակախօնն Եզովիրոս կը յիշաաակէ գորաը,
որ ուզելով կովու պէս գիրուկ երեւնալ, կ'ուոփ
այն աստիճան, որ վերջապէս կը ճամփի : Ա-
ռակախօսին թարգմանիշը կը յորդորէ .

Մեծ ըլլալու շատ մի՛ ջանար,

Թէ չէ պատոիս ու չես մնձնար :

(Նոյն էջ 136).

218

Վաղեմի նախապաշարութերը յանգէտա

սառւլմեանց պատճառներ եղան , գոյութիւն ունեցաւ առասպելը որ մեր ազգագրական պատմուածքներու մէջ կը տիրէ առատօրէն . գրականութեան մէջ ատոնց մասին կարող ենք յիշել ոսկեղարեան հեղինակ Եղնկայ սա խօսքը .

Այլ ամենայն՝ առասպելք են , և պառաւանց դրդջիւնք :

(ԵՊԵԿ Էջ 99) .

219

Լեզմաւոր կրօնաւորներու համար կը գրէ Եղնիկ .

Լեզմաւոր կրօնաւոր՝ պատրուակ է սատանայի . ընդ իւրեաւ ունելով զսատանայ՝ զզազրութիւն անդամոցն ծածկէ , և նկարակերպ պատրուակօք պատրէ զտեսողն : Առքա են գայլք գառնազգեստք՝ որոց սպառնացաւ Գրիստոս ընդ անհաւատսն դասել :

(ԵՊԵԿ Էջ 301) .

220

Լեզմ բարեպաշտաներու երգիծական պատկերն է սա բացատրութիւնը .

Զմիս անասնոյ ոչ ուտեն, և զեղբայրն անյաշաբար ուտեն . գինի ոչ ըմպեն, և զհոգին արեամբ շաղախեն . զամուսնացեալսն ատեն, և պիղծ խորհրդով հանապազ պոռնկին . զգեստ յոռին զգենուն, և ազահութեամբ այրին . յայնպիսեացն արժան է փախչել . և ոչ հաղորդութիւն ունել :

(Նոյն Էջ 302) .

221

Ծաղրածութիւնը միշտ վտանգաւոր է . Խիկար իմաստունը կը գրէ .

Որդեակ թէ տեսանես զթշնամին քո գլորեալ մի ծաղր առնել զնա զի թէ կանգնի նայ չար հատուցանէ քեզ և լինի հանապազ չարկամ :

(Խիկար Էջ 16) .

222

Խարէութիւնը միշտ ծածուկ չի մնար , այլ յայտնութեամբ կը խայտառակուի . Խիկար կը գրէ .

Բան սուտ և ստախօսութիւնք որպէս արճին ծանր է բայց յետ սակաւ աւուրց ի վերայ ջրին գայ որպէս տերեւ ծառի :

(Նոյն Էջ 41) ..

223

Ըստ պարագային կը յարգուի թէ՛ միամբ-
տութիւնը և թէ խորամանկութիւնը : Միսի-
թար Աքբան եկեղեցւոյ համար՝ աւետարանի
ծանօթ պատուէրին համեմատ, սա յայտնի
դաւանանքը կ'ընէ.

Եկեղեցին Քրիստոսի՝ միամիտ է յիրս հոգե-
ւորս, խորագէտ ընդդէմ աշխարհի . այսպէս
պարտ է և մեզ գնալ:

(Հատոք Էջ 45).

224

Մէկու խարեն սովորական է, բայց
ամենէն մեծ խարեբան աշխարհս է . Սայեաթ
Նօվան լաւ լսած է, թէ .

Իմաստուններըն չը տեսան էս աշխարիս հուտն
ու համբըն :

(Սայեաթ Նօվայ Էջ 143).

225

Նկարսգրի տէր անձը իր գաղափարնե-
րուն մէջ երերեալ չերեւար, թէ ոչ կեղծա-
ւոր խարեբայ մը կը համարուի, ասոնց հա-
մար կը գործածուի առակս .

Հա՞ վըր նալին (պայտ),
Հա՞ վըր պիպոկին (գամ) կը զարնէ:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆ է . « Անհաստատամառւ-
թեամբ , երբեմն յօդուտ և երբեմն ի վեաս
խօսիլ խնդրի մը վրայ » :

(Արդար . Հանդես գիրք VII, VIII, 1901 էջ 470) .

226

Նկարագրի տէր անձը կ'ըմբռնէ իր խօս-
քերուն ու խոստումին արժէքը , և կ'ուզէ
յարգել իր բերանը . խոստմազանցին պէտք
է յիշել ուս առակը .

Նա (ոչ) քար վըր քարին,
նա իսան (մարդ) վըր ուր (իւր)
ղրանին (խոստում , ուխտ) :

ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆ է . « Ցոյց տալ մէկի իւր
խոստման վրայ հաստատուն չմնալը :

(Նոյն էջ 474) .

227

Մաղրը խոհականներու համար միշտ ե-
պերելի է , մանաւանդ երբ ծաղրուածը թը-

շուառ է ու տառապեալ . այդ պարագային
Հայաստանցիք կ'լսեն .

Զար մոռնայ ,
չարչին (մանրավաճառ) քոռնայ :
(Նոյն էջ 478).

228

Թշուառութիւնը երբեմն այնքան անտա-
նելի շրջար , որքան կծու ծաղրածութիւնը .
Վշտահար ծաղրուածը կը յիշէ հետազայ ա-
ռածը :

Զը դըմամ (հոգ չ'ընել) գուռ (քարէ
աւազան) , վըր գլխուս .
կը դմամ պտպտիչն ի յէտուս * :
(Նոյն էջ 478).

* Այս առակի մեկնութեան համար « Ազգագրական
հանդես » կը հրատարակէ հետազոյ աւանդութիւնը . « Տըր-
դատ թագաւորը Ս. Գրիգոր Լուսաւորչի հետ մեկեան-
ները կը քանդէր ու եկեղեցի կը կանգնէր անօնց տեղ :
Ուր որ չկար մեկեան , լեռնէն քարեր կը բերէր եր
կանակով , ու կը շինէր : Մի անգամ վանքի մը ջրէ
քարէ մեծ գուռը (աւազան) գլուխն անցուցած , և միա-
կառուր քարէ մեծ սիւներ անութներ դրած , լեռնէն կու
զար , իսկ Ս. Գրիգոր ետեւէն կ'աղօթէր , կը սազմո-

Ամէն պարագայի մէջ կեղծաւորութիւնը
պախարակելի է։ Աւեսարանն իսկ այպանեց
փարիսեցիութիւնը. և աւեարանական ծա-
նօթ օրինակին վրայ, հայկական սա առա-
կը կազմուած է։ Ալաշկերտցիք կ'ըսեն.

Տէվէն կը դըլու (կուլ տալ),
մժիկ (մժղուկ) կը թքու։

Մեկնութիւնն է. «Մեծ քանակութեամբ
ու գազմնի մեծ չարութիւնները գործել, իսկ
յայտնապէս և փոքր բաներու մէջ ինքզինքը
անկաշառ և արդար ցոյց տալ։

(Նոյն էջ 482)։

•

ուր, ոյժ և կարողութիւն կը ինդրէր բեռնաւորուած
արքային։ Տրդատ ձանձրանալով Արբայն միօրինակ սազ-
մոսերգութենէ. կ'ըսէ վերջապէս. «Զը հոգամ, զուռ,
վըր զլիուս, կը հոգամ պտպտիչն (Մրմունջ) ի յետե-
ւու»։ Ա. Գրիգոր այն ատեն կը լուէ, ու Տրդատը
քարերու ծանրութեան տակը մինչեւ ծնկները գետինը
կ'իջնէ, ու անպատճառ, ամբողջապէս ջրի մէջ խորա-
սուզուելու նման, գետինը իջնելով պիտի մեռնէր,
եթէ ուշքի չգար և չխնդրէր Առւբրէն։ «պտպտա՛,
պտպտա՛, պտպտիկդ ի հոգիս»։

230

ԶԷՆՔԸ և սուր լեզուն չէ որ զմարդ կտրիճ
կ'ընէ, այլ հոգեկան զօրութիւնը, ուսկից զըր-
կուածներուն Ալաշկերտցիք կ'ուղղեն առակս.

Քաղքի կտրճներ (քաշեր)
կապած խանջներ (դանակ):

ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆ է. «**ՀԵԳՆԵԼ ՍՊԱՌԱՋԻՆՈՒԱՃ**
ՄԱՐԴԵՐՈՒ անկարողութիւնը, ԹՈՒՂՈՒԹԻՒՆԸ:
(Նոյն էջ 484).

231

կանանց շատախօսութիւնը այսպէս կը
հեզնէ առակը.

Երկու էշ քարվան մա՛ (կարաւան մ'է)
երկու կնիկ տիվան մա՛ (ժողով):

ԱՅՍԻՆՔՆ. «Երկու կին ժողովի մը շափ
կը խօսին»:

(Նոյն էջ 490).

ԳԼՈՒԽ Ե.

**ԺԼԱՑՈՒԹ. ՄԱՑՆՈՒԹԻՒՆ. ԽԱՐԴԱԽՈՒԹ.
ԱԽՏ. ԼՐԲՈՒԹԻՒՆ. ԲԱՄԲԱՍԱՆՔ. ԽԱՌ-
ՆՈՒԻՆ. ՈՒՐԻՇԻ ԳՈՐԾԻՆ**

232

**Մատնութիւնը Հայաստանի հիմը աւե-
րեց, կործանեց ազգութիւնը, պատռեց ու այ-
րեց հայկական զրօշը, որ միշտ կարմիր
մնացած էր նահատակներու սուրբ արիւնով։
Հայը շատ անգամ փոխանակ քաջասիրտ
նահատակներուն, հետեւած է վասակի շաւ-
դին։**

**Վասակայ թիւը շատցաւ դարէդար,
Զուտ ազնիւ հոգիք չերեցան իսպառ.
(Պատկանեան. Բնաւեղծ. Էջ 103)։**

233

**Հայութիւնը լստ Պատկանեանի՝ շատ
ժլատ է. և մի առ մի կը յիշէ որ հարուստ.
Հայը նորաձեւութեան, մոլութեան, վայելքի,
փառասիրութեան զրամ չի ինայեր, իսկ**

Կարեւոր ողորմութեան համար՝ լալկան աղքատ կը ձեւանայ.

« Հայէն Հային շահ չի կայ »
Այս խօսքը հին առած է.
Հայ կուրծքի մէջ սիրո չի կայ,
Եթէ կայ էլ՝ սաւած է »:
(Նոյն էջ 214).

234

Հանճարեղ երգիծանքով՝ Պատկանեան
« Ճէմէրա » վերնազրով մէկ քերթուածին մէջ,
ցոյց կուսայ հայ ժլատին ախուր հոգին.
Կ'երգէ.

Մեր հալիսին մէջը հէջ չիկայ ատէթ
Ազգիս ֆայտային տալ հազար մանէթ:
Հարուսա հայր՝ նոյն իսկ մէկ փարան,
մէկ կոպէկը կը խնայէ, զայն կուռք ըրած է.

Տասը քապիկն ալ մէկ կըրվընիք է,
Ան ալ պօշ պանի թապլելը մեխք է,
Աղքատին տալէս՝ պուֆէթ կը տանիմ,
Քէփով մէկ կաւաթ չայ անուշ կանիմ:
(Նոյն էջ 320-1).

235

Ախալներու մէջ յամառիլը, է հոգեկան

ախտ մը դժուարաբուժելիք. Ռաֆֆի լաւ կ'ըսէ.

Հին սխալը մի անգամով ուղղել շատ դժուարին է. նա կատարվել է հարիւրաւոր ընթացքում, և այսպան տարիներ պէտք են նրան ուղղելու համար:

(Խեցբ էջ 68).

236

Շատ անգամ իսրաղախութիւնը աննկարագիր խմբագիրներու զէնքն է, որով ըստ պարագային զուրիշը կրնան՝ թէ՛ պաշտպանել և թէ՛ վիրաւորել ու սպաննել. Պարոնեանը՝ Փափազեանը շողոքորմող խմբագիրներու համար կ'ըսէ.

Զինքը սուրբերու քով դասող թերթերն չուանով մը սատանաներու բնակարանը իջեցուցին զինքը:

(Առային բուք էջ 201).

237

Հ. Ալիշան համառօտ գիւցազներգութեամբ յիշատակած է մատնութիւնը. Վասակի յուսահատ և ողբերգու վիճակը նկարագրե-

լով, Ղեւոնդ երէցի բերնին մէջ կրակոս
բառեր կը գնէ: Քաղցրաբարբառ Նահապե-
տը, մատնութեան առջեւ բռնկած է, երկնային
վրէժինդրութեամբ լի, կ'անիծէ մասնիշները
և մատնութիւնը: Մեր պատմական մատ-
նիշն Վասակ, ողբի և անէծքի նիւթ կ'ըլլայ.

Աւաղելի՛դ Վասակ յաւէրժ արտասուաց,
Զը տեսանե՞ս զի չնորհք ի քէն վերացան.
Վարաք քո մոխիր կաթեն ըզպիդըդ բազնաց,
Թազք զոր Տըրդատ եղաւ՝ շանթիս քեզ տեղան.
(«Հայութի» Էջ 135).

238

Մատնիշը կը սոսկայ իր զազիր դաւադ-
րութենէն.

Լուր մատնըչի՛ տուն Հայոց, լուր և սարսեաց.
Ես եմ ես այն յաւազանին սուրբ ուխտէն,
Ու ի Գրիգորի կամաւ հերձեալ ի հօտէն.
Ես ճապաղեացն եմ պարտական Արտազուն.

(Նոյն Էջ 143).

239

Արդարութիւնը մատնչին գլիխն յաւիտե-
նական անէծք կը տեղայ.

Անլոյժ վըճիռ, զոր կընքէ շունչ իմ տըխուր,

'Հայ Միաբ

10

Ասպընջականք իմ դըժովիք՝ դուք վըկայք էք,
Ո՞վ Վասակայ կորիւնք, յաւէ՛րժ ձեզ անէծք...
(Նոյն էջ 148).

240

**Աւելի խրոխտ է Մերուժանի ճաղատ գըլ-
խին վրայ ասարափեալ հրաշէկ այս անէծքը.**

Կաց Արծրունիդ դու կաց ամբարիշտ
Հայոց թագին հետախրնդիր,
Ցարժան վարձուցդ հիմ խուսափես միշտ.
Ահա եհաս քեզ թագադիր.
Սըմբատ ասպետ զայս քեզ ի տրիտուր
Կունտ գազաթանդ ածէ շամփուր.
Արբանեակ հըրոյ, պըսակեաց հըրով
Ինքթ բազմեաց ի զահ յԱրմանի ժողով.
Այս թագ, այդ զահ մատնըչաց՝
Որք դրժեն Հայ հայրենեաց:

(Նոյն էջ 102).

241

Մատնութիւնը մահ կամ վախճան ունի.

Մինչեւ ցԵ՞րբ անբարեսէրք, ցԵ՞րբ յամառեալք
զանգիտութեան,
Հայրենական փառաց մատնիչք, օտարուտոյն
պաշտիչք անարգք.

(Նոյն էջ 160).

**Եւ Հ. Ալիշան անուշակ աղերսով կը
պաղատի, որ Հայոց մանկտիք չուրանան
իրենց տունը.**

Ձեզ կ'ասեմ մանկունք սիրունք նազելիք,
Որոց է բնական Հայոց աշխարհիկ
Մ'ուրանայք զերկիրդ ու զազգըդ սիրուն
Ծառն՝ արմատով ծառ, տունն հիմամբն է տուն.
(«Հայրունի» Էջ 270).

242

**Հ. Ալիշան յիմար կ'անուանէ հայրենի
փառաց դաւաղիրները.**

Նա կոյր է յիմար. զհուն անմահութեան
Ընդ սուս գոյն փոխէ տըխմարն ու տըղայն.
Յիմար է յիմար որ զպարծանքն հարանց
Երթայ վաճառէ ընդ օտար ազանց.
Աշխարհիս օրէնք՝ որ ծնողք չըփոխուին,
Հայրենափոխք չեն, ուրացողք լինին.
Ծառն՝ արմատով ծառ, ծառովն է արմատ.
Դալար մանկտիք, ձեր տակն է Արարատ.
(«Հայրունի» Էջ 274).

243

**Աեւ սիրտ մասնիշներուն է այս հար-
ցերը կրակոտ,**

Ո՞վ այն մատնիչք, ո՞վ այն դահիճք, ո՞վ գազան՝
Որ առ այլազգ, առ բըռնաւոր ձայն կու տան.
Այդ ի՞նչ քարէ սիրո, ի՞նչ սառէ շըրթունք էր
Որ հայրենեաց հողուն կարդաց սեւ օրեր։-

Անէծք տուէք այն բերնին

Անէծք գըրչին ու ձեռքին

Որ գՀայաստան մատնեցին...

(Նոյն էջ 385).

244

Խարդախութեան ի պատիծ առակ որ կը
պատմէ առակախօսը. «Եշ էր՝ և առիւծ թու-
էր, քանզի արկեալ էր զիւրեաւ առիւծնի,
և ի հեռաստանէ ի տեսլենէն մատուցանէր
երկիւղ, և ապա զամենայն նախիրս կովուց
և զամենայն հօտս ի փախուստ զարձուցա-
նէր։ Եւ իբրեւ հողմն սաստիկ հնչեաց և
մերկացաւ զնա յառիւծնւոյն, և յանդի-
մանեցան պատրանքն, ամենեցեան ոտս ար-
ձակեցին ի նա. ոմանք ջնէին և ոմանք
հարկանէին, վասն զի

Եշ էր, և առիւծ կեղծաւորէր բազմաց,

Ու առակախօսը բանաւոր մարդուն դառ-
նալով կ'ըսէ. «Եւ զու, ով մտացի, կարօտ ես

Է

տանջանաց. վասն զի յոյժ անհրահանգ ես,
և զիրատելոցն կեղծաւորիս ձեւ» :

(« Ողոմպիանոց Առակց » Էջ 176)

245

Գարշելի բարքերը մարդկանց վրայ հաս-
տառուելով, հոգեկան ապականած ախտ կ'ըլ-
լան, ատմնք անփոփոխելի են, խորենացին
կը գրէ.

Ընձու անկարելի է զիսայտուցսն փոխել, և
եթովպացւոյ զթխութիւն, նոյնպէս մարդոյ ամ-
պարշտի զբարսն :

(Խոր. Պատմ. Էջ 353).

246

Նախարարները կը ստիպեն զԱշհակ հայ-
րապետ, որ Պարսից տէրութեան մատնէ
մեր Արտաշիր թագաւորը, վասն զի սա
անառակ էր, և կնամոլ : Ա. Աշհակ Արտաշի-
րի այդ բարոյական թերութիւնները ազգա-
սիրական ոգուով կ'ուզէ ծածկել. կը պատաս-
խանէ.

Ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ
ոչխար :

Խնչո՞ւ. «Փանզի զրոշմեալ է աւազանաւն,
թէպէտ և անառակ է . պոռնիկ է, այլ
քրիստոնեայ է. զիճացեալ է մարմնով, այլ
ոչ անհաւատ հոգւով. զեղիս է վարուք, այլ
ոչ կրակապաշտ, տկար է ի կանայս, այլ
ոչ ծառայէ տարերց: » Եւ կրակապաշտ
Պարսկին չի մաներ մեր անբարոյական
քրիստոնեայ հայ թագաւորը:

(Խոր. Պատմ. Էջ 528-9).

247

Վատ բարքերը հոգեկան ախտեր են. բա-
րեսիրա միամտութեամբ պէտք չէ խաբուիլ
նենքաւոր խարեբայներէն : Վարդան առա-
կախօսն կը գրէ . «Կատուն էած փիլօն և
եղեւ կարքօ(աւ)որ և ասաց ընդ մկներն.
թէ աստուած զզարձն կամի զմեղօ(աւ) որին;
այլ չմնաց թէ այլ արունն հեղեմք. քան-
դի իմացայ, որ գատաստան կայ յիմ շնչիս,
ասացին մկներ. թէ զբոլոր կարցն Անտոնի
տեսնումք ի վերայ քո, ոչ հաւատամք քեզ.
գնաց եղեւ հիւանդ, յղարկեաց առ մկներն,
թէ վասն աստուծոյ եկայք. որ խոստովա-

նիմ զիմ անցանքս յառաջ, որ չմեռանիմ։ ասացին մկներն, թէ չ'հաւատամբ քո կեղծաւորութեանդ. և գնաց ի խաչք ճանապարհի մի և եղեւ մեռեալ. գան մկներն և ասեն. ով նենգաւոր, թէ պարկ լինիս լի ալբով, ոչ հաւատամբ քեզ. թէ քո բարբդ յիստակէ ի հետ մեզ։ — իմացաւ զկաաուի աղերսանքն թագաւոր մի. ողորմեցօ նմայ և էառարար զկաաուն իւրն լուսնայկալ և կերակրէր զնայ իւր ապարանացն. աւր մի յանկարծակի մուկն մի ելօ ի ծայկն. եսես կատուն և զողաց և չ'կարոց համբերել, ձգեաց զլուսնայկալն ի վերայ թագաւորին. և երէց ամենայն երեսն. ասէ թագաւորն. անհաւատ, քաղցած շեմ պահել զքեզ. զայդէր գործեցեր. ասէ կատուն.

Ով յիմար թագաւոր, թէ ոսկով կամ մարգարտով կազմես զիս, զիմ բարբս չկամիմ թողուլ։

Կը մեկնէ առակալիուն. « Յուցանէ առակս. աես զայն մարդն, որ իւր բանքն չէ անարատ, այլ նենգաւոր և չար, թէպէտ և սիրելի լինի քեզ, դու մի հաւատալ նմայ » . . .

(Ժողովածոյ Վարդ. Առակ էջ 65-6).

248

**Նոյն առակախօսը մի և նոյն նիւթին
վրայ կը յիշատակէ.**

**Զկատուն լուսայկալ զրին թագաւորին
ի վերայ սսկէկար բարձին։ Նոյնպէս և ա-
րարին զաքիսն. և աային նոցա ի կերակը-
րոյ թագաւորին և ասացին նոցա, թէ թո-
ղէք զբարս ձեր. և նոքա ասեն.**

Թէ ոսկով և մարգարտով ծածկէք զմեզ. մեք
ոչ կարեմք թողուլ զսովորական բարս մեր.

«Զի կասաւին բնութիւն է. որ թէ աեսանէ
զմուկն, նայ դողայ և ոչ կարէ համբերել,
նոյնպէս և աքիսն ոչ կարէ թողուլ զըմմիթ-
նալն» կը մեկնէ. «Յուցանէ առակս, թէ զոր
փորձեալ ես, որ չէ բարքն անարատ, այլ
նենզաւոր և չար է, թէպէտ և կեղծաւորի
բարի գործել. բայց դու մի հաւատար նմայ,
զի ոչ կարէ թողուլ զսովորական բարս. զի
խիստ բարի մարդ պիտի և ապայ սահճա-
հարել կարէ զկամս և զբարս իւր»։

(Ժողով. Առակ. Վարդ. Էջ 64-5).
Digitized by Google

249

**ԺԼԱՄՆԵՐԸ ՀԱՀԱԳՈՐԾՈւԹԵԱՆ ՄԷջ շատ
անգամ անյագ աենչով վարակուած ըլլալով,**
վերջ ի վերջոյ կը զրկուին ամէն շահերէ.
**գեղեցիկ օրինակ մը ունինք Վարդան առա-
կախոսէն.**

Այր մի աղքատ ունէր բուզում որդիս
և պատրաստեաց նմայ ասաուած հաւ մի
հնդի, որ յամէն աւր ածէր նմայ ձու մի
սոկի, որ յաւուրն բաւական լինէր նոցա
յամինայն պէտս. և նայ աղահացաւ և ասէ.

Զենեցից զհաւն և առից զոսկի ի շտեմարանս
նորա և փարթամեցայց.

Իբրեւ եզեն զհաւն, զտաւ ի փորն նորա
իբրեւ զայլ հաւու և զրկեցաւ ի փոքր շա-
հէն:

Կր մեկնէ Վարդան. «Յուցանէ առակս,
թէ որ ցանկայ անգէպ մեծութեան, աննման
ազահութեան ձեռն արկանէ, նայ և զոր
ունի, զայն կորուսանէ» :

(Ժողով. Առակ. Վարդանայ 117).

250

Ազգը մատնելու ահոելի գործին վարդան սա պարզ առակը կը պատմէ.

«Որսորդ մի էառ կաքաւ մի և կամէր զենուլ զնայ, և ասէր կաքաւն լալով. մի զենուր զիս. և ես բախեցից քեզ բազում կաքաւս և ածից ի կամս քո, և ասէ որսորդն. այժմն մեղցիս ի ձեռաց իմոց. զի զսիրելիս քո և զազս մատնես ի մահ»։ Կը մեկնէ. ցուցանէ առակս։

Թէ կազմես որոզայթ ազգի քո և սիրելոյ. և ոչ հաճի աստուած ի գործս քո և քեզ պատրաստէ նոյն։

(Ժողով. Առակ. Վարդամայ 117-8).
251

Ժշատութեան մասին կը գրէ առակախօսն վարդան։

Սարդն ի բնութենէն հինէ զվարժն. զի որս առնէ. և երբեմն այն չափ հինէ, որ տկարանայ և մեռանի. և վաստակն իւր մին ճանճ է, որ բռնէ։

Կը մեկնէ. «Նոյնպէս ագահքն կորուսանեն զհողիս իւրեանց ժողովելալ զինչս աշխարհիս»։

(Նոյն էջ 261).

252

ԺՂԱՄՆԵՐՈՒՆ ՂԱւ ԽՐԱՍԻ Է ԵՎՈՎԲՈՍԻ ՍԱ
ՀԱՆՐԱԾԱՆՈՅԹ ԱՌԱԿԲ. «ՇՈՒՆ ՄԸ ՀՈՂԱԼՈՎ
ԳԵՎԱԷԽՆ Կ'ԱՆՁՆԷՐ՝ ԿԱՌՈՐ ՄԸ ՄԻՍ ՔԵՐԱՆՐ.՝
ՋՐԻՆ ՄԷջ կը աԵՈՒԷ ՄԸՍԻՆ ՉՊԵՔՐ՝ ԿԱՐԾԵ
ԹԷ ՄԵՐԻՉ ոՐՍ Է, ՉՊԵՄ ՄԸ կը ձգէ բԵՐՆԻՆ
ՄԻՍՆ ու կը վազէ շքին եասելն, որ իրեն
մէկ պատուական կերակուր մԸ կ'երևար.
բայց ինչպէս յուսահատեցաւ երբոր տեսաւ
թէ իր ագահութիւնը փուճ ելաւ։ Վայ ինծի
կը կանչէր ցաւելով իր ձգած մսին վրայ,
ես շգիտցայ պահել զայն որ ունէի, ահա
ունեցածս ալ կորսնցուցի»։

Ազահն որչափ շատին ցանկայ,
 Այնչափ աղքատ խեղճ կը մնայ։

(ԵԳՈՎԲՈՍ Առակը 92).

253

ԵՎՈՎԲՈՍԻ ԱՌԱԿՆԵՐՈՒՆ ԹԱՐՎՄԱՆԻՅՐ, Ա-
ՌԱԿԱԽՈՍԻ «ԱՂՈՒԷՍ և Գայլ» ԱՌԱԿԷԽՆ յոր-
դորակ մԸ կը հանէ մատնիչներուն.

Ով որ մատնիչ կ'ըլլայ եղքօր
 իրեն զլիսուն կուգայ սեւ օր։

(ԵՐԵՒ Եղ 140).

254

Սովորութիւնը եթէ վատ է, այն անփոփոխելի անդարմանելի կը մնայ. Խիկար կը դրէ սա զուարձալի առակը.

Զգալուն ձագն յուսումն տվին և ասէին թէ ասայ. ա. բ. գ. և նայ ասէր, այծ, բոյծ, գառն:

(Խիկար Էջ 144).

255

Հայրենեաց, հայ կրօնքի ուխտակրուժ վասակայ համար մեր պատմիչք շատ անէծքներ կարգացեր են: Երբ ուրացողն պիրճազգեստ կը մտնէ Պարսից արքունիքը, հոն խմբուած հայ հաւատացեալը կ'այլպանեն զայն.

Ո՛վ անմիտ վաճառական, զաննման և զանանց պատիւդ ետուր, և զանցաւորդ գնեցեր:

(Եղիշ Էջ 241).

256

Տիրանենգ, խարդախ մասնութեան պատմական առակ կը մնայ Հայոց առ Մզնամախոս սա իօսոքը.

Անի քաղաքն և ամենայն արեւելք քեզ եղեւ:

Մատնութեան դէպքը այսպէս կը պատմէ Ռուհայեցի Մատթէոս. « Սկսաւ անօրէնն Սարգիս (Վեստ) յառաջ բերել զշար նենդութիւնն իւր, և ազդ արարեալ Մոնոմախին և ասէր, եթէ, « Կոչեա առ քեզ զԳագիկ ի Կոստանդինուպօլիս՝ սիրոյ պատճառանօք, և յայնժամ՝ խարէութեամբ առցես ի նմանէ զքաղաքն Անի» : Մոնոմախ այդ լուրին վրայ չափազանց ուրախացած, կը հրաւիրէ զԳագիկ, սա զարաններէ կասկածելով, յանձն շառներ երթալ. « Յայնժամ նենզաւորն Սարգիս և այլ յազատացն յառաջ մատեան, որք բանատուքն (մատնիչք, ծածուկ լուր տուողք) էին առ Մոնոմախին, և քաջալերէին զնա գնալ, և ասէին. « Ո՞վ թագաւոր, վասն Է՞ր երկնչիս և ոչ զնաս, վասն այսպիսի երգմանցս և միջնորդութեամբ սրբոյ Աւետարանին և սրբոյ Նշանին Քրիստոսի. և յաղագս մեր մի երկնչիր. վասն զի ահա անձինք մեր մեռանին ի վերայ քո» : Եւ կացուցին. միջնորդս զՏէր Պետրոս (Գետադարձ), և արարին երկմունս սաստիկս յառուր յայնմիկ. և բերին զսուրբ խորհուրդն

մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ , և
թանային զգրիչն յարին կենարարին և ա-
րարին երդման գիր հայրապետն և ամենայն
իշխանքն Հայոց » : Կը հաւասայ Գագիկ ,
կ'երթայ Մոնամախին . և ահա շուտով կը
հասնի մատնիչներու թուղթը առ Մոնոմախ
թէ . « Անի քաղաքն և ամենայն արեւելք .
քեզ եղեւ » : Այն ատեն կը զրէ պատ-
միչը . « Կոչեաց թագաւորն զԳագիկ , և
զբանալիս տանն և զքաղաքին և զթուղթն
առաջի նորա եղեալ , և ասէր ցԳագիկ , եթէ ,
զԱնի և զամենայն արեւելք ետուն ի ձեռու
իմ » : Եւ ծանեաւ Գագիկ զնենգութեան
գործքն , յոգւոց եհան արտասուօք և ասէր .
« Դատ արասցէ ընդ իս և ընդ նենգաւորսն
իմ » և Մոնոմախին կ'ըսէ . « Տէր և թա-
գաւորն ես եմ տանն Հայոց , և ահա ես
ոչ տաց զՀայք ի ձեռու քո . վասն զի դու
զիս խարէութեամբ ածեր ի կոստանդինու-
պօլիս » : Սակայն անհնարին էր զիմադրելն .
կը կատարուի յափշտակութիւնը . — մատնու-
թիւնը կը յաղթանակէ :

(Մատք . Ուսհայեցի կԵ) .

257

Բարեկամին կեղծն ալ կայ, խարդախն
ալ: Հայաստանցիք կ'ըսեն.

Առաջէւանց հայլի.
Ցէտէւանց ածըլի:

Ըստ մեկնութեան. «Արտաքուստ բարե-
կամ ձեւանալ, և գաղանի դաւաճանել»:
(Ագր. Հանդես Գիրք VII, VIII 1901, էջ 458).

258

Երբ մանկական տարիքէն ոկսեալ վատ-
րնաւորութիւնը արմատացած է, անբուժելի
է այդ ախտը: Ալաշկերացիք կ'ըսեն.

Կաթի հետ մտած,
Հոգու հետ ելած:

Մեկնութիւնն է. «Մանկութենէն ստա-
ցուած գէշ բնաւորութիւնը մահուան հետ
միայն կը վերջանայ»:

(Նոյն էջ 468).

259

Ուրիշի գործերուն կամ խօսքերուն մէջ
մտնուի անձին համար, Հայաստանցիք ունին
հետապայ պարզ առածը.

Ոն (ով) եղնի պուկ (հարս)
Ենո կեղնի պարպուկ (հարսնքոյր*)
(Նոյն էջ 476).

260

Աւետարանական պատուէր է որ նախ
մեր աշքի զերանը նկատողութեան առնենք
և յետոյ ուրիշի աշքի շիւղը. ասոր վրայ
Ալաշկերացիք ունին հետագայ առածը.

Ուր (իւր) աշքի գերան չ'տեսնայ.
Խըլդի (ուրիշի) աշքի խիլ (շիւղ) կը տեսնայ:
(Նոյն էջ 478).

261

Հայաստանցիք բամբասողներուն յատուկ այս
առակլ ունին.

Պիտէր (պէտք էր), պիտաւոր էր (յարմար),
ամպ արեւուն անուն դնէր (անուանարկել):

* Ըստ «Աղջադրական հանգեստի», հարսնքոյր բա-
ռի մեղնութիւնն է. «Փիւրաերու նոր գնացած հարսե-
րու ընկերանալու, և զայն փեսային քով առաջնորդե-
լու համար՝ փեսայի անէն կիներ (մէկ կամ երկուս)՝
կ'երթան հարսանիքի հետ հարսին հօր տռնը, որնից
պիտաւուկ կ'ըսեն, (պիտար մասէջ, պուկ հարսին
առաջնորդող, կամ հարսնաքոյր):

Կը մեկնուի . «Երբ անարժան մը ուրիշի
արժանիքը նուաստացնելու համար , առ նա-
խանձու կը բամբասէ , թերութիւններ կը
ստեղծէ , կ'անուանարկէ զայն » :

(Նոյն էջ 480) .

262

Ուրիշի վէճին խառնուիլ ու պաշտպանել
հակառակորդը , առանց շահ մ'ունենալու ,
այդ տիմար վասութիւն է , որուն հայաս-
տանցիք ունին հետագայ առակը .

Տարան տարան...

Բրտի շուն , քե՞ ինչ տարան :

Ազգագրական նիւթեր հաւաքող թերթը
այսպէս կը մեկնէ այդ առակին իմաստը .
«Գայլերը կը յարձակին ոչխարի հօտին
վրայ , ու քանի մը հօտ կը փախցնեն : Լուրը
գիւղը հասնելուն պէս , բոլոր շուներ գայլե-
րու եաեէն կ'իյնան , ու ոչխարները կը իլեն
անոնցմէ : Շուները գեռ բաւական աեղ գայ-
լերը հալածելէ յետոյ , կը յոզնին ու կը
սկսին ետ գառնալ , միայն բրուտին շունը ,
որու աէրոջ ոչխար չ'կար հօտին մէջ իսկ ,

Հայ Միաբը

11

ետ չի գառնար, և այնքան կը հալածէ գայլերը, որ վերջիններս անկարող կ'ըլլան առաջ երթալ, կը կանգնին, և իրեցմէ մին ուս զիտողութիւնը կ'ընէ բրուտին շանը . «Մեկ այլչափ հալածելուզ, յոդնեցնելուզ պատճառն ինչ էր, բրտի Շուշն, տարանք, տարանք քեզ ինչ տարանք» :

(Նոյն էջ 482–3).

263

Հայաստանցիք լիրի մարդկանց կը յիշեցնեն.

Արսըզ մարդուն.
Ընօր (ամէն օր) գարուն :

Մեկնութիւնն է . «Ուրախութիւնը և արտմութիւնը անզգայ և աներես մարդու վրայ միենոյն ազգեցութիւնը կ'ընեն : Լրջութիւն չ'ունենալ» :

(Նոյն էջ 488).

264

Ժլատ, անձնազուրկ հարուստին համար առակը ըսած է.

Վիր (որու) կայ լիք հորով հաց (ցոլեն)
Զուտայ կուշտ փորով հաց :
(Նոյն էջ 503).

265

Գինեմոլութիւնը, արբեցողութիւնը ախտե-
րու անմենչն ամեղն է և սակայն անաքանդ
և շատ անգամ հոգեքանդ : Առակը կը պա-
տուիրէ .

Դուն խմէ՛ երկու հատիկ,
Ուր դառնաս նուան հատիկ:
Մի՛ խմեր երեք հատիկ,
Ուր դպնիս պատէ պատիկ :
(Նոյն էջ 468).



ԳԼՈՒԽ Զ.

**ԲԱՐԵԿԱՄՈՒԹ. ՄԻՈՒԹԻՒՆ. ԱՆՄԻԱԲԱ-
ՆՈՒԹԻՒՆ**

266

Անմիաբանութեան գժոխային կրակը կի-
զելով եղբայրական միութեան կապը, ամէն
մաաենագիր սղբացեր է անոր պատահարները
ահոելի. և ասոր համար աստուծացուցած
են միութեան, համերաշխութեան գեղանազ
հոգին. միութեան գոռ քարոզիչն է Պատ-
կանեան. կը փողահարէ, համերաշխ, մէկ
հոգի, մէկ սիրա միութիւն ազգային.

Քրիստոնեայ ենք մենք և սերունդ Հայկի,-
Այսքան բաւ է: Է՛լ լուսաւորչական,
կամ պապադաւան և կամ լօթրանգի
Ազգը չի բաժնենք՝ ի սէր հայութեան:

(Պատկանեան. Բնաւեղծ. 240).

267

Բաֆֆի կը ցաւի հայկական անմիաբանու-
թեան վրայ: Քիւրդ բէկերը կու գան կը

մերկացընեն հայերը. բարեկամութիւն կը ձեւացընեն, ու հայ տանուտէրը, գիտնալով որ դիմագրութեամբ ահաւոր վնասներ կը ծագին, ինքն ալ բարեկամաբար կը թողու որ կողսպատուի. սակայն հարուածը մահացու է, հայը կը բողոքէ, բայց ինչ կրնայ ընել, ուժ չունի. կ'լսէ.

Քուրդը մեղաւոր չէ: Եթէ մեր մէջ միտւթիւն լինէր, եթէ մեր մէջ սիրո լինէր, քուրդը, յիմար և ծոյլ քուրդը ինչ կարող էր անել:

(Խերք էջ 66).

268

Մեր պաշտելի պատմիչները և յետոյ նաեւ ամէն ազգասէր հայրապեաք, և աշխարհական մտաւոր առաջնորդներն և նոյն իսկ ժաղովուրդը ինքնին, միշտ ողբացած են մեր հասարակական մեծ թերսւթիւնը — անմիաբանութիւնը, սակայն անոր նիրհակ կը պնդէ Հ. Ալիշան.

Հայք ոչ գտան թերի ի միաբանութենէ քան զայլ ազինս, և զի մանաւանդ յոյժ միաբանասէրք հանդիսացան քան զյոլովս ի բարենշան ազգաց:

(Բագմագեա 1843 էջ 318).

269

**Հ. Ալիշան՝ բոնկած ազգասիրութեամբ,
կը հարցընէ.**

Ո՞վ է որ յանձն առնուցու անմիաբան զազգ
իւր անուանել՝ և ոչ զանգիտեսցէ արատ մեծ
դնել իմաստութեան իւրում, թող թէ ազգասի-
րութեան։

(Նոյն էջ 318)։

270

**Մեր ազգը միշտ լսած է համերաշխութեան,
եղբայրութեան, միաբանութեան կաթողին
յորպորներ։ Հ. Ալիշան որքան որ մեր ազ-
գը միաբանասէր ընդունած է, և անոր հա-
մոզուած է ու համոզա՛ծ, սակայն ինքն ևս
անհրաժեշտ կը դատէ հայկական միութիւն
քարոզել։ Ուափայէլեան վարժարանի աւար-
ագլարժ սաներուն կ'ուղղէ այս խօսքերը.**

Այլ ևս ազգասիրաց և ճշմարիտ ազգասիրաց
ձայն տամ, ի բուռն առնուլ յառաջ քան զամե-
նայն զմիշտ քարոզեալն և զմիշտ կարօտեալն
զմիութիւն, միութիւն սրտի՝ ի ջանս լաւութեան,
միութիւն խորհույ՝ իյառաջացումն կենցաղօգուտ
գործոց, միութիւն ձեռին ի համավաստակ գոր-
ծառնութիւն, միութիւն հանգանակի ի սատար
ազգախնամ գործոց։

(Բագրավեպ 1848 էջ 182)։

271

**Հ. Ալիշան միութեան համար հոեաոր
կը զառնայ, իր քնարով եւս միութիւն կը
քարոզէ.**

Օ՞ն, ձեռն ի ձեռն համակարծիս համասէր
Զօդիմք եղբարփըս զուգակրօնք զուգարիւն,
Եւ համաշունչ ելցեն աղերսք ընդ եթեր:
(«Խոհուն» Էջ 110).

272

Եւ կ'ողբայ ամիաբանսւթիւնը.

Դու զի՞ կաս զի՞ դանդաշես կաղակրկին տուն
Թորգոմայ.

Ո՞ն, մինչեւ ցե՞րք մինչեւ ցե՞րք դուք գայ-
թակղութիւն եղբարք եղբարց.

Ցեսս ընդդէմ ի լուսապսակ ասպարիզացն
օցուիցէք,

Ցե՞րք յինքնակապըս կաշկանդեալք ոչ խըզի-
ցէք ըզպիդ շղթայս.

(«ՀԱՅՐՈՒՆԻ» Էջ 160).

273

**Աւագ Մասիս հայութեան կ'ուղղէ սա
խօսքերբ: Հայք,**
Երք յիշեն զԱստուած, զիրար այլ յիշեն,
Վիաքանութիւն ու սէր մէջ քաշեն

Թողուն խարդախանքն ու զանձնասէր շահ
Ըլնին իրարու օգնող ու վստահ...»

(«Հայութեան Եջ 294).

274

**Փոքրն Մասիս թէն յոռեածս , սակայն
երբ տեսնէ հայութիւնը միաբան , եղբայր
եղբօր ձեռնտու , բարեացակամ .**

Կու հաւատամ երբ սիրով զան ի բարին
ի մեզ այլ դառնայ մեր պարծանքըն հին :
Ա'լ Ե՞րբ տի ըլնի որ վառին սըրտեր ,
Ե՞րբ տի տեսնունք զայն երջանիկ օրեր :

(Նոյն Եջ 295).

275

**Յիշատակվլի են Աւարայրի քաջերուն մէկ
սիրու , միաբան կոռվիլը ու նահատակուիլը ,
այդ միաբանութիւնը Նահապետ իր այս
տողերով անմահացուցած է .**

Միաբան ընկերք ի հայրենի տան
Մէկտեղ կեալ մեռնիլ իրարու երդուան .
Առին զկապն հիւսած սիրուհեաց ընծայն՝
Զիրար կապեցին մընալ անբաժան .

(Նոյն Եջ 328-9).

276

Բարեկամութիւնը կը պահանջէ մէկ սիրամէկ ոգի, համերաշխութիւն, անկեղծութեան կապանքսվլ զօդուած իրարու. հակառակ պարագային կարող ենք յիշել Առակախօս Միհիթար Գոշի սա օրինակը.

Նոնենի և թզենի առ միմեանս սէր ունել կամեցան, և քաղցրութեամբն հաւասարեցան, բայց ընդ թթուութեան նոնենւոյն տաղտկացաւ թզենի, և լուծաւ դաշինքն :

Մ. Գոշ այսպէս կը մեկնէ. «Իմաստս տայ այս առակ, նախ փորձեալ սիրելեաց զմիմեանց բարս, զի ամենայնիւ նման միմեանց իցեն. ապա թէ ոչ՝ դիւրաւ լուծանելի իցէ սէր» :

(«Միհիթար Գոշ» Էջ 12).

277

Առակախօսը Միհաբանական համերաշխութեան համար եւս ունի այս գեղեցիկ օրինակը..

Խորդք տողին ի գնալն իւրեանց, և զմիմեանս յառաջատեն, և միմեանց տեղի տանի կոիչսն .

և ոչ նման ոմանց առանձնաբար շրջին. այլ պահ միմեանց ունին:

Որով կը խրատէ առակախօսը, « Այն պէս և մեզ պարտ է միաբանութեամբ և զգոյշ կեալ, և պատիւ միմեանց դնել, և պահել ի շարէ զանձն լընկերին» :

(Նոյն էջ 119).

278

Բարեկամ ունենալ, և մտերիմ գտնելը զիւրին է, բայց ճանչնալը շատ զժուար. լաւ չի ճանչցած բարեկամին հետ շատ զգուշաւոր պէտք ենք ըլլալ։ Առակները մեզի կրնան խրատ ըլլալ. լսենք առակախօս վարդանին. « Ազուէսն և աւձն եղեն եղբարք և գնացին առ գետ մի առին գետին մի. և ասաց աւձն ընդ աղուէսն. ով եղբար, դու անցանես զջուրն. և ես զի՞նչ անցանեմ. ասաց աղուէսն. եկ փաթուաեց ի վիզս. և յորժամ ի խորն գետին հասին, աւձն զերեսն ի յետ աարաւ և կամէր խայթել զաղուէսն, և աղուէսն յիմացաւ զայն և ասաց ընդ աւձն.

Ո՞վ եղբար զերեսդ ի յետ ինչ տարար յերեսէս.

Ասէ աւձն, կամիմ խայթել զքեզ, որ մեռանիս, ասէ աղուէսն. բեր համբուրեմ զերեսսդ. որ սիրոյ փափաքս անցանի հանց, որ խիստ սէր ունիմ ընդ քեզ. և կամեցաւ և երեր զերեսսն. և աղուէսն էառ զլիզն ի բերայն և այլ ճար ոչ կայր խայթելոյ. և յորժամ անցաւ աղուէսն յանկուս, սատակեցաւ աւձն, և ձգեաց զայն ի դետին և թալմովն ողորդեաց զաւձն և ասէ եղար ուղորդ, եղբար:

Կը մեկնէ. «Ցուցանէ առակս, թէ բզմարդն փորձել պիտի, որ նենգաւոր չէ լինի աւձու պէս և ապայ սիրելութիւն դնել ի հետն. զի սատանայ և նենգաւոր մարդն և շարն և անհաւատն և աներկիւզն մեկ է, որ խարեն» :

(Ժողով. Առակ. Վարդ 130) .

Միաբան համերաշխ գործունէութեան և կենակցութեան համար պակաս չեն օրինակ-

ներ. Եզովլրոս կը յիշէ հօր մը սա պարզ
և գեղեցիկ օրինակը. «Ճան մը ծերը շատ
որդիք ունէր. երբոր հասաւ վերջին ծերու-
թեան և տեսաւ թէ մօտ է վախճանը,
կանչեց քովը բոլոր որդիքը. նայեցաւ որ
ամէնքը քովն են ժողված, բերել տուաւ
մանտր ցուպեր, և բոլորը մէկտեղ կապեց
ու տուաւ մեծ որդւոյն և հրամեց որ կոարէ:
Ան ալ յանձն առաւ. բայց որշափ որ ջա-
նաց՝ և շատ անգամ ուժ տուաւ որ կոտրէ՝
չկրցաւ կոարել: Եարբ տուաւ զայն երկ-
րորդին. ան ալ երրորդին. ոչ մէկը ոչ մէ-
կալը կրցան կոարել ան կապոցը: Ասանկ
որ եղաւ՝ ծերն առաւ ան կապը քակեց ու
զատեց, ամէն մէկին մէյմէկ հատ տուաւ,
և հրամեց որ երկրորդ անգամ փորձեն ու
կոտրեն. բայց անոնք առանց գիտարութեան
մէկէն բոլորը կոարեցին: Ան ատենը դար-
ձաւ ծերը ըսաւ. Որդեակ երբոր ես աս աշ-
խարհէս ելլեմ՝ ասանկ պիտի ըլլայ ձեզի,
որշափ որ զուք ամէնքնիդ միաբան մնաք
այնպէս զօրաւոր կ'րլլաք որ մէկը չի կրնար
զձեզ շարժել. բայց անմիաբան եղածնուգ

պէս՝ անանկ պիտի տկարանաք որ պղտի փորձանք մը ձեզ կրնայ կործանել»։ Այս առակն թարդմանիշը կը հետեւցընէ.

Քանց բերդ ամուր զինչ հաստատուն
Բայց միաբան եղբայրութիւն։

Եւ կը զրէ գարձեալ. «Հայոց թագաւորութեանը մէջ քանի որ միաբանութիւն կար՝ այնշափ մեծցաւ որ ահազին երկիրներ տիրեց. բայց անմիաբանութեամբ քիչ ժամանակի մէջ ոչնշացաւ»։

(Եղովբոսի առակ եջ 199)։

280

Բարեկամի հարազատութիւնը, անկեղծութիւնը վատանգի ատեն լաւ կը հասկցուի. «Եղովբոս կը զրէ. «Մէկ մեծատուն առատանիրա ըլլալով՝ միշտ իր բարեկամներուն հարկինք կ'ընէր, որոնք գիշեր ցորեկ քովլն չէին պակսեր և մեծ պատուով կը բարեւէին զինքը։ Օր մը կամեցաւ փորձել աս բարեկամները, թէ արդեօք պէտք եղած ատենը կը հասնին օգնութեան իրեն հարկաւորութեանը. ուստի ձեւացուց թէ հակառակու-

Թիւն ունի թշնամիներուն հետ որ զինքը
պիտի սպաննեն, աղաչեց բարեկամներուն
որ աս նեղութեան մէջ իրեն օգնեն։ Ճեսաւ
որ երկու բարեկամէն ի զատ մէկը չեկաւ.
ան ալ մինակ աս երկուոը բարեկամ պա-
հեց իրեն, մէկալնոնք բոլոր վորնաեց »։
Թարդմանիշը կը զրէ հետեւեալ քերթողա-
կան յորպորը.

Քեզ բարեկամ լիցի անգին,
Որ ցանգ կցորդ կայ քոյդ անձին։
(Նոյն էջ 506.)

281

Միութեան և անմիաբանութեան շատ բը-
նական և սիրուն օրինակ մըն է Եղնկայ սա
խմաստասիրական բացատրութիւնը թէ.

Զի բազում անգամ զոր բարին կարծիցն,
միայն առանձինն՝ առանց ընկերին խառնու-
թեան՝ մսասսակար լինի, յամենեցունց առ հա-
սարակ վկայեալ։ Ազեզակն թէ բարի է, և ա-
ռանց օդոյ խառնուածոյ այրիչ և ցամաքեցու-
ցիչ է։

(Երես էջ 10). .

282

Նոյն հեղինակը կ'ըսէ դարձեալ.

Չորեքին բնութիւնքն, ուստի աշխարհս կազմեալ և կայ, առանձինն՝ ապականիչք են միմեանց, և խառնեալ ընդ ընկերին՝ օգտակարք և շահաւորք:

(Նոյն էջ 11).

283

Երբ կ'ուզուի զործը առաջ մղել, պէտք է ուժերը միանան, պէտք է մէկ նպաստակալ և ուղղութեամբ, միաբան զործել ու շարժել: Կ'ըսէ Եզնիկ.

Ամենայն կառք ի համազգեաց երիվարաց լծին: (Նոյն էջ 17).

284

Անմիաբանութեամբ, իրարու թշնամի կ'ըւլանք և զիրար սպանող. կը գրէ Եզնիկ.

Երկու հակառակք իրերաց՝ միմեանց ծախիչք են, որպէս խաւարի լոյս, և չեր սառամանեաց: (Նոյն էջ 64).

285

Բարեկամ մը ճանչնալու և անոր հաւաստարմութեան վստահելու համար, Խիկար կը պատուիրէ.

Յայտնեայ զփոքր խորհուրդ բարեկամին քո և յետ աւուրց զրգոէ զնայ և անարգէ. Եթէ զայն խորհուրդն ոչ յայտնէ, ապայ զմեծ խորհուրդն յայտնես նմայ և հաւատարիմ սիրելի պահես զնա:

(Խիկար Էջ 41).

286

Բարեկամի համար կ'ըսէ դարձեալ.
Լաւ է բարեկամ մաւտեոր քան եղբայր հեռաոր:

(Նոյն Էջ 48).

287

Բայց կը զգուշացընէ.
Մի յաճախեր ի տուն բարեկամի քո, զուցէ ատիցէ զքեզ:

(Նոյն Էջ 52).

288

Պէշիկթաշլեան որ անմահացուց համերաշխութեան, համազգային միութեան սղին.
կ'երգէ լի յուսուլ, որ.

Երբ ալեւոր Մայր Հայաստան.
Տեսնէ զորդիս իր քովէ քով,
Սրտին ... խորունկ վէրքըն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցողով.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղեայր անուն:

(Պէտիկը. Մատենագրք Էջ 76).

289

Բարեկամին անկեղծութեան եթէ վստահ
ենք, անոր առջեւ կրնանք անգաղտնապահ
մմալ. լաւ կը գրէ Աքովիան. « Բարեկամի-
ցը ի՞նչ պէտք է թաքցրած ». ու երբ ան-
վըստահ իր բարեկամին, կարծելով որ իր
կարդացած գրութիւնը պիտի ծաղրելի ըլլայ,
և ընդհակառակն բարեկամը հիանալով կը
գնահատէ զայն, Աքովիան իր այդ անվըս-
տահութիւնը կը դատապարտէ ինքն իր լե-
զուով.

Բայց փիսը ես էի, որ նրա ազնուական հո-
գին դեռ լաւ չէի ճանաչել:

(Վէրք Հայաստանի Էջ 9).

290

**Աբովեան ազգային մեծ զանգուածին միտ-
թիւն կը քարոզէ.**

Դուք, դուք իրար պահեցէք, ինչպէս ձեր նախ-
նիքը, դուք իրար թասիք քաշեցէք, ձեր նախ-
նիքը միտք բերէք, ձեր հողն ու ազգը պաշտե-
ցէք:

(Նոյն էջ 79).

291

**Վիսլասանը այս սրաւաշարժ պայմանը
կը դնէ.**

Հօղումն մարմինս քրքրվի, երկնվումը հոգիս
տանջվի, երբ իմանամ՝ թէ ձեր սէրը պակսել ա:

Եթէ այսպէս է, Աբովեան յաւիտենակա-
նորէն կը առնջախ, ծայրայեղ է իր ազգա-
սիրութիւնը և միարանասիրութիւնը համե-
րաշխ:

(Նոյն էջ 79).

292

Եթէ մենք միաբան գործենք, աշխա-
տինք և իրարու օպնենք, կը դրէ Աղասիի
գուսանը.

Մենք որ իրար թասիք քաշենք, իրար քօմակ անենք, իրար պայծառացնենք, շնացնենք, ծովս էլ տեղիցը վեր կենայ, մեզ տակով չի կարող անիլ, ինչ թէ Օսմանցին, եա Պարսկը:

(Նոյն էջ 86).

293

Եւ,

Որ ջանք անենք, մէկզմէկու սիրենք, մեր լեզուն, մեր եկեղեցին էնպէս զայիմ բռնենք, ինչպէս մեր երջանիկ նախնիքը, հաւատացիր ինձ, Աստուած էլ կսիրի մեզ, մարդ էլ:

(Նոյն էջ 86).

294

Մէկ սիրա , միաբան գործունէութեամբ ,
կարելի է ապրիլ և ապրեցընել ազգութիւնը .
օտարին վրայ յոյս ունենալը երազ է . Խորէն
Եպիսկոպոս Գալֆայեան կը գրէ .

Գիտեմ, ձեր բեռը ծանր է, ով հայեր,
 Բայց կը կարծէք զայն վերցնեն օտարներ,
 Թոռէք զօտար, տուէք եղբայր եղբօր թեւ,
 Եւ զօրացէք անդեղեւ:
 (Սոխակ Հայոստաճի էջ 228).

295

ԵՐՐ ԳՈՐԾԻ ՄԸ ՄԷջ կը աեսնուի հասարակութեան միաբան ոգին և համոզումը . պէտք է համոզուիլ, որ

Աշխարհակոյտ ամբոխին կամացըն չիք կալ հակառակ :

(Հայկ. Դիցագն էջ 136).

296

Սակայն երր չի կայ միութիւն, այլ ներքին կոիւ, կուտարարը ամպարիշտ ապականած տարր մըն, հատանելի և արտաքսելի.

Ամպարիշտ է և վիրագ ոչինչ ընդհատ ի ներովթայ

Որ զառտընին պատերազմ արծարծանէ ժանտի յեղբարս :

(Նոյն էջ 141).

297

Հայաստանցիք միութեան համար սա առակը կը գործածեն.

Գեղ կանի՛ (կանգնի)
Գերան կը կոտրի:

Մեկնաւթիւնն է. «Միացեալ ուժերու առջեւ ամէն դժուարութիւններ կը վերնան » :
(Ար. Հանդէս գիրք VII, VIII, 1901 էջ 459).

298

Միաբան գործունէութիւնը յաջողութեան կը հասցնէ ամէն զժուարութիւն։ Աշխատանքը կը հանդէ ամէն խոշընդուան ու արգելք։ աշխատանքին հետ միանալով համերաշի աջակցութիւնը, յաջողութիւնը ապահով կ'ըլլայ։ Հայաստանցին ըսած է։

Մէկ մէկով, երկուսն Աստծով իրեքն ու չորս ուրենց զօռով։

Ըստ «Ազգր. Հանդէսի» մեկնութիւնն է. «Շատ աշխատողներու աջողութիւնը համերաշխութիւնէն է, իսկ քիչերունը՝ բաղդէն կախուած է»։

(Նոյն Էջ 473)։

299

Բարեկամին նուէրը որքան ալ փոքր, չնչին ըլլայ, սակայն զին չունի՝ անկեղծ ու սրբանց ըլլալուն համար. առակը կ'ըսէ.

**Շատն ուժից ա (ուժէն)
Քիչն սիրուց ա (սէրէն)։**

Ըստ «Ազգագրական հանդէս ոի, կը մեկնուի. «Բարեկամական անկեղծ ու բուռն

սէրէն առաջ եկած թեթեւագին նուէրը ա-
ւելի թանկ արժէ, քան մեծարժէք նուէրը,
որ սիրով եղած չէ ։

(Նոյն էջ 475)։

300

Բարեկամութեան մասին ըսուած է.

Զուր կ'երթայ.
աւազ կը մնայ։

Ա'եկնութիւնն է Ալաւ է տեսականը (բա-
րեկամ), քան ժամանակաւորը ։

(Նոյն էջ 480)։



ԳԼՈՒԽ Է.

ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ. ՏԳԵՂՈՒԹԻՒՆ. ՀԱՐՍ-
ՏՈՒԹԻՒՆ. ՀԱՅ ՖԵՄԻՆԻԶՄ.

301

Ֆէմինիզմի մասին թափֆի քարող կը
կարդայ, հայ կանանց վրայ շատ անոյշ լե-
զուող կը խօսի.

Այժմ նա մի անարատ, չապականված և ան-
մշակ նիւթ է մեր ձեռքում, որից կարելի է հրա-
շալի բան չինել:

(Խելքը էջ 221).

302

Բայց գեռ մեր մէջ ֆէմինիզմը շատ ա-
նըրջական գաղափար մըն է. տակաւին կը
մտածեն թէ.

Աղջիկը ի՞նչ կանէ կարդալը, աղջիկը խօ-
տէրտէր կամ վարդապետ չի դառնալու:

(Նոյն էջ 212).

303

Ու հայաստանցի Տէր հայրը կը քարողէ.

Աղջիկներին կարդացնելը վտանգաւոր է, ուրովինետեւ նրանք չատ բան կը սովորեն և սատանայ կը դառնան:

(Նոյն էջ 215).

304

Հայ կնոջտկան պատիւը պատկառելի է.

Հայ կինը ամեն նեղութեան համբերող է, ամեն վիրաւորանքի առջեւ լուռ է, բայց երբ դիպչում են նրա պատուին, այն ժամանակ նա անհամբեր է դառնում:

(Նոյն էջ 318).

304

Իսկ անոր դաստիարակուելուն, կրթուելուն համար Արծրունին այսպէս կը հառաչէ.

Խեղճ Հայոց կանայք, կարծում են թէ ձեզ հարկաւոր չէ կրթութիւնը. ձեր հայթերը չեն տուել ձեզ կրթութիւն և չեն էլ տալիս մինչեւ հիմի:

(Գ. Արժրունու Աշխատուքիւնները հատ. I. էջ 12).

305

Նոյն հեղինակը կանանց գիտնական զարգացումին ի նպաստ դադարիաներ յայտնելով, կ'ըսէ.

Մինչեւ որ կինը չմասնակցի կրթութեան գործին, — ժողովուրդը տգէտ կ'մնայ և յառաջադիմութեան գործը յաջողելու չէ:

(Նոյն էջ 227).

306

Տգեղներու, և տգեղութեան, հրաշալի հեղնական կարելի է գործածել Ծերենցի (Յ. Շիշմանեան) նկարագիրը, զոր Պարսնեան հետագայ հոյակապ առղերով շատ լաւ կատարած է. կ'լսէ թէ Շիշմանեան,

Այնպիսի դէմք մը ունի, որ կարծես փոնգտալ կուզէ և չկրնար:

(Առային Զույեր էջ 130).

307

Չենք կրնար ուրանալմեր ազդային ալբերդութիւնները. սակայն ուշ կը դնենք Հ. Ալիշանին սա տուած յորդորին.

Որ ինչ ի մեզ տգեղն է ճշմարիտ գեղով յարդարեսցուք:

(Բագր. 1815 էջ 334).



308

Անխելք գեղեցկութեան համար Եղովրոսէն ծանօթ է սա առակը. օր մը գայլը կը մանէ արձան շինողին խանութը, և կը տեսնէ հսն կիսարձան մը, շատ գեղեցիկ շինած. առջի բերանը կը զարմանայ անոր աղուորութեանը վրայ. բայց երբոր կը տեսնէ ու կը հասկընայ թէ քարէ շինած անըդգայ գլուխ մըն է և բան չիմանար. Ո՞հ ի՞նչ գեղեցիկ գլուխ է, կ'ըսէ, բայց մեղք որ խելք չունի:

Թարգմանիչն ատկէ կը կազմէ սա առակն.

Ի՞նչ շահ եթէ դէմքն է աղուոր,
Գլուխն անխելք պարապ կլոր:

(Եղովրոս առակք էջ 123).

309

Պատմիչներ, քնարերգուներ, և վիպասաններ յափշտակուած կը նկարագրեն վաղեմի Յունաց օրիորդներու, եւ կանանց գեղեցկութիւնը պերճատեսիլ նազելի. սակայն Հայստանն քան այդ չքնաղ հելլէնուհիները աննման գեղեցիկն ասպնջականեց, գեղալ

Հիասքանչ Հոփիսիմէն, որուն համար Դիոկ-
ղեաիանոս կայսրը կը գրէ առ մեր Տրդատ
թագաւոր թէ

Ոչ երբէք գտաւ նման նմա ի մէջ Յունաց աշ-
խարհիս :

Ահաւասիկ գեղեցկութեան համար բաղ-
դատական օրինակ մը, զոր իբրեւ առակ
կարող ենք գործածել :

(Ագարանգեղոս ԺԴ) .

310

Պէշիկթաշլեան եւս Փէմինիզմի պաշտպան
է. Հայ իգական սեռէն՝ վառ յոյսերով քաջա-
կործութիւններ կը սպասէ . միիթարուած
կ'երգէ .

Դադրին նուագք ողբերգու
Սրբէ արցունքն Հայաստան,
Զի յոյս զուարթ օրերու
Աղջկունք Հայոց իրեն տան.
Ու կոյսք իրեն մօտեցէք
Ու թագն իր գլուխը դրէք:
(Պէտիկը . Առանեագրութիւնք էջ 78) .

**Այլպիսի Հայկուհիներ կ'երազէ սպասե-
րազմի դաշտին մէջ.**

Այդ կոյսն աղոր ուստի կու գայ
թոռւցեալ զուարթ լերանց վըրան
– Պատերազմէն նա կու դառնայ,
Հերաց վըրայ դափնիք շողան։
(Նոյն Էջ 108).

311

**Հայ կոյսերուն բնասուր՝ միայն գեղեցկու-
թիւնն չէ, այլ և արիական քաջութիւնը.
Բագրատունին Հ. Արսէն շատ լաւ կը բամ-
լուահարէ.**

Եւ տեսցես, զի թորգոմայ չեն գեղեցիկ միայն
դստերք,
Այլ և արիք և մըխեալք ի հուր վըշտաց ւա-
րեանց մարտի։

(Հայկ. դիցազն Էջ 426).

312

**Ժողովրդական բանասաեղծութեան մէջ
գեղեցկին գեղը պարզ ու անկեղծօրէն եր-
գուած է. փեսայի դրան հարսնեւորք կ'երգեն.**

Հայ իմ հայ աննըման աղւոր։

Աղւոր, քիզ ո՞ր մարն է բերեր,
Ան թուխ աչեր մարն է բերեր:
(Համով-Հոռով էջ 293).

313

Գեղեցկին համար ամէն բան կեանք է և
հիացում, գեղեցիկը, աղւորը գիշեր չունի.

Գեշին տէրը արիւ չունի.
Աղւորին գիշերն է արեւ:
(Նպն էջ 294).

314

Հարսառութիւն կայ քրտինքով և հարըս-
առութիւն բազվով. յետինս երբ մուխի պէս
ցնդի, չամպոտեր զրկեալին հոգին: Ալաշ-
կերտցիք ըսած են.

Քամու (քամիի) բերած
քամու տարած:

Մեկնութիւնն է. «Առանց աշխատութեան
և յսգնութեան ձեռք բերուած հարսառու-
թեան լատնումը ցաւ չի պատճառեր»:
(Առր. Հանդէս Գիրք VII VIII էջ 484).

315

**Որքան որ հարուստ է մարդս, այնքան
աժդուհ. առակ է եղած.**

**Հարուստ չ'թօղայ
որ աղքատն իլայ (լալ):**

**Մեկնութիւնն է . և Հարուսաները աւելի
զժկոհ են իրենց ապրուստի վրայ, քան աղ-
քատները ՞ :**

(Կոյճ էջ 495).



ԳԼՈՒԽ Ը.

ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ, ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ,
ՎԱՍՏԱԿ, ԱՐԴԻԻՆՔ,
ՊԱՐԳԵՒ, ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ.

316

Պատկանեան Եւրոպայի ճակախն կը զար-
նէ Հայաստանի այն օգնութիւնը, որով Ռ-
սիական վայրենութեան առջեւը առաւ, չի
թողուց որ վայրենի ազգեր խուժէին Եւրոպա.
ոակայն կը ցաւի բանաստեղծը, որ Եւրո-
պան այդ աջակցութիւնը չի վարձաարեր,
հիմա որ հայը կը տառապի և օգնութեան
կը կարօպի.

Եւրոպ, մոռացա՞ր, երբ քու քաջերը
Անապատի մէջ մընացին քաղցած.
ի՞նչ պիտի օգնէին նոցա զէնքերը,
թէ որ Հայք նոցա չը տային կուշտ հաց:
(Պատկ. Ռոտենբուրգ. էջ 148).

317

Թէ հայը անձնուրաց, աջակցի իր ազ-
գին փրկութեան, հորիզոնը շուտով կը շո-

Ղայ . այլպէս համոզուած , կ'երգէ բանաստեղծը

Լոկ այն , որ կու տաք խումի ու թըղթի ,
Հայկ , ձեզ կը հասցնէր ազգային բաղդի ...
Աստուած վըկայ որ՝ մենք կը յաղթէինք ,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք :

(Նոյն Էջ 149) .

318

Պատկանեան բարերար իզմիրեանցի յիշատակին նուիրած չորս տող քերթուածին մէջ , կը յիշատակէ անջնջելի ճշմարտութիւն մը .

Կուզայ օր՝ երկաթ , քար կ'անհետանան ,
Միայն բարի գործք յաւիտեան կը մնան :
(Նոյն Էջ 210) .

319

Սովորական առած մըն է որ կը գործածուի այն սլարդեւասուներու համար , որոնք փոքրիկ նուէր մը կ'ընեն ու մեծը կը պահանջեն .

Մի ձու է տալիս , բայց փոխարէնը մի ձի է ստանում :

(Խենքը Բագրիի Էջ 68) .

**Աղաբէկեանն ալ իր կոռւնկին մէջ այս
առածը գործածած է, մեզի Միթարեանցս
գէմ բանակոիւներ մղած ատեն:**

320

**Մեր ազգային կարեւոր գործերը կեանք
ունեցեր են բարերարներու ձեռնտուութեամբ,
և քանի որ հասարակութիւնը աղքատ է,
բնականաբար ազգերնիւ միշտ բարերարնե-
րու կարօան կը զգայ, թէեւ ճիշտ է, ինչ որ
կ'ըսէ Արծրունի, թէ.**

Բարերարութիւն սպասելը նշանակում է մու-
րալ:

(Գ. Արժուանց Աշխատութիւնները Հ. I. էջ 169):

321

Մի և նոյն հեղինակը կը զրէ.

Եւ եթէ մենք ինչ և իցէ հիմնարկութիւններ
ունենք, միայն բարերարութիւններին ենք պար-
տական, և ոչ թէ ժողովրդի ինքնաօգնութեանը
հասարակական գործերում:

(Կոյէ էջ 222).

322

Արծրունին իր այդ տուաշնորդական յօւգուածին մէջ, հայ հասարակութիւնը հաւաքական բարերարութեան մղելու համար, ըսած է նաեւ այս ծանր խօսքը.

Ամօթ է այն ժողովրդին, որ հարուստների բարերարութիւններով է ապրում:

(Կոյճ Էջ 224).

323

Հարուստին ողորմութենէն շատ վեր է աղքատին բարերարութիւնը և պարզեւը. կը գրէ Հ. Ալիշան.

Սիայն հարուստներուն չթողոնք ազգին օգնելը. մենք ան աւելին կրնանք ընել, թէ որ ազգը աւելի կը սիրենք. մենք աղքատքս մեր ծոցին մօտէն կը հանենք կու տանք տաք, անոնք շատ հեղ հեռու պաղ քսակներէն կը հանեն:

(Բագմ. 1849 Էջ 133).

324

Բարերարութիւնը կը վարձատրուի. Եղովբաս կը նկարագրէ հետեւեալ զէպքը: «Մըջիւն մը անզգուշութեամբ կիյնայ պղտի գետի մը

մէջ . երբոր կը խղգուէր հոն՝ աղաւնի մը
կը աեսնէ զայն, և ծառի ճիւղիկ մը կը ձգէ
ջրին մէջ, որուն վրայ կայնած էր ինքը . և
ան կ'ըլլայ մրջիւնին իբր նաւ մը որ ցա-
մաքը հանելով կազատէ զայն : Ցամաքն ել-
լելու ասենն որսորդ մը կը լարէր աղեղն
ու աղաւնին կը նայէր . երբոր պիտի նե-
տէր զարնէր, մրջիւնը հասկըցաւ իր բարե-
րարին վասար, շուա մը վազեց եկաւ որսոր-
դին ստըը խածաւ : Խոկ որսորդը շարժելով
ձայն ելաւ , աղաւնին իմացաւ թուաւ : Եւ
այս մրջիւնն որ պարտական էր իր կեանքն
աղաւնին՝ փրկեց զայն փոխադարձ . և առ
միջոցով հասուցում ըրաւ անոր բարերա-
րութեանն որ աեսեր էր անկէ : «Թարգմա-
նիչը այս առակէն սա սիրուն բարոյական
քերթուածիկը կը կազմէ .

Բարին ըրէ ծովը նետէ,
Հուտով կուգայ քեզ կը գտնէ:
(Եղովոս առակք էջ 205).

Բարերարութեան համար Եզնիկի մէջ կայ
սա բացատրութիւնը .

Զի բարերարութեան առաքինութիւն այն է՝
յորժամ այլքն ի նմանէ վայելեսցեն. Եթէ չի-
ցեն՝ որք վայելիցեն ի բարերարութեանն, զի՞նչ
շահ իցէ ի բարերարութենէ անտի:

(Եպիկ Էջ 257).

326

Նոյնը կը զրէ.

Դեւք յինչսն ժողովին, և հրեշտակք ի բաշ-
խելն:

(Եպիկ Էջ 304).

327

Կարօտեալներու պէտք է բարերար ըլլալ,
անօթիները կերակրել, ոա ոչ միայն աւե-
տարանական, այլ մարդասիրական օրէնք է.
Քաղցածները զրկողը, Փրիստոսի սեղա-
նակից չի կրնար ըլլալ. Եզնիկն է գրողը.

Որ զեղբայրն ի մարմնաւոր կերակրոյ զրկէ,
չէ ցանկացող սեղանոյն Փրիստոսի:

(Եպիկ Էջ 305).

328

**Եզնիկ կը միմիթարէ բարերարը այս խօս-
քոնլ.**

Եթէ խնդրէ ոք ի քէն և տաս, գոհացիր զԱս-
տուծոյ՝ զի դու առաւել շահեցար քան զնա:
(Նոյն էջ 305).

329

Աղօթքէն աւելի գերադասելի է եղբօր ու
կարօտեալին աջակցիլն։ Կը գրէ Եզնիկ.

Լաւագոյն է սձեռոսն համբառնալ առ Աստուած,
յորժամ աղօթեսցէ. բայց առաւել կարեւոր է,
որ ի պէտս եղբարցն սպասաւորեսցէ:

(Նոյն էջ 309).

330

Բարերարի պէտքը, ոչ միայն աղքատին,
այլ և նիւթական միջոցներէ զուրկ գրագէ-
տին համար հարկաւոր ըլլալի ըմբռնած ենք
ի ժաղուց։ Արավեան իսկ գրական մեկենաս-
ներու պէտքը կը յիշեցընէ. կը մտածէ.

Որ գնամ ընկնիմ մէկ իշխանի ուսք, ասեմ.
ինձ մէկ կտոր հաց տայ ու ես՝ զիշեր ցերեկ
ընկնիմ գեղէզեղ ու մեր ազգի արած բաները
հաւաքեմ, գրեմ։

Վերջ Հայաստանի էջ 10.

331

Աքովիեան՝ բարերարութեան, ողորմածութեան նախանձախնդիր, սիրուն և սիրելի ոգի մըն է. Կը մաղթէ որ մենք վայելենք Աստուծոյ բարութիւնը, բայց աղքատին ալ մասն հանենք.

Վայելի՛ր Աստուծոյ բարութիւնը, ուրիշին էլ փայ տուր. աղքատ տեսնելիս՝ կերցըրու, կշտացըրու. զուշը վրովդ անց կենալիս, կանչի՛ր, կուտտուր՝ զու առատ ձեռք ունեցիր, որ առատ առնիս ու բախտաւոր ըլիս:

(Նոյն էջ 18).

332

Բարերարը և սփոփողը, սիրելի են, ինչպէս Աքովիեանի Աղասին.

Երկու ձեռք ունէիր, մէկը ողորմութիւն տալիս, միւսը աչք սրբում:

(Նոյն էջ 213).

333

Մերձաւորին, ընկերին սիրոյ համար Բագրատունին չ. Աքաէն ունի սա գեղեցիկ բացատրութիւնը.

իւ ով ոչ թըռչիցի յեղօր արեան սէր կամ
ի վրէժ:

(Հայկ. դիւցազն էջ 198).

334

Հայաստանցիք կը կարծեն որ մարդուս
մահուան հեա կը ջնջուի իր վաստակները
և արդիւնքը կամ բարիքը. և ասոր համար
առակ մը ունին.

Կով մեռաւ,
կաթ խափանաւ:

(Ազգագր. Հանդես գիրք VII, VIII, 1901 էջ 466).

335

Ծնարտունջ աղքատին համար, հայ առակն
կ'ըսէ.

Ո՛չ էծ (այծ) ունի, ոչ ուլ.
սատանի անկանճ խուլ:
(Նոյն էջ 476).

336

Գործի ատեն՝ գործիչի արդիւնքը, արժա-
նիքը չի հասկցուիր. յաջորդին տկարութեան
ատեն, ամէն բան կը պարզուի: Հայաստան-
ցիք կ'ըսեն.

**Չուր (մինչեւ) չիգայ յէտին.
չ'իշւի (չի յիշուիր) առաջին:**

կը մեկնուի. և Նախորդի արժանաւորութիւնը յաջորդի վաս լնթացքը միայն երեւան կը բերէ և գնահատել կու տայ» :
Նոյն էջ 480).

337

**Ծոս մարդուս կարողութեան՝ մեծ կ'ըլլայ
և գործին արդիւնքը։ Առակ է.**

Պարագէն (առատութիւնը) մըտ (մօս) հարագէն (ոյժ)։

կը մեկնուի. և Մեծ արդիւնքները առաջ կուգան մեծ ոյժերէնն» :

Նոյն էջ 480).

338

Վաճառականական գործերու մէջ կը պահնջուի հաշուական ճշառութիւն, քանի թէ մատերմական կամ ընտանեկան ակնածութիւն. առակը կը հաստատէ.

**Առուտուր է.
առուկուլ չէ։**

Նոյն էջ 488).

339

Բարերարութիւնը ըստ հետազայ առածին
իր վարձքն ունի.

Խէր (բարիք)
կը գտնի զտէր:

(Ե՞յլ Էջ 493).



ԳԼՈՒԽ թ.

**ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ. ԱՆԷՇՔ. ՄԱՐԴԱՍԻՐՈՒ-
ԹԻՒՆ. ԱՏԵԼՈՒԹԻՒՆ. ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ**

340

**Մեր հասալրակութեան մէջ դժբաղզաբար
կը գանուին կրթուած գլուխներ, որ ազգային
ուսւչ շարժում, նայն իսկ վէպ ի լեզուն, վէպ
ի հայկական հսգին՝ սառուցիկ վիճակ մը
ցոյց կու տան, Գամառ Քաթիպա երգիծա-
կան տողերով կը ջախջախէ զանոնք։ Այդ
անգոյն ազգատեացներուն պատկերը կը
նկարէ.**

**Տեղը եկաւ՝ հայ է նա, տեղը եկաւ՝ այլազգի,
իրօք ոչ այդ և ոչ այն է, այլ ծընունդ մի նոր
ազգի։ ...**

**Կարգում է նա Morning, Débats, ոչ Բազմա-
վէպ, ah! fi, donc !**

**Ֆըրանսերէն է կոտրատում, Հայերէնն տասուա-
տոն.**

(Ոտանաշորներ էջ 63) .

341

Դիաստելլը մանաւանդ հասարակական կամ գրական գործ մը գատելլը, արուեստ մըն է, որ կը պակսի ոչ միայն մեր հասարակութեան գլխին, այլ նաև բանգէտ համարուած գրիշներէն. բանաստեղծ Փաթիպան ճշգրտօրէն կը հեզնէ. .

Գրէ, թէկուզ լեզուդ լինի Սանսկրիտին,
Հայը շատ ուշք կարդացածին չի դընում.

Նա լըսում է մի քանիսի դատմունքին,
թէ ի՞նչ կերպով պարոն Օհանն է դատում:
(Նոյն էջ 70).

342

Ու իիստ գատաստանը թէեւ արդար ըլլայ ու իրաւացի, սակայն դատողը ատելի կ'ըլլայ, չի սիրուիր. Պատկանեանի հետագայ տողերը այդպիսիներուն շատ յարմար են.

Ե՞փ սիրից տըղան թիթիզ հէքիմին

Որ տայմա աղու ճար կուտայ նարան.

Պայծառ լուսինկայ կուզէ՞ հարամին,
կարիճն ալ, կասին, լուսի է տուշման:

Եւ ասոր համար մեր գրչի անաշառ դա-

աաւորները ոչ միայն ասւելի եղած են, այլ և աղքատ մնացած.

Ու խորդ զուրցողի կօլօխին կըտակ
Տարին տասվերկու ամիս կըլայ ծակ։
(Նոյն էջ 267-8)։

343

Պատկանեան կը շուարի, չի գիտեր թէ ինչպէս դատէ հայութեան վաս ու բարի գործերը. « Աղէկ ու գէշ ո երգովը մանրամասն կը յիշատակէ հայուն չարն ու բարին. շարը կը պախարակէ, բարին կը գովէ ու երգը շուարած կը վերջացընէ. »

Ասպէս՝ փիթուն օր իշկիլի մէջ իմ,
Ես ալ չխիմ ի՞նչ անուն տամ հային.
Աղէկը տեսնում պէրթէր կը կովիմ,
Գէշ պանը ինչպէս չասիմ ու պայիմ։

(Նոյն էջ 307)։

344

Զուրիշը դատելու մէջ լեզուն ընդհանրապէս ոչ խելք ունի և ոչ չափ, բայց գոնէ ի սէր առածին անփորձ պատաճիներու խօսքը

գատասաանի չենթարկուիր. Հայաստանցին
շատ խելքով ըսեր է.

Զահիլի Խօսքը Կշեռքի մէջ չեն դնում.

(Խոերը Էջ 183).

345

Ինչ որ մերն է, սիրելին, հարազատը,
արիւնը, անտարակոյս կը ստիպուինք ոչ
վրէժինդիր, այլ ներողամիտ ըլլալ. հասա-
րակական շատ գառնութիւններ կան, որոնք
շատ անգամ ի սէր մեծ բարիքի, մեզի լեղի
պէտք չեն երեւնալ։ Զք որ առակը ըսեր է.

Գուրգը իր թանին թթու չի ասի։

(Կոյք Էջ 224).

346

Ոնձեռնհաս քննադատներուն կարելի է
սեփականել սա նախադասութիւնը.

Ով գիտէ միմիայն փինաչութիւն (հնակարկա-
տութիւն) թող դերձակի գործի մէջ տնօրէնու-
թիւն չանի։

(Արծրունու Աղիստուքիւնները Հ. I. Էջ 197).

347

Զուրիշը ատելու մասին, գեղեցիկ է Ալիշանի սա բացատրութիւնը.

Այլ է (ապա) ատել զոր և այլ ատել զբարսուրուք. այն տիմարաց է գործ, իսկ այս իմաստնոց և զգաստից:

Բայց այսպիտի իմաստուններ, այսպիսի զգաստներ սակաւագիւտ են, և անոր համար չ. Ալիշան կ'ափսոսայ.

Այլ աւազ զի սակաւք են որ գիտիցեն զմարդ և զկիրսն սոսկ տեսանել.

(Բագրագիւ 1843. էջ 319).

348

Դատաստանը իրաւ կամ անիրաւ, շատ անգամ կը կախուի յոսետես կամ լաւատես բնաւորութենէն։ Խորենացին զմեզ կըշտամբած է իբրեւ ծոյլ ազգ մը, սակայն չ. Ալիշան ուզելով հայը անարատ տեսնել, կը սլատճառաբանէ.

Խորենացին է կշտամբող, այր յայն սահման իմաստութեան վերճեմեալ՝ ուստի յոլով անգամ որք անդր թեւապարել բաւեցին՝ ցածունս յոյժ զ'ի ներքոյ կացեալսն նշմարէին։

(Նոյն 1844 էջ 348).

349

**Դատաստանի մէջ խոր հմառութիւն պէտք
է. Աւագ Մասիս յոռեակս, Փոքր Մասիսին
կ'ըսէ.**

Ով խոր կու նայի՝ թող պինդ խոր մըտնու,
Լոկ կեղեւ տեսնել՝ չէ սուր աչերու.

(Հայուսնէ Էջ 292).

350

**Եւ անոնք որ մակերեւութաբար քննելով
իր մը, յոռեաեսութամբ շեն ուզեր արժանիք
մը ճանչնալ. կարելի է ուզել, Աւագ Մա-
սիսի առ Փոքրն յոռեաես սա հրաւէըլ.**

Դու քիչ մ'այլ իջիր, քըչիկ մ'այլ ցածիր,
Եւ հեկ իմ խորունկ ծոցիս մօտեցիր.
Հանց տեսնուս ահեղ կրակներ ու հնոցներ
Որ վախուդ հալիս, զաս դաշտի ընկեր:

(Նոյն Էջ 292).

351

**Հայ զաւակ և Հայութիւն զժրաղվաբար
իր ցաւագար զլսուն ահոելի պատուհաներէն
զատ, անարժանաբար միշտ անէծքի արժա-**

նացած է։ Հայրապետք իսկ անիծեցին մեր
խեղճ հայութիւնը. յոռեաես հայը կը վախ-
նայ այդ անէծքէն։

Ես կու վախենամ յայն սեւ անիծից
Որ մեր հայրապետքն են արեր կըսկիծ,
Ներսէսք ու Մովսէսք Հայոց սեւ օրեր
Ասցել են գալիս, Հայոց շատ երեր։

(Կոյն Էջ 294).

352

**Լաւասաես և յուսաաու հայութիւնը աւագ
Մասիսի բերնով կը պատասխանէ.**

Ամպք այլ փարատին, մրըրիկն այլ դադրի,
իսկի անփոփոխ չէ բաղդ աշխարհի.
Զոր Աստուած կ'օրհնէ՝ մարդ չանիծաներ,
Չանէծքն առին լոկ ու կառնուն չարեր։

(Կոյն Էջ 294).

353

**Անխելք դատաւորներու, բննադասներու
լաւ օրինակ մ'ունի Միհթար Գոշ. կը գրէ.**

Ցանմանից ոք եհար զյունապի՝ կարծելով զնա
գժնիկ. որոյ զայրացեալ ասաց. Ո՛ անաքորոյն,
զտունկ ի պտղոյ արժան է ճանաչել. և ոչ ի տե-
սակէ։

Ահաւասիկ առակին մեկնութիւնը նոյն ինքն հեղինակ առակախօսէն. «Նշանակ բերէ առակս զանընտրող դասողս՝ զթագաւորս և զառաջնորդս եկեղեցւոյ՝ զնոսա յանդիմանելով, զի անփորձապէս զաաապարաւն. զի ճշգիւ գիտելի է ի գործոց նոցա. ըստ որում աէրն իսկ ասաց, թէ ի պաղոյ նոցա ծանիջիք զնոսա, և ոչ ի տեսլենէ կամ ի համբաւէ դատել. որով և բազում վասո գործի՝ զբարիս իբրիւ զշարս խոշտանգելով» :

(Միհրար Գոյ Առակը. 19).

354

Անէծքի առթիւ յիշեալ առակախօսէն կը յիշատակենք սա առակը.

Խոյ եհար եղջերօք զլիսոյ զծառ բազում անգամ, և թափեաց զեղջիւրսն, և սկսաւ անիծանել զնա. և նորա պատասխանեալ, ասէ. Քեզէն եղեր պատճառ. զի՞ մնղադրես» :

Կը մեկնէ առակախօսը. «Զվայրապար անիծանողսն յանդիմանէ առակս, որք ցասուցեալ ինքեանց ախտիւք՝ զայլս պատճառեն» :

(Միհր. Գոյ Առակը 73-4).

355

Ասելութեան մասին Խորենացիէն ունինք պատմական վկայութիւն մը։ Հայոց պատմութեան հետաքրքիրները կը յիշեն անշուշտ երուանդ թագաւորին ահաբեկ շփոթութիւնը։ Արաւաշէս մանուկն կը պատրաստուի գալ անոր վրան և բանակող կռուիլ և իրեն սեպհական արքայական թագը գլուխը զնել։ Երուանդ վախնալով որ նոյն ատեն իր մերձաւորները զինքը կը թողուն կը հեռանան, ու իր իշխանութիւնը կը խորտակի, առատութեամբ նուէրներ կը բաշխէ արքունական նիրուն. նպատակը վարձատրել չէ, այլ հաւատարմութիւն մարալ. նուէր առնազները, մանաւանդ անոնք որ շատ կ'առնեն, գեռաւելի կ'ատեն զինքը.

Որչափ առատանայր, առաւել եւս ատելի լինէր։

Ինչու. «Քանզի գիտէին ամենեքեան, եթէ ոչ առ առատութեան՝ տայ, այլ առ երկիւղի վատնէ»։ Իրաւացի չէր այս տեսակ ատելութիւնը։

(Խոր. Պատմ. Էջ 253).)

356

Միննոյն պատմիչն կրնանք արձանագըրել իբրեւ անէծքի օրինակ սա հանրածանօթ գէպքն։ Արաւաւազզի համար Գողթան երդիչները կ'առասպելաբանեն. «Եթէ ի մահուանն Արաւաշխսի բազում՝ կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց. դժուարի, առեն, Արաւաւազզ՝ առելով ցհայրն. Մինչ դու զնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակաց որպէս թաղաւորեմ. Վասն որոյ անիծեալ զնա Արաւաշխսի՝ ասաց այսպէս.»

Եթէ դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յազատ ի վեր ի Մասիս, անդ կացցես, և զլոյս մի տեսցես։

(Խոր. Պատմ. Էջ 286).

357

Ծայրայեղ ստորնութիւն է խիզախ, աներկիւղ ձեւանալ ու գաղսնածածուկ, կամ գիմակուած պատերազմիլ։ Ասկարութիւն է եղած մէկ քանի երկշռա խեղկատակ գրիչներու, որ երբ կ'ուզեն վիրաւորել, վատահամբաւել

զուրիշը, կեզծ անունով հրապարակ կ'ելլին.
ասունց կրնանք յարմարցլնել Շապուհի՝
Ճիգրանակերտի բերսկին մէջ ապաստանեալ
հայ մարտիկներուն ուղղած սա խօսքը.

Քաջ արանց է յարձակ դաշտի և յազատ տեղ-
ւոջ կռուել, և կանանց գործ է արգելուլ փակել
զինքեանս յերկիւղէ առ հանդերձեալ կոխւսն :

Սակայն այս խօսքը մենք ոչ նախնի
դիւցազներուն իրաւացի և պատշաճ կը զա-
տենք. անոնք հարկ էր որ այնպէս փակու-
էին, բայց ոչ մեր զիմակաւոր քննադաշ-
ները, որոնց ամենայարմար է Շապուհի
այդ նախասայնքը:

(Խոյ. Պատմ. Էջ 438).

358

Բոտ սովորական կարծեաց, շատ քիչ
անդամ արդար դատաստան կը կարուի:
Խորենացին Հայաստանի դատաւորաց համար
կը գրէ.

Դատաւորք՝ տմարդիք, սուսք, խաբողք, կա-
շառառուք, անընտրողք իրաւանց, անհաստատք,
հակառակողք:

(Խոյ. Էջ 554)

359

Ո և է գատաստանի մէջ, շատ շրջահայեցութիւն և լրջութիւն կը պահանջուի. հանճարեղն Եզովխոս կը գրէ. «Աքաղաղ մը աղբանոցը փորելով՝ յանկարծ կը գտնէ մարգարիտ մը, մէկդի կը նետէ ըսելով. թէ որ մարգարտածախն աս բաղդիս հանդիպէր՝ փառք կտ աւար ասատւծոյ. բայց իմ առջևս անանկ ոչինչ է որ աւելի երջանիկ կ'ըլլայի, եթէ հատ մը գարի գտնէի, քան թէ այս մարգարիտը.»

Ով որ բանի արժէք չիյտէ,
Գէշն ու լաւը մէկ կը դընէ:
(Եղովրոսի առակը Էջ 87)

360

Ծիծաղելի է նախանձէ գրգոեալ այպանիշ դատաստանը, որուն համար սա առակը կը լսենք Եզովխոսէն. «Ազուէս մը երբոր անօթի մարէր, կը աեսնէ խաղողին կուզերը կախուած բարձր փայտերու վրայ, և բոլոր հասած. խորազէտը կը բաղձայ որ ձեռք ձգէ. բայց որչափ որ վեր կը ցատքէ՝ չի

կրնար համնիլ որ սւտէ։ Ուստի աեսաւ թէ
իր կարողութիւնը պիտի չհամնի, ետ դառ-
նալով դլուխը վերցուց ըստ։ Աս խաղող-
ները եռ սւզենայի հեշտ կրնայի առնել ու-
տել. բայց ինծի անանկ կանաչ չհասած
կ'երեւան որ չեն աժեր անչափ աշխատանք
ինծի աալով փրցլնեմ»։ Թարգմանիչը այդ
առակէն կը կազմէ յսրպորականս թէ։

Ցած մարդն երբ լաւ բան սորված չէ,
Այլոց բարին վար կը զարնէ։

(Կոյճ Էջ 144.)

361

Դատաւոր մը անաշառ ըլլալու համար,
զիտումներով պէտք չէ որ արատաւոր ըլ-
լայ, թէ ոչ, այդպիսիներուն կարելի է յի-
շեցլնել Եղնկայ սա խօսքերը։

Որ ընդ ճառագայթս արեգականն հայել կա-
միցի, պարտի զպղտորութիւն աշացն՝ զաղտն և
զբիժն ի բաց պարզել, զի մի՛ մըթարքն՝ որ
զբօք չողայցեն, արգել հայելոյ ի յստակութիւն
լուսոյն լիցին։

(Երեկ Էջ 5-6.)

362

Քննաղատութեան, միճարանութեան մէջ, ընդհանրապէս ի սէր անձնաղաշտողանութեան, կը պակսի անաշառ գասաղութիւն. շատերը իրենց նպաստաւոր փասաեր փնտոելով, ոսնակոխ կ'ընեն արգարութիւնը. այդպիսիներուն կրնանք յիշեցնել առ Մարկիսն ուղղուած Եղնիկի սա խօսքը.

Ո՞վ բանագուազ, Մարկիսն. որ զմին լսէ և զմիւսն ստունգանէ:

(Նոյն էջ 292.)

363

Դատաստանի մէջ զգուշանալու լաւ ու գեղեցիկ օրինակ մըն է Մատթէոս Ուոհայեցւոյ սա գէպքի նկարագրութիւնը. «Ասէր իշխաննն Վրաց լնդ թագաւորն Յովհաննէս.

Ո՞վ արքայ Յովհաննէս, հրամայեա՝ զի ցուցանիցեն ինձ միայն զԱշոտ, և ես ձերբակալ արարից զնա, և կապանօք բերից զնա առաջիքու.

Կը պատասխանէ Յովհաննէս. «Ահա այս հզօր է Աշոտ, զու զիարդ կարես ածել առաջի իմ»: Եւ ասէր իշխանն Վրացի.

Զիովս առից զնա կենդանի:
 Եւ ասէ ցնա թովհաննէս, ելմէ,
 Զկորիւն առիւծու մի՛ արհամարհեսցէս՝ մինչեւ
 տեսանիցես:

Խօսիս վրացին մնամարսութեան ատեն՝
 Աշատի հայկական ահեղ հարուածին տակ
 շանսատակ կ'ըլլայ:

(Մատք. Ուսէ. թ.)

364

Նախանձէ զրգեալ մեզի հաստծ ատելու-
 թիւնները և քննապատական պախարակու-
 թիւնք կարելի է ջրել, միշտ իմաստութեան
 նախանձախնդիր մնալով. Պէշիկթաշլեան լաւ
 կը զրէ.

Եւ քեզ ընդդէմ նախանձաբեկ թէ յուզեսցին
 սարապարտ,

Արի՞ եւ դու, զիմաստութեան դիր ի գլուխդ
 սաղաւարտ:

(Պէշիկթաշլեան 17).

365

Անէծքը կրօնական ներշնչումով՝ պատկա-
 ռանք ու սոսկում՝ մունի, մանաւանդ արե-

ւելեան ազգաց մէջ։ Աքովիեան անէծքի համար սա բանաստեղծական չափազանցութիւնը կ'ընէ։

Սեւազլիսի անէծքը քարին որ դիպչի, քարը կպատռի։

(Վերք Հայուստանի Էջ 33)։

366

ՃՌՈՈՄ քննադասներ, որոնք իրենց թերութիւնները մոռանալով գատաստան կը կարեն, կարելի է անոնց ըսել Աքովիեանի սա խօսքը։

Քամի ունիս՝ տար ձեր տանը փչիր։

(Նոյն Էջ 36)։

367

Քննադասեալը երր ըմբռնելալ իր թերութիւնները, կ'ուզէ վեհանձնօրէն անաշառ ըլլալ, կրնայ պատասխանել սա սովորական առածը, զոր Աքսովիան եւս գործածած է։

Ուզտին հարցըրին, ընչի՞ ա վինքդ ծուռը, ասեց ի՞նչ տեղս ա դուզ, որ վինքս ծուռը չըլի։

(Նոյն Էջ 36)։

368

Սակայն շատ անզամ իր մը կրնայ քննապատելի ըլլալ և դասապարաեալը առանց պատասխանատութիւն մ'ունենալու, կ'իշնայ այդ թերութեանց մէջ. այն ատեն այդ զրպարտեալ արդարը, կրնայ յիշել վիպասան Աբովյեանի սա գեղջկական բացառութիւնը.

Մենք էլ լաւ գիտենք՝ թէ կորած էշը ո՞ր գօմումն ա կապած, ամա ի՞նչ անես՝ որ մօտանողի շլինքը կոտրում են, իշի ոտն ու զլուխը խուզում, որ տէրը տեսնելիս՝ զռում էլ ա, ասում են՝ թէ քոնը չի. ում զլուխը կորես:

(Կոյճ էջ 36).

369

Նախանձու բաջաղողներուն, կարելի է պատասխանել.

Դեղ ունիս, քո գլխին արա. եղ ունիս, ձեր բղղումը պահիր:

(Կոյճ էջ 37).

370

Խակ լմէ ի զ՞ուր շարունակուի պոռոտաւ-
խօսութիւնը, իմացուր.

Սաքի որ ամպի պէս էլ գոռաս, լսողն ով ա:
(Նոյն էջ 37).

371

Խղճալի են անաչառ դատաւորները, երբ
ի սէր ճշմարտութեան կը դատապարտեն
թերութիւնները, աաելի կ'ըլլան և կը հալա-
ծուին ու լքեալ կը մնան: Ճշմարտախօս քննա-
դատաներուն՝ սա առածը ուղիղ պատկերն է,
ծանօթ ժողովրդեան, և երգուած նոյն իսկ
Ո. Պատկեանեանի սրինգով.

Գրուստը խօսողը փափախը ծակ կըլի . չե՞ս
լսել:

(Նոյն էջ 37).

372

Ինքնակոչ ունայնամիտ քննադատներուն
կարելի է ուղղել Աբովիանի սա հարցումը.
Քեզ ով ասում՝ թէ արի, մեր կալը չափիր:
(Նոյն էջ 37).

373

Պարագայներ կան, ուր խոհեմութիւն է որ նոյն իսկ արդար ու ճշմարիտ դատաւորները լուեն. կարելի է նկատողութեան առնել Աքովեանի սա խօսքը.

Բերանդ բաց անելիս՝ հող են ածում, աչքդ բաց անելիս՝ թող:

(Նոյն էջ 37).

374

Եւ կան պարագայներ, որ հլու ներողամբ առութիւնը վաանգաւոր է, պէտք է դիւցազնական անձնապաշտպանութիւն։ Աքովեան կը գրէ.

Քանի լեզուդ կարճացնես, գլուխդ կախ անես, ուսերիդ կը նստին, զուղդ կթամեն, աչքդ կհանեն...

Հայ՝ արիասիրտները այսպէս «ասում էին ամէն կողմից»։

(Նոյն էջ 205).

375

Անարամաբան բանակոփաներէն երբ մարդ պառուղ մը քաղելու յոյս չի աեսնար, կա-

բելի է յիշել Բագրատունի Հ. Արսէնի ուատողերն.

Ոչ բան ոչ միսք ի նոսա, ժըխոր եւ խոռվ խառնակութեան,
Խուժադուժ կարկաչ, խանչիւն խափարածայն
և խաղտախուզտ:

(Հայկ Դիւցազն Էջ 131).

376

Անէծքի մասին Հ. Բագրատունին Ա.
Բիւրասպի համար ըսած է.

Դըժոխահոտ բերանով կերկերածայն խըռպոտ
հագագ
ի գագաթն հեղոյր նորա, կուտէր անէծըս սոս-
կալիս.

(Նոյն Էջ 154).

377

**Նախանձին քոյրն է ատելութիւնը, անոր
պէս կոյր. Միսիթար Աքքահայր կը գրէ.**

Որ ատելութեան ունին զոք, նորին նաեւ լոյ-
սըն խաւար թուի նոցա:

(Հայոք Էջ 114).

378

Անիրաւ գասաստաններէ, անուանարկութիւններէ և թշնամանքներէ պէտք չէ լքանիլ, յուսահատիլ. զործիչ կամ գրագէտ երբ անկեղծօրէն կ'աշխատի աղքին համար, ժողովուրդը կը սիրէ զայն։ Մեր հասարակութեան մէջ առ հասարակ ամէն մասենագիր և զործիչ ունեցեր են նախանձորդ բանսարկուներ, և մրուած անոնց նախատինքներով, սակայն ժողովուրդը այդ զործիչներու վրայ միշտ հիացած կը մնայ։ Այրելի չէ Արուանձաեան. այս, սակայն ինքն եւս կ'ողբայ իր զէմ զինուող հալածանքները. «Այս, իբրեւ մեր Եկեղեցւոյ և Ազգի տան տղան եւ մշակ, այդի փորելու, քաղհանք ընելու, արա ջրելու... Ժառայսւթեանց մէջ դանուեցայ, եւ աեղ աեղ ալ զլուխս կսարեցին, կուրծքս պատուցին, սիրաս ծակեցին... իսկ ինձ համար ատոնք եղան Պատւոյ նըշան... Այս, ես կը կրեմ այդ նշաններ ու վէրքերը գլխուս ու կուրծքիս վրայ... Խիղճս գոհ է»։ Եւ փառք կու տայ Աստուծոյ, ըսելով.

Հասկցող ժողովուրդ զիս կը սիրէ:
(Համով-հոտով. Էջ Բ).

379

Հայը իր օրօրոցի մանկան կը ներշնչէ՝
ցոյց աալ ատելութիւն՝ ատողին, սիրա՝ հոգի
բարեկամին. եթէ իր սիրածը գայ, վարդե-
ջուր կը սրսկէ, փունջ մանիշակը կը նուիրէ.
Հայ մամիկը իր թռռնիկի օրօրոցը շարժելուն
կ'երգէ.

Հայ եկաւ բարով տուի,
թուրք եկաւ քարով տուի,
Ով քեզ սիրէ—սիրադեղ,
Ով քեզ ատէ—մահադեղ:

(Ազգագրական Հանդես XI գիրք Էջ 39).

380

Հայ լեզուն, հայ քնար, անիծելէ քնաւ չեն
զգուշանար. գաւառական երգերու մէջ առաւ
են անիծող քերթուածներ. կ'երգէ թուրչա-
լուի ժողովուրդը.

Զին ա էկել գերանին,
Մեռնեմ աւետարանին,
Ով ի վատը կխօսի,
Աւ օձը տայ բերանին:
(Նոյն Էջ 52).

381

**Կ'երգէ սիրահարը, թէ ալլիւածի սիրաը
կէրին :**

Ով իմ սիրածը ինձ չի տայ,
Դատաստանին հոգին էրի :

(Նոյն էջ 57).

382

**Վայ զլիսին որ սիրահարը «Ճան զիւլիւմ»
էն կը զրկէ.**

Ճան զիւլում, ճան ճան,
Սիրող սիրող ո՞նց անի,
Ով ինձ սիրողից հանի,
Հոգին սըատանէն տանի :

(Նոյն էջ 59).

383

Ալաշկերտցիք անէծք մը ունին.

Ախտ ախտին (անէծք)

Աւել տախտին (տան յատակ) :

Բաս «Ազգագրական հանդէս» ի, մեկ-
նութիւնն է այս. «Թշուառներուն անէծքը
երբ և իցէ ատեն մը, թշուառացնողներուն
կը հասնի » :

(Նոյն պիրք VII, VIII 1901, էջ 456).

384

Անխելքը չի կրնար գնահատել և գովել
խելացին գործերը. այդ տեսակ անձանց
յարմար է հայաստանցիներու սա առա-
կը.

Նա (ո՞չ) մարդանման,
նա մարդահաւան :

Մեկնութիւնն է : « Երբ շատ պակասու-
թիւններ ունեցող մը և ոչ մէկին հաւանու-
թիւն կը տայ » :

(Նոյն էջ 474).

385

Ամէն զատաւորէ պէտք չէ վախնալ. շատ
անգամ զրպարաւութիւնը յայտնի երեւան գա-
լով, պախարակողը կը խայտառակի, և դա-
տաղարտեալը կը յաղթանակէ, եթէ յարգէ
լոռութիւնը, մտաբերելով սովորական հանրա-
ծանօթ առակս.

Շուն հաջայ.
Քարվան ընցնայ :

Այսպէս է առակիս բարոյական մեկնու-
թիւնը թէ. « Բամբասանքը, հայհոյանքը
Հայ Միաբը

չեն վասսեր անոնց, որոց կ'ուղղեն ուրիշները » :

(Նոյն էջ 476) .

386

Ամէն բան իր արտաքինովը չի չափուիր. անաշառ դատ կարելու համար, ներքինն ալ պէտք է նկատողութեան առնել և գիտնալ անոր արժէքը : Ալաշկերացին կ'ըսէ .

« Ոսկին մանր ա .
ամա զին ծանր ա » :

(Նոյն էջ 477) .

387

Շատ անգամ պակասութիւն մը կը դաշտապարաւի, թէն դատապարաողն ալ նոյն թերութիւնն ունի . այդպիսիներուն կարելի է յիշեցնել առակու .

Երկու պտուկ ճիշդ դէմ դէմի
Շատ վիճեցան հետ իրարի .

Մին միւսին սեւերես,

Միւսն միոյն գուն հապէց

կ'ըսէին, կը պնդէին

իրարմէ կը գանէին .

Բղբղիկն էլ՝ որ օճախին

Մօտն էր նստուկ, և երկուքին
կը լսէր խօսքեր, չը դիմացաւ,
« Երկուսդ էլ գուք, բարբառեցաւ,
ի՞նչ կը վիճիք, չչ միեւնոյն
Ունիք արդէն մուխու սեւ գոյն » :

(Հայ. Յիսուսկ առակ Բ. 29)

388

Մարգիային և ընկերական կեանքի ամենէն ներդաշնակ առաջինութիւնն է ներողամբ առութիւնը : Ներողամասութեան վեհանձն օրինակ մը տուած է Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսը . սա 1845ին, Նոր-Նախիջեւան թաղուած Յարութիւն Ալամդարեանի գերեզմանին այցելելով, կ'արտասուէ ու կ'ըսէ . « Յարութիւն վարդապետ, թէպէտ գու ինձ շատ վշտացուցիր, բայց Աստուած քաղցր անէ դատաստանդ ». և ներողամիտ ոգեւորաթեամբ, կ'ըսէ նաեւ .

Եթէ Աստուած ինձ գքեզ բաշխած լինէր, ես քեզ իմ ձեռօք կը եռնադրէի կաթողիկոս :

Միք. Միանսարեանցը այս առթով կը զրէ . « Մեծն Ներսէսը մոռանում էր Ալամդարեանի պահասութիւնքը և միայն միտ էր

պահում նորա ուժեղ և եռանդուն ազգասիրութիւնը, ահագին քանդարը և անյագ գործունէութիւնը » :

(Պատմ. Ներսիս. Հայ. Հոգ. Դադ. Եջ 226.)



ԳԼՈՒԽ Ժ.

ԲԱՐԻ ԵՒ ՎԱՏ ՀԱՄԲԱԻ, ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ,
ՊԱՏԻՒ ԵՒ ԳՈՎԵՍՏ, ՅՈՅՍ, ՅՈՒՍԱՀԱ-
ՑՈՒԹԻՒՆ, ՅՈՒՍԱԽԲՈՒԹԻՒՆ:

389

Պատկանեան Հայութեան յոյս կը ներ-
շընէ.

Սիրուն կարին, խօսքըս լըսէ.

Սիրուդ անբիծ միշտ պահպանես,

Շատը գընաց քիչը մընաց,

Զլինի սըրտէդ յոյսը հանես :

(Ուսեաւորմեր Էջ 178).

390

Բայց յոյսը արծարծողը ոչ օաարի խա-
բեբայ խոսառումները, այլ մեր գործունէու-
թինը պիտի լլլայ.

Խաբուսիկ յոյսեր... Դեռ շատ ու շատ դար

Պիտի խաբուիս, Հայ, ինչպէս խաբուեցար:

Թէ ինքը չանես քո գըլիսու ճարը,

Ե՞րբ պիտի օգնէ քեզի օտարը...

(Նոյն Էջ 185).

391

Հայուն տառապանքը այն ատեն սարսա-
փելի կ'ըլլայ, երբ հայը յուսահատի և Պատ-
կանեան այդ սարսափէն կ'ուզէ ֆրկել հայը.

Թող փըչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
Որպան որ կ'ուզէ՝ թող փըչէ չիւսիս,
Ցուսով եմ, վաղ-ուշ, գարունը պիտ գայ:
(Նոյն էջ 200).

392

Պատկանեան իրախուսելու համար, յոյս
կու տայ հայուն, թէ Եւրոպան կու գայ կը
սփոփէ մեր ցաւերըյանուն մարդկաթեան:

Զէ, չէ, դահիճք չեն լրւսաւոր ազգեր,
Վըստահ ենք, նորա չեն մորթիլ հային,
Զի յուսահատուինք, իմ եղբայր հայեր,
Մեզ էլ իրաւունք կուտան մարդկային...
(Նոյն էջ 243).

393

Բաֆֆի անձնական պատույ մասին վար-
դանի բերնին մէջ սա գեղեցիկ խօսքը զբած է.

Գեզ նման մարդիկ պատուի մասին խօսելու
իրաւունք չունին :

(Խենք էջ 138).

394

Մամուլը և հրապարակագրութիւնը ապրուստի միջոց ընող յուսահատներուն յարմարէ սա ախուր հեղնականը. զոր Պարոնեան կը գործածէ «Մասսիս»ի հիմնավիր Խթիւնեան կարապետի համար. սրուն վրայ վհատութիւն եկեր է. և

Որովհետեւ վհատութիւնը մեր ազգին մէջ մարդս կամ գերեզման կը տանի կամ խմբագրութեան ասպարէզ կը նետէ, այս վերջինին մէջ ձգոելու դժբախտութիւնն ունեցաւ :

(Արք. Զոյեր Էջ 81).

395

Մուրացիկ փառասէրներու վզէն՝ կրնանք կախել Պարոնեանի այս խրատականը.

Մարդս հարկ է որ ինք ունենայ համբաւ. ուրիշէ ծախու առնուած համբաւին պէս անարգքան չկայ :

(Նոյն Էջ 375).

396

Եւ հեղնելով փաւքի անարժան փառասէրները, կ'ըսէ սա գլուքը. «Պահմանափակ

մաքի տէր մէկը հրատարակութիւն մը կ'ընէ, և կը սկսի աղաշել իւր բարեկամներուն որ պէտք եղած գովեստը չզլանան իր գրքին. որ,

Ամէն բանի արժանի է բաց ի գովեստէ :

Եւ գիաել կուտայ ունայնամիտ փառասէրներուն.

Շատերը համբաւոյն ետեւէն կը վազեն և այս պատճառաւ կը փախցունեն համբաւն, որ իր ետեւէն վազողը չճանաչելով կը վախնայ ու կը փախչի :

Ցեառոյ իրօք աւադանդաւորները կ'ապահովընէ ուա ճիշտ նկատողութեամբ.

Ունիս հանճար կամ առաքինութիւն, համբաւն ետեւէն կու գայ, և որչափ վռնտես՝ այնչափ քեզմէ չըբաժնըվիր :

(Ա, Ա, 376)

397

Միսիթարայ փառաւոր արտերը լիովին հասկնալու համար, լսա Հ. Ալիշանի

Բազմադարեան ամաց պէտք իցեն թորգումայ առ ի զսորա բովանդակ զփառս մեծութեանն մանաշել :

(Բազմավեց 1846 էջ 343).

398

Գողիեստ լսելու համար, Հ. Ալիշան կ'ըսէ.

Գովեստ լսելը և ուրախանալն և քիչ մը
պարծիլն ալ՝ նշան է սրտին կենդանութեանը:
(Բազմավեց 1849 Էջ 66).

399

Կը գրէ նոյնպէս.

Զափաւոր գովեստ մը, մանաւանդ առջի բերան,
կրնայ լաւ օծանելիք մը ըլլալ վիրաց՝ ոչ
շատ ճգմելով, ոչ շոյելով :

(Կոյք Էջ 66)

400

Հ. Ալիշան յուսոյ համար կը գրէ.

Յանութ կըթու մարդկութեան ցուպ եղաւ
յոյս:

(Խոհութե Էջ 92).

401

Բահաստեղծ Նահապեալ կ'երպէ.

Յոյս ակօսէ զանդընդախորն ովկէան,
Մըրցի՞նդ ոլորտս, հըսկէ ի վախս եւ ի խորս,
Լապտեր կանգնի յեզր ալէկոծ կենցաղոյս :

(Կոյք Էջ 92)

402

Հ. Ալիշան խոնարհութեան փողը կը հնչէ.
 Խոնարհութեան եւեթ շաւիդ անկասկած,
 Ընդ որ երբեք ոչ խոնջեսցի ուղեւոր ։
 (Կոյճ էջ 122)

403

Լքեալ հայութեան յոյս կու տայ Հ. Ալիշան.

« Ամպն և փոթորիկ շուտով վերանայ
 Նոր արեւ, գարուն, ծառն ու այգին գայ:
 Արմատք հին՝ նոր ճիւղ, հին ճիւղք՝ նոր ծաղիկ
 Ընծայեն բնութեան, Հայոց աշխարհիկ.
 Դուք այլ կործանած սիւնք, դուք այլ կանգնիք,
 Լապին կամարքդ, ո՞հ սուրբ եկեղեցիք.

(Հայրունեկ էջ 273).

404

Պատուալ ու փառքով կը պարծի Աւագն Մասիս.

Ես միշտ եմ պարծանք Հայոցըս մեծաց
 Նոքա այլ պարծանք են ինձ անմոռաց ։

(Կոյճ էջ 289)

405

Յուսատու է Աւագ Մասիս և շատ լաւատես. փոքր Մասիս նոյն իսկ ապագայ փայլակներէն ու սառերէն կը սարսի. յոռես է. սակայն Աւագը կ'ըսէ.

**Ես իրք կու տեսնեմ քանց քեզ առաւել,
Ցերեսէն Հայոց փառքըն չէ կըտրել :**

(Նոյն էջ 291)

406

Փոքրիկ Մասիսը կը պատասխանէ.

Բարձրէն կու նայիս, բարձրէն կու տեսնես,
Գրլուխոդ ի յարեւ՝ զամենք լոյս կարծես.
Ցածիր ինձ նըման քիչ մ'այլ խոր նայէ,
Վո դուրսըն ձիւն, ներսըն պաղուկ քար է.
Հազար զարունք զան թէ հազար արեւ
Ի ներս չեն մըտնուր, անցնին քո վերեւ.
Այսպէս սառնեղէն իրք մի զշայք պատեր,
Ցուրտն այլ վախեմ զսիրտն ի քար է փոխեր:

(Նոյն էջ 292)

407

**Սակայն յուսահատ չէ Աւագ Մասիս.
նա կը իրոխաւայ կեանք և վերակենդանութիւն.**

Աչէ մէյմ', զայս վիհս ահագին
Որ յատակն յանդունդ հասանէ երկրին.
Բերանըն ձիւնով սառով կու ծածկի
Ներսըն դըֆոխոց քութուկ (կոճղ) բորբոքի
Գիտես թէ մարած է զինչ հին կանթեղ.
Բայց թէ տամ քըչիկ մի քուքուրտի դեղ՝
Ցանկըսկած դաշտերոտ ամենն ի ման զայ,
Դու այլ հետ լերանց դողաս զինչ տըղայ...
Հանց զիտցիր զԱւագ Մասիսն՝ ով եղբայր,
Հանց ցըրտիկ ծոցեր՝ ունին սիրու հրավառ.
Մ'ասեր թէ դոքա մնուած են մարած
Զանցնիր այն ճըրագն զոր վառեց Աստուած։
(Կոյճ Էջ 292-3)

408

Դարձեալ յուսատու Աւագ Մասիսն է
յոյս ծագողը, և խրախուսողը.

Թէ ցուրտ թէ մարած ասես զՀայաստան՝
Գայ ժամ որ վառի, տայ կենաց նրշան։
(Կոյճ Էջ 293)

409

Երանի այն արժանաւոր անձանց, որոնք
խոյս կու տան փառքէն և փառքն ալ իրենց
եսեւէն կը վագէ. Խորենացին այդպիսի ար-
ժանաւորներուն համար կը յիշատակէ.

Որք ոչ զպատիւն յինքեանս ձգէին, այլ պատիւն զհետ նոցա ընթացաւ:

(Խոր. Պատ. 329).

410

Յուսոյ մասին Եղովբոս կը գրէ. « Զըկնորսները իրենց ուռկանը ջրէն զուրս կը քաշէին, բայց սովորականէն աւելի ծանր ըլլալով, մեծ յոյս ունեցան, և մէկմէկու կ'ըսէին թէ առանց կարծեաց լաւ որս ունիք, ով գիաէ հիմա ինչ ձկներ պիտի սեսնենք մեր ուռկանին մէջ։ Ասոնց ուրախութիւնը շատ չի քըշեց. վասն զի երբոր շատ աշխատանքէն ետեւ նայեցան ուռկանին մէջ՝ ուրիշ բան չգաան, բայց մեծ քարմը, որ ջրին ընթացքը բերեր էր հոն »։ Թարգմանիշը ասկից կը հետեւցընէ.

Մինակ յուսով եթէ երթաս,

Ամէն բանէն պարապ կելլաս :

(Եղովբոս առակք Էջ 272).

411

Պատմիչն Բուզանդ՝ նախանձելիօրէն կը դրուատէ զՆերսէս Պարթեւ, և իրաւացի կը

գովէ մեծ հայրապետին համբաւաւոր կա-
տարելութիւններն . իբրեւ ախպար եկեղե-
ցական, ինչ ինչ առղեր Բուզանդէն կը յի-
շաստակենք. « Այր էր սա մեծ և բարձր,
ցանկալի հասակաւ, և վայելուչ գեղով, զի
ոչ գտանէր ուրեք նման նմա գեղեցկութեանն
ի վերայ երեսաց երկրի... մարդասէր, սուրբ,
զկաստ, սաստիկ իմաստոն և առանց ակն-
առութեան իրաւանց իրաւարար, ցածուն,
քաղցր, խանարհ, աղքատասէր... Անձան-
ձբոյթ էր և ունէր զնախանձն Աստուծոյ, և
եռայր սուրբ հոգւովն. այսպէս իսկ

Էր ամենայնիւ կատարեալ յամենայնի :

Եւ զաղքաառ և զտառապեալս այսպէս ոի-
րէր և ակն ածէր ի վերայ նոցա, զի զիւր
ինչ զհանգերձս և զկերակուր հասարակէր
ընդ նոսա և նեղելոց և տարակուսելոց օգ-
նական և վերակացու և ջատագով ամենայն
զըրկելոց լինէր նա » : Մենք այս գեղեցիկ
պարբերութենէն կրնանք իբրեւ առակ գոր-
ծածել « էր ամենայնիւ կատարեալ յամե-
նայնի » իմաստը նախանձելի :

(Բուզանդ Դ. գ.)

412

Համեստութեան սիրուն վկայութիւն մըն
է և այս խօսքը.

Ես ինձէն խաւար գոլով՝ կամեցայ այլոց
լոյս լինել:

Ատեփաննոս Օրպելեան ինքն իր անձին
համար այդպէս զրած է:

(Ատեփ. Օրպելեան ԿԸ).

413

Նոյնը յետագայ խոնարհ բացատրութիւնը
իր անձին համար լրած է. և ընդունած է
որ ինքն է

Զեւով երկնային, վարուք եղեռնային, կեր-
պիւ կենաբաշխ, ոգով կենազրաւ, անուամբ
քաւչապետ (քահանայապետ, եպիսկոպոս), բան-
սարկուին գործապետ :

(Նոյն ՀԳ).

414

Մեր վաղեմի ուսեալ և հանճարեղ եկե-
ղեցականները, հոչակուած են ոչ միայն գի-
տութեամբ նախանձելի, այլ և բարքով իսկ
հիանալի, կենսագիրները սքանչացումով ան-

մահացուցած են այդ իրօք հոգեշնորհ գիտուն
հայրապետները, եպիսկոպոսները, վարդա-
պետները և անապատականները. այդ գե-
րանզանցորէն սիրելի հոգիներէն է նաև
Գէորգ Վալտապետ Սկեւոացի, որուն համար
իր աշակերաց Մալսէս վարդապետ յափշտա-
կուած կը գրէ թէ

Ինքըն բնակէր յանապատի;
Գործըն պատմէր ի յաշխարհի.
Զօրէն ճպուան ազդողական
Համբաւ հընչէր միշտ հիական։
(Հայոպատում Բ. Էջ 506.)

415

Աբովլեան յոյս ունի որ անապակոյս օր
մը կը ծիծաղի հայուն արեւը. «Հալբախ
Աստուած մէկ օր իր ողորմութեան գուռը
բաց կանի».

Եսպէս հօ չի մնալ:

(Վէրք Հայոպատումի Էջ 85.)

416

Հաւատացեալ հոգին լիայոյս է Աստու-
ծոյ հրաշագործութեանց. կը հաւատայ որ

իր հսգին արփաթեւեալ պիտի թռչի յերկնից կամար զօրութեամբ Անոր,

Որ զթըռչնիկըն թիթեռնիկ թեթեւ թեւաքըն թըրթըռուն

ի թըրթուրն արկեալ պահէ յանարգ զեռուն տաղաւարեալ,

Եւ զմահուն սորա դամբան եղեալ նըմին ի խանձարուրս՝

Ցարուցանէ սփանչելի ճախրել ի լոյս ու ի սիր օդոց :

(Հայկ Դիշտագ 113).

417

Ա'ամսուլը և մեր նշանաւոր գրագէտներու կենսագրութիւններն վկայ են, որ առհասարակ մեր ամէն մատենադիր անձանց համար երկու անհրաժեշտ պէտք՝ զրամ և քաջալերութիւն՝ զգալի եղած են։ Այսպիս մատենագիր մը աւելի գովիճատով կը վարձարսւի, քան թէ զրամով։ Դրամը մատենագրին ջղերն են, որսնք առանց քաջալերիչ գովիճատի կարելի չէ որ գործ են ու կենդանի մնան։ Մեր սիրուած հեղինակներէն մին Գ. Վ. Արուանձտեան իր «Համով-Հոառվ» ին նախաբանովը յայտնած է, թէ

Հայ Միտքը

16

Արծաթը կը քաջալերէ , կը նպաստաւորէ ,
բայց չ'կրնար իբրեւ վարձք՝ գոհացնել աշխա-
տանքը . իսկ եթէ լինի արծաթին կամ նպաս-
տին հետ գնահատող խօսք մը կամ մի միայն
խօսք մը՝ առանց նիւթական վարձքի , զարմանա-
լի գոհացումն կը պատճառէ հաւատարիմ մշա-
կի մը ...

Սրուանձաեան , յետոյ պարզ ու բնական
հարց մը կ'ընէ . « Ո՞վ կրնայ չափել այն
զգացման գոհունակութիւնը մշակի մը , կամ
ծառայի մը , երբ իւր աէրը կը ժալտի անոր ,
կամ ձեռքով կը փայփայէ անոր ուսերը ,
ըսելով . « Ապրիս , հաւնեցայ ըրածիկ , գոհ
եմ քեզմէ » : Թեւեր կ'ուզէ նա որ խոյա-
նայ բարձրանայ նա մինչեւ արեւը , և այդ
անհունութիւնը լեցընէ իւր ուրախութեան
երգով » : Սրուանձաեան բարոյական այդ
տեսակ վարձատրութեան հրաշագործ ուժը
շատ լաւ ըմբռնած է , ինքն անկեղծօրէն
կը գրէ :

Իմ գոհունակութիւնս այնչափ մեծ է , որ չեմ
կարող բացատրել , ընդհանրապէս բանասիրու-
թեան ճաշակ ունեցող ամէն դասերէ վայելածս
քաջալերութեան համար ...

(Համով-Հոտով էջ Դ-Ե) .

418

Յուսահատութեան սրտաճմլիկ օրինակ
մըն է ձագակորոյս անբոյն կաքուիկի որո-
շումը բանասահղծական։ Թշուառ կաքուիկը
քարին վրայ նստած կուլար. կը հարցնեն
ինչո՞ւ կու լաս. «ինառը չի լամ, որ ձա-
գերո են տարած,

Ձագերս բուներնէն տարած։

Իմ սիրտս էրած....

- Սեւ կաքուիկ, գուն ո՞ւր տի թառիս.
- Բանձր խաւախին վրայ կը թառիմ։
- Սեւ կաքուիկ, թէ ատոր տըր զայ, ո՞ւր։
- Ուռիին ու մորիին վրայ՝ խարաբաս կ'թառիմ։
- Թէ հոն էլ չ'թողեն,
— Կէծ մը կրակ կը լիմ։
- Ես զիս կը վառիմ։

(Ազգ. Հանդես XII 104).

419

Մանկամիտ, կամ անմիտ անձը, թէ գո-
վեստ ընդունի՝ կը շիանայ, և շատ անդամ
զինքը գովողին կը թշնամանայ։ Լոռիս Մե-
լիքեանի համար երգուած աշըխային եր-
գի մը մէջ գտնուած ոս տողերն յարմար
են այդ միամիտաներուն։

Սէյեադ, մի գովիլ այս իշխանին, որ միշտ
մնայ լաւ,

Որին գովեցիր, յայտնի տեսար, վերջը լաւ
չելաւ,

Որի ասացիր՝ սա Յակոբն է, նա ելաւ Եսաւ...

(Այշեար-Նօվայ էջ 87.)

420

Գովիճսառով շփանալ, ինքնահաւան ըլլալ,
տխմարութիւնն է, պէտք է յիշենք համր Յո-
խանի առակը.

Գովացին լալ (համր) Յոխան,
կչաւ նստաւ պատուխան:

Մեկնութիւնն է. « Գովասանքը յիմար-
ները կը մղէ ծայրայեղ ինքնահաւանսո-
թեան » :

(Աւագ. Հանդես VII. VIII. 1901 էջ 460)

421

Շատ անզամ բաղզը կոյր է և յոյսը համր:
Հայաստանցիք ունին այս առակը..

Կ'ուզենք արեւիկ,
եկաւ անձրեւիկ.

Կ'ուզենք անձրեւիկ,
եկաւ կարկտիկ:

Կը մեկնուի. « Յուսացուած բարիքի փոխարէն չարիք գտնել » :

(Նոյն էջ 469) .

422

Շասեր կը յուսան, սակայն քիշերը չեն որ յուսախաբ կը մնան. առակ է.

Ֆարզգի (լաւագոյնը)
եղաւ ճառզգի (խայտառակ) :

Մեկնութիւնն է. « Երբ լաւագոյն կարծած բանէ մը, կամ գործէ մը գէշ և խայտառակ հետեւութիւններ կը ծաղին » :

(Նոյն էջ 486) .

423

Ցոյսը կենդանութիւն է, սակայն հայը անոր մէջ կեանք չի ահսներ.

Ոն (ով) ումուտով (յուսով) ապրեցուցեր,
սով զէնի (զայն) սատկեցուցեր :

(Նոյն էջ 500) .

424

Անկարելիին յուսացողը, ծաղրական է.
անոր յիշեցընելու է առակս.

**Զօլախ Ամիրխան
Եղ ումուտ սրտէղ խան :**

(Նոյե Էջ 501).



ԳԼՈՒԽ ԺԱ.

**ԲԱՐԻՔ, ԶԱՐԻՔ, ՍԻԵՐՈՒՄ, ԽԱՆԳԱՐ,
ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ,
ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ, ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆ :**

425

Սարսոկ ազգը ունի իրեն յատուկ քաղաքականութիւնը. երբ կը աեսնէ որ կորսվը անպակառ է, սակայն բանի որ ոսսխին զիմազիելու զէնք չաւնի, նա կը մասձէ որ չարթշնամին գոհացընելով, չարութեան առջեւը առնէ. լսա թափփիի

Բարին մերն է, մտածում էր ոամիկը, բայց չարին պէտք է գոհացնել, որ չարութիւն չըգործէ.

(Խեճր Էջ 115).

426

Շատ քարոզուած ու սիրուած է արդարութիւնը, զոր կարելի է կոչել իրաւունքի քոյրը. բայց զայն վժուար է գանել: Վիպասանն թափփի կը զրէ.

Արդարութիւնը ծիծեռնակի կաթն է դարձել,
ոչ մի տեղ չես գտնի:

(ԽԵՂՔ 412)

427

Հայրենիքի յաւիտենական վշաերուն
պատճառով՝ Բաֆֆի մոռցընել կու տայ ա-
ւետարանի ներսղամառւթեան քարոզնելը, և
մոլոխական վարդապետութեան ունկնդիր,
կը գոռայ վիպասանը.

Զարի հետ պէտք է չար լինել, բարիի հետ
բարի, այս է պահանջում անարդար մարդ-
կութիւնը:

(Զաւարեդդիմ 494)

428

Արծրունի իր ազատամիտ ֆեմինիզմի
պաշտպան՝ մէկ առաջնորդող յօկուածին մէջ
կ'ըսէ.

Ոչ. վատը չիմանալը արժանաւորութիւն չէ,
բայց այն է արժանաւորութիւն, եթէ մարդը
լաւն ու վատը իմանալով, լաւը վատից կարող
է զանազանել:

Արծրունի Աշխատութիւնները Հ. Ի. էջ 83).

429

Ճշմարտութեան վիրաւորուելուն համար,
Պարսնեան երգիծաբանը կ'ըսէ.

Կիրքը միշտ յաղթանակը կը տանի և ճշմար-
տութիւնը կը վիրաւորվի:

(Ազգային Զոյեր Էջ 143).

430

Եւ Պոլսոյ այն վարձկան խմբագիրները,
որոնք ի սէր փարային կամ կէս կանգուն
քաղմիր նուէրի մը համար ճշմարտութիւնը
ուաքի տակ կ'առնեն, այդ պարագային, Պա-
րոնեանի գաղափարով.

Անվայել ոճով պաշտպանված ճշմարտութիւնը
միշտ նախապատիւ է բանկոնի մը զոհված ճըշ-
մարտութենէն :

(Նոյե Էջ 143).

431

Պարոնեան ճշմարտախօսութիւն մասին
լուած է ոտ հեղնականը.

Ճշմարտախօս մը գտնելն այսօր այնչափ դը-
ժուար է, որչափ որ դժուար է թաղային վար-
ժարաններու մէջ կարգ ու կանոն գտնելը:

(Նոյե Էջ 387).

432

Ամէն առաւելութիւն ի միասին զրեթէ կարելի չէ. ապացոյց այս ճշմարտութեան՝ Ալիշանին սա խօսքը կ'արձանագրենք.

Ոչ է պարտէզ այնպէս գեղեցիկ, որ խոռ ինչ անպիտան երբէք ոչ բուսուցանիցէ:

(Բազմավեց 1843 էջ 336).

433

Պէտք է խարութիւն և ընտրութիւն. յառաջադէմ ազգէն ամէն բան անխափը կարելի չէ լնդանիլ. կը պատուիրէ Ալիշան. «մի՛ զամենայն որ զարգացելոց է հնար՝ անխափը ընդունիլ», այլ վաճառականական ընտրութիւն պէտք է ընել, բաղել մի միայն օգտակարը և կարեւորը ու ժողովը ննառակարը.

Զի զվասակարացն բուռն հարկանել՝ արդարեւ մահ է ոգւոյ հայրենեաց, իսկ յօգտակարաց հրաժարել՝ կենաց մնարժութն է:

(Բազմավեց 1845 էջ 334).

434

Ազգասէր Հ. Ալիշանը ոգեւորուած, ճըշ-

մարտութիւնը ազգասիրութենէն վեր կը դասէ.

Ազգասիրութիւնն շատ լաւ բան է, բայց ճըշ, մարտութենէ դուրս չելլեն՝ ամենէն լաւն է, և ազգասիրութենէ ալ դուրս չէ. «Ազգին վրայ փոշի մը չնստեցընել ուզեն՝ ազգը քարկոծելու վտանգի մէջ ձգել է». Կ'ըսէ խիկարը:

(Բազմավեպ 1849 Էջ 66).

435

Անիրաւութիւնը իր տրվար պատիժը՝ այսօր կամ վաղը կը ստանայ. աւետարանական սա բացատրութիւնն կ'ընէ Խորենացին.

Որով չափով չափհաց՝ չափեալ եղեւ. ըստ գրոց :

(Խոր. Պատմ. Էջ 428).

436

Ո եւէ սկզբունքի տէր անձ կարելի չէ որ չըմբոնէ համբերութեան մխիթարիչ վարձատրութիւնը : Ըստ Եղովիրսսի. «Ուրուրը սսոկալի պատերազմ կ'ընէր ազաւնիներու հետ որ իրեն վրացի էին : Խսկ աղաւնինե-

րը այս թշնամութենէն աղաս ըլլալու համար կարծեցին թէ ուրիշ ճար չի կրնար ըլլալ, բայց եթէ թռչուններուն մէջ թագաւոր մ'ընարել որ կարենայ իրենց թըշնամոյն դէմ գնել. բազէն եղաւ թագաւոր որ մտաւ աղաւնոցին մէջ՝ պատճառաւ հասկընալու անոնց միաբանութեան ուժը. և մէկէն ցաթկեց աղաւնիներուն վրայ բոլորը խղգեց »:

Թարգմանիչը այս առակէն կը հետեւցընէ. **թէ**

Համբերող սիրտն՝ ամէն լեղի,
Անուշ կ'ընէ նման մեղրի:
(Եղովբոս առակը 115).

437

Ըստ առակախօսներու, չարիք ընողներուն բարիք պէսք չէ ընել. զգուշացնող ծանօթօրինակ մըն է « Փայտատ և անտառ»ի Եղովբոսեան առակը. և այդ նշանաւոր առակախօսի թարգմանիչը այս երկառողը կը գրէ.

Մի՛ ուար չարին յաջողութիւն,
Քեզի կ'ընէ նախ չարութիւն:
(Նոյն էջ 143).

438

**Եւ Եզնիկ բարոյ և չարի համար սա
բացատրութիւնն է ըրած.**

Զի ոչ արդարոյ, որ բնութեամբ արդար իցէ
մարթի զշար ինչ պատուէր տալ. և ոչ չարի,
որ բնութեամբ չար իցէ, զբարոյ խրառ տալ:
(Երեկ էջ 256).

439

**Խոհեմութիւնը մեզ կը սորվեցինէ չըպալ
ուրիշի անձնատուր կոյլ սարուկ. իմաստունն
խիկար կը գրէ.**

Որդեակ մի տալ թոյլ ընկերին կոխել զռտն
քո, զի համարձակեալ կոխեցէ զպարանոց քո:
(Խիկոր էջ 35).

440

**Կոռնակ տիպար շարութեան էր, անոր
համար Պէշիկթաշլեան անոր բերանը սա
խօսքը կը գնէ.**

Գթա՛լ, ներե՛լ. առ չէ կոռնակի բնութիւնը և
սովորութիւնը:

Այս բացատրութիւնը իբրեւ առակ կարե-

լի է գործածել՝ անզութ, աններող, չարասիրտ
նենդաւոր անձնաւորութեանց համար:

(Պէիկը. Մատենագրութիւնք Էջ 199).

441

Բարի անձը բարութեամբ կը մտածէ և
կ'ուզէ գործել. բայց վաս ու չար անձինք
ամէն բան կը պղասորեն. երկինքը պայծառ
չի մնար, ամպերը կը հասնին կը մրտաեն
զայն. կը գրէ Աքովլեան.

Բայց ա՛խ Ե՞րբ ա երկինքը մէկ կերպի մնա-
ցել՝ որ մարդի սիրտը մնայ:

Վիպասանը յառաջ վարելով խօսքը, կ'ը-
սէ. « Հէնց մի փոքր մաքիս արել երեւաց
թէ չէ, էլի սեւ սեւ ամպերը գլխըները
բարձրացրին, էլի կայծակ սրոտումն սրառումն
մէլլան բաց արին...»

(Վէրք Հայաստանի 7).

442

Նոյն վիպասանը բարութեան համար այս
անկեղծ ու պարզ միտքը յայտնած է:

Մարդ ինչ անի, էն իր առաջը կը գայ: Լա-

ւութիւն կանես, լաւութիւն կտեսնիս, վասութիւն կանես՝ վասութիւն:

(Նոյն Էջ 32).

443

Արդարութիւնը և նոյն իսկ ներքին բնագործը կը պահանջէ որ մարդ իր սեփհականութեան վրէժինողիր ըլլայ, իր կեանքը իր ինչքը պաշտպանէ: Աքովեան կը հարցնէ.

Մենք ծտի զդար էլ ա չկանք, որ մեր բունը պահենք:

(Նոյն Էջ 32).

444

Բարի խոհեմ մարդը լաւ ըմբռնած է որ Զբարասէ ոք բայց անձին, եւ չվսասի թէ ոչ յիւրմէն:

(Հայկ. Դիւցագն Էջ 120).

445

Վրիպելով մեղանչեն՝ չարութիւն, ոճիր մը չէ. Բազրասունին Հ. Արսէն լաւ կը գրէ.

Ոչ թէ գըթելն է ոճիր, այլ ի վրիպակըն կալ յամառտ

(Նոյն Էջ 238).

446

Ճշմարառւթիւնը ուրանալլ հսգեկան գաւաճանութիւն է, իսկ յանուն ճշմարառթեան կոուիլ ու մեռնիլլ՝ գերտղանց առաքինութիւն։ Բագրատունին Հ. Արաչն կը գրէ.

Յաղթանակ մեծ է մեռանել վասն իրաւանց ճշմարտութեան։

(Նոյն էջ 448)։

447

Ճշմարառւթեան վրէժինկրութիւնը յարգեց նաեւ մեր Փրկիչը. կը զրէ Միհիթար Աբբահայր։

Քրիստոս վասն անիրաւ ապտակին՝ համար պահանջեաց, զի ընդդէմ ճշմարտութեան էր. այլոցն լոեաց, զի ընդդէմ անձին իւրոյ էին։

(Հատք էջ 55)։

448

Ըստ Միհիթար Աբբահօր, չարագործը ուշ րիշին չարութիւն ընելուն իր անձին նախ կը վնասէ.

Այրեմ զայլս՝ չար ի վերայ նոցա դնելով, բայց մեք յառաջ քան զնոսա այրիմք։

(Նոյն էջ 112)։

449

Բարին և բարեգործը միշտ սիրելի և
պաշտելի են Սայեաթ Նօվայ աւետարանա-
կան ոգւով բոնկած, չարին հետ չար ըլլալ
կ'երգէ.

Օ՛վ քեզի լեզի պարփիվի, դուն տու շաքար,
Սայեաթ-Նօվայ :

(Սայեաթ-Նօվայ Էջ 131.)

450

Չարը չար է, այս է հանրական համո-
զումը։ Ալաշկերացիք ունին առակ մը.

Աշէկն ի գետ.
ալշախն (ստորինը) ի հետ։

Ըստ «Ազգազրական հանդէս» ի, առակիս
միկնութիւնն է. «Յոռի բաներէն և ո՛չ մէկը
կրնայ լաւագոյն ըլլալ»։

Աղք. հանդէս գիրք VII VIII, 1901 Էջ 456).

451

Հայաստանցիք պարզուկ և ընտանեցած
առակ մ'ունին. կ'ըսեն

ինչ որ բրդես,
զէն կը քրթես։

Հայ Ամիսը

17

Ըստ «Ազգագրական հանդէս»ի՝ մեկնութիւնն է. «Ամէն մարդ իւր թէ բարի և թէ շար դարձողութեան փոխարէնը կը գտնէ»:
(Նոյն էջ 466).

452

Խոհեմութիւնը կը սորվեցընէ ուրիշի
կրածները աեռնելով՝ փորձ ըլլալ և զգուշանալ։ Հայաստանցին կ'ըսէ.

Խշկա (նայէ) ընձի,
Խղճա քըզի։

Ըստ «Ազգագրական հանդէս»ի՝ մեկնութիւնն է. «Դժբաղութեան մը մէջ չ'իյնալու համար նմանօրինակ վիճակ ունեցազները աչքի առաջ աւնենալու է»։
(Նոյն էջ 466).

453

Շատ անգամ բարեզործը շարագործ կը համարուի, այդպիսի պարագայներուն յարմար է այս առակը.

Կուժ կոտրող. լէ (ալ) մէկ ա,
Հուր բերող լէ մէկ ա։
(Նոյն էջ 469)

454

Չարիք ու վնաս ընելէն կգուշանալու է.
չարագործութիւնը աղմի մէջ մանել է, ուս-
կից անկարելի է որ մարդ անրիծ գուրս
ելլէ։ Առվորական առակ մը կայ.

Մուկ ինչքան հող փորայ.

Վոր ուր (իւր) գլխուն կիտայ։

Մեկնութիւնն է. «Ուրիշին վնաս ուզողը
կը վնասուի անոր փոխարէն։
(Նոյն էջ 474).»

455

Ուրիշին գործը խանգարողին, Հայաստան-
ցիք կը յիշեցընեն առակս։

Ուրուս-մուրուս (անմիտ)
ևս կը շիգեմ (շինել) գուն կը բլուս (փլցնել)։
(Նոյն էջ 478).»

456

Միեւնոյն առթիւ կը յիշուի նաեւ ուս
առակը.

Քաջանց (քաջքերու) շինած,
Մկան աւերած։

Մեկնութիւնն է։ «Երբ արժանաւոր,

հզօր, բարի մարդերու գործերը անարժան,
տկար և չար մարդերու ձեռքով կը փնա-
նան» :

(Կոյճ Եջ 485).

457

**Փոքրիկը՝ բարին ու չարը հաւասարապէս
մեծերէն կ'ընզօրինակէ։ Առակը ըսած է.**

**Մեծի ասուկ (ըսածը)
պզուկի (փոքրի) լսուկ (լսածը)։**
(Կոյճ Եջ 498).

458

Նիշէական գաղափարներ կան նաեւ մեր
առակներուն մէջ. թէեւ Նիշէի վրայ առանց
ուելէ ծանօթութիւն ունենալու, հայ սրտերու
մէջ ծնած են այդ գաղափարները։ Ըստ ա-
ռակին լնարելի է չար ըլլալ քան թէ տըխ-
մար.

**Չ'ըսեն թի էշ ա,
թըղ ըսեն թի գէշ ա։**
(Կոյճ Եջ 501).

ԳԼՈՒԽ ԺԲ.

**ԲԱՐԻ ԵԻ ԶԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, ԳԱՂՏՆԻՔ
ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ, ԱՆԱՐԳԱՆՔ. ԽԲԱՏՔ
ՈՐԲԵՐ**

459

Գամառ վաթիպա յուսահատ ու անմիխ-
թար վճիռ մը կալտացած է որբերու զլիխն.
սեւ, ախուր է այդ վճիռը, քանի սր ճշմա-
րիտ է ու անվիճելի:

ՈՐԲԵՐԻ ՍՓոփիչն է լոկ սեւ հողը.

(Պոտանաւորներ Էջ 102).

460

Անիրաւ զրպարառովթեան օրինակ, կարելի
է համարել հայկական սա ծանօթ առակը
զոր զործածած է նաեւ թափփի.

Ազուէս կայ, որ ուզու է կուլ տալիս, բայց
զայլի անունն է խայտառակ:

(Խենք. Էջ 413).

461

Կան անկոչ գրագէտներ, բանասաեղծներ
որ ի սէր իրենց անձարակ գրչին կը զոհեն

ճշմարտութեան սրբութիւնը, և կը գրեն ա-
մէն այլանդակութիւն. որոնց հասարակու-
թիւնը կարող է Պարսնեանի հետ հարցնել.

Առանց զրպարտելու ոտանաւոր գրելը դիւրին
բան է:

(Ագային բոյեր Էջ 207).

462

Պարսնեան՝ Արծրունիի առաջնորդական
մտրակող ողեւորութիւնը նկարագրելով կ'ը-
սէ.

Ժողովուրդ մը իւր թմրութիւնէն սթափեցը-
նելու համար կծու յանդիմանութիւններն և
խորհրդածութիւններն ուշիմ և խոհեմ գրու-
թիւններէն շատ աւելի օգուտ կ'ընեն և (Արծրու-
նին) ասոր շատ համոզուած ըլլալուն համար է,
որ խրատելու տեղ կը նախատէ և շոյելու տեղ
կը խածնէ:

(Կոյք Էջ 270-1).

463

Սակայն անհաս մը որ հասարակութեան
բարոյական առաջնորդը, բժիշկը, մտաւորա-
կան մշակը չէ, ուրիշին գատաւոր հանդի-
սանալով, իրեն յանցանքը չի կրնար պար-

արկել, ուրիշը ազէա կոչելով. ինքը գիտուն չըլլար: Լաւ կ'ըսէ Հ. Ալիշան.

Ուրիշի պակասութիւնը մեզի առաւելութիւն մը չտար:

(Բազմավեց 1849 Էջ 67).

464

Փոքր Մասիսը տեսնելով որ Աւագ Մասիսը, իր անցեալ փառքովը կը պարծի, կը խրատէ,

Բայց մի՛ շատ գոռար դու յամպերտ ի վայր թէ կու ճանաչես զիս քո փոքր եղբայր.

Չըլնի որ լերունքն ու բարձունքն ամեն

ի քեզ շուրջ հային ու տընազ անեն.

Չըլնի որ ասեն, թէ մի՛ այլ պարծիր

Զի հիմիկ փոխուել է Հայոց երկիր.

Թէ փառք թէ պարծանք անցել են գնացել.

Քո բարձըր զըլիսէտ ի վայր են սահել.

(«Հայուսեմի» Էջ 290).

465

Խրպառղները կրնան կարեւորութիւն աւալ Եղնիայ է սա հիանալի խօսքերուն.

Քաղցր է մեղր, բայց ախտալից մարմնոյ վսառ առնէ. օգտակար է խրատ և յանդիմանութիւն

բայց որ զդէմս յարեւմուտս է հաստատեալ՝ նմա
անօգուտ է:

(Եթեկ էջ 313).

466

**Աքովիեան Ճողովրդական զրոյցներով սա
ռղջամիտ խրատները տուած է.**

Առաջ լուծն ու կամըդ պատրաստիր, կալդ
չինիր, դէզգ դիզիր, ետոյ գիժ մոզու անկան-
ջիցը բռնիր՝ է:

Ցանք անողը առաջ պէտք է գետինը վարի,
փափկացնի, ետոյ սերմն ածի. Թէ չէ էլածն էլ
դուրդ ու զուշ կուտի, կմնաս գլուխդ քորելով
մատդ լպստելով:

Մեղրաճանճին մուխ տուր՝ որ փախչի, թէ չէ
երեսդ ես դէմ անում, հալբաթ որ կկծի, եա-
րալու կանի:

Բարդին կոացնես, քեզ վրայ կընգնի, գլուխդ
կշարդի:

Կան պարագայներ ուր դատապարտելի
է անդադանապահութիւնը, քանի որ անհրա-
ժեշտ կը համարուի զաղանապահ մնալի:
Կը գրէ Աքովիեան.

Թէ մէկ բան գիտես, ձեր տան պատերին էլ
մաւայ մի՛ ա զնալ, հողին էլ մի՛ ասիլ. ձէն
կտան, դու կմնաս մէջումը մեղաւոր:

(Նոյն էջ 36-7).

467

Խրառը օգտակար բնողին համար գանձէ, եթէ մէկը խրատէ կը խրաչի, մեղք է խըրատին. Ալաշկերացիք կ'ըսեն.

Իշուն բանջար խաշա՛,
Թէ կէրաւ՝ մէկ լէ (անգամ մըն ալ, խաշա՛,
Թէ չ'կէրաւ գլխուն քաշա՛:

Կը մեկնեն. «Բարի խրատներ արժան է
տալ այն մարդուն, որ անսնց արժէքը կը
զիանայ, կը լսէ ու կը պահէ, և ոչ թէ
այն մարդուն, որ կ'արհամարհէ»:

(Արդ. Հանդես գիրք VII, VIII, 1901 էջ 466).

468

Բարի խրատը երբէք արհամարհելի չէ,
մանաւանդ, երբ յորդորողը փորձառու է,
անկեղծ է: Հայաստանցիք կ'ըսեն.

Ոն որ (ով որ) անկաճ չէնայ մէծին
կ'ընկնայ մութ հնեծին (խաւար):

Ըստ մեկնողին. «Մեծ ու փորձառու
մարդոց խրատը չ'լսողներ միշտ կը սխալին
ու կը վնասուին»:

(Նոյն էջ 476).

469

Գաղանիքը թեւեր ունի, ազատ թագուն
ճամբաներէ կը ճախրէ ազատօրէն։ Հայաս-
տանցին իրաւունք ունի լսելու։

Բերնէ բերան,
հազար բերան։

Մեկնութիւնն է. « Գաղանիք մը, լուր
մը մէկ մարդէն միւսը ամենակարճ ժա-
մանակի մէջ ահազին աեղեր կը ապա-
ծուի » :

(Նոյն էջ 489)։

470

Մարդասպանութիւնը սոսկալի եղեռն մ'է.
բայց նուազ ոճիր մըն չէ և զրապարտութիւնը,
որ զրապարտեալին հողին բարսյապէս ոպան-
նել կարելի է համարել։ Հայկական առածը
կ'լուէ.

Հարի (մինչեւ) արընքտէր (մարդասպան ա-
րունք (մարդասպանութիւն) մի էնայ,
զումսնըին (զրպարտող) էրկուց կ'էնայ։

Մեկնութիւնն է. « Զրպարտութիւնը մար-

դասպանութենէ աւելի վատ է, և անկէ ա-
ւելի վատ հետեւանքներ կ'ունենայ» :

(Նոյն էջ 494).



ԳԼՈՒԽ ԺԳ.

**ՍՓՈՓԱՆՔ. ՑՈՒՃՔ ԱՆՑԵԱԼ ՓԱՌԱՑ.
ԺՈՂՈՎՌՈՒՐԴ:**

471

Արաքսի ալիքներու մէջէն կը լոռւի անցեալ փառաց դառն յիշատակը.

Կար ժամանակ, որ ես էլ՝
Շըքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պըչըանքով,
Փախչում էի ափերէս :

(Գ. Քարիստ « Ոտանաշորեն » Էջ 32):

472

**Արծաթասէր հայր մը ծերուկի մը կ'ուզէ
տալ իր աղջիկը. սա յուսահաս կ'երգէ.**

Դուք երկնային ազատ թըռչունք մի՛ երգէք,
Անցած օրերս դուք ինձ ի յուշ մի՛ բերէք.

(Գ. Քարիստ « Ոտանաշորեն » Էջ 80):

473

**Շատ ճշգրիտ է բանաստեղծ Քաթիպայի
սփոփիչ այս խօսքը թէ.**

Թըշուառին թըշուառն է միշտ մըխիթար.
(Նոյն էջ 82).

474

**Սփոփանքը դեղ ու զարման է, բայց ոչ
ամէն անգամ ազգու ու հատու. քունն ալ
սփոփանք է, բայց երբ սրաին մէջ խոռովք
մը բուրնկած է.**

Քունը ի՞նչ սփոփանք, թէ դարդ կայ սըրտում,
(Նոյն էջ 98).

475

**Երբ ի սէր ազատութեան կը վազէ կար-
նեցիներուն արիւնը, Պատկանեան նահա-
տակները ոգեւորութեամբ կ'երգէ, զանոնք
կը պաշտէ ու կը սփոփէ հայութիւնը.**

**Բայց մի՛ վըհատիք. այդ անմեղ արիւն,
Որ տիպաւ ստրկի ձեր շըղթաներին,
Անշուշտ կը դարձնէ նոցա կաւ փըխրուն –
Այս անճառելի օրէնք է վերին.**

(Նոյն էջ 252).

476

**Հարկը շատ անգամ կը սախազէ քիչով
գոհանալ. լսուած է.**

Առիւծ չըգտնված տեղում աղուէսն էլ խոշոր
գազան է:

(ԽԵԿՇԵ Էջ 229).

477

Թափփի ժաղավրկեան գիտակցութիւնը կը
փայփայէ. իր «Խենթին» մէջ կը գրէ.

Ժողովուրդը մի մեծ վարժապետ է: Նրա մի
հատիկ առածի մէջ անհուն փիլիսոփայութիւն
կայ:

(ԽԵԿՇԵ 306)

478

Ըստ Հ. Ալիշանի, այժմ պարծենալու
բաներ չունինք, կը յորդորէ որ ազգային
պարծենկոսութեամբ մենք եսամոլ ինքնաւ
հաւաններ չըլլանք. կը հարցընէ.

Ո՞րն են մեր պարծանաց աղբիւրներն. քա-
ղաքական զօրութիւն, խելացի՝ քաղաքավարու-
թիւն, գիտութեանց զարգացմունք, երեւելի՝
գործոց համբաւ ու փառք: Դժբաղդաբար ասոնց-
մէ խիստ քիչը կը տեսնենք հիմայ:

(Բագմաչկա 1849. Էջ 66).

479

Անցեալ փառքերու յիշատակը երազ մըն է,
պատրանք աննշան։ լաւ կը գրէ Հ. Ալիշան։

Երբոր յիշենք թէ մեր պապերուն քով կա-
րասով լեցուն սոտակ կար՝ յիշենք ալ որ մեր
քսակը պարապ է, երբոր անոնց սամոյրները
յիշենք՝ նայինք թէ մեր ուսերն ալ կը տաքնան...
(Նոյն էջ 66)։

480

Մեր անցեալ փառքերը թէեւ ըլլան թոռ-
մած ծաղիկներ, սակայն պաշտելի են։

Այդ քո աւերակք, Հայոց աշխարհիկ,
Նըշան մնձութեանդ են, թոռմած ծաղիկ.
Թոռմած ես՝ բայց վարդ, ցամքած՝ բայց հալուէ
Ով ըզքեզ օտար ծաղկան հետ փոխէ՝
(Հայրուշի էջ 274)։

481

Սակայն փոքր Մասիս կ'ափսոսայ ան-
ցեալ փառքը։ Աւագ Մասիս որ իր նախնի
փառքով և յիշատակներով կը պարծի, փաքրը
անսր կ'ուղղէ սա խօսքերը։

Շատ փառք ունէանք, հիմիկ ի՞նչ ունինք,
Աւագ լուկ ամօթ, միայն նախատինք։

Այլ մեռելութեան Հայոց մահարձան.
Գան զընան դառնան ալիք գետերուն,
Չի դառնայ որդուոց՝ պարծանք հայրերուն։
Միթէ կու հալե՞ն անցեալ ամառներ
Զայս մէկ ձըմերանս ահագին սառներ...
(Նոյն էջ 291).

482

Մեր զիւցազնական պաստմութեան մէջ
կը յիշուի խիզախն Արտաշէս առաջինը, սա
մեր ամենէն մեծ աշխարհակալներէն մինն
էր. քսանը հինգ տարի կը թագաւորէ. իր
բանակներուն ուժը կ'ահաբեկէ նսյն իսկ
հոռվմէական լեզէռները. ասոնք աեսնելով
որ պիտի չի կարենան զիմազրել հայկական
սուրերուն, ոսկիով կը կուրցընեն Արտաշէսի
զօրավարներու աչքը. ասոնք գաւաճանու-
թեամբ կը սպանեն զԱրտաշէս, սա իր
հոգեավլուքի ատեն՝ յիշելով իր անցեալ պերճ
փառքը, արտասուելով կը հառաչէ.

Աւանդ փառացս անցաւորի:

Պատամական գարերէ ի վեր այդ հառաչը
մեր աղգին մէջ կը մնայ տիսուր ու անմեռ
գանգիւնավ:

(Խոր. Պատմ. 185).

Հայաստանի մորմոքիչ ժամերուն ողբալի
է և ժողովուրդը. կը գրէ մեր ծերունի պատ-
մահայրը.

Ժողովրդականք վէսք, ստահակք, մնծախօսք,
անվաստակք, այրեցողք, վնասակարք:

(Նոյն Էջ 553).

483

Իսկ ժողովրդեան պաշտպան մարաիկնե-
րը, ըստ Խորենացիին են.

Զօրականք անիրաւք, ստապարծք, զինատեացք,
պղերգք, հեշտասէրք, անժուժկալք, կողոպտիչք,
համաբարոյք աւազակաց.

(Նոյն Էջ 553-4).

484

Վարդանանց պատերազմէն վերջը, կը
արիք սսոկալի աղքատութիւն, սով ու
արհաւիրք. հայր ունի իր կրօնքը, անոր
սփոփանքով կ'ապրի, կը համբերէ իր խեղճ
զլիուն հասած զարհուրելի վշաներուն. արք
չեն միայն կորովի և գիւցազնական խրոխտութեամբ
կը դիմագրեն հալածանքի և կոտորածներու.

Հայ Միաբը

18

աղիողորմ վշտերուն. Եղիշէ կանանց այդ
առաքինութիւնը կ'անմահացընէ իր այս տո-
ղերով.

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ
գրգեալք և զգուեալք էին յիւրաքանչիւր պաս-
տեռունս (դեսպակ և կուպա) և ի գահաւորակս,
հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօ-
թից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համ-
բերել կարասցեն մնծի նեղութեանն:

(Եղիշէ Ը.)

485

Արիստակէս Լաստիլերտեցի յիշելով Հայ-
աստանի անցեալ փառաց նուազումը, կ'ող-
բայ.

Ո՞ր լսելիք տանիցեն զթշուառութեանս մերոյ
զպատմութիւն:

Պատմիշն գորովական ասղերով նկարա-
գրած է մեր այդ անցեալը. հարազատ ու
սրաւաճմշիկ է այդ պատկերը, որուն ու-
րուանկարը կ'ամփօփենք յեաագայ առղերուն
մէջ. կը գրէ. «Աշխարհ՝ որ երբեմն ժա-
մանակաւ իբրեւ զգրախտ անկախիտ առա-
ջի իւր, կանաչագեղ, աւերեւալից, պաղա-
բեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւորա-

ցըն ցուցանիւր . քանզի իշխանք նստէին
յիշխանական գահու գուարթահայեաց զի-
մօք, և զգարնանաբեր ծաղկանոցաց բերեալ
զնմանութիւն՝ վառ ի վառ գունովք առաջի
կացեալք, ուրախական երգոց և բանից միայն
լինէին հանդէսք... Այլ և ի վեր տանելի է
մեզ բանս, առ հայրապետական աթոռն և
առ թագաւորական պատիւ. զի մինն՝ զօրէն
ամպոյ խտացեալ ի պարզեւացն Հողւոյն...
իսկ թագաւորն՝ յառաւօտինսն յորժամ ի
քաղաքէն ելանէր, զօրէն փեսայի որ ելա-
նէ յառագաստէ իւրմէ... զամենայն աեսա-
նելիս յինքն ձգէ... Արդ այժմ թագաւորն
անկեալ ի պատույ, իբրեւ զգերի կալանա-
ւոր... Արքունական ապարանքն աւերակ և
անմարդի. մարգարնակ աշխարհն՝ թափուր
ի բնակչաց...»

(Հայապատում Բ. Էջ 323).

Ներսէս Մոկացի սա սփոփիչ խօսքն է ը-
սած, յարմար արդիւնաւոր աշակերտաց.

**Թէպէտ սերմանողքն անկան, սերմանեալքն
յոյժ արդիւնացան:**

(Հայապատռում Բ. Էջ 622).

487

**Պէշիկթաշլեան հիանալով մեր նախնի հայ-
կազուն գարերու փառաց և քաջազործու-
թիանց վրայ, իը գրէ « կոռնակ » ողբերգու-
թեան մէջ.**

Ան ատենը Հայութիւն ըսելը, քաջութիւն-
յաղթութիւն ու փառք ըսել էր:

Իսկ հիմայ...

**Հիմայ ալ հայութիւն ըսելը ատելութիւն ան-
մրաբանութիւն ու նախանձ ըսել է:**

(Պէտքչ. Մատենագրք. Էջ 198).



ԳԼՈՒԽ ԺԴ.

ՅՈՐԴՈՐ. ԽԻՂՃ, ՊԱՏԻԺ. ՄԱՀ. ՔԱՀԱՆԱՑ,
ԵԿԵՂԵՑԻ. ԱՇԽԱՏԱՆՔ. ԾՈՒԼՈՒԹԻՒՆ:

488

Գամառ Քաթիպա « Շինականի առաւօսեան երգը » ի մէջ, շատ գեղեցիկ յորդորներ ունի. նա իր սրբինգով ծոյլ շինական Հայաստանցին գործի կը մղէ.

Քանի հով է՝ հունձըդ արա արտումըդ,
Հունձըդ հընձէ մի՛ ծուլանար գործումըդ:
(Գամառ Քաթիպա. « Ոտանաւորներ » էջ 7).

489

Նոյն բանաստեղծը կը յորդորէ չի ծուլանալ.

Մի ծուլանար, ժամանակդ խնայէ,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ:
(Նոյն էջ 8).

490

Լէոբարտին իր մելամաղձուտ քնարով
անմահացուցած է մահուան սէրը. փափ-

կիկ սիրտը չէ միայն որ կ'երազէ մահը, այլ
և կրակուս սիրտը. Քաթիպայի ուժին սազն
ալ սիրեր է օրհասական ճգնաժամը, պաղ
գերեզմանը և քարէ վերմակը.

Ան, մօտեցիր օրհասական օր մահուան.
Բներ քու հետը սեւ հող ու նեղ գերեզման,
Թող սառ լինի իմ նոր տանը յատակը.
Ծանր քարէ վրաս ծածկած վերմակը:

(Գամառ Քարիպա «Ոտանաշորեն» Էջ 20)

491

Գամառ Քաթիպա՝ ի նշան որդիական սի-
րոյ, Գ. Քահանայ Պատականեանին Լամարդի-
նեան նմանողութեամբ՝ կը նուազէ քահա-
նային բարի ու գովելի ձիրքերն. ճշմարտու-
թիւն մըն է այդ բանասաեղծութեան վիր-
ջին այս երկու տողերը.

Քանց սուրբ քահանան էլ ո՞վ կարող է
Արդեօք մեզ համար լինել հայր քարի:

(Ոտանաշորեն Էջ 43).

492

Իայց իր «Տէրաէր» վերնագրով՝ քերթո-
ղական երգին մէջ Պատկանեան շատ երգիծող

կ'ըլլայ: Տէրաէրին կը պատուիրէ երանութիւն մը.

Օխտը փոր, օխտը ճէպ տուն ունեցիր,
Ու փիթուն տարին թաղէ՛ ու կընքէ՛.
Փորըտ կըոք հաց, ստակը ճէպըտ դի՛ր,
Առկից ալ թէօյֆէ կեանք մնզի պէ՞ռք է:
(Նոյն Էջ 309).

493

Եկեղեցական ու կրօնական սիրոյ ողաղութեան համար՝ զհայը կը մեղադրէ.

Պապէնական ժամին սէրը
Մեր սիրտերէն հանեցինք...
(Նոյն Էջ 313).

494

Թահանայք ժողովրդեան առաջնորդներն են, անոնք հաւատացեալ ոչխարներու հոգեկան սփոփանքը, միսիմարանքը ու քաղցրութիւնն են, բայց ո՛վ չի գիտեր թէ այդ զասակարգին մէջ սպրուած չեն և անարժաններ, վատեր, որոնք իրենց խեղաթիւր կենցաղավարաւթեամբ կը գայթակղեցընեն միամիտ: Ժողովուրդը:

տաղող բառերով կը խարազանէ եկեղեցականներու թերութիւնները, և շատ անգամ ինչպէս կ'ըսէ ուամիկը. « մէկ ջրով կը լուայ » ամբողջ քահանայական դաստիարակը. մենք խիստ կը գանենք Բաֆֆիի « Խենթը » ի մէջ Ա. Էջմիածնի հոգեւորականութեան մասին տխուր նկարագրութիւնը, և անաւարակոյս վաղարշապատի վանականներու մասին՝ նոյն վիպասանին գրած հետագայ առղերը պէտք չէ լնդհանուր մաքով առնել.

Վանքը ես մտածում էի, գոնէ պահպանում է կրօնական ջերմեռանդութիւնը, բայց այստեղ մարդիկ ոչինչի չեն հաւատում: Աքեղաների վարքը պատճառում է ժողովրդի մէջ զայթակղութիւն և թերահաւատութիւն:

Եւ շարունակելով յուսահատ ու ջլասահատ փաստեր, կը վերջացնէ խօսքը այսպէս.

Ինչ ազգ, որ յոյսը դրել է միայն եկեղեցականների վրայ նրա կործանման սկիզբը մօտ է վախճանին:

(Խռեք էջ 421).

495

Գ. Ալֆրանի Edmond About, « Le Progrès » գրքէն քաղելով, առաջնորդող

յօդուածալ մը կը հաստատէ աշխատանքի հրաշագործութիւնը. ցոյց կու տայ որ սովորական ամէն մեր գործածած առարկայները ուրիշներու համբերատար աշխատութեամբն եղած են. առանց աշխատանքի չի կայ կեանք, կենցաղ և յառաջադիմութիւն. աշխատանքը բարի է և հրաշագործ . պարզ և խիստ լաւ բարոյական քարոզ մին ալ կու տայ. «Բաւական չէ-կ' լսէ-վասր չ'գործել պարագը վճարելու համար, այլ հարկաւոր է լաւութիւն եւս անել» : Ու իր առաջնորդող յօդուածը կը վերջացընէ, անձնուրաց այս սթափեցուցիչ յորպսով.

Թող կորչէ անունը — Բարի գործը չի կորչի... Աշխատենք :

(Գ. Արծրունու Աշխատութիւնները հատ. I. էջ 49).

496

Ունայնամիա կամ միամիա ու անգործ աղքասիրութեամբ՝ կարելի չէ որ ազգը կենդանի և առողջ մնայ: Պէտք է աշխատանք գործունեայ և գիտակցական աշխատանք: Կը գրէ Ալմրունին.

Մեզ հարկաւոր է այժմ աշխատանք, իսկ աշխատանքին կարող է օգնել գրականութիւնը, միայն այս երկու ճանապարհներ ընտրելով. — գիտութիւն և քննութիւն:

(Նոյն Էջ 185).

497

Հ. Ալիշան պարզ ու նահապեսական անկեղծութեամբ մեր ազգին կը կարդայ այս յորդորը.

Հետեւողք լերուք գեղեցիկ կարգաց եւրոպացւոց ի դաստիարակութիւն, ի հնարս յառաջատութեան ազգային ոգույ, յընկերութիւնս և ի շինուածս կենցաղօգուստ:

(Բագր. 1845 Էջ 334).

498

Մեր նախնեաց փառքով ու լուսով, ոչ կրնանք փառաւորուիլ և ոչ ալ պարծիլ. **Հ.** Ալիշան կը յորդորէ աշխատիլ ու յառաջադիմել.

Պէտք է որ աչուընիս բանանք ու ստուընիս շարժենք, չէ՞ նէ՝ «Ոչ ճամբան գիտնալն կարւանը իր իշեւանին կը հասցընէ, ոչ նաւահան գիտող ճանչնալն զնաւը կը մօտեցընէ». Կ'ըսէ Խիկարը:

(Բագր. 1819 Էջ 67).

499

**ՄԵՐ ԹԵՐՈՒԹԵԱՆց առթիւ կը գրէ ԱԼԻ-
ՀԱՆ.**

Ծուռ բան մը կայ նէ՛ շտկենք, չէ թէ ջըն-
ջենք:

**Եւ յետոյ սա հայրական քարոզը կու
տայ.**

Այն բանն որ մեր մէջ իրաւախոհ ըլլալով
կրնանք լմնցընել՝ չհանենք օտարներու ատեան,
մէկզմէկ խայտառակելու համար:

(Բազմ. 1849 էջ 131).

500

**Հ. ԱԼԻՀԱՆ կը քաջալերէ հայութիւնը.
կը յորսորէ հայու սիրա ունենալ.**

Սիրտ ի սիրտ, ձեռն ի ձեռն՝ եղբարք, պըն-
դեսցին,

Առ մի նպատակ լեալ ուշ ի կուրծ.
Նըրթունք հրաշունչք համախոհ միտըս ծըն-
ցին,

Մի բաբախիւն ի լանջս հանուրց.

(«Հայութի» էջ 186).

501

Կը յարդուրէ ցվերջ մեր կեանքին՝ աշխատիլ հայութեան համար.

Գուն գործեսցուք մահուչափ ի բռին.
Ո՞ն Հայաստան մի՛ զանխուլ կաս լըռին.
Արասցուք և քեզ յազինս անուն պերճ,
Մինչչեւ մեզ կենաց հասեալ իցէ վերջ,
Օ՞ն և օ՞ն եղբարք եռանդուն
Կեցցէ՛ յաւէտ ազգ հայկազուն:
(Նոյն էջ 186).

502

Նահապետի երդերուն սէջ մահուան յիշատակը անոլրէպ է. սիրուն քերթողը միշտ մահուան ախուր սւրուականը կ'երազէ. կ'երգէ. «Հայոց աշխարհիկ» ը և կ'ողբերգէ իր հեռաւոր մահը.

Բայց Նահապետիս ի՞նչ ասեմ ծերուկ.
Որ եմ քան զամեն ծաղիկ վաղանցուկ.
Իմ զարունս մնցել ու հասել աշուն,
Յամքած տերեւուկս ըսպասեմ հովուն՝
Թէ ե՞րբ ի լերանց ծոցուն փըչէ խոր
Զըգէ անկըսկիծ զիս ի մահուն ձոր:
(Հայունքի էջ 269).

503

Խնդութեամբ հայ հողին կուտայ իր հայ-
կական աճիւնը.

Խընդութեամբ կ'երթամ քեզնից՝ Հայաստան,
Քեզնից առած հողս՝ ի քեզ տամ թաղման:
(Նոյն Էջ 269).

504

Բազմալաստակ ճակախն հանգչելու փա-
փուկ հող կ'ուղէ.

Ծիր Նահապետիդ՝ տուր կակռւղ հողիկ
Որ զքեզ պինդ սիրեց, Հայոց աշխարհիկ?
(Նոյն Էջ 274).

505

Խաչվէմերուն վրայ երկինքի օրհնութիւնը
կը ցողէ.

Ահա տեսանք զքարերն Հայոց,
Մեր պապերուն մահուան օրոց.
Գերեզմաններըն լուռ էին
Խաչվէմքն ի քովս աղօթէին.
Տէրն ողորմի հանգուցելոց
Եւ ամենայն երկրիս Հայոց:
(Նոյն Էջ 278).

506

Հայրենասիրի համար քան պատերազմական դաշտին վրայի մահն՝ չկայ աւելի գերազանց վախճան։ Կերպէ Նահապետ։

Վասըն քո ընկան, աշխարհ իմ Հայոց,
Կըտրինք աննըմանք վեհք հիւսիսայնոց։
(Նոյն էջ 318).

507

Շատերը խղճի անդորրութեան համար խոյս տուած են աշխարհքէն և անապատ քաշուած։ Հայ պատմութեան մէջ նշանաւոր օրինակներ ունինք. այդպէս մտածեր ու գործեր են Գրիգոր Լուսաւորիչ, Տրդատ և Հանճարեղն Մեսրոպ, որուն համար խորենացին կը գործածէ սա գեղեցիկ բացարութիւնը։

Ի նաւահանգիստ փութայ նաւ խոռվեալ, և անձն ժուժկալ խնդրէ զանապատ։

(Խոր Պատմ. էջ 479).

508

Մարդ է, մահկանացու է. բայց կան անմահներ, իրենց գործերով յաւիտենական-

օրէն ապրողներ. ասոնցմէ էր Սահակ Պարթեւ, որուն համար կը գրէ Խորենացին. թէ,
Մահկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ
եթող:

(Խոր. Պատմ. Էջ 542).

509

Խորենացին իր ուսուցչին մահը կ'ողբայ.
Կորեաւ ժողովողն, թագեաւ նաւահանգիստն,
Ելիք օգնականն, լուեաց ձանն յորդորեցուցիչ:
(Խոր. Պատմ. Էջ 550).

510

Երբ Սահակ Մեսրոպ կը վախճանին,
Հայաստանի կացութիւնը շատ ողբալի էր.
Խորենացին կ'ողբայ զանոնք և Հայաստանեաց
եկեղեցին և եկեղեցականները. չկան հարա-
զաա հոգեւորականներ, այլ.

Վարդապետք տիսմարք և ընդինքնահաճք, ան-
ձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ,
արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով, ոսկեսէրք,
նախանձուոք, թողեալ զհեզութիւն, յորում Աս-
տուած բնակէ, և զայլք եղեալ՝ զիւրեանց հօտս
գիշատելով:

(Նոյն Էջ 553).

511

Խոկ անտաղտականներուն համար կ'ըսէ.

Կրօնաւորք կեղծաւորք անձնացոյցք, սընա-
փառք, պատուասէրք քան թէ աստուածասէրք:
(Նոյն էջ 553).

512

Վիճակաւորաց համար կը գրէ.

Վիճակաւորք հպարտք, դատասացք, զրա-
բանք, ծոյլք, ատեցողք արուեստից և վարդա-
պետական բանից, սիրողք վաճառաց և կատակ-
երգութեանց:

(Նոյն էջ 553).

513

Խրենց կոչումին ու պաշտօնին անարժուան
և վատարարոյ քահանայներուն համար, յար-
մար է Վարդանայ սա խօսքը.

Ո՞վ գարշելի, զքեզ կով գիտէի. և արդ զքեզ
պատարագաւո ո՞վ արար.

Այս է պատմութիւնը. « Քահանայ մի
գողացաւ զկով այրի կնոջ մի և էած ի
յախոռն. և կին յիմացաւ. և ասէ առ քա-
հանայն. տէր, ժամ է մահուան իմոյ. եկ

յախոռն, որ խոսապվանիմ. և յայն ժամ անցուց զկովն ի ներսի տուն և անդի ի ժամատուն և անդի յեկեղեցին. և ասէ կին. տէր, առաջի բեմին պարա է ասել զմահու խոսապվանութիւն. և հանին զկովն ի բեմն և քարշեցին զվարայգուրն ի դէմ. իբրեւ մտան յիկեղեցին և նստան. յայնժամ կին ի վեր կալաւ զվարայգուրն և ասէ ընդ կովն. ո՞լ գարշելի, զքեզ կոյլ գիտէի. և արդ զքեզ պատարագաւղ ո՞լ արար. ասայ ինձ: — Յուցանէ առակո, թէ այսպէս համբերութեամբ և իմաստութեամբ պարա է առաջնորդին և վարդապետին զամենայն ինչ քննել. և ստուգել ամենայն և յիմանալ զվարս նոցա. և որ չէ արժանի պատարագի, ծածկայբար յանդիմանել և ոչ տայլ թուլ կրկին խաչել զորդին աստուծոյ անարժան պատարագաւն և հաղորդութեամբն»:

(Ժողով. Առակ. Վարդանայ 73-4):

514

Աշխատանքի մասին հանրածանօթ է կը-
րիայի և նապաստակի սա առակը. «ՕՌ
ՀԱՅ ՄԻՒՔՐ

մը նապաստակը կը խնտար կրիային վրայ, և երեսը կը զարնէր անոր խիստ ծանրաշարժութիւնը։ Եկուր ըստ կրիան դաշինք զնենք. ես քեզմէ շուտ կը հասնիմ այն ծառին, որ անկած կը տեսնես արտին ծայրը։ Պատասխանեց նապաստակը որ մէկ կրիայ մը բնշպէս պիտի նապաստակին հետ վազելու ելլէ, քաւ ինելքեդ զարկեր է, եղբայր, զնա բանգ։ Աս կարգէ զուրս բանին զիս հրամցընելէդ առաջ, պէտք էր մամլուալ, թէ ես չորս անգամ ցտթիեմ այնշափ ճամբայ կընեմ, որ զուն շորս շարթուան մէջ չես կրնար ընել։ Հոգ չէ, բռաւ կրիան. և առեն չկարսնցընելով սկսաւ երթալ։ Իսկ նապաստակին տունց հօգալու թողուց որ կրիան առաջ անցնի. երբեմ խող կընէր, երբեմ ես կը դանար, և խոս ուտելով կը զաւաճանար. ինքիրեն կըսէր թէ ես ապահով եմ. որ կարսնցուցած ժամանակս շուտով կընամ շոհիլ. սկայն կրիան միշտ առաջ կ'երթար։ Երբոր աեսաւ նապաստակը թէ երկու մատ մացեր է որ կրիան հասնի ծառին, շուտ

մը ցաթկեց կայծակի պէս վազեց. բայց
բանը բանէն անցեր էր. վասն զի կրիան
հոս հասնելու վրայ էր. և ինչ որ ըրաւ
նապաստակը չկրցաւ, կրիան առաջ հասած
էր. և այսպէս կորսընցուց իր դաշինքը » :

Այս առակէն, Եղովրոսի թարգմանիչը կը
գրէ սա խրատը. թէ,

Աշխատութիւն միշտ շարունակ,

Ցաղթէ առնու ըզյաղթանակ :

(Եղովրոս առակը էջ 177).

515

Ով որ չաշխատիր, կրնայ նկատողութեան
առնել Եղնիկի սա խօսքը.

Որ գարուն ի հանգստեան կայ, ձմեռն ի սո-
վոյ և ի սառամանեաց սատակի:

(Երգի էջ 300).

516

Ծոյլերը հանգստութեան պէտք չունին.

Աշխատելոցն հրամայեաց գհանգիստն, և ոչ
որդնապարար մարմնասիրացն:

(Երգի էջ 306).

517

**Բայց աշխատանքը և գործունէութիւնը ու-
րիշի պէտք չէ մնասել. հակառակ պարագային
տուժողը կրնայ յիշել Եզնկայ սա խօսքը, թէ-
Անգործ մեղու՝ լաւ է քան զժիր պիծակ:
(Երես 310).**

518

**Մենք կրնանք ուշագիր ըլլալ Խիկար ի-
մաստունի սա խրատին.**

Որդեակ մի լինիր կարի քաղցր որ կլանեն
զքեզ, կարի դառն որ թքանեն զքեզ այլ հեզ և
հանդարտ ի գործս զնացից քոց յամենայն բան:

**Կը խրատէ լարձեալ՝ ժամանակէն օգուտ
քաղել.**

Որդեակ մինչդեռ կաւշիկտ ի տոտտ է կոխ
զփուշն և արայ ճանապարհ ոտից քոց:
(Խիկար Էջ 15).

519

**Եկեղեցական կարգը անարժանաբար վա-
րող և սուրբ խորհուրդները պղծող քահա-
նայն հարելի է կոչել.
Զոմզոմա.**

Կիրակոս պատմիչ՝ գրելով Յովիք. Սար-
կաւագ վարդապետի կենսագրականը, կը յի-
շատակէ այդ անունով մի սրբապիղծ եկե-
ղեցական։ «Դէպ եղեւ որմա (Յովիք Սար-
կաւագ վարդապետին) վասրն անառակ գնա-
ցիցն որոշել զոմն ի խորհրդական պատա-
րագէն, Զոմզոմմա անուն. և նա փոխանակ
կղջալոյ և ապաշխարելոյ՝ խորհէր սպանանել
չսքանչելին»։ և նոյն իսկ կը փորձէ ալ։
Սարկաւագ վարդապետը վախնալով, զայն
քահանայական առափնտեաններու մէջ գեռ
աւելի կը բարձրացընէ։ գայթագղութիւնը
մեծ կ'ըլլայ։ «Եւ հրամայեաց եկեղեց-
պանին առնել զնոս աւագ երէց։ Բազում
քրթմնջիւն էր վասն այնորիկ, որպէս թէ
անարժան էր, և նա կաշառս էառ և եմոյժ
զնա յեկեղեցին։ Իբրեւ եհաս ժամ խորհըր-
դական պատարագին, ել թշուառականն ի
բեմն անդր զի մասուսցէ պատարագ, և
եկն վարդապետն ի գաւիթ անոկու ի մէջ ա-
տենին հանդէպ սրբոյ սեղանոյն, երաց զզը-
լսւին. իւր, սկսաւ աղօթել, և վաղվաղակի
ոգի չար եմուտ յայրն աներկիւդ, և ընկեց

զնա ի բեմէ անտի յատակս տաճարին, և
սկսաւ լլիել զնա յոյժ. և հանին զնա ար-
տաքս ի տաճարէ անտի, որպէս զՈղիա, և
երկիւղ մեծ անկաւ ի վերայ տեսողացն » :

(Հայապատռում Բ. Էջ 359).

520

Յանդուգն, զեռաբուսիկ քարոզիչ ու մե-
ծամեծս վարդապետող քահանայներուն կա-
րելի է ըսել Ս. Գրիգոր աստուածաբանի
ոսա խօսքը.

Յիսուս Երեսնամեայ մկրտեցաւ, և դու յա-
ռաջ քան զմօրուսդ վարդապետես :

(Հայապատռում Բ. Էջ 378).

521

Խելացի յորդորները տխմար ու ապառաժ
զլուխներու վրայ չեն ցաներ.

Այլ մեր բանք առ իմաստունս են հասակաւ
և հըմոռութեամբ :

(Հայկ. դիւցազն Էջ 96).

522

Եյովայի սիրելի ժողովուրդը ոտնակորի լրաւ պատուիրանք, օրէնք ու բարոյականութիւն։ Եւ պղծութիւնը, զազրութիւնը ապականեց աշխարհքս. պէտք էր պատիժ։ Արաշին պատիժը մեծ է և տիեզերական. Աստուած սարջացած կը գոչէ.

Բարկացայ ՚նդ արարչութիւնս. ի սպառ ի սպուռ սատակեցից :

(Նոյն Էջ 115).

523

Հարազատին և սիրելոյն մահը կսկծալի, աղեխարշ սոսկում մ'ունի, սակայն մեռելին հետ կարելի չէ մեռնիլ. կ'ըսէ Բագրատունին.

Ոչ ի դէպ ընդ մեռելոցըն մեռանել և կենդանեաց,

Պիտոյ եմք տան և ազգի և աշխարհի առհասարակ։

(Նոյն Էջ 220).

524

Մեր ճակատագրի անջնջելի ճշմարտութիւնն է իրադործելի մահն մահկանացուաց.

Որ այսօր յերկրի ըրջին՝ վաղիւ ի խորս հողին անյուշ,

Եւ ի սիրտըս սիրելեաց վաղ քան յերկրի մոխրին անհետ.

Ո՛վ բուռն և անողոք հէք մահացուաց ճակատագիր:

(Կոյճ Էջ 224).

525

Այսայն երանի անոր որ առաքինութեամբ և քաջազործութեամբ կը նահատակուի ի սէր հայրենեաց և մարդկութեան.

Նըմա բիւր երանի, զի քաջութեամբ և քաջ անուամբ

Ի վերայ երկնից Սրբոյն և հայրենեաց նահատակեալ:

(Կոյճ Էջ 226).

526

Մահուան համար սիրուն և նկարագեղ օրինակ՝ կարելի է ընդունիլ Ամարփալայ տապալումը։ Հայկ լսելով վաղամեսիկ որդւոյն

մահը, շանթեռանդ սրաւմառւթեամբ, կայ-
ծակնաբար կ'իջնայ Ամարփալայ վրայ. որ

թըմբրեցաւ, ընդարմացաւ, զբլբօքն անկաւ
սեաւ մառախուղ,

Երերէր երկին երկիր, տուղնջեանն ի մութ
թաթաւէր ջահ։

(Հայկ. Դիւցաղն էջ 327)։

527

Միսիթար Աբբահայր մահուան համար
սա անպաճոյն բանսասեղծական պարզ ու
ճշգրիտ բացասարութիւնն ըրած է։

Դրօշակ և նշան մահուն, որ է սպիտականալն
հերաց։

(Հատք էջ 89)։

528

Անարժան, արծաթասէր եկեղեցականնե-
րուն համար, Միսիթար Աբբահայր ճշգրտօրէն
կը գրէ, թէ.

Այր աւազակաց լինի եկեղեցին Քրիստոսի
յորժամ եկեղեցականք միայն վերահայեցմամբ
արծաթոյ ծառայեն ի նմին։

(Կոյճ էջ 125)։

529

**կեանքն ալ ծաղիկ մըն է որ անպատճառ
պիտի թարշամի.** Դաւիթ Սալահորցի իր
ծաղկանց զսվասանքն ընելուն, փափկիկ պար-
զութեամբ կ'երգէ ճշգրտօրէն.

**Կեանքըս նման ծաղկըներուն, որ կը բացուի
առաւօտուն և չորանայ մինչ իրիկուն:**

(Համով-Հովով Էջ 285).

530

**Ճան հարազատ ու անմեղ ուրախութենէն
զրկուած հայ հարսը, իր պանդուխտ եարին
ետեւէն կը հառաչէ, կը գոչէ.**

**Տուն էկուր, տուն էկուր, աղաս, տուն էկուր
Աշխարհս ոչինչ է, մեզի ալ մեռնիլ կայ:**
(Նոյն Էջ 299).

531

**Հայաստանցին իր ղարիպին մահը սրաւա-
շարժ երգով կուլայ.**

Ղարիբ մեռար, ղարիբ թաղեցին.

Ղարիբ լրցին հողիկն ի վրադ.

Եկին օտար մարեր ի վրադ,

Եկին օտար քուրեր ի վրադ:

Եկին ու վայ բերին բերողին (ծնողին).

Վայ բերողին, վայ մեծցնողին.
Վայ լուսալուս արթուն կեցողին.
Մաղկատը սըրտին, ծիծը տուողին:
(Առյ էջ 300).

532

Հայ ընտանիքը իր պանդուխտ հարազատը
շուղեր որ օտար հողին մէջ թաղուի, եկուր
կ'ըսէ.

Եկու քեզ բաղչան թաղենք, ու մաղենք հողդ
շարերով.

Հողիդ վըրան ծաղիկ ցանենք, ցանկենք կար-
միր վարդերով:

(Առյ էջ 301).

533

Հայաստանի սկաւորը ջախջախուած սըր-
տով կ'ողբայ իր հարազատը.

Լամ, գահերու վրայ հերկ անեմ.

Արցունքովս ցողեմ, ցաւերովս ցանեմ:

Ակնցի դարիպը մեռնելուն, մայրը անոր
միշատակը կու լայ դառնագին.

Շարուած մարգրիտ էիր, կտրեցար կուտ կուտ
եղար:

Քուրուրտանք, վրայ էկէք, ժողվեցէք որ ալ
չը մկայ:

Մեռաւ, վասիաթ ըրաւ, զիս ճամբուն վրայ
թաղեցէք:

Քարըս նշանով դրէք, ցաւելս վըրան գըրեցէք:

Նոյն քարուքանդ հոգեակ մայրը՝ դարձեալ ողբագին կ'աղերսէ.

Եկուր երթանք լեռնակն ի վեր, ես կանչելով, դուն փնտռելով,

Զինք չը գտնանք, հող կը գտնանք, իր ապուած քարըն համբուրենք:

(Առյ. էջ 301-3).

534

Հայաստանցին կ'ըսէ.

Ամառ որ պառկես հովեր.
Ճմեռ կը փցուս (սատկեցնես) կովեր:
Առակս կը նշանակէ. « Ծուլութիւնը ապագայ կեանքի սպանիչն է » :

(Ազգագր. Համելս գիրք VII, VIII, 1901 էջ 457).

535

Տխուր ծուլութեան ներհակ, գեղեցիկ խըրատ մըն է հետագայ առածս,

Ամուսն քար՝
Ճմուան պաշար:

Հարսաւութեան լայն օրերուն՝ փոքրիկ ի-
րերն պէտք չէ արհամարհել. « Աջող և ա-
ռատ ժամանակի ամէն մէկ անկարեոր հա-
մարուած բան՝ նեղ օրի համար խիստ պի-
տանի է » :

(Աղբյ. Հանդես Եռյն).

536

Մեր մէջ երբ մէկը ուտելու պատրաստ է և
գործելու ծոյլ, հայ առակը անոր կը յի-
շեցընէ.

Ոն (ով) ի ճաշ.

Գորգիկն (Գրիգոր) ի ճաշ.

Ոն ի հէջ (պարապ)

Գորգիկն ի մէջ:

(Նոյն Էջ 476).

537

Տոկուն երկարատեւ աշխատանքը հրա-
շալիք կը սաեղծէ: Ալաշկերտցիք լուած են.

Ուշ եղնի,

պուպուշ (գեղեցիկ) կեղնի:

(Նոյն Էջ 477).

538

Կարելի է աշխատիլ և վարձկան չըլլալ.
բայց կարելի չէ աշխատիլ և իր արդար հա-
ցը չպահանջել։ Ալաշկերացին կ'ըսէ։

Անհախ (անվարձ) կ'եղի (կը մինի)
անհաց չ'եղի։

(Կոյք էջ 488).

539

Ծոյլը կը փախչի գործէն բայց ո՛չ հա-
ցէն.

Բան դրին՝ փախաւ.
հաց դրին՝ հասաւ։

(Կոյք էջ 489).

540

Ծոյլը արդիւնաւորին յարգը չի կրնար
գիտնալ.

Բըդող գինայ.
քրթող (ուսող) ի՞նչ գինայ։

Ճիշտ է. « Աշխատութեան դժուարութիւ-
նը աշխատողը գիտէ. և ո՛չ թէ անոր ար-
դիւնք վայելողը »։

(Կոյք էջ 489).

541

**Ապրելու համար պէտք է աշխատիլ, չա-
րաշար կրել ու կռուիլ, այս է եղած մար-
դուս ճակատագիրը։ Առակը կ'ըսէ։**

**Զըգտի՛, ապրի՛,
մ'ընկի՛ մեռի՛ (մի՛ ընկնիր մեռնիր)։
(Նոյն էջ 496)։**

542

**Մահը ամենուն մօտ է, բայց ոչ ոք կը
հաւասայ։**

**Մահ մօտ,
իսան (մարդ) անաւօտ (անհաւատ)։
(Նոյն էջ 497)։**

543

**Աշխատութեան յաղթանակը տոկուն վախ-
ճան ունենալն է. զժրաղղաբար ամէն գործ
երբ աւարտելու վրայ է. անտանելի կ'երեւի,
և այս պատճառաւ առակ է եղած։**

**Ցետին բանիկ (բան-գուրծ),
հոգեհանիկ (հոգի հանող)։
(Նոյն էջ 498)։**

544

**Ժողովուրդը ընդհանրապէս քահանան
շատակեր կը կարծէ. և անոր համար այս
առակը շինած է.**

Սար ու ձոր
իրեցու (երեց) փոր :

**Այս առակի լուրջ իմաստը՝ քահանային,
գաղտնապահ մմալն է:**

(Նոյն էջ 502).

545

**Մայրը իր կարիճը, եարը իր սրախ հա-
տորը և քոյրն ալ իր եղբայրը կոծելու հա-
մար այս երգն ունին.**

Աղքարն է քրոջ սրտին երակը,
Անուշ խօսք մ'ուր խօսի, կ'առնէ մուրատը:
Եկուր, աղքար, եկուր, իմ աղքիրի ջուր.
Սիրուտ չեմ կշտացեր, ո՞ւր գնացիր. տուն:
Սիրուտ մութն իմ նստեր, լուս մին արէ դուն:
Սիրուտ պատն է փլեր, եկու շարէ դուն:

**Դարիպին մահը զեռ աւելի սըրաաշարծ
է և սրաաճմլիկ.**

Աման, աման, իս իսկիւտար անցուցէք,

Սեւ ծովը ճեղքեցէք ճամբան ցցուցէք:
Տարէք իմ հօրս դուռը,

Վար դրէք, պահ մի լացէք:
 Մարիկս ալ ի դուրս բերէք,
 Տարուրած աշուխն լացուցէք:
 Աղբարս ալ ի գուրս բերէք,
 Տամպուռին թելը կըցեցէք:
 Եարուկս ալ ի գուրս բերէք,
 Ետեւէն ծամը քակեցէք:
 Դամը քակին, եարը կու մեռնի,
 Ոսկին քակին, տունը կ'աւըրի:

(ՀՅՈՒՐԻՀԱՅ ԱԿԲԱՅ 475).

546

Սգաւոր մայրը կ'ողբայ իր տաղանդաւոր
 գրագէտ որդին.
 Իմ խէլէմքէր (գրագէտ) որդէկ, խէլէմքէր,
 Խէլէմիտ մատներն է թափեր:
 Խէլէմիտ մատներն է թափեր,
 Տիվիթիտ (թանաք) քովիկն է նեխեր:
 (ՆՈՅՑ Էջ 485).

547

Մայրը կ'ողբայ իր մանկիկը.
 Կագւուն ձագը-տանեն, մարը կու ճչճէ,
 Գիշեր ցորեկ կասկամ կուլի կու կանչէ:
 Կանչէ հէյ, մարիկ, կանչէ,
 Առ խըտար կանչելու ալ ի՞նչ է:
 (ՆՈՅՑ Էջ 487).

Հայ Միտքը

20

ՓՈՓՈԽԱՄՑՈՒԹԻՒՆ, ՀԱՍՏԱՑՎԱԿԱՄՈՒ-
ԹԻՒՆ, ՑԱՐԱՑԵՒՈՒԹԻՒՆ, ՔԱԶԱՄՐՑՈՒ-
ԹԻՒՆ, ԿԱԺԱՐԱԿՈՒԹԻՒՆ:

548

Բաֆֆին իր « Խենթը »ին մէջ կը պատկերացնէ նահապետական արիասիրտ ծերուանի մը՝ Խաչօն. սա կը բանայ իր մեղուանոցին փեթակները, կը դիտէ մեղրը, սակայն շարաճճի մեղուները զիրենք խնամողայն ծերունիին երեսը կը կճեն. տղան իրեն կը մօտենայ, կը դիտէ այդ տեսարանը. հայրը կը հեռացընէ զայն, զգուշացընելով որ մեղուները չի կճեն, չի ցաւցընեն. տղան կ'ըսէ, թէ զքեզ ալ շնու կճեր, քու մարմինդալ չի ցաւիր. և այս պատասխանին մէջ Բաֆֆի կը նկատէ հայկական քաջասրառութիւն մը.

Այդ էր տղուն ալ պատասխանը։ Բաֆ-
ֆի ցոյց կու առյ, որ հայը վարժ է տան-
ջանքներու, հարուածներու, և այդպէս քա-
ջարի կը մնայ նախորդ սերունդը։

549

Մեր նոյն վիպասանը, «Խենթի» համա-
կրելի դիւցազ Վարդանին բերնին մէջ՝ կը գնէ
քաջասրտութեան օրինակ սա խօսքը.

Ով որ ջրի մէջն է մտնում, թրջելուց երկիւղ
չըպիտի ունենայ...

(Խենթը էջ 834).

550

Քաջասիրա անձերէն կը պահանջուի քա-
ջագործութիւն. անոնց ձեռքը ընկած զէնքը
մոգական գաւազան մը պիտի ըլլայ.

Աահմանք քաջաց, զէնն իւրեանց, որքան հա-
տանէ՝ այնքան ունի:

(Խոր. Պատմուք. էջ 46-7).

551

Քաջասրտութեան առաջին օրինակը ազ-
գիս Նախահայրն տուած է, նոյն ինքն Հայկ.

սա չի հնազանդեցաւ Բելայ հրամանին. իր ողորմելի բանակով դիմադրեց, և նախ քան զպատերազմ, ըստ իրեններուն.

Զի կամ մեղութ, և աղյս մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ, ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք:

(Խոր. Պատմ. Էջ 56).

552

Ընդօրինակելի, հաստատակամ և գեղեցիկ քնաւորութեան ախար մը ունինք յանձին Սահակ Պարթեւի : Նախարարները ամէն ջանք կը թափեն, որ հայրապետն Սահակ իրենց հետ միանալով, Պարսից թագաւորին մատնէ հայոց Արաւշիր կնամոլ թագաւորը: Պարսիկը շատ բաներ կը խոստանայ, եթէ մատնէ. ոակայն բնութեան աէր հայրապետը կը պատասխանէ.

Զիանդ վասն սնափառութեան և իշխանասիրութեան չարաբանիցեմ զընկերէ:

(Խոր. Պատմ. Էջ 530-1).

553

Փոփոխամտութեան օրինակ կը համարինք լուսնի կերպարանափոխութիւնը։ Կ'ըսէ առակը։

Լուսինն ասաց առ արեգակն, թէ քո որդին եմ ես. ի՞նչ կլինի, որ մին հանդերձ կարես վասն իմ։ Պատասխանեաց արեգակն, թէ ո՞ր հասակի չօր կարեմ վասն քո, զի օր մի ոչ մնաս ի միոյ չափի։

(Ժողով. Առակ. Վարդամայ էջ 330).

554

Մենք ունեցեր ենք զիւցազներ, մեր պատմութիւնը զարդարուած է առասպելական զիւցազնութեամբ. սակայն ամենէն մեծ քաջազործը, Տրդատն է. զիւցազնութեան, քաջասրառութեան օրինակ, զինքը և իր ծերը կրնանք յիշատակել. իր քաջութիւնները առակի տեղ անցած են, և ժամանակին իրեն համար կ'ըսուէր.

Որ սիզալով աւերեաց զթումբս գետոց և ցամաքեցոյց իսկ ի սիզալ իւրում զյորձանս ծովուց։

(Ագարանեկոն ԺԱ).

555

Սակայն նոյն պատմիչը կը վկայէ, որ այսպիսի զիւցաղ մը մինչդեռ կ'ուզէ բռնաբարել զշքնաղագեղն Հոփիսիմէ, բայց սակայն անկէ կը յաղթուի. հրեշտակային կուսութիւնը կը խրսխտայ, կը զիմաղրէ Տրդատեան դիւցազնութեան. կ'ըսէ պատմիչը

Յաղջկանէ միոջէ պարտեալ վատթարանայր:
(Ագարանգեղոս ԺԵ).

556

Խիզախ սրտի և կորովի ու քաջասրտութեան օրինակ է Սմբատ Մամիկոնիանի սախուքը.

Ո՞ւր էք քաջք, յառաջ մատիք:

Վախտանգ արհամարհելով այս հրաւէրը քաջախիզախ, կը պատասխանէ. « Կաց հարճորդի. թէպէտ և զբազումս ջնջեցեր, սակայն այսօր չպրծնուս ի ձեռաց քաջարանցս ». բայց սակայն ընդհակառակն Վախտանգն է որ զիաթաւալ կ'իյնայ Սմբատայ տէգով: Յովհանն Մանկակունի Սմբատայ քաջազործութիւնը լաւ նկարագրած է:

(Հայապատում Բ էջ 210).

557

Դաւիթ Անհողին, Աղուանաց վրայ իշխելուն, Դուինի Ապիւլ-Ծէլար անհամար գնդերով Դաւթի դէմ պատերազմ կը մղէ. Դաւիթ կը կազմէ եպիսկոպոսներով, քահանայներով, եկեղեցականներով և զինուորներով բանակ մը, կրօնականք ձեռքերնին խաչ ու աւետարան առած կը սկսին պատերազմը, աղօթելով.

Արէ Տէ՛ր, օգնեա մեզ, և փրկեա զմեզ վասն անուանդ քում սրբոյ:

Քաջարար կը պատերազմին և դիւցազնարար կը յաղթեն: Եւ «Արէ Տէ՛ր, օգնեա»ն մեր ամէն ճգնաժամերուն յուսարծարծ սաղմոսն կը դառնայ:

(Մատք. Ռուհ. ԾՊ).

558

Մեր պատութեան մէջ դիւցազնական խիզախ խօսք մը մնացած է, թաթուլ վանանդացիի սա պատասխանը առ Տուղրիլ Սուլիման.

Թէ իմ է զարկածն չէ կենաց:

**Թաթուլ զայս ըստաւ, ու երբ Առվթանը
պայման կը դնէր որ պատերազմի մէջ Ար-
սուրանի պարսից ամերայի վիրաւորեալ որ-
դին եթէ ապրի, կալանաւորեալ Թաթուլն
ալ կ'ազատի իր ճիրանէն. մեռաւ տղան,
որով և Թաթուլ սպանուեցաւ:**

(Արիստ. Լաստիկ. ԺԶ).

559

**Պէշիկթաշլեան իր «Մահ քաջորդոյն» երգով, անուշ խրոխառութեամբ կը բամբոա-
հարէ Զէյթունցին դիւցազնութիւնը. ահա
լեռնորդին կը սկսի իր հայրենասարով եր-
գը.**

Դու զ՞վ խնդրես, մայր իմ անոյշ,
Ե՛կ մի դողար, մօտեցիր հոս.
Անլաց աչօք դիտէ զորդիդ
Ու իւր վէրքերն արիւնահոս:
Խուժից մայրեր թող լան՝ ու դուն
Ուրախ լուրեր տար ի մեր տուն:

(Պէշիկթաշ. Մատենադար. էջ 102).

560

Դիւցազը որ քաջաբար կը պատերազմի,
ու կը նահատակուի, անկարօտ է մահար-
ձանի. կ'երգէ Պէջիկթաշյեան.

✚ Ո՞չ այլ շրփեղ արձանագիր ո՞չ տապան,
Զինգըն մինակ թողուցինք իւր փառքին հետ:
(Նոյեմ Էջ 103).

561

Հայել մինչ կ'ըմբռստանայ թելայ գէմ,
ու պատերազմի կը պատրաստուի, իր մարտիկներուն խրախոյս կու տայ.

Օրինակ արձանասցուք ազգաց և զկնի մնր եկելոց՝
կամակար նահատակել ընդ ապիրատ գոռողաց
դէմ
Յանձանց վերայ և հայրենեաց, կալ ինքնօրէն
ապիկամիս :

562

Քաջ են քաջազունք, քաջագործ են գիւցազունք, սակայն Արարչէն երբ կը բղխի հրաշագործ կորով և քաջութիւն, գեղքնական են Անոր հրաշագօր արարքները. որ ըստ բանաստեղծ Բագրատունիին,

X By H. H. H. 1771 - ms. B. 1. 1. v. 1

Եւ միով տրոփեալ ոտամբն յերկրիս հարաւ՝
շեղեաց ըզգունտն :

(Կոյճ Էջ 116).

563

Քաջը, քաջասիրտը դիւցազնօրէն անձնաւ-
տուր կ'ըլլայ պատերազմին, թագրատունին
Հ. Արսէն, շատ լաւ ըսած է.

Պատերազմ ապագէն քաջաց է կեանք առա-
քինեաց :

(Կոյճ Էջ 338).

564

Դիւցազնական է տան և ազգին համար
անձնանուիրաբար գործել ու մեռնիլն. մեր
նախնի մարտիկները այդ դիւցազնութիւնը
ներշնչած են. կը գրէ Հայկ դիւցազնի բամ-
բռահարրը.

Ի վերայ նահատակեալ, հարց և որդւոց և
ամուսնաց՝

Այսպէս որդիք Թոռգումիս, որդւոց որդիս հեղ-
ցեն զարիւնս :

(Կոյճ Էջ 339).

565

Պատերազմի մէջ վիրաւորանքը վատութիւն չէ, այլ նահատակութիւն քաջարի.

Վէրք մարտից քաջութեան արի լանջաց են նըշանակ:

(Նոյն էջ 402).

566

Երբ հայրենիքի պահանջները կը ստիպեն դիւցազնական անձնանուիրութիւն, մասն պէտք ենք արհամարհել, թէ ոչ ըստ քերթողին,

Որ ըզմահ արհամարհել ոչ գիտէ, չէ նա սերմն չայկայ:

(Նոյն էջ 427).

567

Ինքնին լոկ մարմնական քաջութիւնը, այնքան արդիւնք մը չունենար, երբ զուրկ է հոգեկան արիութենէ.

Զի մարմնոց քաջութիւն՝ ջըլաց կորովք օգնեն ինչ ոչ,

Ուր ոգւցն արութիւն՝ բարք և կրօնք կիրթ ոչ կայցեն հուպ:

(Նոյն էջ 469).

568

Անճարտկի մարդկանց համար , Ալաշ-
կերտցիք ունին այս յատուկ առակը .

Աշխարք արօտ .

մենք մէջ կարօտ :

(Առար. Հանդէս Գիրք VII VIII էջ 456).

569

Անձնանուէր գիւցազնութիւնը միշտ նպա-
տակ մը ունի . ուակայն երբ նպատակին
հասնելու յայս չի կայ , Ալաշկերտցին յա-
տուկ առածովս կը զղջայ .

Աման , աման , տուր ինձ իմ գտակ .
որ պտի տէր (պիտի տայիր) ինձ պէտք չէ էն պսակ

Պսակէն կը հրաժարի , կը գոհանայ իր
պարզուկ գաակով :

(Նոյն էջ 456).

570

Գործէն հրաժարիլը քաջութիւն չէ , գիւ-
ցազնական տոկունութեամբ յարատեւու-
թիւն պէտք է : Առակը կ'ըսէ .

Մուրուս թողել զօլա եա (գիւրին է) ,
ամա , կնտել (ածիլել) չաթին ա (գժուար է) :

Կը մեկնուի. «Գործէ մը հրաժարիլ,
զայն չկրնալ աջողցնելու համար, աւելի
ամօթալի է, քան բնաւ չ'սկսել»:

(Նոյե Եջ 474).



ԳԼՈՒԽ ԺԶ.

**ԱՆՁՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԱՊԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ԵՐԱԿԱԳԻՑՈՒԹԻՒՆ:**

571

Անհատներ, ըլլա՞ն գիտուն, ճարտար,
հարուստ, քաջ գիւցազն, սակայն եթէ ա-
նոնք մի միայն լոկ անձնականութեան հա-
մար աշխատին և ոչ յօդուա ազգին, Պատ-
կանեան հրատապ հայրենասիրութեամբ կը
թքնէ անռնց երեսին.

Թըքել ենք քու ալ, մըստիդ (կամ թըրիդ,
գըրչիդ, լեզուիդ, ձեռփիդ, ուսմանդ) ալ վըրան:
(Նոյն էջ 159).

572

Բոտ բանաստեղծ Պատկանեանի, Բաֆֆի
երբ ողջ էր, կը հալածուէր, ատելի էր.
Հայը անոր երախտազէտ չէր, մեռնելէն վեր-
ջը պաշտելի եղաւ ան. կ'երգէ.

Հայքըս, որ հոգւով վաղուց ենք մնոած,
Միշտ դիակներ ենք մեր կեանքում սիրած.

Սուտ չէր խօսքը մեր ասած պապերէն –
Գընա դու մնո՞ր, արի՞ քեզ սիրեմ:
(Նոյն էջ 248).

573

Եւ «Հարիւրամեակը» վերնագրով քեր-
թուածին մէջ, ընդհանուր առմամբ ցոյց
կու տայ որ,

Կիտուն մարդոց մենք խեւ ասինք,
Հալածեցինք մեր մէջէն,
Տայմա վըրան պամպասեցինք,
Վազ պերինք մեր եախայէն:

(Նոյն էջ 318).

574

Բաֆֆի, անձնական շահուն՝ անհոգա-
բար անձնատուր կը համարի հայութիւնը.
անփոյթ միութեան սուրբ գործին.

Ամեն մարդ իր գլխի տարտն է քաշում, ա-
մէն մարդ իր անձին համար է մտածում. ուրի-
շին ինչ լինում է, թող լինի. նրան ինչ հոգ,
երբ ինքը հանգիստ է, երբ իր մազին չեն դիպ-
չում: Բայց չեն իմանում տիմարները, որ «մէ-
կը ամենի համար է, իսկ ամէնը մէկի համար»:

(Խենք էջ 67).

575

**Անձին շահը և փառքը ամէն բարիք ուաքի
տակ կ'առնէ և ամէն կեղծիքի խունկ կը
ծիչ։ Այս առթիւ կարելի է իբրև ընդհա-
նուր ճշգրիտ հայելի ցոլացնել Պարոնեանի
սա պաղպաջուն տողերը, ուր ամէն տխուր
դասակարգ կրնայ տեսնել իր պատկերը։**

**Մոռնալու չէ որ ապրելու համար ամեն մարդ
իրեն ընկեր մը ստեղծելու հարկին մէջ գտնուած
է. խմբագիրներ որ ձմեռուան ածուխ զնելու
համար լուսինեան կ'ստեղծեն. երեսփոխաններ
որոնք իրենց շահուն համար ամեն օր նոր ի-
րաւոնքներ կ'ածեն. բանաստեղծներ որ օր մը
չեն կարող ապրիլ եթէ իրենց համար գովեստ-
ներ չքաշեն իրենց բարեկամներու բերնէն. գա-
տաւորներ որոնք արդարութիւնը չտեսնելու հա-
մար կուրութիւն ի լոյս կ'ածեն. վաճառական-
ներ որ ժամուան. մը մէջ ստութեան երկու հա-
զար հաւկիթ մէկէն կը ձգեն. գրավաճառներ որ
օրացոյց մը ծախելու համար ճարտասանութեան
ստեղծող կը հանդիսանան. խաբեբաններ որ խա-
բելու համար իրենց աշերէն այնչափ արտօսր
կը թափեն, որուն վրայ անգղիական տէվաս-
րէյլըն զրահաւոր նաւը կրնայ ճամբորդութիւն
ընել. երգիծաբաններ որ ոչ թէ ապրելու, այլ
չմեռնելու համար իւր ընթերցողներուն ծիծա-
ղին արարիչ կ'ըլլան. գրագէտներ որ կտոր մը
հացի համար ժամուան մը մէջ իրենց ըղեղէն**

իմբագիր, դասատու, մատենագիր, թարգմանիչ
կը հանեն... վերջապէս այս ամէնը չէ՞ որ ստեղծեց Ազգային լույսերը:

(Արտային շոյեր 188-9).

576

Պարոնիանի յիշեալ գրքին մէջ, ապերականաւ աշակերտներու համար կայ սա հեղնական առղերը.

Եթէ Մեղուի պէս ուրիշ աշակերտներ ալ ունինք, կը փափափինք, որ անոնք կիւրեղէի առջինեներուն և կամ Բեթղեհէմի զաւակներուն հետ մեկտեղ ծնած ըլլային:

(Նոյն էջ 212).

577

Հ. Ալիշան երբ Ռաֆայէլեան վարժարանի աւարտավարժ աշակերտներուն կ'ուղղէ իր հոեառական յորդորները՝ յայտյայնի կ'իմացընէ, որ Միիթարեան դաստիարակի նպատակը երախտագիտութիւն պահանջել չէ, վասն զի.

Անխառն յամենայն երկրաւոր յուսոյ գործէ զազգասիրութիւն մեր, և քաղցրացուցանէ մեզ

Հայ Միտք

21

զծախելն և զծախիլ՝ զի միայն զազգ մեր շահեսցուք։

(Բագմ. 1848. էջ 166).

578

Հ. Ալիշան ապերախտութիւն է կ'ըսէ մոռնալ մեր ազգային պարծանքները։ Մեր նախնաց փառքերուն ապերախտ չըլլանք։

Ապերախտութենէ մեծ մեղք ու գարշելի մոլութիւն չկրնար ըլլալ։

(Բագմ. 1849 էջ 131).

579

Եւ Եղովբոս կը զրէ. «Գայլը երբեմն ոչխար մը կուտէ անանկ որկրամոլութեամբ որ մէկ սոկոր մը որկորին մէջ կը մնայ. շատ ջանք լրաւ որ օգնութիւն մը կտնէ հանէ, չըկրցաւ, ուստի որչափ որ աղաչեց ուրիշ կենդանիներուն, փուճ ելաւ. վասն զի ամէնքը կը թողուին անանկ՝ որ կանչէ, և մէկը ցաւակից չեղաւ իրեն ցաւին. օ՞ի եղաւ կրսէին, թող տանջուի իր անյագութեամբը։ Միայն կռունկը անսր անսւշ իսուքերէն խարուելով՝ ուզեց օգնութիւն քնիել և

իր երկայն կտուցքը խօթեց գայլին բերանն
ու սրկողին մէջին քաշեց հանեց սսկորը,
որ կը խզէր զգայլը։ Յետոյ կոռւնկը հա-
տուցում ուզեց այս մեծ բարերարութեանս
որ գայլն իրեն իոստացեր էր հատուցանե-
լու։ Աս բանիս գայլը պատասխան տուաւ
ինդալով. բարեկամ, զուն չես մաածեր ին-
ծի հատուցում ընելու. որովհետեւ կեանքը
ինծի պարտական ես. երբոր կտուցքդ իմ
բերանս էր՝ կրնայի վիզդ փրցընել։ Գնա
ապերախս, շատ երանելի ես որ իմ բրկէս
դուրս հանեցիր կտուցքդ։ Թարգմանիչը այս
առթիւ՝ կը գրէ հետեւեալ առակը.

Ինչ որ ընես ապերախտին,
Բան չերեւնար իր ծակ աչքին։
(Եգովոսի առակը Էջ 95)։

580

Վաս նախանձը կը պղծէ ամեն սրբու-
թին։ մեր պատմական ապերախտութինը
ազգային պատմութեան մէջ արձանագրուած
է սեւ, մրուա տառերով։ անիրաւ ու ահոելի
ոճիրներ՝ որոնք, փառասիրութենէ և զզուելի

նախանձէն ծնունդ առած են։ Հիանալով և սքանչանալով կը կարգանք Մամիկոնեան Մուշեղի քաջագործութեանց նկարագիրը։ Ի՞նչպէս վարձատրուեցաւ այդ գիւցազը։ Բուզանդ պատմիչն կը գրէ, թէ Վարազզատ թագաւորի սնուցիչն թատ, նախանձելով Մուշեղի վրայ, զանազան զրպարտութիւններով Մուշեղը թագաւորին ատելի լրաւ ու դարաններով զայն սպանել առւաւ։ Մուշեղ մեռնելու ատեն կը բացագանչէ։

Ի վերայ բազում իմոց վաստակոցն արեան և քրտան, և սլաքօքն զքիրոն ջնջելոյ, այս հատուցումն եղեւ ինձ...

Երախտաւորները ապերախտաւթիամբ երբ վիրաւորուին, կարող են իբրեւ առակ յիշել Մուշեղի այն սրտաճմլիկ խօսքը։

(Բուզանդ Ե. 19).

581

Պէշիկթաշլեան իր « Բողոք » վերնագրով մէկ քերթուածին մէջ ցոյց տուած է քնզօրինակելի երտխտագիտութիւն մը, դէպ ի իր Միսիթարեան վաստիարակները, զոր կը պաշտէ անկեղծօրէն. կ'հրգէ.

Ցորչափ շընչեմք զօդ ի ուընգունս,
խաղայ արիւն մեր յերակունս,
Եւ ցորչափ զայս. երգէ Պըւէտ,
Միսիթարեանք կեցցե՞ն յաւէտ:

(Պէյկ. Մատեն. Էջ 44).

582

Անձնականութիւնը, անձին շահը պաշ-
ազին համար կարելի է առակ ընել Աբո-
վեանի սա խօսքը.

Ամէն մարդ հէնց իր ձին ա քշում. էլ առաջը
մոլիկ չի անում՝ թէ ո՞վ ա կանգնած:

(Վէրք Հայաստանի Էջ 36).

583

Նման օրինակներ են նոյն վիպասանի սա
խօսքերն.

Ուրաքն իր դեհն ա տաշում. ծառն իր տա-
կին շվաք անում:

Զուրն իր ձկանը պահում. հաւն իր ճուտին
մաւզայիթ կէնում:

(Նոյն Էջ 36-7).

584

Զուա, անկեղծ և գործօն ազգասէրին՝ ժո-
ղովուրդը ինչո՞ւ երախուագէտ շըլլայ.

**Մէկ ազգի աչքը բաց արա՛. դուզ ճամփէն որն
ա, էն ճամփովը տար. սար ու ձոր մի՛ քցիլ.
դու նրան քո սէրը ցոյց Պոուր, տեսնեմ՝ թէ սա
քեզ չի՛ սիրիլ:**

**Սակայն գժբախտաբար մեր ազգին ճակ-
տին զարկեր են ապերախտութեան զրոշմը.
և ինչու. անհատականութիւնը կրնայ ապե-
րախտ ըլլալ, բայց ոչ հանրութիւնը. մենք
լաւ առաջնորդենք, վարձատրութիւնը, ե-
րախտագիտութիւնը իր ոտքով կու զայ: Կը
գրէ վիպասանը. «Ճամփէն գտիր, առուն
սրբիր, բար ու քօլ զէն ածա՛, աեսնիմ՝
թէ ջուրն ինքն իրան կդայ, թէ չէ՛:**

(Նոյն էջ 88).

585

**Հայ դրիշը, հայ քնարը մխիթարութիւն,
վարձատրութիւն և երախտագիտութիւն . չի
կրնար երազել: Յովհաննէս Քուչուբէգեանց
դառնացած սրասով կ'ողբայ գրական մշակի
վաստակը. կ'երգէ և կը հառաշէ:**

Գրիր - փոխարէն պիտի ստանաս
Քանի սեւ շայի անարգ հացի գին...
Այս է քո վարձը, այս լաւ իմանաս,
Թէկուզ ճնշուի, մաշուի քո հոգին:

(Սոխակ Հայաստանի էջ 20).

586

Եւ յուսահատ կը հարցնէ.

Բայց քո տքնութեան ինչ վաստակեցիր...
Ումից գոհութեան գէթ խօսք լսեցիր.
Այս. ոչ ոքից... յետոյ իմացար,
թէ ինչպէս մեծ մեծ կորուստ ունեցար:
(Կոյճ էջ 21).

587

**Ապերախտներուն կարելի է յիշեցլնել Աւ-
լաշկերացիներու սա առակը.**

Կաթն ի կթոց (կովկիթ),
հորթիկն (հորթ) ի փողոց:
Մեկնութիւնն է. « Բարիքը ստանալէ յե-
տոյ՝ բարերարը արհամարհել »:
(Ազգ. հանդէս Գիրք VII VIII 1901 եջ 408).

588

Ապերախտին պէտք է յիշեցլնել.

Նստեմ գոգդ.
Ճողեմ (փետտել) մուրուքդ:
Մեկնուած է. « Մէկին խնամքը, բարի-
քը՝ վայելելալ մէկտեղ՝ անոր մեծ վսասներ
հասցընել »:
(Կոյճ էջ 475).

589

Առակն իսկ հաստատած է որ բարերարութեան պսակը, փշու ապերախտութիւնն է։ Ալաշկերացիք կ'ըսեն.

Աղէկ՝ վատին。
վատն՝ աղէկին։

ՄԵԼՆՈՒԹԻՒՆՆ Է. « Բարութիւններուն միշտ վատութիւններ կը փոխարինուին փոխադարձաբար » :

(Կոյք Էջ 487)։

590

Քաղաքագէտին. յենարանն է ապերախտութիւնը։ Ապերախտ էր Բիւզանդիոնը։ Ներսէս մեծը յիշելով իր ազդին բիւզանդական կայսրութեան համար տածած մտերմութիւնը, աջակցութիւնը և միանդամոյն յիշելով նենդաւոր ապերախտ բիւզանդացւոց դիւանագիտական գարանները, կը հառաչէ.

Ապերախտ Բիւզանդիոն, քո վարմունքը մաններելի կը մնայ իմ սրտում... Դու վատութեամբ վարձատրեցիր իմ հայրենիքի մատուցած ծառայութիւնները...:

(Ասմուշէ Էջ 292)։

ԳԼՈՒԽ ԺԷ.

**ՄՆՈՂՔ· ՄԱՆՈՒԿ· ԿԻՆ· ՊՍԱԿ· ԱՂՋԻԿ·
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ· ԾԵՐՈՒԹԻՒՆ·
ԹՄՐՈՒԹԻՒՆ:**

591

Ընկճեալ ազդին ամենէն կարեւորը և կեն-
սականը՝ է խիզախ փողը, որ չի թողուր քը-
նանալ, թմբրիլ անաարբերութեան մէջ։ Մեր
վիպասանները և բանաստեղծները, ըմբռո-
նելով ընդլզող ձայնին մագնիսականութիւ-
նը, անդադար սրոտացին արթնութիւն և
սթափեցացին մայր Հայաստանը իր խորունկ
քնէն։ Գամառ Քամիպա երգիծանքով կ'ար-
թրնցընէ Հայութիւնը.

Դէ՞հ, իմ պառաւ մայր Հայաստան։

Քընէ՛ անոյշ ու անդորր։

Այսպէս յաւէրժ քեզ կը կարդան

Ազգ ու ազինք օ՛ր օ՛ր օ՛ր...

(Պտաճառութեան էջ 78)։

592

Առած է, որ երբեմն Հոմերն ալ կը քընանայ. այսպէս նաև ամէն մեծ մարդ կրնայ ունենալ թմրութեան թոյլ ժամեր. Թափփի հեաւեալ սովորական խօսքն է լսած.

Ամենամեծ մարդիկն անգամ ունենում են խոշոր թուլութիւններ :

(Խեթը Էջ 229).

593

Նահապետին համար թմբրեր է հայութիւնը. իր քնարով զայն կ'ուզէ արթնցընել. Հայ ազգ, հայ հանճար, քունն է զքեզ բռներ. Քուն թանձր և երկայն. բայց ոչ մահ անյոյս. Ո՞վ արթընցընէ զազգն իմ ի նոր լոյս. Ես հազարներ տամ այնոր, տամ բիւրեր,

(Հայութի Էջ 344).

594

Եւ կը յորդորէ.

Ո՞վ, ո՞վ կանգնէ զքեզ հանճար հայրենի...
Ե՛լ, կանգնէ՝ դու զքեզ, զաւակ ես երկնի.
Լոյս ծազէ մըթէդ, Ե՛լ կանգնիր ի վեր.
Հերիք քընացեր.
Գիշերու է անցեր....:

(Կոյճ Էջ 344).

595

Արտաշէս Բ. միշտ նախանձելի կեանք
մ'ունեցաւ, թէեւ զժբաղդաբար յեսոյ ներքին
անհաւասարմութիւնները պղտորեցին անոր
արքայական և ամուսնական փառքն ու
վայելք : Պասմութիւնը բանասաեղծական
խանդով կը նկարազրէ անոր հարստութիւ-
նը. ոսկի, մարգարիտ և երջանկութիւն կը
աեղայ, երբ իրեն հարս կու գայ Ալանաց
աշադեզն կոյս Աթթինիկ .

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեան Ալտաշի-
սի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Ա-
թինկանն :

Խորենացին կը զրէ. «Փանզի սովորու-
թիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայու-
թեամբ ի գուռն տաճարին հասանել՝ զա-
հեկանս ճապաղել իրեւ զհիւպատեանն
հոռվմայեցւոց. սապէս և թագուհեացն յա-
ռագաստին՝ մարգարիտ» : Պերճագեղ հարս-
նութեան միակ օրինակ կարսղ ենք բերել
Գողթան երդիշներու այդ հարսներդն :

(Խոր. Պատմ. Էջ 266).

596

Մեր առաջնորդներու փողը որբան ալ ուժով կսույ, սակայն թմբութիւնը շատ անգամ մեռելական ըլլալսվ, ի զուր կը յոգնին լեզուները. Խորենացին աւաղելով. իր ժամանակուան բարքերը, զառնազին ափսոսալով նախարարական գունզին ոճիրը և ապերախտ անտարերութիւնը, վերջապէս յուսահատելով, կ'ըսէ.

Դադարեսցէ բանս, որպէս աշխատութիւն կը-
րեալ՝ յականջս լինել խօսեցեալ մեռելոց:
(Խոր. Պատմ. Էջ 372).

597

**Ծնողքը նուիրական է, ծնողասիրութիւնը
պարասականութիւն. Նոյն իսկ թոշունները
մեզի ծնողասիրութեան օրինակներ են. կը
դրէ առակախօսն վարդան.**

Արագիլն և ձայեկն և ոպոպն գծերացեալ հայրն
իւրեամսց դարմանեն, սնուցանեն և ծառայեն,
մինչեւ մանկանայ կամ մնուանի:

Կը մեկնէ առակախօսը. « Թէ պարս է
մեծարել և զարմանել զծնօզօ և հնագան-
դիլ » :

(Ժողով. Առակ. Վարդաբեյ 229).

Կանանց մասին Եզրվբոսը սա առակը կը պատմէ. « Երիկ մարդ մը սկսեր էր հալիւրնալ, և կը նայէր որ հաճելի ըլլայ իր երկա սիրելի կընկառոցը, սրոնց մէկը պըզտիկ էր ու տարիքը քիչ, իսկ մէկալը տարիքը առած տեսքն ալ գացած էր։ Ասոնք կ'ախորժէին որ էրիկնին իրենց յաշմարցընեն, և երկուսն ալ իրենց ախորժակին հետեւելով, մեծ հոգ ունէին որ փոփոխ սանարեն անոր գլուխր։ Բայց մարդուն բանը շատ դէշ եղաւ, վասն զի պզտիկ կինը երբ անոր գլխուն վրայ կը տեսնէր ծերութեան նշան ճերմակ մազ, բարկանալով կը փետաէր որշափ որ գտնէր։ Մէկալ կնիկն ալ երբոր կը տեսնէր սեւ մազ, բոլորը կը փետաէր։ Եւ այսպէս քիչ ժամանակի մէջ մարդուն գլուխը կնտակ դարձաւ »։ Եզրվբոսի առակներուն թարգմանիչը այս պատմութենէն կը հանէ սա առակը, թէ.

Վայ որ մատնէ զինքըն կանանց,

Հանեն յիւրմէ խելս ընդ հերաց։

(Եզրվբոսի առակը էջ 198)։

599

Եզնիկ Ծերութեան համար պրած է.

Ծերութիւն և հիւանդութիւն պատերազմ է ժամանակեայ. զի մարմնոյ զօրութիւն պակասեալ է, վտանգն բազմացեալ, և հանգիստն սակաւ, և կամ բնաւ իսկ ոչ, և սատանայ բորբոքէ զբոց ցասմանն, և ատել տայ զկարգն, հայհոյել զառաջնորդն, տըրտնջել զեղբարցն:

(Եզնիկ Էջ 308).

600

Հեթանոս Խիկարը կը խրատէ կնիկներէն զգուշանալ.

Որդեակ մի համբառնալ զաշս քո տեսանել զկին գեղեցիկ յունել և ծարուրել, ցանկանայցես ի սրտի քում և թէ տացես նմայ զամենայն ինչս քո, առաւել ի նմա ոչ ինչ գտանես, այլ դատապարտիս ի յասուուծոյ և ի մարդկանէ, քանզի նման է նայ գեղեզմանի որ ի վերոյ գեղեցիկ լինին և ի ներքոյ լի ժանայհոտութեամբ և ոսկերաւք մեռելոց:

(Խիկար Էջ 11).

601

Խիկար իր որպւոյն խորհուրդ կու տայ.

Որդեակ մի խնայեր զորդիդ քո ի ծեծ, զի

ծեծ մանկանն այնպէս է. որպէս աղբ ի պար-
ուիզի:

(Նոյն Էջ 18).

602

Կ'ըսէ զարձեալ.

Փորձեայ զորդին քո ի քաղց և ի ծարաւ. և
եթէ կարող իցէ, ապա տուր զինչս քո ի ձեռին
նորայ:

(Նոյն Էջ 45).

603

Լինոջ առջեւ պէտք է գաղանապահ մը-
նալ, առակ ու պատմութիւն կը հաստա-
տեն կանանց անգաղտնապահութիւնը. ի-
մաստունն խիկար կը պատուիրէ.

Զգաղտ բան քո կնոջ մի յայտնել, զի տկար
է և փոքրոզի և նայ յայտնէ կարեւորացն և
դու արհամարհիս:

(Նոյն Էջ 48).

604

**Տղոց պարզ ու նահապետական խրատ
մըն է խիկարի սա պատուէրը.**

Որդեակ սիրեաց զհայր քո որ ծնաւն զքեզ և

զանէծս հաւր և մաւր քո մի առցես զի ի բարութիւն որդւոց քոց խնդասցիս:

(Նոյն էջ 49).

605

Վիպասան Աբովիեանը՝ ծերերու համար ըստած է:

Խաչը գիտենայ՝ էս հալեւորներն ու պառաւները քանի մնձանում են, խելքըները էլ հետըները կորցնում:

(Վերջ Հայաստանի էջ 15).

606

Նոյն վիպասանը ծերերու դէմ ունեցած ատելութիւնը զեռ առաջ մղելով, կը յանդրանի ու կ'ըսէ. «Մէկ կորչում էլ չեն էս անատամ հալեւորները, էս ծերերը», պատճառո... «որ մենք գինջանանք, մեր քէփինայինք»: Մերերու մասին սա սովորական զրոյցն ալ կը գործածէ.

Իրանք ջանից ընկել են. իրանց ջահելութիւնը մոռացել, ու չեն էլ ուզում, որ մենք էլ ա, մեր օրը քաշենք,

(Նոյն էջ 25).

607

Հարազատաց սէրը հրեշտակային է, վայելք և երկնային հեշտանք. Բագրատունին Հ. Արսէն հիանալով կ'երգէ այդ սէրը.

Ո՞հ որպիսի սէր սըրտից և միամիտ մտերմութեան

Աղապատանք և համբոյրք տիրեն յօրհնեալ ազգատոհմին,

Որպիսի գութ և խընամք առ միաբուն ազանց սերունդ.

(Հայկ Դիհցագն Էջ 378).

608

Սուրբ Գիրքը կը պասմէ Գարեհ լժադաւորի երեք պատանի սենեկապաններու խմասանալից խօսքերը։ Մին կ'ըսէր, յաղթող ու զօրաւոր է գինին, միւսը՝ թագաւորը, իսկ երրորդը՝ Զօրաբարէլը՝ կը պնդէ թէ «Յաղթող և զօրաւոր են քան զամենայն կանայք»։ Այս երրորդի խօսքը ընդունելի կ'ըլլայ. ան կը մեկնէ իր խօսքը. կը հարցնէ. «՞ է որ յաղթեալ ունի և տիրէ ի վերայ ամենեցուն։ Ո՞չ ապաքէն կանայք»։ Եւ այս համազումը նոյն իսկ հայ

Հայ Միաբը

22

ՀԵքիաթներու մէջ կ'ապրի : Արուանձաեան
իր « Համով-Հոտովին » մէջ կը նկարադրէ
« Բատիկան և խան Բօղու » հեքիաթը, ուր
բանդէտ մարդու մը բերնէն կը լսուի թէ.

Մարդ կնիկով կը յաղթուի, չանավարը գի-
նիով.

(Համով-Հոտով Էջ 128).

609

Ազգականութիւն՝ մօաաւոր կամ հեռա-
ւոր, երբ արիւնը, հարազատ պապենական
մենոյն արիւնը երակներուն մէջ կը տրո-
փէ, անոնց սէրը կոյս է և անկեղծ . Ակնցի
հայը կ'երգէ.

Եղբայրն է քրոջ սրտին երակ, անոյշ խօսի
ու տայ մուրատ :

Եղբայրն անոյշ թէ եղբորդին . երկուքը մէկ
կու նըմանին :

(Կոյճ Էջ 303).

610

Պսակի, հարսնութեան երգեր, հայ հանդի-
սականիերու բերնին մէջ շատ են . կուսական
պարզութիւն, անճուռմ սիրունութիւն ունի

այդ երգերու տպաւորութիւնը։ Մոկացիք
պար բռնելավ կ'երգեն այս հարսներգն։

Սիրող պառկեր մէջ խոտնոցին.
Զեռնիկ ծոցին ափն երեսին։
Խաբար տարէք մեր զոքընչին,
Աղջիկ գընաց խետ կըտըրճին։
(Նոյն էջ 306).

611

Կը հասնին Մոկաց հարսներ, երկնից
առաղեր. գուստնը անոնց կը հրամայէ.

Ձարկէք խաղցէք, կընկտիք, տըղէք,
Փաղցր ու բաղարջ, խունկ մոմ խանէք,
Տէրտէր կանչէք գայ բուրվառով։
Պըսակն օրհնէ Աւետըրնով։
— Աստուած բարի վայելում տայ.
— Աստուած մէկ բարձի ծերացուցէ։
(Նոյն էջ 207).

612

Հայը՝ փափկիկ, գեռաբուսիկ կոյս աղջ-
կան օրրանը օրօրելուն, կ'երգէ անոր ապա-
գայ արժանիքը.

Աղջիկ ունեմ հունարի,
Գլխին ունի ջունարի.
Աղջիկ ունեմ հունարի,

Բոյլ սալք ու չունարի:
 Աղջիկ ունեմ հունարի,
 Տալ չեմ հազար թումանի,
 Գլխին ինչքան մազ ունի,
 Ենքան իլթիմազ ունի.
 Բուրդ բերէք բաժինք անի,
 Ուզու բերէք բարցի տանի,
 Գեղով կգան խնամի,
 Տալ չեմ աղջիկս տանի:
 Որ խնամին քեզ տանի,
 Բաս քու մէրն ի՞նչ անի:
 Ով կարայ որ քեզ տանի,
 Իր մօր ճեռից դուս հանի:

(Ազգագր. Հանդես Գիրք XI էջ 41).

613

Հայ գուսաններ հարսերու, աղջիկներու
 համար շատ անմեղուկ ու պատկառուկ եր-
 պեր նուիրած են.

Ես զուշ եմ թեւս գեղին,
 Ման կգամ եարիս գեղին,
 իմ ջանս զուրբան կտամ:
 իմ եարիս ցաւող տեղին:

(Նոյն էջ 48).

614

Վիճակահանները աղջկանց համար եր-
 պած են.

Համբարցըմը գալիս ա,
Ծաղիկը ցնծալիս ա,
Համբարցըմ կանչող ախչիկ,
Զէնդ ծլվլալիս ա:

(Կայք Էջ 52).

615

Գործի ժամանակ թմրտթիւնը, թուլութիւնը արդինքի կորուսա վասնութիւն է. այդ պարագային ալաշկերտցին կր յիշեցընէ առակո.

Չուր մի (մինչեւ) Շուշան զարդըրւի.
Ժամերը կ'արձեկւ (կ'աւարտի).

Այս է առակիս պատմութիւնը. «Անի քաղաքին մէկ թաղը հայ ազնուականուհի Շուշան օրիսրդի ասպարանքը կը գտնուի եղեր, ուրկէ բաւական հեսի էր եկեղեցին. Ախուրեանի միւս կողմը. Օրիսրդ շուշանը շափազանց եկեղեցասէր և իբրեւ Եւայի թոռներէն մին՝ չափազանց պճնասէր էր: Ամէն ատեն երբ պատարագին կ'երթար՝ նախ իր արդուզարդը կ'ընէր, և աղա գուրս կ'ելնէր: Հանդիսաւոր օր մ'ալ Շուշանը սովորութեան համաձայն, սկսաւ արդուզարդը. և

այս անգամ աւելի գեղեցիկ, օրուան հանդէսին համապատասխանելու համար, ու ճամբան ինկաւ, սովորականէն քիչ մը ուշ։ Եկեղեցին հասած ատեն ժողովուրդը արդէն սկսած էր ցրուել, ժամերգութիւնը աւարտած էր, ու Շուշանը բնականաբար զբրկուած։ Կը նշանակէ նաեւ—աւելորդ զբաղումը կարեւոր գործերէն կը զրկէ մարդս»։
(Արդր. Հանդես Գիրք VII VIII 1901 էջ 479).

616

Հայաստանի բերանը, աղջիկներու մասին մշատ է բարի խօսելու. առակով իսկ շարչարուած է անոնց նշանակութիւնը. և ինչո՞ւ, վասն զի տան ապրանք չեն, այլ օտարին.

Աղջիկ ա.

Էլու (ուրիշ) պատ ա:

Մեկնութիւնն է. « Աղջիկները ուրիշների տան շինութեան համար են, և ոչ իրենց հօր տան » :

(Նոյն էջ 487).

617

Աղջկանց և **կնիկներու** համար, **հայ** առակը չտգեր շողոքորթ երեւնալ . համարձակութեամբ կ'ըսէ.

Ինչքան օձ կայ տտան
Ենքան ֆէլ (խորամանկութիւն) կայ կնկան.

Մեկնութիւնն է. «**Կնոջ հնարագիառւթինը շարագոյն** և **տեւական** է, **օձին թունառբելու յատկութեան** չափ, **իսկ աղջկան աւելի** » :

(Նոյն Էջ 492).

618

Այր և **կնկան միջեւ ծագած կոիները** տեւական չեն, **այս պատճառաւ հայաստանցիք ըսած են.**

Խրիկ կնիկ կոռւեցան,
Խեւ զիտցաւ թէ բաժնուեցան:
(Նոյն Էջ 492).

619

Բայց լաւ է սր

Կնիկ արծւու ձեռ ընկնի՝
ու (վատ) մարդու ձեռ չ'ընկնի:
(Նոյն Էջ 494).

620

Կինը զկին կը ճանչնայ և կրնայ խաբել.
և ասոր համար ըսուած է.

Կնիկ կնկան սատանայ,
կնիկ կնկան քահանայ :

(ՆՈՐԵ Էջ 494).

621

Ծերերը օրհնած շրթունքով երիտասար-
դաց կ'ըսեն.

Հալիս (վիճակիս) տիրանաս (հասնիս),
Տարդիկս (ցաւս) իմանաս :

(ՆՈՐԵ Էջ 494).

622

Հայ հարսնեւորներու սազերը և նուա-
գարանները հարս ու փեսի համար շատ եր-
զեր կ'երզեն, շատ մաղթանքներ կը ինկեն.
Փեսան շրջապատուած աղջիկներէ և մանչե-
րէ՛ կը տեսնէ անսնց պարը, կը լսէ անսնց
երզը.

Ելիր բազմէ, թագւոր աղբար,
Որ քեզ գովեմք գլխուկ ի վար,
Անկէց զքու մազերդ ըսեմք,

Որ սրմայի թել նմանի:
 Անկէց գքու երեսդ ըսեմք,
 Որ լուսունկի կալ նմանի.
 Անկէց գքու աշերդ ըսեմք,
 Որ հրեղէնի բալ նմանի:
 Անկէց ըսեմք ակռաներդ,
 Որ մարգարտի շար նմանի.
 Անկէց գքու պօյըդ ըսեմք,
 Որ չընարի տալ նմանի:

Փեսայի հարսնեւսրք, հարսին առնը գայլ,
իր գավին հարսի որ զարս զայ.

Ման եկուր աղւոր, ման եկուր,
 Դէպ ի մեր տուն ի դան եկուր.
 Աղջիկ, քեզ ո՞ր մարն է բերեր:
 — Ան թուլս աշվի մարն է բերեր,
 Մարն է բերեր մեզի համար
 Մինք ենք եկեր քեզի համար:
Երկաւշարթի հարսը ձիսվ ժամ կը բերուի,
հարսնիքսյեր հարսը շրջապատած
կ'երգեն.

Եկուր աղւոր աղջիկ, հարս եղար մեզի:
 Եագութ, զմրութ, անզին քար եղար մեզի.
 Ձեռք մը լաթ ենք բերեր, վրեկդ անցուր,
 Քեզ տանել եմք եկեր, ծնողքդ լացուր...
 Որպէս խետիմով է, զուն մեզ խնդացուր,
 Եկուր աղւոր աղջիկ, հարս եղար մեզի.
 Աղջիկ մը կը տանին ալով ու լալով,
 Գլուխն ալ է փաթտած վարդեզոյն շալով.

Մազերն ալ է հիւսած սրմայի թելով.
Զեռքերն ալ կարմրած ձինտի հինայով:
Մի լար աղւոր, մի լար կուլաս ի՞նչ կ'նես.
Սիրուն, դու մօրմէդ չի զատվիս, հապա ի՞նչ
ընես:

Կէսուրը իր փեսայ-զաւկին ճակաար և
հարաին աշուլները համբուրելով, կ'ըսէ.

Ոսկի թագիկ
ի ձեր զլխիկ.

Օրեր շատկեկ իմ հարսնուկիս,
Հազար բարի իմ թագւորիս:

Հարանից ու պար երը կը փոխուին սուզի
կոծի՝ զոքանչը կ'ողբերգէ.

Ինչո՞ւ կուլաս խեղճուկ, ողորմուկ,
Սիրականդ կ'ուզես փափուկ.
Սիրականըդ ան ճամբով են տարեր,
Ուր ան ճամբուն մարդ չէ դարձեր,
Ո՛չ ան ճամբուն ճամբորդն է դարձեր,
Ո՛չ ան ճամբուն տէրն է խնդացեր:

Մեռնողին մայրը հառաշակոծ լալօն մ'ու-
նի.

Լրակ ինկեր այգիներուն պարերը,
Երթաք, ըսէք. Թող չի բերեն մարերը.
Որուն զառն է մեռեր, որուն ընկերը:
Եկու զառնուկ, եկու, ուր ես մնացեր.
Ել ի բարձըր լեռը, դուրսն ես մնացեր.
Չի կայ զալու ճամբայ, հո՞դ ես մնացեր:

**Եղերամայրը հառաշող մօր կ'ուղղէ այս
խրախուսիչ խաբուսիկ երդը.**

Զէ մեռեր քո որդին, չէ մեռեր,
իջեր պախճան ի վար զնացեր.
Վարդ է քաղեր, դրեր գլխուն.
Քունն է տարել անուշ հոտուն:

Իսկ մեռնողի մայրը՝ անպատիր՝ կ'ողբայ.
Իս ա՛լ չեմ երթար վարդենուն տակը,
Կոտրեր է մատանուս գոհարէ ակը.
Ի՞նչ գիժար կու լինի, ահ, մահուան խակը:
(Անդիր դպրուքիւն եջ. Կթ-ԶԵ).

623

**Մէրը ինքնին իր հեա կը կրէ հմայքին
խորհրդականութինը. ըստ սիրուած առար-
կային, կը գնահասուսի սիրոյ արժանիքը.
բայց թանկադին ու անզին է հօր ու մօր իրենց
մանկանց սէրը, որուն հարազատութինը
օրորանին շուրջը կը փնտունք, ու կը գլա-
նենք: Հայ մայրերը իրենց գառնուկներու
այդ սէրը շատ գորովալ օրօրեր են, և
յոյսերով երգեր ու անոյշ արցունք թափեր
են: Անկնցի մայրիկը թող երգէ որ լսենք.**

Աղուոր և՝ աղուորաց որդի,
Աղուորնաց քեռոց քեռ որդի:
Քու ծառդ ու ճեղդ ոսկի,
Քու տերեւդ վարդ կու մանի:
Քու ջուրն է անպակ գինի,
Քու կիւզէլդ (գեղդ) տեղ չի լինի:
(Հետրիւմք Ակմայ 407).

624

Մայրիկը կ'երգէ. օրօր կ'անէ.

Ծոցիկտ առաւօտ նման,
Առառան շաղիկն է վրան:
Շաղւոր ետ ու ետ գնա՞,
Ուր ցաթէ արեւն ի վրան:
(Կայ Էջ 408).

625

Բաւրաստանին, գրախախն մէջ որբան աւերեւ կայ, մայրիկը զաւկին այնքան տարի կը ցանկայ, և կ'օրօրէ ու կ'երգէ.

Պիւլպիւլը պաղճան է իջեր.
Վարդենւոյն թփիկն է թառեր:
Անուշ մէնէմշին (մանուշակ) հոտուն,
Աղուորիս քնիկն է տարեր:

(Կայ Էջ 409)

626

Թէ շատ կուլայ մանկիկը, մայրը կը
մաղթէ անոր քարէ մարիկ մ'ունենալ որ ա-
նոր պղնձէ ձայնով երգէ օրոր. մանկիկը չար-
ըլլայ թէ լալիան, մայրիկը չի մռնար իր սի-
րուն երգեր.

Գու գինդ է հազար ոսկի,
Հազար ալ կուտամ եւըլի:
Հազար ալ անոր կուտամ.
Լոս երեսդ երկու պէնկ:
Աղուոր ես ծոցուդ ի վեր,
Երթամ ով բերիմ խաղ-ընկեր:
Երթամ լուսնկան բերեմ,
Լուսուն աստղը խաղ ընկեր:
(Նոյն էջ 410).

627

Մանկիկին համար՝ Տիրսջմէ կը ինսդրէ
քնիկ, Մարիամէն կը խնդրէ հանգիստ. կ'եր-
թայ եկեղեցի կը մտնէ և սուրբ մըլ բարե-
խօս կը բռնէ.

Օր օր օր օր քուն ունիս,
Պեշիկին մէջ տուն ունիս:
Ոսկի ուրան ունիս,
Մարգրտէ եօրդան ունիս:

**ՃԵՓԱՅԻՐԷՆ (գոհար) բարձ ունիս .
Շար ու շամաթ (նրբահիւս) շոր ունիս :**
(Կոյճ էջ 412).

628

**Հարսերու երգերն ալ յատուկ գորսվ և
զգացմունք մը ունին Ակնցիներու սրախն
մէջ : Հարսնեւորք կը խնդրեն որ հարսը
մանարափիկ քալէ և վայելուչ ճեմ զճեմի
յառաջէ . անոր կ'ուղղեն հազար մէկ գո-
վեստ .**

**Առաւտուն կ'ելես , արեւ կու ցաթէ ,
Բերանտ ուր կու բանաս , մեղրը կու կաթէ ,
Եկուր նստինք , անուշ անուշ խորաթէ ,
Եկուր , աղուր աղջիկ , հարս եղար մեզի .
Եախութ , զմրութ՝ անզին քար եղար մեզի :**
(Կոյճ էջ 415).

629

Կ'երգեն հարսնեւորք .

**Նազ արէ , նազ արէ , նազդ վերցընիմ
Այա քեզի նուշ ու չեքէր կերցնիմ .
Հազցընիմ , կապցընիմ , մարոնցդ խրկիմ :
Մի լար , աղուոր աղջիկ , աչուիտ կ'աւըրի .
Քեզ պզտիկ կարգողին տնակն աւըրի :**
(Կոյճ էջ 416).

630

Փեսային երգը աւելի բանաստեղծական է.
Ան բարձրը լեռներն ի վար, մեզի բարկ արեւ
մին է ցաթեր.
Ըմեննուն երդիքն ի վար, մեզի դուռն ի նհրս
է ճառապայթեր.
Ըմենտ ի վրայ եկէք, թագաւորին կապան կա-
րեցէք.

Ղուսնկան աստառ արէք, արեգակն երես ձեւ
ւեցէք,
Ղն մոյ (մանր) ու խոշոր աստղեր՝ թեւերուն
տիւկմէ (կոճակ) կարեցէք:

1321

Ճիշտ է առակը ու կ'ըսէ,

Մարիկը է տպքուկ հացիկ,
Ո՞վ ուտէ, կու կշտացնէ:
Հարիկն է անպակ գինի,
Ո՞վ խմէ, կու արբեցընէ:
Աղբարն արեգակ նման,
Սարն ու ձոր հաւսար կը

(S. n. 488).

632

Եմերութիւնը յաւակնոտութեան հետ ունի փորձառութեան գեղեցիկ և անլիճելի յասկութիւնը, որուն անփորձ երիտասարդը պէաք չէ զիմազրէ։ Բաֆֆիի ծերունին Արբակ՝ բռնելով իր ճերմակ մօրուքը, կ'ըսէ Սամուէլին։

Այդ մազերից ամէն մէկը մի փորձանքի մէջ է սպիտակել, Սամուէլ... ես շատ բան եմ տեսել և շատ բան եմ փորձել...

(Սամուէլ Էջ 63)։

633

Մոկացի կինն Սաթենիկ, իր Մուշեղին կը պատասխանէ։

Մենք մեր օրօրոցներով կը շրջենք բանակի հետ և մեր ձեռքով կը դարմանենք ամուսինների վէրքերը...

(Սամուէլ Էջ 196)։

Հին հայաստանցի քնքոյշ հարու այսպէս կը քաջալերէ մարտիկ ամուսինը. և խոռվայոյզ ճգնաժամին՝ կը մտածէ հայրենիքի կեանքը և պատիւը։

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԴԻՊՈՒԱՆՔ, ԲԱՐԿՈՒԹԻՒՆ,
ԿՈՒԻ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, ՏՃԳՈՀՈՒԹԻՒՆ:

634

Ազգակործան վատ կոփւնիրու դէմ, ոռում-
բեր են Գամառ Քաթիպայի այս խօսքերը .
Արուեստ, ուսում, շըքեղարուեստ տարածէ՛ Հայ
ազգի մէջ,
Բայց բոնութեամբ միշտ հեռացուր նորա մէջն
կրօնի վէճ .
Քեզ ի՞նչ շահ է, թէ դու կ'ասես՝ Հոգին բըղիսել
է Հօրից,
Լամ թէ Որդին Հոգւով սրբով անսերմ ծընունդ
է Մօրից...
Թող սիրելի, այդ խնդիրքը, աչքը դարձնուր
դէպ հարաւ,
Բիւր բիւր հոգիք դու կը տեսնես կորած դորա
պատճառաւ.
Բայց մինչ այսօր այդ խնդիրքը մընացել է ան-
վընիու,
Թոյլ խելքովը աշխատում ես քակել անքակ
այդ կընճիռ :

(Ոտանաշորենք. Էջ 61).

635

Բաս Իաֆֆիի կոռւարարներու մէջ ճշմարտութիւնը կասկածու բան մը կը համարուի.

Կոփւի մէջ յայտնված ամեն նշմարտութիւն կասկածաւոր է թում:

(Խեցրը Էջ 142).

636

Մեր հասարակական ծանօթ հոգեկան հիւանդութեան համար, կ'ըսէ Գ. Արծրունի.

Ընդունուած միտք է որ հայերը երկպառակութիւն սիրող ժողովուրդ են, որ նոքա զրկուած են ընկերանալու ընդունակութիւնից:

(Գ. Արծրունու Աժմատուրիւնները Հ. Էջ 372).

637

Պատմական դիպուածներու շարքին սեւ օղակներէն մին կարելի է ընդունիլ Հ. Աւլիշանի սա յիշասակածը.

Թիւր տեսութիւն կարճմտութեան խաբեաց և զվասակ զգբոշակիր անմիաբանութեան Հայոց, զոր աւաղական ձայնիւ մնձի Երիցուն անմիտ

վաճառական կոչեմ և ես քան չարամիտ դաւա-
ճան :

(Բագմ. 1843 էջ 319).

638

**Խաղաղասէր Հ. Ալիշանը իր քնարով
խաղաղավիճեան ձայնը կը հնչեցնէ.**

Դարանակալն յաւիտենից խաղաղութիւն՝
դարձցի յիւր գահն.

Դարձցի հեզն այն, դարձցի հաստիչ, դարձցի
սիրուն խաղաղութիւն :

(Խոհուեի էջ 112).

639

**Եղոյբոսի առակներուն ներշնչմամի, թժըշ-
կեան Հ. Մինաս տժկոհներուն համար կը
գրէ սա առակը.**

Տժգոհ մարդուն ինչ որ ընեն,
Միշտ զանգտի ունեցածէն :

(Եղոյբոս առակ էջ 118).

640

**Եղնիկ կը գրէ զաստիարակի համար. թէ
Մի բարկանար աշակերտի մեղուցելոյ, զի
հիւանդն ոչ թէ յիւր կամաց հիւանդանայ :**

(Եղնիկ էջ 303).

641

Խաղաղութիւնը, անխափի՝ ամենուն սիրելի և պաշտելի է՝ խռովութիւններէ խոյառուղ մենակեացներուն համար. և անապատի

Խաղաղասէր կրօնաւոր ջահ պայծառ է եղբայրութեան:

(Նոյն էջ 301).

642

Մարդուս կեանքը ընդհանուր համոզումով՝ կոիւ է, պայքար և ճակատազրական պատերազմ.

Ոյս կեանքս պատերազմ է:

(Երբին էջ 308).

643

Բարկութեան գէմ յորդորներ անպակաս են, բայց ամենէն ազգու յորդորը, օրինակն է հեղահամբոյր, որուն տիպարը լուս Սոփերքի, ինքնին Շնորհալին Ներսէսն է. սաթէեւ ի բնէ բուռն, բայց պատմութիւնը կը վկայէ. թէ բնաւ չէ բարկացած. խիստ ան-

տանելի առիթներու ատեն, անուանելով զու-
րիշները Լոյս անուամբ, կ'ըսէ եղեր.

Լոյս, եթէ ոչ յիս խնայէի՝ բարկանայի քեզ:
(Հայապատում Բ 374)

644

Ներքին պառակտումները պախարակելի
և զգուելի են: Պէշիկթաշլեան իր «կոսնակ»
ողբերգութեան մէջ կը դրէ.

Կը վայլէ՞ որ մենք մէկ ազգ՝ մէկ արիւն ըլ-
լալով, մէկմէկու կորսուեան գուբը փորենք ու
հայրենիքը ընտանի պատերազմներով թշուառու-
թեամբ ահ ու դողով լեցընենք:

(Պէշիկթ. Մատենագրք. 195.)

645

Եւ թագրաստունին Հ. Արսէն, իր Հայկ
դիւցազին մէջ ըսած է.

Գազանք անգամ շաղղակերք չարկին ժանիս
ի համազգիսն:

(Հայկ դիւցազ էջ 30).

646

Մենք կը յիշենք հայկական անհաշտութեան օրինակ մը, որ թէեւ երգիծական և անիրական ու կատակ մ'է, սակայն յարմար յամառ անհաշտութեան։ Ալաշկերացի աղաքները, հինգ կամ ութ տարեկան երախայ մը հարս կ'ընեն, երեսը քօղով կը ծածկեն։ Մէկը կը բանայ երեսը, միւսը կը դոցէ ու կ'երգէ…

—Քեզի կիտամ մաղ մի ոսկի,
Ա՛ռ պարիշի, խնամի ճան։
—Մաղը ծակի,
Ոսկին թափի,
Զէմ պարիշի, խնամի ճան։
(Ազգր. հանդես Գիրք VII VIII 1901 էջ 437).

647

Ծովը գետով չի յագենար, տժոհն աղտիսած բարիքներով ու վայելքներով։ Հայաստանցիք կ'ըսեն.

Ուտայ՝ կ'իլայ (լալ),
չ'ուտայ՝ կ'իլայ։

Մեկնութիւնն է. «Տժոհ ըլլալ միշտ,

ունեցած և շունեցած պարագաներուն միանցամայն » :

(Նոյն էջ 477).

648

Բարկութիւնը՝ երբեմն կը ծածկուի խաղաղ կարծուած հոգիներուն մէջ, ուսկից բանկած զայրսյթը կարելի է համարել անդիմագրելի փոթորիկ։ Ալաշկերտցիք ըստած են։

Վախեցէք մարմանդ (հանդարու) գետից։
Մի վախեցէք զըմփոչմիան (կատաղի) գետից։

Կը մեկնուի. «Հանդարաւ բնաւորութեամբ տեսնուած մարդերը երբեմն աւելի վասնգաւոր են, քան բարկացու, կատաղի երեւցածները» :

(Նոյն էջ 481).

649

Կան վլճեր, կոիւներ, որ յիմարաբար կը ծնին ու կը բորբոքին, նկատելով անըլանյին բաներ, այդ կոսւարարներու Ալաշկերտցիք կը յիշեցընեն.

**Ցըպնին ընկի,
Զըռչին քըզի*:**

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆ Է. « ՊՆՉԱՀ բանի վրայ
ՎԻՃԵԼ, և երեւակայական շահերով գոյա-
ցում աալ միմեանց » :**

(Նոյն էջ 484).

650

**Խոտւին բնականաբար կը յաջսրդէ հաշ-
տութիւն. այս է օրէնքը. ուսկից զուրկի մնա-
ցողները մարտկաթեան սահմանէն զուրս
նկատելու ենք: Ալաշկերացիք կ'ըսեն.**

**Քար գլորի (գլտորել).
կը կանի (կը կենայ):**

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆ Է. « Խնչպէս շարժման՝ դա-
դարում մը, նոյնպէս ամէն թշնամութեան
հաշտութիւն մը կայ » :**

(Նոյն էջ 485).

* Առակս ունի իր պատմութիւնը. «Երկու պատող
շարչիներ բաւական ատեն իրարու հետ ման գալով,
առուտուր ընելէ զեր՞ կուզեն իրարմէ բամուիլ. բայց
բան մը չեն ունենար կիսելու: իրենցմէ մին կ'ըսէ,
«ընկիր, Ցըպնին ընձի. Զըռչին քըզի», ցոյց տալով
հեռուէն երեւցող երկու հայ զիւղերը»:

651

Բարկացուար ընտրելի է, քան թէ հանգարաբարոյ խարդախը. կ'ըսէ առակը.

**Զարուն՝ (Բարկացու) հետ կաց
կակղուց (հանդարտէն) յետ մնաց:**

**Մեկնութիւնն է. « Բարկացու մարդը
աւելի անկեղծ ու անվտանգ կ'ըլլայ, քան
հանդարտ բնաւորութիւն ունեցադներ » :**

(Դրա էջ 501)



ԳԼՈՒԽ ԺԹ.

**ԽՕՍՔ ՈՒ ԳՈՐԾ · ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆ · ԳԱՂ-
ԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ · ԱԶԱՏՈՒԹԻՒՆ · ԳԵՐՈՒ-
ԹԻՒՆ · ՀԱԼԱՄԱՆՔ ·**

652

Ուսւահայ կրակոս բանառահղծը կ'ողբայ,
որ հայ գաղթականին ո՛չ ոք կը կարեկցի։
Հայրենի օճախէն զուրս ընկած պանդուխ-
տը կը հառաշէ։

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բըսած ծաղկի նման դաշտումը։

(Գալոր Քարիզա · Ոտանաւորներ Էջ 19)։

653

**Արաքսը իր պանդուխա որդւոց համար
սուկ կը բռնէ.**

Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մընան պանդուխա,
ինձ միշտ սըգւոր կը տեսնէք,
Այս է անխաք իմ սուրբ ուխտ...
(Նոյն Էջ 34)։

654

Նոյն բանաստեղծը իր ամենէն ազգու և
բարկաճայիթ մէկ երգով՝ գերաւթեան դէմ
ընդվզում կը գոռայ.

Հիմի է՛լ լըռենք, երբ մեր թըշնամին
Խըլեց մեր սուրը – պաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,
Արդ սուր ու խոփից մեր շըղթան կըռեց,
Վայ մեզ, շըշթայով կապած գերի ենք,
Հէմի է՛լ լըռենք:

(Նոյն էջ 95).

655

Թշնամին՝ հայը կ'արտաքսէ իր օճախէն,
իր բնիկ երկրէն, հայը շուարած, կը հարցը-
նէ.

Պանդուխտ, հալածեալ, երբարք, ուր գի-
մենք.

Հէմի է՛լ լըռենք.
(Նոյն էջ 95).

656

Հայուն հետ կ'ապրի պապենական սա
պատառէրը.

Լաւ է մեր կեանկքը կարճանայ սըրով,
Քանց հաշուի, մաշուի թըշնամու լըծով.
(Նոյն էջ 100).

657

Նոյն բանաստեղծին պարզ մէկ այս տու-
ղը, իր պարզութեամբը, գերի հայութեան
աշքէն կը թափէ լեղի արտասունքը:

Հայաստանի մէջ փոքրիկ խորշ էլ չի մընաց
Հային:

(Նոյն էջ 124).

658

Պանդսւխա հայութիւնը, լալով կ'ողբայ.
Զընդան բանդ է իմ համար պանդըխտութեան
լուս աշխարք:
(Նոյն էջ 125).

659

Բնկճեալ վանեցին կ'աղօթէ Հայաստանի
Աստուծոյն.

Թող դադրի մեր գերութիւնը,
Ցառնէ Հայի ազգութիւնը,
Վերջանայ մեր հէգութիւնը,
Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

(Նոյն էջ 139).

660

Վանեցի Հայը ունի բմբոստութեան
«Հայր-մեր» աղօթքը. վանեցին այնքան
ազգասիրութեամբ վառուած է, որ կը մոռ-
նայ և պահ մը չի մտածեր իր առօրհայ
չոր հացը և իր մեղքիրուն քաւութիւնը. ու
կաթողին կը պաղատի.

Ոչ չոր, ոչ կակուդ հացըդ մենք կ'ուզենք,
Միայն տուր ամէն Հայի ձեռքը զէնք.
Զենք խընդրել թողնել մեր անձանց պարտքը,
Թէք վերցներ թուրքի, խայտառակ հարկը.
Գլորէ մճզ, Աստուած, մարտի փորձութեան,
Որ շուտ ազատի ազգըդ քո հայկեան:

(Նոյն էջ 125).

661

Բանաստեղծը վշտացած սրտով ցոյց կու-
տայ Համակերպութեան և յուսախաբութեան
ունայնութիւնը և իր ազատութեան վերջին
խրասը կ'ըլլայ.

Ո՞ւր է, դու զիտե՞ս, բաղդըդ ու փառքըդ
Ու ազատ կեանքըդ, — Ի ծայր քո սուրին
(Նոյն էջ 143).

662

Ազատութեան փողը և յորդորը վարանելով կը լսեցընէ. հայը բանակալութեան ուստի իր աղի արցունքներով լուաց, բայց իր ձայնը լսելի չեղաւ, ու հիմա կը փորձէ և կ'ուզէ գիտնալ որ սուրերուն շառաշինը պիտի լսէ երկինքը: Եւ կ'երգէ վանեցի մայրը.

Տուր սիրական, քակեմ ձեռքիդ պալուները, արձակեմ,

Ու այդ թուլիկ աջիդ մէջը մի պողպատէ սուր գընեմ,

Ըստրուկ գընա արեան դաշտը, վերադարձիր ազատուած.

Արդեօք մի օր պիտի լըսե՞ս մեր խնդիրքը, ո՞վ Աստուած:

(Կոյշ Էջ 144).

663

Մշակներուն՝ պատերազմի հրաւէր կը կարգայ. գութանը՝ հայուն ազատութեան օրը մոռցընել կու տայ. զայն կ'ուզէ փշրել, ու անով կռել կոփել կու տայ սուր պատերազմական.

Եղբայր Հայեր, առէք խոփը, տուէք դարբենին կռելու,

**Կըռել-կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը
փըրկելու:**

(Նոյն էջ 146).

664

**Մշեցի գիւղացիին լեզուն բացուած է. ան
կը զարնէ իր սանթուոր, չի մուրար ստակ,
չի մուրար ոսկի, այլ զէնք, վառօդ և հրացան.**

**Խըզնացէք Հայ ազգիս, տուէք մեզ հրացան։
Չուզենք մենք ձեր ոսկին, տուէք մեզ վառօդ։**

Չուզենք մենք ձեր փարան. տուէք թընդանօթ։

(Նոյն էջ 152-153).

665

**Մեր խելացիները լնդհանրապէս տեղեակ
ըլլալսով ազգային ամէն ցաւերուն, և գիտ-
նալով որ հայը ուսում չունի, հալածուած
է. երկիր չունի, դիրք չունի, վարպետ
չունի, այս ամէնը ծանոթ է ամենուն, սա-
կայն.**

Գիտենք և միայն կը խօսենք։

(Նոյն էջ 157).

666

Ու զաղափարի ու գործի մարդ Գրիգոր
Արծրունիի նուիրած մէկ երգին մէջ, կը
ծաղրէ հայսլթիւնը.

Լոկ խօսքով մի ազգ. չի կանգնել ոտքի:
(Նոյն էջ 161).

667

Պէտք չէ շուարած կենալ, պէտք չէ ժլատ
մընալ. Պատկանեան կը քարոզէ մահ վը-
հասեալ հայուն:

Հարուստ, հէ՞ր ոսկիդ սընդուկ դըրել ես,
կըսրիճ, ո՞ր օրուայ ուժըդ պահել ես,
Առ ի՞նչ, ազգասէր, ազգըդ սիրել ես...
Եղբարք, ալ չասենք. «Հայեր ի՞նչ անենք» :

(Նոյն էջ 204).

668

Նոյնինքն բանաստեղծը պատասխան կու
սայ.

Թէ կ'ուզէ հայը՝ նա շատ բան կ'անէ.
(Նոյն էջ 205).

669

Բայց ափսոս որ հայը օտարներու մէջ
թումաս էֆէնտիներու շաղակրատութեամբ կը
գոհանայ. Ծաֆֆիի սա խօսքը թէ և ծաղ-
րական, բայց և յուսահատեցուցիչ է.

Թօմաս էֆէնտին էլ, գիւղական օդայի մէջ
նստած, վճռում էր հայոց ազգի ապագան.

(Խենքը Էջ 135).

670

Վառ ազգասիրական կրակը ստրկութեան
ահոելի ուժը կ'ոչնչացընէ. գերութիւնը այն-
քան զարհուրանք պէտք չէ պատճառել.
Ծաֆֆի շատ իրաւամբ կը գրէ.

Ես այժմ հոմոզուած եմ, որ ստրկութիւնը
չէ կարող խլել մի ժողովրդի քաջութիւնը, որ
նախնիքը թափել էին նրա երակների մէջ:
(Խենքը Էջ 426).

671

Տարօրինակ նորութիւն մը չէ մեր մէջ
խօսքով հիացումները, և գործնականին մէջ
վա՛տ ձեռնպահութիւնը. հասարակական ուժէ
բարի ձեռնարկութեանց ատեն երբ միայն խօս-

Հայ Սիամը

24

քովկը կը հիանանք և ձեռնառուութիւն մը չունիսք, կարող ենք յիշել Միսաքեանի մասին՝ պօլսեցիներու ունայն սիրալիր ընդաւնելութիւնը. խեղճը ոչ անոր, այլ էշի սը պէտք սոնէր.

Սիրալիր ընդունելութեան վրայ չէր կրնար նստիլ և ոչ անով Ալէմ Տաղի երթալ:

(Ազգային յոյէր էջ 214).

672

Գերութեան մասին կարող ենք օրինակ բերել Ալիշանի «Ողբ Հեթմայ» սա տողերը:

Ես մեռայ, ես գերեցայ անզաւակ...
Հեթում, երթ մուտ շիրմին ի փակ,
Տուն Ռուբինաց զարթիր ի կոծ,
Խաւար եհաս ազգիս Հայոց:

(Հայուսնեի էջ 164).

673

Համայն հայրենիաց հասած կործանունումը, Նահապետ աւելի գառնապին կ'ողբայ: Կուլայ աւերումը, ջնջումը հայ տաճարներու, գրատանց և գերութիւնը սոսկալի.

Բայց ափսո՞ս հիմա որ չար թէշնամիք
 իսկի չեն խնայել Հայոց աշխարհիկ,
 Եկեղեցիք, վանք, գըրատուն, դարպաս
 Զարկել են թըրով հըրով դաս ու դաս.
 Զազգն ընչօք տեղօք քանդել ու գերել
 Դէմ չորս հովերուն տըւել ու ցըրուել:
 Աւաղ քեզ աւաղ Հայոց աշխարհիկ
 Տուն երկնանըման, փըլած տաղուարիկ...
 (Հայրունքի Էջ 273).

674

Օրօրանէն տարագրեալ հայը՝ սրտի տրու-
 փումսվ կ'ողջունէ ի՞նչ որ կու գայ կ'որու-
 սեալ զրախտէն-մեր բնիկ հայրենեաց հողէն.
 կ'երգէ նահապեալ.
 Կոռունկ ու Արագիլ գային հիտրանց, (միա-
 բան)
 Պարիպներուն սիրուըն ճըխաց.
 (Կոյն Էջ 276).

675

Դառն է զաղթականութիւնը, երբ կը կա-
 տարուի հալածանքի երկիւղէն: Յուսուփի
 ատեն հայք կը կրեն զարհուրելի սով,
 սրածութիւն և հալածանք. Յովհան կաթո-
 ղիկոս իր ողբովը կը նկարագրէ այդ պատ-

կերը, զոր մեր մշտնջենաւոր և ահաւոր նա-
հաստակութեանց արձանագրսւթիւնը կրնանք
համարիլ։ Կաթողիկոսը այդ հալածանքը
երկնային պատուհաս ընդունելով, կ'ըսէ։
«Սիրտ իմ տանջեալ տազնապի տարակու-
սանօք, և հաշեալ մաշի փոր իմ ի լալոյ։
զի յանօրէնութեանց մերոց՝ այցելութիւն
Տեառն անտես արար զմեզ, և ի սեւաթոյր
տիրութենէ գործոց մերոց՝ խեթիւ հայե-
ցաւ ի մեզ արեգակն ճշմարիս, և մատնե-
ցաք ի ձեռս ծանրասրտի երկրորդն Փարա-
ւոնի և դառն գործալիարաց նորա, որք ա-
ռաւել եւս քան զանուր կաւափաղաղ աղիւ-
սազործութեանն՝ վէրս ի վերայ եղեալ՝
կործանեցին զմեզ անհնարին հարուածովք
ի վերայ հարուածոց։ Վասն զի։

Իբրեւ զմրրիկ հողմոյ չնչեալ ի մեզ մահառիթ-
իսմայէլեան օդն դառնաշունչ, և ըստ նմանու-
թեան փուլոյ պտուտաբար ցնդեալ՝ ի բաց զմեզ
տարագրեաց ի մեր բնակութենէ։

Եւ արդարեւ, ըստ մարդարէին,

Ոչ կարէն միսիթարել զմեզ որդիքն մեր տա-
րակուտեալք, և ննջեալք ի կիրճս ամենայն ճա-
նապարհաց։

(Հայապատում Բ. Էջ 276) .

676

Սրտառուշ է Շնորհալիի Եղեսիոյ վրայ
երգած ողբը. կարծես սգաւոր համայնա-
պատկերն է մեր այրիխացեալ Հայրենիքին.
Եղեսիա կ'ուզէ որ իրեն սղբակից ըլլայ նաեւ
Անին արտառուելի։ Մգաւորն Եղեսիա, կը
յիշեցընէ մեր համայն հայութեան ողբեր-
գու տիրապատկերն. Եղեսիա կը փնտոէ իր
վարսերը ցանկալի, կը պատուէ իր զգեստ-
ները զարդարան, ու կ'ողբերգէ.

Նըստիմ ի սուգ ի տան մըթին
Որպէս օրէն է սգաւորի...
Քանզի առակ եղէ յերկրի,
Եւ անցաւորք ճանապարհի
Վայ ի վերայ ասեն վայի։

(Հայապատում Բ. էջ 363).

677

Հալածողները անհամանում են.

Հէնք ի հինից գային վերայ,
Ախպատակաւ ես գերեցայ։

(Նոյն էջ 364).

678

Լանկթիմուրի արշաւանքը, անոր ահաւոր
կոտորածները Ծերենց մականունով, Գրի-
գոր վարդապետը լալկան քնարով կը նկա-
րագրէ: Վրացի, Թուրք, պարսիկ՝ այդ աղխ-
րահոչակ գազանին ճիրանէն չեն աղատած.
և աւելի ջախջախուածը մեր ազգն է, և որով
կը լսենք այս եղերերգը.

Չունիմ ասել բան զոր կրեցին
Քրիստոնէից ազգ Հայ զարմին:

Բանաստեղծը իր աշուլներով տեսած մեր
ազգին զարհուրելի աղէտաները, որտաճմլիկ
մորմոքումով կ'ողբերգէ.

Տիկնայք որ ճոխ տունս ունէին
Եւ մետաքսօք պերճանային,
Հացակարօտս երեւէին,
Դածկոյթ անձանցըն խնդրէին:

(Հայուպատում Բ. 565).

679

Զմեզ հալածող՝ մին քան զմիւս անգութ
վիշապներ անպակաս շեղան. ամէնն ալ
դժոխային գազաննե՛ր. Ներսէս հայրապետի
մարգարէութիւնը շատ անգամ կատարուած
է.

Ներսէս Հայրապետն մեր մարգարէիս բանին
վըկայէ,

թէ կարմիր զլուխն ելցէ և զՀայոց երկիրն
աւելէ:

(Հայապատում թ. Էջ 594).

680

Պէշիկթաշլեան աւազ կը կարդայ անձին.
որ ցանկալի հայրենիքը թողած, օտարու-
թեան մէջ կ'ապրի.

Վահ եղկեւոյն, որ հայրենեաց մերկ կենսա-
ձիր յարեւէն՝

Թափառական ընդ անծանօթ շըրջի գաւառ
տարադէմ:

(Պէշիկը. Մատենդրութք Էջ 9).

681

Շատերը անձնանուիրաբար կ'ընարեն
հայրենիքի ահաբեկութեան մէջ ապրիլ, քան
թէ օտարին արքայութեան մէջ ոչնչանալ:
Փաջ Հայաստանցին կ'ըսէ.

Իմ ցամաք հացը լաւ աշեմ ինձ համար, քանց
ձեր ղաբլու փլաւը:

(Ակրք Հայաստանի Էջ 65).

682

Աքովիեանի համար, ստրկութիւնը սոսկալի և ողբալի է. կ'ողբերգէ.

Վայ էն ազգին՝ որ աշխարքումս անտէր ա, Վայ էն երկրին՝ որ թշնամու գերի ա, Վայ էն խալմին՝ որ ինքն իր կեանքն, աշխարքը Զի պահպանիլ, ու հարամու ձեռ կտայ: (Նոյն էջ 73).

683

Լոկլով հասարակութեան վայնասունը, ճգնաժամը, կարող չենք անտարբեր մնալ, ու մեր ուժին համեմատ օգնութեան չհասնիլ: Աքովիեան կը գրէ. « Փար չկայ մեր երկրումը, քոլ չկայ, որ Հայի ալմոլ ներկած չըլի... Ա՛խ սի՞րելի Հայ՝ էս բաները լսելիս,

Ինչ ունիս չունիս, տուր, որ քո ազգը քիչ քիչ մէկ լաւ օր քաշի:

Պէտք ենք ողորմիլ անոնց, « որ դոնէ գուռը ման են գալիս, ողորմութիւն խընդում՝ որ գնան իրանց գերիքն ազատեն... »

(Նոյն էջ 127).

684

**Գաղթականներուն զիւցազնական խրոխտ
յորդոր մըն է Աքովիեանի ուա երգը.**

Շումչդ տուր, հոգիդ, բայց քո հայրենիք
Մի տար թշնամեաց ու անաշխարհիկ
Ընկնիլ սարէ սար, լինիլ չարաչար
Ծառայ օտարաց, կամ գերի անճար:

(Նոյն էջ 137).

685

**Հայրենի հողէն կարուած, իր օջախէն
տարաշխարհիկ հայուն երգը, հոգին կը
լացընէ, սիրալ կը քանդէ,**

Կինօ՛ղ, ազգականք՝ հեռու ինձանից
Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,
Եարաբ Երբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարօտս առնիմ. ձեզ ջան ասելով:

**Պանդուխա Աղասին կ'ողբերգէ. «Ա՛յ իմ
խեղձ ծնողք՝ ձեր ջանին միոնիմ» ...**

Ազքս ծով դարձաւ՝ ճամփիին նայելով.
Մէկ դուշ որ գլխիս պտիտ ա զալիս,
Թէ Երբ մէկ խաբար կհասնի ինձ բարով՝
Հոգոց հանելով ասում եմ, լալիս:

(Նոյն էջ 207).

686

Պանդուխտ հայր իր օճախին մէջ կ'ուզէ
մեռնիլ. օտարին գերեզմանը իրեն սիրելի
չէ, իր պապերուն ոսկրներուն քով կ'ուզէ
որ հող գառնայ իր մարմինը. Աղասին իր
ծնողաց կ'երպէ.

Են սուրբ, անարատ կաթնին ես զուրբան,
Զեր լիս ձեռներին, ձեր անուշ լեզվին.
Մէկ բուռն հողի էլ Երբ կըլիմ արժան,
Որ զամ ձեր հողութն, քնիմ ձեր միջին:
(Նոյն էջ 208).

687

Մոգական հրապոյրով, գերի շրթունքնե-
րուն վրայ կը թրթուայ Ազատութեան բա-
ռը, երգեր մարտագոռ՝ աստուածացուցած
են Ազատութեան դաղափարը. հայն ալ ու-
նի իր այլ երգը, որ կը համարակի պայ-
թած ըլլայ Մ. Նալբանդեանցի որոտըն-
զոստ կրակոտ կուրծքէն. մանկական բերնէն
Ազատութիւն բառը կը թոշի.

Ազատութիւն, – գոչեցի. –
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,

Թո՞ղ դաւ դնէ թշնամին,
Ես մինչ և ի մահ կախաղան,
Մինչ և անարզ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ' կրկնեմ
Անդադար, ազատութիւն:

(Առիսկ Հայաստանի Էջ 16).

688

Ազատութեան ոգեւորիչ փողը կը հնչեցը -
նէ նաեւ բանաստեղծ Հ. Արաչն Բագրատու-
նին.

Օ՞ն արիք պընդեալք ըզմէջս, որդիք նոյի և
թորգոմայ,
Յարըս լերուք զօրութեան վանել յերկրէդ
ըզբընութիւն:

(Հայկ գիշեագն Էջ 135).

689

Ու ազատութեան սուրբ գործին պէտք է
վստահ ըլլալ որ

Գեղեցիկ յանդըգնութեանց են և երկինք նի-
զականից:

(Նոյն Էջ 136).

690

Ախտ մը որ մեր վրայ ճնշած է, մենք
անոր գերի ենք, մենք մեզի ստրկացած
կ'ըլլանք. Բագրատունին կը գրէ.

Ինքնատէր է մարդ անձին՝ ազատ յախտից
լինել չարաց.

Եւ որ յայնմ ազատ չիցէ գերութենէ, չէ
անձին տէր.

(Նոյն էջ 600).

691

Մեր ազգային պանդուխտները ունին եր-
կեր, սիրտ ջախջախող հրգեր. զարիպու-
թիւնը ունի լալկան յիշատակներ, մանաւանդ
երբ տարագրումը ըլլայ բռնի. և անտէրունջ
մնայ օտարութեան մէջ, աղքատ և հիւանդ:
Բորշալսուի գաւառացին զարիպներու համար
տիսրունի երգ մ'ունի.

Ղարիբը պարկել ա, անճար կտնքայ,
Հէր ու մէր չի կայ, որ հոգսը հոգայ,
Քարերը եօրդանն են, ֆօղը դօշակ,
Բարց ու բալիշ չունի նա իր գլխի տակ:

Մէր չունի, որ տեղը զցէ վերցնէ,
Քիր չունի բարցի երէսը դարցնէ,
Եար էլ չունի հալը, խաթրը հարցնէ,
Ախպէր չունի չուխայ կտրէ, հազցնէ...

(Ազգագրական Հանդէս ԽI գիրք էջ 66).

692

Չափուրի կնոջ ողբի մէջ, կայ սա սըրտայոյզ ողբը .

Ես ինձ համար տուն չունեմ,
Գիշեր ցերեկ քուն չունեմ,
Գիշեր ցերեկ լալում եմ,
Միս ու ուսկորս հալում եմ...

(Նոյն էջ 67).

693

Նոյն ողբը կը շարսւնակուի և ունի այս լալկան տողերը :

Ինձ հմա ոնչ լիս, ոնչ էլ գշեր կայ .
Ես խօրօս եղնիկ, ինձի տէր չկայ :
Ասի ամէն հաւք իր բունը մտաւ,
Ամենն էլ իրան հնգերը գտաւ,
Մենակ ես եմ, ախ, ես մոլորված,
Ես մառմառ քար եմ, տեղից գլորած :
(Նոյն էջ 67).

694

Պանդուխտ հայ հարսը, կռունկին կ'ըսէ .

Կռունգ, կռունգ, կռման արա՛,
Հէրանցս սարին նշան արա՛,
Մեր տան բաշին տիտիկ արա՛,
Հօրանց սրահին մտիկ արա՛,

Գնա՛ ասա՛ իմ նանին,
Բաժինքը տայ չոբանին,
Ել հեռու տեղ ախշի՛ չի տայ,
Որ չգնայ շիւանին:

(Նոյն էջ 68).

695

Հայ կոյսը իր հեռաւոր պանդուխտ եաւ-
րին բարեւ խալքելու համար, Լուսնակը ի-
րեն սուրհանդակ կ'ընէ.

Լուսնիակ կամաց գնա,
Կանգ տու ու ցածանց գնա,
Հեռաւոր եարմ ունիմ
Բարեւ տու անցի գնա:
(Նոյն գիրք գ. էջ 94).

696

Որբ և այրի ըլլալէն վատթարագոյն է
Հազար հօգւոյ քմահաճոյքներուն գերի ըլ-
լալն. Հայաստանցին շատ լաւ կ'ըսէ.

Լայ էրին (այրին), լայ ոռբէւէրին (որբ և
այրի)
Լայ էն, որ եօթն իրիկ ա ուրին (իրեն - եօթն
էրիկ ունի):

Մեկնութիւնն է. «Ամէնաղժբաղդ վիճակը
այրիութիւն ու որբ ըլլալն է. իսկ ամէնէն

զժբաղգագոյնը՝ շատ հրամայողներ ունենաւ-
լը ».

(Աւտ. Հանդես Գիրք VII VIII 1901 էջ 466)։

697

Գերութիւնը անտանելի է, և սոսկալի
երբ մարդ իրմէ տկարին գերի կ'ըլլայ։ Հա-
յաստանցիք ունին առակս։

Վայ էնոր (անոր) որ աղւըսու կապածն ա,
ու մկան արձըկածն ա։

ՄԵԼՆՈՒԹԻՒՆ է. « Ամենէն ցաւալի վի-
ճակն այն է, երբ մարդ իրմէ տկարներու ի-
րաւասութեան կ'ենթարկուի, և անոնցմէ կը
յուսայ բարիք և ազատութիւն»։ Առակիս
պատմութիւնն է. « Աղուէս Արջին կ'ընկե-
րանայ, ու քիչ վերջ անոր վստահութիւնը
վաստկելով, կ'աղաչէ որ զինքը կապելու
գաղանիքն յայտնէ, քիչ մը զուարճանալու
համար։ Արջը կը յայտնէ այդ դադանիքը
ու կը կապուի, իսկ Աղուէսը գայլերուն ի-
մաց կուաայ, որ գան զայն պատուեն։ Այն
ատեն Մուկ մը գուրս գալով, կը կրծէ Ար-
ջին կապերը ու կը թուլցընէ, այնպէս որ

երբ գայլերը վրայ կը յարձակին, Արջը կը
կարողանայ փրցնել կապերը ու վրանին ցատ-
կելով, բոլորն ալ հալածել: Այն ատեն Ար-
ջը կ'ըսէ ինքնիրեն. նալլաթ (նախատինք) է
նոր (անոր), որ Աղւըսու կապուկն ա (կա-
պածը), ու Մըկան արձըկուկն ա (արձա-
կածը), ու կը թողու, կը հեռանայ այն
երկրէն » :

(Կոյճ Էջ 482).

698

Պանդուխաը որ իր անձնական հանգստու-
թեան համար կ'ուրանայ իր հայրենի օճախը,
և անհոգութեամբ կ'ապրի օստարութեան մէջ,
Հայաստանցիք անոր կը յիշեցընեն.

Իմաստունն ի հանգիստ.
յիմարն ի հայրենիս:

(Կոյճ Էջ 491).

699

Գարեգին սրբազան Սրուանձտեանց՝
քնքոյշ պատճառաբանութեամբ կը զիմադրէ
դաղթելու գաղափարին. 1882ի ձմեռը կը

հասնի Մուշ, հոն գիւղ մը այցելելով, կը տեսնէ ջլատուած հայ գիւղացիներ, որ կ'ուզեն գաղթել, և չեն գիտեր ուր գաղթեն.

Ուր երթանք, կ'ըսենք, Ուուսի հողն երթանք, Աճմու երթանք, Մըսըր երթանք, մնոնինք՝ ի՞ո մնոնինք, իսկ եթէ ապրինք՝ կտոր մը մարդու պէս ապրինք... այս ի՞նչ է մեր քաշածը...

Բայց նոյն ատեն վեռ ի՞նչ էր իրենց քաշածը... Սրուանձտեանց կը հակառակի, կը համոզէ որ պէտք չէ գաղթել, տեղացի ծերունի մը իրեն կը ձայնակցի և մասնացոյց ընելով առջեւի մարզագետինը, կ'ըսէ. — «Եղբարք, տեսէք սա չայիրը. գեղի տաւրը, գնացողի էկողի գրաստները ամէն օր կը կոխկոտեն ու կը կոծեն, հէմլէ կանանչ է կանանչ է, ինչի՞, որ իր արմատը կը մնայ իր տեղը. մեր ազգ չէ որ մինչեւ այսօր այնքան կոխկոտուեր, ճոփուեր, քաղուեր է, նորէն կանանչացեր է իր տեղին վրայ. մենք կը չորնանք, կ'ոչնչանանք, թէ որ մեր տեղն ու մեր հողը փոխենք. եկէք, մ'ընէք, Աստուծոյ ողորմութիւն շատ է, թագաւորի ուահմ շատ է...». և Սրուանձտեանց Պա-

արիարքարանէն հրաման առած էր. «Խրա-
տել Հայ բնակիչները, հարստահարութեանց
պատճառաւ հայրենիքնին թողլու նպատա-
կէն ես իեցնելու»...:

(Թուրոս Աղբար Բ. Էջ իշ.)

700

Պանդուխաի լացը սիրա կը մաշէ, օրե-
րը գառնազին՝ տուն կը քանդէ: Ղարիպին
աշքէն արցւնիք կը թափի, որտէն արուն
կը վազէ: Անոր ցորեկն է գիշեր, աշերուն
քնակն է հասեր, խելքն ալ կորեր ու կոր-
շեր.

Ղարիպին փորն անօթի է,
Դրնէ դուռ խեղճ մուրացկան է.
Սեւ օր զլխին, ամէն դուռ փակ է:
Վայ արեւուն, ամէն սիրտ քար է:

Ղարիպիկ տէր ու տեղ չունի,
Ոիրտն է ի խոց, աշքն ի լալի.
Իւր երդիքին կարօտն ունի.
Ընտանիքին ողորմելի:

Մեր զարիպն է հոգեւար,
Գլխին բարձն է ժամերուն քար.
Շատ տառապէր, լայր անդադար,
Հոգէառին չուտ գալ կարդար:
Ղարիպիկին հալն է եաման,

Մէկը չըկայ տէրտին տէրման:
 Սուրբ Տիրամար, դուն ողորմեա,
 Ղարիպիկին դուն ճար արա:
 (Առիր դպրութիւն էջ ԵՊ) .

701

Պանդուխախն ընտանիքը և պանդուխտը
 տարամերժեալ, կարուած հայրենի հողէն,
 կը լսեցընեն ազէխարշ երգեր: Ղարիպին
 ընտանիքը կը մնչէ.

Եկանք բարկենտանք, երթանք ի Զատիկ.
 Աճապ մեկմէկէ ինտոր տի զատինք.
 Կինէ եկաւ գարնան երկան օրերը.
 Հալեցաւ ձները, ելաւ գետերը.
 Բուսաւ առուեզերուն կանաչ խոտերը:
 Կագւուկ, խնդաս երկու ձագկանոտ արեւը.
 Թուչիս և իյնիս Ստամպօլու վերեւը.
 Շատ հաց, ու շատ բարեւ խրկիմ խարիպիս,
 Խարիպիս, Խարիպիս, մէկիկ աղքօրս:
 Այ Եօրկէօ օրերը, Զատկուն կիրակին,
 Աւաղ, մեր խարիպներն են խարիպ երկիր:
 Եւ եկուր, Եւ եկուր, խավլդ (պայման) խա-
 րար է (բաւէ):
 Իրեք տարին մէկ կտրիճին խարար է,
 Շատ կենալը քու արեւուն զարար է:
 Ե՞ս ալ Ստամպօլու վարպետ պիտէի,
 Ստամպօլ քակէի, նորուց շինէի.
 Վաղուց գնացողը սիլայ (հայրենիք) խրկիր.

**Ղարիպը հայրենիք բառը լսելուն, ալ
չի դիմանար և սրաւափղձուկ կը պատաս-
խանէ.**

**Սիլաս որ միտքս ինկաւ, կ'երթամ չիմ կե-
նար.**

Եաման աս տէրտէրուն (ցաւ), ալ չիմ դիմանար:

**Ստամպօլու սուրբ ժամեր ու սուրբ խաչեր,
իմ տէր, մուրատս տուր, սիլաս իմ դարձեր:**

Ղարիպին տէրը կը տոշորի.

Ի՞նչ քաղցր ու անուշ է գարնան օրերը,

Ամպեր ու չի պարզեր սրտիս արեւը.

Խրկէ՛ ու մի՛ կտրեր սիրուտ բարեւը:

(Հեռարիւնք Ակնայ էջ 425-6).

702

**Ղարիպին հարսին վրայ, լուսինն ալ կը
գթայ: Ցաթած լուսնակին՝ տարագրեալ փե-
սային հարսը կը հարցնէ ողորմուկ.**

Աս ով, աս երտիքոտ եկեր.

Աս օտար հողը կու կոխէ:

Թէ մարդ ես նը վար եկու,

Թէ շուշան ծաղկիկ գնալու:

— Ո՛ւչ մարդ եմ ի վար գալու,

Ո՛ւչ շուշան ծաղիկ՝ գնալու:

Պիւլպիւլ իմ ու ժառ գնալու,

Շատ երամ ունիմ գնալու:

Երթամ շատ երկիր ոսնիմ (անցնիմ)

Հաստ խարիսկ տեսնիմ մէն ի քուն :
Ալմբնուն խարիսկն է քուն :
Իմ ու քու խարիսկն է արթուն :
— Խարիսկս ո՞ր ճամբով կ'երթայ ,
Ես անոր ճամբեկ պիտէի :
Ո՞ր աղբիր ուր ջուր խմէ ,
Ան ջրին ակնեկ պիտէի :
Ճածնար ան ջրէն խմէր ,
Ես ալ իմ մուրատն առնէի :
Թրթար ո՞ր քաղաք իշներ ,
Ան քաղքին խանճի (պանդոկապետ) պիտէի :

703

Պանդուխտին հարսլ կ'երգէ.
Իմ եարն է զրեր ըսեր,
Եար եկու զիս գողցիք ու տար:
— Ինտո՛ր զամ, գողնամ տանիմ,
Առ չէօլին (անապատ) ճամբեկն է դժար:
Մի վախեր, եար, մի՛ վախեր,
Ես կարմունճ կապիմ քո կամար:
Ես կարմունճ կապիմ քո համար,
Մարգրիտ շարիմ լարէ լար:
Սփոփիմ էպիշում խալի,

Ուր գործած տաս և երկու տարի :
 Ոտքովտ ի վրան կոխես,
 Ոտքացդ փոշեկը առնիմ:
 Ոտքացդ փոշեկը առնիմ,
 Ուր քաշիմ աչքիս թիւթիա :
 Ուր քաշիմ աչքիս թիւթիա,
 Աչքերուս լուսը շատանայ :

(Կոյճ Էջ 435)

704

Հարսը կը պատուիրէ, որ խաղնի լուսինը .
 Լուսիկ բոլըրեր և եկեր,
 Ես իքու խարիպտ ի նման .
 Խպնէ ու ամշնէ , լուսիկ,
 Ո՞ր տեղու իմ խարիպիս նման :
 Խարիպտ թուխ աչք ունէր,
 Թուխ յուներ ու շուշման (գեղեցիկ) բերան :

Երթունք, շուրթեղէն ունէր .

Աըռմա թել պեխերն իվրան :

(Կոյճ Էջ 438)

ԳԼՈՒԽ Ի.

ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆ. ԱՊԵՐՁԱՆԿ. ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ. ԲԱՂԴ.

705

**Բաղզի գէմ մարդկութիւնը կռուեր է և
բողոքեր, կը բողոքէ նաև Գամառ Քա-
թիսլա.**

**Այ իմ չար բաղդ, քեզ ի՞նչ ասեմ, արդեօք
քեզ ի՞նչ անուն տամ,
թէ կոյր ասեմ՝ իրաւ կոյր ես, բայց այդ
դեռ չէ բաւական.**

(Ոտանաշորմեր Էջ 17).

706

**Նոյն բանաստեղծը զգայուն տողերսվ ճա-
կատագրի գէմ կը արտնջայ և իր բողոքը կը
լսուի թափառական հայ գաղթականին բերնէն.**

**Երբ ես մըտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի բոպէ բաղդը ժըպտաց ինձ պայծառ.**

(Ոտանաշորմեր Էջ 19).

707

Դեր փեսան կ'աւզէ իր ծաղկատի հար-
ուը ուրախացընել, վառել անոր սէրը, բայց
նա յուսահատ է, բանի սիրով չի կրնար
ջերմանալ. ան ապերջանիկ է. ծեր փեսային
սիրուն խոսառումներուն կը պատասխանէ.

Գինին ի՞նչ շահ, երբ սըրտիս մէջ չի կայ
սէր. . . .
. . . Ակը ի՞նչ շահ, երբ արցունք է իմ աչ-
քին:
· Կոյն էջ 80).

708

Տգիառաթեան և շատ անգամ ալ խեղճու-
թեան նշան է պարծենկոսներուն հողարտու-
թիւնը : Պատկանեան կը զարմանայ հայ-
կական հպարտաւթեան վրայ.

Զարմանք պան է՝ ամէն Հայ մարդ
Հայի առջեւ է իրստ հըմպարտ.
(Կոյն էջ 328).

709

Բաղդի մասին Բաֆֆի այս յուսահա-
առաթիւնը կը ներշնչէ.

Ագռաւը շատ կը յանկանար սիրամարգի փետուրներ ունենալ, բայց ո՞վ կըտայ: Աստուած մէկին այսպէս է ստեղծել, միւսին այնպէս:
(Խեթրը Էջ 107).

710

Բսուած է, «ինչ որ կը ցանենք, նոյնը կը քաղենք»: սակայն Ասեփան Փափազեանի համար այսպէս եղած չէ. բայ Պարսնեանի ան՝ չեր քաղեր ինչ որ կը ցանէր,

Շատ անգամ ելակ կը տնկէր և կաղամբ կը քաղէր:

(Աղբային բուեր Էջ 191).

711

Շատ քիշերուն կամ դուցէ և ոչ մէկուն քաղզը կը ժողովի, անբազզութիւնը կը հետեւի մինչեւ գերեզմանին դուռը. Խորենացին այս մտախն, սա սրտաշարժ դէպքը կը յիշատակէ. «Քանզի կալեալ զնա (զկրիւսոս) պարթեւին Արտաշիսի, հրամայիաց հանել յերկաթեղէն տապակի: Խոկ կրիւսոսի յիշեալ զբանն Առղոնի աթենացւոյ տաէ.

Ո՞վ Սողոն Սողոն, գեղեցիկ բարբառեցար,
ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչեւ
ցվախճան :

(Խոր. Պատմ. Էջ 186).

712

Ամսւանական խնդրոց մէջ, բախտի ծի-
ծաղն, կամ լացն, միշտ նկատողութեան առ-
նուած է և զժբախտութիւնը ողբերգուած . այս
տեսակ զժբախտութեան արտօննջ մը մեր
պատմահայրը կը յիշաաակէ : Տիրանայ զուռ-
արը , Երանեակ Բազրաստունի՝ Տրդատայ
կնութեան կը արուի, կինը գեղանի իսկ այրը
« զծուծ աեսլեամբ » . երջանիկ չէ Երանեակ,
կ'ողբայ իր այս զժբախտութիւնը, վասն զի

Զքնաղագեղ ընդ վատակերպոյ և քաջատոհ-
միկ ընդ վատթարազգուոյ բնակէ :

Տրդատ կը զայրանայ. կնոջ վրայ նե-
տուելով, անոր մազերը կը կարէ ու կը
հրամայէ որ զայն սենեակէն զաւրս նետեն :

(Խոր. Պատմ. Էջ 291).

713

կան քրիստոնէական առաքինութիւններ ,
որոնք սիրելի են նաև կրօնքի անտարբեր-
ներուն ալ . խոնարհութիւնը սիրելի է անխր-
տիկ շատերուն և անոր ներհակ , հպարտու-
թիւնն ալ ատելի է համեստաներուն : Առա-
կախօսն վարդան կր զրէ .

Երկու աքլոր կռվէին ի մէջ փողոցին . և մին
յաղթեաց ընկերին և ընկեց զնա և հպարտա-
ցեալ թըռաւ և ելեալ բարձրագոյն տեղիս և
սկսաւ ճեմել և զագայել և բարձրվիզել վասն
յաղթութեան նորա ի պարծանս անձին համա-
րեալ իւր : Եւ ահա արծիւ ի վերուստ յանկար-
ծակի և առեալ վերացաւ զնայ յաւթն :

(Ժ.Պ.Դ. Առակաց Վարդանայ էջ 24) .

714

Միեւնոյն հեղինակը խրոխա բարձրա-
թոիչ բնաւորութեանց համար ունի այս այ-
լաբանական առակը , որով կ'սւզէ ակնար-
կել . հպարտութեան խայտառակումը . կը
զրէ . «Ժողովեցան կիրիաքն և խեցգետինքն .
և զնացին առ արծիւն և ասին . ուսոյ մեզ
թոշիլ . ասլայ թէ ոչ մեղցուք առաջի քո .

և ասեն. ընդէր է, որ կէսդ թռչուն էք. կէսդ սրընթացք. և մեք ակարք և ողորմելիք. և ասէ արծիւն. արիւն ձեր ի զլուխ ձեր. զի ես տամ, զոր հացէք. զի յիմացաւ, որ հպարտութիւն տարաւ զինելս նոցա. ձայն արար արծիւն. և ժողովեցան առայ ամենայն թռչունքն. և նայ աարաւ ըդնուսա ի ծայրս վիմի մի բարձրագունի, որ էր ողորի. և ի յուսու նորա խորայձօր և բարայկառկառ և շարեաց նա ընդ մէջ կիրիայն և զմռչաւնս. արծիւ վերացաւ և արար ձայն՝ զնշան թռչելոյն, զոր յառաջ ոլայման էր եղեալ նոցա. և ահայ վերացան թռչունքն յաւթս ըստ սովորութեան իւրեանց, և զան աեսեալ կիրայիցն՝ ձայն ետուն միւեանց. և ամենայնք գոչեցին զաւրութեամբ և ամենայն կարողութեամբ վազեցին զհեա թռչնոցն. և ահայ մեծաւ աղազակաւ և սրոտմամբ իջին յատակս վիմին և մանդրեալ փշրեցան ի բարայկառկառ խորայձօրն և եղեն գէշ թռչնոցն » :

Ի՞նչ կը նշանակէ. բատ առակախօսին.

Զի ամենայն մարդ, որ հպարտանայ և յան-

բանն և գործն ձեռն արկանէ, որ չէ իւր լայեխ
և յարմար և ի վեր է քան զիւր կարողու-
թիւնն, նայ սատակի որպէս զկիրիայքն։
(Նոյն էջ 28.)

715

Կարելի է ըսել, որ չի կայ անձ մը որ
չսղբայ իր թշուառութիւնը. ամէնքը կը
կարծեն թէ ապերջանիկ են. իրաւ է. կը
գրէ համերաշխութեան քերթողն Պէշիկթաշ-
լեան։

Ո՞հ, մարդկային տկարութիւնը միշտ պատ-
րաստ է ինքզինքը փում պատճառներով թշուա-
ռացնելու,

Այդ տեսակ անձը, «շաա անգամ
արեւուն ճառագայթները իր գլխուն վրայ
կախուած մէյմէկ սուրեր կը կարծէ. ամեն
ծաղկանց մէջ թունաւոր օձեր կը աեսնայ,
ամեն մէկ քայլ առնելուն կարծէ թէ վհե-
րու մէջ պիտի իյնայ. ամեն գեղեցիկ գոյն
ու լոյս սեւ ու զալիահար կ'երեւայ իր աշ-
քին»։ Թշուառ յոռեաեսութիւն։

(Պէշիկրաշ. Մատենագրք. էջ 155.)

716

Բաղդի մասին՝ Աքավեան գրած է.

Մեր աստղը մէկ անգամ թէքվել ա, էսպէս
եկել ենք, էսպէս կերթանք:

(Վէրք Հայաստանի Էջ 35).

717

**Հասարակութեան մէջ առհասարակ ամէն
գաղափարի անձանց՝ ասելի համարուած է
հպարտութիւնը։ Հ. Ա. Բագրատունին այս
ջախջախիչ տողերով կր պախարակէ արխ-
մար հպարտութիւնը.**

Որչափ ոք ի վերին բարձրամըտէ լայն շրջա-
նակ,

Նոյն ի բաց կայ յարարչէն եւ ուժգնագոյն
մոլի մրբրկաւ։

(Հայկ դիւցագն Էջ 119).

718

**Դժբախտութիւնը երկուած է Բագրատու-
նիի դիւցազներգութեան մէջ այսպէս.**

Անցին զինեւ ժամանակք, ցասեաւ ինձ բախ-
տըն և ես բախտին,

Եւ յամննայն աշխարհէ կընքեցի զմիտս իմ
և զսիրտ։

(Նոյն Էջ 174).

719

Ո՞վ գիտէ, անձին բաղզը պիտի ծիծաղին,
թէ պիտի լայ. ճակատագրի լեզուն մեզի
անծանօթ է.

Ո՞ զմատինն երկնաւորի ժըպրհի շրջել ճակա-
տագիր:

(Նոյն էջ 220).

720

Բաղզի առաւօսիլ և ճակատագրի լեզուն
անծանօթ է. ով գիտէ թէ ի՞նչ է իր ասլա-
զան. ի՞նչ է իր ազգին, իր տան ճակատա-
գիրը. երկրորդ օրը ի՞նչ պատրաստուած է,
պարտութի՞ն թէ յաղթանակ. այս մտա-
ծութիւնները Բագրատունին Հ. Արսէն պեր-
մօրէն երգած է, և զոր կարելի է մեր գե-
ղեցիկ զրոյցներու շարքին մէջ զեաեղել.
կ'երգէ քերթողը.

Ո՞վ գիշեր յոգնատըխուր՝ յաւիտենից մըթոյն
հանգէտ,

Զի՞նչ եւս այլ ծոցըդ յըղի կըրես երկունը
թորգոմայ.

(Նոյն էջ 419).

721

**Բաղդի բերկրալի երգը կը լսենք Արուանձ-
աեանցի «Համով-Հոտովի էջերէն.**

Տասուերկու աստղը ծագէր,
Ըմէնն էլ քու բաղդի վրան:
Երնեկ էն օր որ դուն եղար,
Երկինք գետին խնդում եղաւ,
Աստղերը ծափ ծեծեցին,
Էս ինչ բարի պտուղ եղար:
Ինքն կը նմանի խաթուն,
Ոսկին կուգայ բիթուն, բիթուն,
Կոլխեց ձըւկին թըռաւ թախդին,
Աշխարհը ցանկացաւ բաղդին: ...
Երկնուց մատնի մը իջաւ,
Էկաւ մատըս խըճեցաւ.
Ես զիտէի ակը խամ էր,
Բաղդըս զոհար բացուեցաւ:

(Համով-հոտով. Էջ 344-5.)

722

**Հայաստանի մէջ Համբարձման տօնը ու-
րախութեան օր է , զուարթութեան , ծաղ-
կի և բերկրութեան տօն , գեռատի կուսանք
կ'երգեն այդ օրը . նոյն օրը « երջանիկները
կ'երգեն իրենց բաղդը .**

Ըսօր մեզ համբարցում ա ,
Աստծուն փառք ի բարցըմ ա ,
Քրիստոս երկինք համբարցաւ ,
Ողջիս բաղդը բացւըմ ա :
(Արտադր. Հանդէս Գիրք XI էջ 49).

723

Ալաշկերտցիք՝ ինքզինքը մեծ բան կարծող մեծամիտ մարդուն համար ունին այս առածը ,

Աժնելիք . (արժէք) երկու փարայ ,
զինք գրէր տոյնի պարայ (աշխարքի հաւասար):
(Նոյն Գիրք VII, VIII 1901 էջ 456).

724

Հայաստանցիք ունին առակ մը .

Թըթու բան չէ ,
Ըմէն մարդու բան չէ :

Բաղդը անլուծանելի գաղտնիք մըն է ,
որ միենոյն գործը մէկուն յաջող , միւսին
անյաջող կ'ըլլայ . յիշեալ առակը մեկնուած է . « Ամէն մարդ միենոյն զիւրութիւնը կամ աջողութիւնը չի կրնար գտնել միենոյն գործի կատարումին մէջ :

(Նոյն էջ 464).

Հայ Միտք

26

725

Անկարողները ընդհանրապէս մեծամտութեամբ կը ճամարտակեն և անկայժակ, ամուլամպերու պէս կը գոռան. ասոնց Հայաստանցիք կը յիշեցընեն այս հեզնական առածը.

Կրակ պտի թողայ ի պրակ (անտառ):

Մեկնութիւնն է. « Հեզնել մէկին անկարողութիւնը, որ կը նկրտի իր ուժէն բարձը գործ մը կատարել:

(Նոյն էջ 470).

726

Մեծամիտ յաւակնոտներ, որ կը յանդբանին չափերնէն դուրս ուրիշ ուժեղներուն հաւասարիլ, Հայաստանցիք հեզնական առակ մը ունին. անոնց կը յիշեցընեն.

Զիանք ոտներ նալեցին (պայտել),

Կիրիրէքն էլ (կրիայ) վեր վերուցին:

Մեկնութիւնն է. « Իրմէ մեծին նմանելու ամբարտաւանութիւն ունենալ:

(Նոյն էջ 471).

727

Բայց մարդ միշտ գոռող կամ հպարտ չի կրնար մնալ. Հայաստանցիք կ'ըսեն.

Սար ինչքան բանձր (բարձր) եղնի օր մի ճամբախ վրայով (վրայէն) կ'ընցնի:

Պռակիս միացն է. « Ամենէն բարձր դիրք ունեցող և ուրիշներէն բոլորովին անկախ ապրող մարդերն իսկ օր սը ուրիշի պէտք կ'ունենան, կամ, շատ խելօք, զգուշ, անարատ վարք ունեցողներն իսկ օր մը թերութեան մը, բամբասանքի մը մէջ կ'իյնան» :

(Նոյն էջ 481).

728

Շատերը իրենց ողորմելի նիւթական և մտաւորական կարողութիւնը առանց նկատողութեան առնելու, մեծ գործերու ձեռք կը զարնեն և բնականաբար կը առւժեն. այդ աեսակ հպարտ խեղճերուն Հայաստանցիք ունին առակս.

Տուն չունի թանապուր,
ինք կը քէլայ (կը քալէ) եքէպուռ (հպարտօրէն):

Մեկնութիւնն է. « Հակառակ նիւթակա-

նին՝ չափազանց մեծ ծախքեր լնելու յի-
մարութիւն ունենալ» :

(Կոյճ Էջ 483) .

729

Քանի մենք թշուառացնող պատճառը չենք
իափանած, կարելի չէ որ ձեռք ձգենք եր-
ջանկութիւնը: Կայ այս առակը.

Քանի մոտօն դէս ա (այս կողմն է)
Մեր հալն (վիճակ) էս ա (այս է):

Մեկնութիւնն է. «Թէ իրենց դժբախտու-
թիւնը կը տեսէ այնչափ, որշափ անոր պատ-
ճառ եղող անձը կայ, իրենց քով է, կամ
իրենց վրայ կ'ազդէ» :

(Կոյճ Էջ 485) .

730

Մեծամտութեամբ գոռողացած անձուկ
զլուխներուն համար, Ալաշկերացիք ունին
առակս.

Քիթ տնկեր.

Կը փչայ յամպեր.

Այս է պարզ մեկնութիւնը. «Ուրիշին

չ'հաւնող, հպարա, ինքնահաւան (բարձրաքիթ) մարդ » :
(Նոյն էջ 486).

731

**Ծոյլը երջանիկ շըլլար. Հայաստանցիք
լու կ'ըսեն.**

Գողութիւն (ծուլութիւն).
չ'գտնի արքայութիւն :
**Թէ. « Ծուլութիւնը ամէն բարիքներէ կը
զրկէ մարդը » :**
(Նոյն էջ 489)

732

**Բստ առածին, միամիտներու բաղզը բա-
նուկ կ'րլլայ.**

Դուն ի քուն,
քու բաղդ արթուն :
(Նոյն էջ 490).

733

**Այէն մարդ ըստ իր ճաշակին երջանկու-
թեան լրայ գաղափար մ'ունի, և ըստ այսմ
անոր կը ձգաի. զանազան գաղափարներու**

մէջ, անտարակոյս կը գտնուին խելացին և ցնորականը. երջանկութեան վրայ խորհելուն՝ Խարբերդցիները ցնորած են. ըստ առածին Աստուած Խարբերդցիները ստեղծելուն՝ հարցուցեր է. ի՞նչ բանով գոհ կը լինիք երկրի վրայ, ի՞նչ կ'ուզէք որ տամձեզ. Պատասխանած են.

Հաց, գինի, կին:

Գարեգին Սրբազն Սրուանձտեանց կը գրէ. «Արդարեւ կարծես այս երեք բառերէն զատ իրենց համար հոգ կամ փափաք չկայ. բայց կենաց այդ երեք պայմաններն ալ չարաշար կը վայելեն, ոչ իրեւ Աստուծոյ օրհնութիւն, այլ պատիժ» :

(Թորոս Աղբար Բ. Էջ 82).

734

Ո՞վ է երջանիկ: Ոչ ոք. լեռներուն երզը լսենք, վշտացեալ մը՝ լեռներուն երնեկ կուտայ.

Լեռներ, ձեզ երնեկ կուտամ.

Ուր ատենկ (այդպէս) բարձր էք մնացեր:

— Մեզի երնեկ չի պիտի,

Մեր տէրտէրը շատ կու լընի:
 Ամառը տաքուն կ'երինք,
 Զմեռն ալ ի մէջ ձուներուն:
 (Հնորիւնք Ակայ էջ 468).



ԳԼՈՒԽ ԻԱ.

**ՀԱԻՍՏԱՐՄՈՒԹԻՒՆ, ԵՐԿՄՑՈՒԹԻՒՆ,
ՆԱԽԱՆՁ, ՈՒՆԱՑՆՈՒԹԻՒՆ, ԱԶԳԱՏԵՑՈՒ-
ԹԻՒՆ, ՎԱՏՆՈՒՄ:**

735

**Բանաստեղծ Փաթիպան ունայնութեան
վրայ երգելով, կը յորդորէ.**

Էսօր, էգուց քեզ կու գրէ պատանքը.
Ու չի փրկիլ մահից ոսկին, ոչ հանքը:
(Ոտաճառորներ էջ 16).

736

**Նախանձը որ մեր տկար հոգերանութեան
ամենէն զզուելի ախտն է զարձած, զայն
անիծեր են մեր ամէն զրագէաները, բանա-
ստեղծները, և կրակոս Փաթիպան, իր «Լուս-
նի պատմութեան» մէջ, Հայաստանի շա-
րիք նիւթողը՝ նախանձը կը համարի.**

Բայց քեզ ո՞վ նիւթեց այդքան մեծ չարիք,
Երկնացօղ պարտէզ, Հայոց աշխարհիկ.
Նախանձ էր սիրել այդ մարդի սրբում,
թէ օձ էր բընել նորա չար հոգում...
Այո՛, նախանձ էր, նախանձ դարեւոր:
(Նոյն էջ 86).

737

Չուտ ազգասիրութիւնը, ամրակուռ կը
պահէ ազգային սէրը, գաղափարը. բայց
մեր մէջ ազգասիրութիւնը երբ զուտ, ան-
կեղծ է, զայն կարելի է համարիլ առաքի-
նութիւն. բայց ամէն հայ այդ առաքինու-
թիւնը չունի. քիչ են զուտ ազգասէրները:
Օտար աշխարհ, օտար հանգստութիւն չու-
տուլ մաոցընել կուտան ազգային երկիրը,
ազգային կրօնքը.

Հայը անճարակ՝ կը մոռնայ ազգը,
կը քոնն, և լեզուն, և հօրանց փառքը,
Հայկ, Արամ, Տիգրան և այլ դիւցազունք
Կ'երեւին նոցա պատիր շաղփաղփունք.

(Նոյն էջ 92).

738

Պատկանեան յուտահատ ու զայրացկուտ
նախանձորդ գրչակներուն կը հարցընէ.

Պատճառը ի՞նչ է ձեր այդ վըրտովմանց...
Ճանաչեցի քեզ, « հայկական նախանձ »:

(Նոյն էջ 228).

739

**Եւ «Խելօք լէլէնդ» քերթուածով, կ'ը-
սէ.**

Լրպատճան լեզուտ քու սիրուստ պացից,
Քու սիրուը ըրված էր չար նախանձից:
(Նոյմ էջ 282).

740

**Ազգութիւնը և հայրենիքը ատողներուն
և ուրացողներուն, ուղղելի է Հ. Ալիշանի
սա ճշմարիտ բացատրութիւնը.**

**Զիք ինչ նողկալի քան զմարդ ազգուրաց և
հայրենատեաց:**

(Բագմավեա 1844 էջ 368).

741

**Բանաստեղծ Հ. Ալիշան ազգատեցութեան
առթիւ դեռ աւելի բռնկած բացատրութիւն
մ'ալ կ'ընէ. իրեն համար ազգատեացը և
հայրենատեացը հրէշ է.**

**Հրէշ անհեղեղ քան գհայրենատեաց մարդ ու-
րեք երեւեալ ոչ է:**

(Նոյմ էջ 368).

742

Ազգատեաց է այն, որ իր յատուկ ազգային լեզուն կ'ատէ: Հ. Ալիշան կը հարցընէ.

Իցե՞ս հայրենասէր դու, որ զճզբրտագոյն կնիք հայրենեացդ ուրացեալ ես յանձնէդ, այսինքն զսկզբնական քո լեզուն, առանց որոյ ոչ հայ ես և ոչ անհայ:

(Բագմավկա 1845 էջ 335).

743

Ազգատեցութեան տխուր օրինակներ շատ կան. պատմութիւնը ինքնին կը վկայէ որ տարաբաղդաբար մենք մեր թշնամին եղած ենք, և մեր մատենագիրները ողբացեր են մեր խղճալի վիճակը: Հ. Ալիշան որ մեր ազգին վրայ արաա ու բիժ շուզեր աեսնել, բայց սակայն ինքը եւս կը գրէ սա երեմիականը.

Զքեզ ողբամ, ո՞վ աշխարհ Հայոց, վասն ամենայն չարեացն քոց, և ողբամ առաւել զշարեացդ պատճառուն. ողբամ զքեզ ի քոյսն յանարժանսն քեզ. ի դատաւորս քո տմարդիս, անընտրողս իրաւանց և հակառակողս ի վարդապետս քո տըխմարս, ընդ ինքնահաճս և նախան-

ձուս. ողբամ զքեզ ի կրօնաւորսն քո կեղծաւորս և սնափառս ի վիճակաւորս քո հպարտս, ծոյլս ատեցողս արուեստից և վարդապետական բանից. յաշակերտս քո հեղաքս յուսութիւն և փոյթս ի վարդապետել. ողբամ զքեզ ի ժողովրդականսն քո համօրէն, ստահակս, մեծախօսս, անվատակս, փախչողս ի ժառանգութենէ:

(Նոյն էջ 345.)

744

Եւ պէտք ենք համոզուիլ, որ մեր երկպառակութեանց ամենէն անգութ զէնցն է և նախանձը. սա միշտ փլցուց հայկական շէնքը, նոյն գարշ զէնքը գարձեալ կը յօշօշէ. գուցէ գանուին փարիսեցիներ, որ զայն իրենց վրայէն նետեն, սակայն ափսոս որ այն վար իյնալու տեղ, սրաին վրայ կառշած կը մնայ: Նահապետ կը մաղթէ որ փշտինք մեր այդ հոգեբանական զազիր զէնքը.

Զընի ոք նախանձ չընի հակառակ,
Թէ չէ՝ նման խոտու լինի խայտառակ,
Ալիք ծըլին ծաղկին, թէպէտ քըշիկ մ'ուշ.
Զարկարն մընայ միշտ դըժնիկ, միշտ փուշ.
Ուք խելօք սիրով կան զինչ աղքըրիկք
Տեսնեն քո գարունդ, Հայոց աշխարհիկք:
(Հայրունի էջ 274).

745

**Եւ շատ անգամ մեկը մեր ազգային կըր-
քերով ազգին թշնամին կ'ըլլանք.**

Ո՞հ, ես տեսնում այլ մեծ չարկք, ողբամ ըզ-
քեզ.

Ողբամ հազար, որ այդ չարեաց պատճառ
դուն ես:

(Առյ Էջ 286).

746

**Նախանձի մասին Գոշ առակախօսն կը
յիշատակէ զայս.**

Հօտ՝ յերթալն իւրեանց շարժէին դմակք նո-
ցա, և սկսան զնոսա բամբասել հօրանք այծից,
թէ ընդէ՛ր նման մնզ ոչ երթայք պարկեշտս։ Եւ
զի նախանձ մանաւանդ էին բանբասանքն։

Կը մեկնէ առակախօսը. «Յանդիման կա-
ցուցանէ տռակս՝ զբարս նախանձոտաց. յա-
ռաջել ոմանց շնորհիւ՝ բամբասեն. և ին-
քեանք՝ զի ոչ ունին, ի պարկեշտս համա-
րին։

(Առյիրար Գոշ Էջ 74).

747

Նոյն առակախօսը կը գրէ նաեւ.

Սովորակ և ցախ սարեկ, և այլք նմանք սոցին
երգաբանիչք՝ ոչ միայն երգեն, այլ և սիրեն
աննախանձաբար զայլոյ երգել:

Կը մեկնէ. «Աննախանձս առակս զմեզ
կամի լինել. զի և յերգելն մերում զօրհ-
նութիւնս, և զայլոց եւս սիրեսցուք զեր-
գելն:

(Նոյն էջ 121).

748

Եղովրոս կը պատմէ նախանձոս սիրամար-
զի պատմութիւնը. «Սիրամարգը կը տրտը-
ջար Հերային թէ ինչո՞ւ համար աստուած-
ներն ինձի առուին կոշա և անհամ ձայն
մը, իսկ սոխակին տուին անուշ ձայն։ Աս
քաղցր ձայնը կ'ըսէր՝ ան պզտի թոշունէն
առաւել ես արժանի էի ունենալ. ես որ
աւելի գեղեցիկ եմ ամէն թոշուներէն, որ
օդին մէջ կը թոշին։ Պատասխան տուաւ շաս-
տուածուհին թէ ճշմարիտ է ըսածդ, որ գուն
ամէն թոշունէն գեղեցիկ ես եւ ամենէն գէշ

դուն կ'երգես. բայց սոխակը՝ որուն ձայնին
կը նախանձիս զուն անիրաւութեամբ, ամե-
նեւին չի ցանկար քու փետուրներուդ. վասն
զի գիտէ թէ ասաուած իր պարզեւն ամե-
նուն ալ բաներ է. և ինչ որ կամեցեր է
տալ՝ ամէնքը պարաւական են որ իրենց ու-
նեցածին վրայ գոհ ըլլան։ Ուրեմն լոէ՛, ո՛ւ
մի արանջար, վախցիր որ քու հպարառու-
թիւնդ պատժելու համար չըլլայ թէ փետուր-
ներդ ալ առնէ, որով այսչափ ամբարտա-
ւան եռ եղեր»։ Եւ այս առթիւ թարգմա-
նիչը կը կազմէ սա խրատական առակը.

Նախանձուին կերի հոգին
Երբ կը տեսնէ այլոց բարին։
(Երավոս առակ էջ 155)։

749

Եղնիկ ամէն չարեաց պատճառը՝ կը նկա-
տէ չար նախանձը.

Ակիզբն չարեաց զնախանձ ասեմք։
(Երակ էջ 49–50)։

750

Երկար ատեն Արտաւազդայ առասպելը
 վաղեմի հայութիւնը ահուսկողի մէջ թողու-
 ցած է։ Պատմիչք նկարագրած են այդ ա-
 ռասպելի նշանակութիւնը։ ահաւասիկ զայն
 ըստ Յայսմաւուրաց. «Թագաւոր մի կայր
 Հայոց՝ Արտաւազդ անուն, և ունէր որդի
 մի խելագար՝ Շիկար անուն. և ի մեռա-
 նել Արտաւազդայ՝ ոչ ետ զթագաւորութիւնն
 Շիկարայ, զի խելագար էր, վասն որոյ աշ-
 խարհս վրդովեցաւ և աւերումն լինէր ոչ
 սակաւ։ Եւ յաւուր միում հեծեալ Շիկարն
 ի ձի, և ետ փող հարկանել թէ կամիմ
 թագաւորել. և ել գնաց ընտիր հեծելովք
 ի զբօսանս։ Եւ ելեալ ի վերայ կամրջի
 գետոյն՝ վասն անցանելոյ, և անովէն շար-
 ժեալ զնա այսոյն պղծոյ, անկաւ ի զեսն
 և կորեաւ։ Եւ հեծելազօրքն համբաւեցին՝
 թէ աստուածք Շիկարայ յափշտակեցին զնա
 և եղին ի Աեաւ լեաոն. որ է Աւագ Մա-
 սիս. և անդ կայ շղթայած. և երկու շուն,
 մի սպիտակ և մի սեաւ՝ լզեն հանապազ
 զշղթայսն Շիկարայ. և ի տարելիցն՝ ի մի

մազն գայ, որ թէ կտրի՝ սա ելանէ և զաշ-
խարհս անցուցանէ։ Վասն այսորիկ կար-
գեցին կախարդքն առասպել զիմօք, թէ ի
տարեմուտն՝ ի նաւասարդի մին՝ ամենայն
գործաւոր զիւր գործն զինչ և իցէ՛ կոփէ ե-
րեք անգամ. դարբինն՝ զսալ հարկանէ կը-
ուանաւն վատարկ. այսպէս հանգերձագործն,
նոյնպէս և այլքն. զի

Կապ Շիդարայ ի մազն եկեալ է
եւ կարիլ, գարձեալ հաստանայ և ամրա-
նայ, որ ոչ ենէ Շիդարն զաշխարհս անցու-
ցանէ։ Յիշատակելով այս առասպելը, մեր
նպատակն կ'ըլլայ վատանզի ատեն գործածել
բացարութիւնն «Կապ Շիդարայ ի մազն
եկեալ է»։ ըսել կ'ուզուի մազ մնացեր է
վտանգին։

(Հայապատում Բ. Էջ 64-5)։

751

Վանական վարդապետ, նախանձի մասին
կը գրէ.

Նախանձ և հեռ ուր մտանէ՛ քակէ։

(Հայապատում Բ. Էջ 113)։

752

**Աշխատութեան գաղափար չունեցողը
զիւրաւ կը վատնէ իր հարստութիւնը և զուր
տեղը շատ սատակ կը մսխէ. այդ տեսակ
անձանց պէտք է յիշեցընել Հայաստանի ստ
առակը.**

**Զի չը կայ՝
Մսուր կը կապայ (շինել):
(Առր. Հանդես VII. VIII. 1901 էջ 471)**



ԳԼՈՒԽ ԻԲ .

ՑԱՓԵՑԱԿՈՒԹԻՒՆ . ԱՆԻՐԱԿՈՒԹԻՒՆ .
ԲՈԽՈՒԹԻՒՆ , ՎՐԵԺԻՆԴՐՈՒԹԻՒՆ :

753

Գամառ Քալթիպա հայուն վրէժխնկրու-
թեան կրակ կը փշէ . կ'ըսէ թող լոէ՝ մուն-
ջը , անդամալոյծը թող լոէ՝ ան , որուն
քաղցր է թշնամոյն լուծը , բայց ո՛չ քաջ
ու արիական հայը .

Բայց մենք որ ունինք հոգի ու սիրտ քաշ ,
Ե՛կ , անվախ ելնենք թըշնամու առաջ ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խըլենք :
Ու այնպէս լըռենք :
(Ոտակաշոյթեր էջ 96) .

754

Աւարայրի զիւցազին բերնէն Գամառ Քա-
թիպա վրէժխնկրութիւն կը դոռայ . մեր ա-
րիւնը խմող թշնամոյն դէմ յաւիտենական
ոխակալութիւն կը բարողէ .

Անէծք եմ թողնում ես այն վատ Հային ,
Որ ո՛չ ոխ , այլ սէր ցոյց տայ գոռ Պարսկին :
(Նոյն էջ 100) .

755

Եւրոպայի մեր ցաւերուն հանդէպ լուակացութիւնը՝ անիրաւութիւն մըն է մարդկային գաղափարական սուրբ մըաքին, և անոր համար Պատկանեան երգիծական ողբուլ կ'երգէ.

**Վերջ ի վերջոյ՝ չայ արիւն ալ վոթեցաւ,
Եւրոպ, արդեօք արեան պասքըդ յագեցաւ:**
(Նոյեմբեր 177).

756

Գող աւազակ յափշաւակողի մասին, Ռաֆֆի կ'ակնարկէ այս ծանօթ գործածուած առածն.

**Գողը իր համար տուն չի կարող շինել, բայց
տուն ունեցողի տունը կը քանդի.**

(Խոհեմբեռ էջ 70).

757

Ճակատագրական թէ չարամիտ անիրաւութիւն մըն է, որ շատ անգամ կը պատահի անոնց, որոնք կոռուի մէջ բարիք մը կամենալուլ, զոհ կ'երթան. մեր ազգը այդ զոհերէն է, բարի ու միամիտ զոհերէն։ Շատ

նշանաւոր է Բաֆֆիի յիշատակած սա առածը.

Ձին և ջորին պիտի կուտեն, իսկ մէջտեղում էշը կը սատակի....

(Խեճք Էջ 178).

758

Պարսնեան՝ Քրիստոսառւր Ղազարոսեանի կրքսա վրէժիննդրութիւնը կը նկարագրէ այսպէս.

Մէկ անձէ մը վրէժ լուծելու համար այն անձին բնակած քաղաքը կրակի կուտայ. և իւր նարկիլէին յարմար կրակ կը փնտոէ այն տեղը:

(Արտ. Զոյեր Էջ 286).

759

Յափշաակող աւազակներուն յատուկ՝ առակի աեղ կրնանք գործածել Վանանդացւոց յատուկ սա նկարագիրը.

Վանանդացիք զաւազակութեան գործ մեծ ցանկութեամբ գործէին, և որպէս ուղիղ իրք ախորժելի թուին նոցա:

(Խոր. Պատմ. Էջ 474).

760

Ուր Քրիստոնէից աւեաարանը ձայն չունի, կը յարգուի «ակն ընդ ական»ի վրէժինդրութեան սկզբունքը.

Թշնամանք ի թշնամանաց վրէժ առնուցուն:
(Խոր. Պատ. 515).

761

Հասարակաց շահերուն պաշտպան՝ իբրեւ զէնք, կարելի է գործածել ոս առակը, որ է պատկեր առաջնորդներու, իշխաններու անիրաւութեան.

Միթէ ես երեկեայն աւուր տղայ եմ, որ այսափ պոյ եմ մեծցուցել.

Ի՞նչ կը նշանակէ. ահա պատմութիւնը :
«Ուղա և գայլ և աղուեսք եղբարք եղեն և ի ճանապարհին դատան գ. սուրբ հաց. և ասեն ցմիմեանս. որ աւագ է նա կերիցէ. սկսան ասել զարիքս խրեանց. ասէ աղուեսն. ես այն աղուես եմ, որ Ակամ անուն եղ ինձ. և գայլն ասէ. ես այն եմ, որ զիս Նոյ եմոյթ ի տապան: Եւ աեսեալ ըղաոյն, որ նոքա աւագ ելան քան զնա. և

հացն կելէ ձեռացն. առեալ զհացն ի բերան յորոյց և բարձրացոյց ասելով. մի թէ ես երեկեայն աւուր աղայ իմ. որ այսչափ պոյ եմ մեծցոցել. և սկսաւ ուտել զհացն. և աղուեսն լայր և աղաղակէր ձաթկելով, մինչեւ կոխեալ սաաակեաց զաղուեսն: — Յուցանէ, թէ մեծատունք և առաջնորդք ծծեն զյղեղս ժողովրդեան. և շատք այն են, որ աղքատանան» :

(Ժողով, Առակք Վարդ. Էջ 78).

762

Հայրենիքնիս միշտ յափշտակութեանց և աւեր ու կործանումի ենթարկուած է. ողբալի է Անւոյ առումը Ալփասլանի պաշարելով. ականաւոր աւագանիներն երբ կը տեսնեն Անւոյ կործանումը, կը տարածուին արքայական գերեզմաններու վրայ, ողբալով կ'արատասուեն ու կը հառաշեն.

Արի՞ք, տեսէք զտուն հայրենեաց ձերոց :

(Մատք. Ուռհ. ձժԶ).

763

Երբ մեր տունը կը քանգեն, մեր վրայ
կրակ կը լեցլնեն, կը խուժեն մեր վրայ որ
բռնեն տանջեն, Ակեն, բնական օրէնքը կը
պահանջէ որ մի միայն ծնրագիր չաղօթենք,
այլ և պաշտպանենք մեր կեանքը. մենք
մեր կեանքին վրէժինագիր պէտք ենք ըլլալ.
Աստուած մեզի զէնք միայն աղօթքը չէ
տուած, այլ և անձնապաշտպանութեան հա-
մար խելք, կորով, քաջառառութիւն։ Ուրեմն
պէտք չէ միայն աղօթքին զօրութիւնը մտա-
ծելով կոյր ու ծոյլ մնալ.

Աղօթքն իր տեղը, թուրն իրը։

Ալովեան այլպէս լսած է, և յիշեցու-
ցած, թէ. « Աստուած զշին, հայլանին էլ՝
եա շանկ ա ալել, եա պոզ, եա ատամ,
որ չանկոի, հարու տայ, կծի իր գլուխը
պահի...»

(Վերք Հայաստանի Էջ 117)։

764

Բագրատունին Հ. Արսէն անիրաւութիւն
կը համարի ազգ մը արիշ ազգի մը վրայ
բռնանալը.

Ոչ միում են իրաւունք տիրել ազգի յայլում
վերայ:

(Հայկ. դիշազն Էջ 35).

765

Անիրաւութեան վրէժինդիրը երկինքն է.
Զիրաւունս և զանձին չափ տացէ նոցա գի-
տել երկինք:

(Նոյն Էջ 219).

766

Հ. Արսէն Բագրատունի կ'ըսէ, թէ երկինք
ձեռնտու չէ դաւաճաններուն.

Չեն երկինք ձեռքնտու դաւաճանօդ բըռնաւո-
րաց:

(Նոյն Էջ 364).

767

**Անիրաւ զրկանքներու ատեն, հոգին ջախ-
ջախուած՝ երկինք կը հասցնէ իր բողոքները.**

Ո՞ւր ես դու վերին խընամք աստուածեղէնըն
մեսչութեան,

Առ իմէ՞ յանցանաց դատիմք այսպէս անո-
դորմ.

(Նոյն Էջ 424).

768

Երկինքն ալ ունի իր գաղանիքները, ամէն անզամ՝ չի վարձատրուիր առաքինին և քաջարին.

Այլ աւաղ, ոչ բգրաջաց պըսակեն միշտ երկինք ըզջան:

(Նոյն էջ 507).

769

Յափշտակութիւնը կամ գողութիւնը միշտ գողութիւն է. փոքրի և մեծի խնդիր չի կայ։ Հայաստանցիք ունին յետագայ առակը.

ինչ ձուի գող
ինչ ձիու գող։

Լալայեանցի հանգէսը կը մեկնէ. «Գողացած իրի փոքրութիւնը չի արդարացըներ գողութեան յանցանքը» :

(Արտ. Հանդէս Գիրք VII VIII 1901 էջ 466).

770

Վատն ու բարին հաւասարապէս վարձատրել, գնահատելն անիրաւութիւն է. Ալաշկերացիք այդ առթիւ կը գործածեն սա առակը, որ ծանօթ է.

Հասու ու բարակ մէկ գին,
Վայ բարակ մանողին։
Մեկնութիւնն է. «Երբ լաւ գործողը վա-
տին շափ կը գնահատուի ու կը վարձա-
տրուի»։

(Կոյճ Էջ 470)։

771

Անիրաւութիւնը դութ չունի, կը հարուա-
ծէ կուրօքն։ առակ է.

Շատ դատողին (աշխատողին) շալէ շապիկ,
քիչ դատողին շարէ (մետաքս) շապիկ։
Մեկնութիւնն է, «Կեանքի անարգար
կողմն ալ այն է, որ շարաշար աշխատողը
վատ կ'ապրի, իսկ քիչ աշխատողը՝ շատ
լաւ»։

(Կոյճ Էջ 499)։

ԳԼՈՒԽ ԻԳ .

ՀԱՅՐԵՆԻՔ, ՀԱՅՈՒԹԻՒՆ, ՑԵՐՈՒԹԻՒՆ:

772

**Լատին սովորական այս առածին «Ubi
bene, ibi patria» նման կը գտնենք՝
օտար օրիորդի բերնէն ազգասէր հայ պա-
տանիին լսած այս գաղջ զրոյցը.**

**Քու հայրենիքն այնտեղ է, ուր սիրում են
քեզ մարդիկ.**

(Պ. Քարիսա «Ոտանաշորեւր» Էջ 107).

773

**Հայութեան բարի յատկութեանց վրէժիլն-
դիր՝ Գամառ Վաթիպան կը գրէ.**

**Հային յիմար կարծողը՝ երկու աչքով էլ
կուր է.**

(Նոյն Էջ 115).

774

**Պատկանիան բաղաքականօրէն մտածելով,
թուրքին շատ ողջամիտ խորհուրդ կու տայ.**

Թուլք, լաւ պահպանէ դու Հայոց ազգին,
Նա քարէ պատ է քեզ, ոչ թըշնամին,
(Նոյն էջ 188).

775

Հայութիւնը ժամանակին ընարեց հպա-
տակիլ Ռուսին, քան թէ միւս մահմետա-
կան ազգաց. Ռաֆֆի իր «Խենթ»ին մէջ
Հայութեան բերնով կը խօսի.

Աւելի բարտոք էր (հայ ժողովուրդը) համա-
րում հպատակել ռուսաց արծուին, քան օսման-
ցոց կիսալուսնին...

(Խենթը էջ 35).

776

Բայց աւելի նշանաւոր էր Ատրպատա-
կանէն 40,000 դաղթական հայոց այս
խօսքը.

Լաւ է Ռուսաց խոտն ուտենք՝ քան Պարսից
հացը:

(Բարպատական Պատմ. էջ 688).

777

Թափփի իր «ԽԵՆԹԸ» վիպասանութեան մէջ, հայուն անպաշտապանողական բնաւորութիւնը ուզելով պախարակել, չափազանց անազնիւ ստորնութիւններու կ'ենթարկէ մեր ազգութիւնը. ահա թէ ինչ ակնարկներ կան իր այս առղերուն մէջ.

Բայց մենք ոչխարից էլ վատ ենք, հաւից էլ վատ ենք... ոչխարը գոտէ եղջիւրներ ունէ, երբեմն նրանցով կովում է. հաւը սուր եղունգներ ունէ, երբեմն նրանցով ծւատում է... իսկ մենք մեզ պաշտպանելու համար ոչինչ չունենք... Մենք մարդկութեան կեղտն ենք, նրա կղկղանքըն ենք, որ պէտք է մաքրել, ոչնչացնել, որ մարդկութիւնը չապականուի...

(Խեցը 104).

778

Թափփիին, երբէք ներելի չէ այս պարսաւները որ հայութեան անզթօրէն կու տայ: Չի կայ ազգ, որ չունենայ իր յատուկ թերութիւնները: Թափփիի նպատակը թէեւ հիանալիօրէն համակրելի է, սակայն այդ լեզուն շատ գոեհիկ ու դատապարտելի է: Եւ շարունակելով իր տեղատարափ պար-

սաւները, ամենէն վերջը կը հարցնէ ու կը պատասխանէ.

Բայց մենք ի՞նչ ենք... մենք ոչինչ ենք...
(Կոյճ էջ 105).

779

Պաֆփի կը գըրէ. «Ամէն մի հայ, առանձին վեր առած, զգուշ է, մտածող է, անվստահ է և սեպհական կամք չունի։ Նա միշտ սպասում է օրինակի, որ ուրիշը սկսէ, իսկ ինքնն նրան հետեւի»։

Բայց հետեւութեան համար,

Ուզում եմ ասել, որ հայը օտարներից օրինակ չէ վեր առնում, այլ սպասում է, որ օրինակը տար նրան իր նման մի հայ։

(Խեցբ էջ 192).

780

Բայց հայութեան մասին Պաֆփի աւելի յաւսահատ ճշմարտութիւն մը կը վկայէ.

Հայը, աւելի քան օտարները, ինքնն է իր թշնամին...

(Խեցբ էջ 290).

781

Եւ սովորական առածին՝ տապարի և կոթի մասին, Բաֆֆի հառաշելով կը գրէ այս տողերը.

Սեզ հարստահարող, մեզ տանջող, մեզ ստըր-կացնող, մեզ ոչնչացնող և մեր տունը քանդող գործիքի կոթը մեզանից՝ հայերիցս է:

(Խեթը Էջ 303.)

782

Մենք շատ ախրութեամբ կ'արձանագրենք Բաֆֆիի հետազայ տողերն, որուն ճշմարտութիւնը և պատմական ահոելիութիւնը յաւսանք զոնէ ապագային սոսկում պատճառելով, մենք մեզի կը գթանք, մենք մեր ազատութիւնը չենք մատներ, մենք մեր ողջ մարմինը մեր ձեռքով չենք յօշոտեր։ Ծառերը անատոի թագաւորին կ'իմացընեն, որ գործիք մը յայտնուած է և որ զիրենք կը ջարդէ. և որուն գլուխը երկաթէ է, իսկ կոթը փայտէ. թագաւորը կը պատասխանէ. «Այդ շատ վտանգաւոր գործիք է»։ ինչո՞ւ վասն զի «կոթը մեզմէ է»... Բաֆֆիի «Խենթին»

մէջ՝ տապարի կոթը կեղծաւոր թումաս է՝ ֆէնտին է. ահա թէ Ծափփի ինչ կը գրէ. — «Թումաս էֆէնտիները, սկսեալ գիւղական մութէզիմից, մինչեւ Բարձր Դռան հայ ամիւրան, այս տեսակ կոթեր են թշնամիների ձեռքում։ Հայոց պատմութեան մէջ երբէք պակաս չեն եղել այս չար և վնասակար կոթերը։ Ուր կը տեսնէք հայրենիքը և ազգը օտարի ձեռքը մատնելը, — այնտեղ խառն է եղել հայի մատը։ Ուր կը տեսնէք հայ թագաւորի գահնկէցութիւնը և նրա գտաւզանը օտարի ձեռքը յանձնելը. — այնտեղ խառն է եղել հայի մատը։ Ուր կը տեսնէք հայ թագաւորի դէպ ի աքսոր մատնութիւն և նրա մայրաքաղաքի գոները թըշնամու առջեւ բաց անելը, — այնտեղ հայրենի հողը հայի արիւնով ներկված, նրա բնակութիւնները կրակով ոչնչնցրած և նրա զաւակները գերի տարված, — այնտեղ խառն է եղել հայի մատը։ Ուր կը տեսնէք կրօնի, ազգութեան և սուրբ եկեղեցու զաւաճանութիւն, — այնտեղ խառն է եղել հայի մատը։ Մի խօսքով, ամէն թշուառութիւն-

ների մէջ, ամեն հալածանքների մէջ, և մեր
թշնամիներից կրած ամեն տեսակ եղեռնա-
գործութիւնների և բարբարոսութիւնների մէջ
միշտ գործել է հայի ատապարը։ Հայը ինքն
է փորել իր ազգային շինուածքի հիմքը, և
ինքն իր ձեռքովն է կործանել իր սուրբ և
նուիրական հաստատութիւնները...

Ի՞նչու ենք մեղադրում օտարներին։
(Խեցը Էջ 304)։

783

Գ. Արծրունի չուզեր լնգունիլ որ Հայու-
թիւնը վաճառական ազգ ըլլայ. կը խորհըր-
դածէ.

Բայց մի՞թէ այնպիսի ազգին, որ միայն առ-
նում է և ծախում է, իսկ ինքն ոչինչ չէ ար-
դիւնաբերում կարելի է վաճառականական ազգ
անուանել։

(Գ. Արծրունու Աշխատութիւններ Հ. Ա. Էջ 170)։

784

Նոյն հրապարակագիրը հայութեան իբրեւ
յատկանիշ ճշմարտութիւն մը, կը գրէ.

Հայի բնաւորութեան մէջ կայ մի նշանաւոր

յատկութիւն. ձկտողութիւն դէպի հարստութիւն... սա հայի արժանաւորութիւններից մէշ-կըն է:

(Նոյն էջ 274).

785

Հ. Ալիշան միշտ փափաքելով մեր փափուկ յատկութիւնները դգուել, կը հարցընէ.

Ո՞ւր երեւեցաւ երբէք ի Հայս պժզալին այն տեսիլ քաղաքամարց Եւրոպայ, ուր մնծատունն ի գրգանս փափկանայ, և տնանկն նզովս զհետ նմին արձակէ:

(Բագմավկա 1843 էջ 336).

786

Հ. Ալիշան հիացած և մագնիսացած է միշտ հայ տաղանդով, հայ ձիրքերով. կը գրէ.

Հայաստան առաջին արուեստանոց և թանգարան եղեալ աշխարհի. անդ Զրուանք և Զրադաշտք հնարէին զարուեստ իւրեանց. անդ յառաջ իսկ քան զամենայն մարդ՝ ճարտարապետն ամենայնի Աստուած ուսոյց զերկրագործութիւն...

Հ. Ալիշան կը հաստատէ իր համոզումը

Ներքին և արտաքին պատմիչներով։ Ճարտարապետութեան ծննդավայրն ալ Հայաստանն է. ի զուր արդի հնագէտ մը ըստած է, թէ Հայքս շենք աեղեակ թէ ունինք մեզի սեփական յատուկ ճարտարապետութիւն մը. 50 տարի առաջ Հ. Ալիշան արդէն գրած է թէ Հայաստանի մէջ ծնած է ճարտարապետութիւն.

Ճարտարապետութիւն անդ ծնեալ և արտաքոյ զարգացեալ, և առ Շամիրամաւ անդրէն ի նոյն մուծեալ քարգաւաճեաց ի Տայս և ի Կորուս, ի միջին դարուն եւս ընծայեաց մեզ Պալլատիոնս զՏրդատ և զՄանուէլ, և ցայսօր իսկ ոչ անընտել է արուեստն մերոց ճարտարաց.

(Բագրավեպ 1844. էջ 350).

787

Հ. Ալիշան մանրամասնօրէն կր զրուատէ հայ երաժշտութիւնը, նկարչութիւնը, ճարտարապետութիւնը, ճարտարաբուսեար ու եւրոպացիներէն իսկ վկայութիւններ կը բերէ. և քանի որ օաարները կր հիանան հայ հանճարին վրայ, ինքը չի վարանիր ըսելու,

թէ հայ մարդ չկայր յԱսիա, աշխարհն այն այսօր ոչ ինչ առաւելոյր քան զԱփրիկէ:

(Նոյն էջ 351).

788

Մեր հայկական հոգւոյն վեհապանծ յատ-
կութիւնն է եղած ինչ որ կը գրէ Հ. Ալի-
շան.

Վահան զուսով սիրէր ոգին Հայաստանի հըս-
 կել զսահմանօք աշխարհին իւրոյ, քան սուսե-
 րամերկ խաղալ յօտարին կալուածս:

(Կոյն Էջ 365).

789

Հ. Ալիշան ամէն ազգաց բնատուր, և
 ամենէն գեղեցիկ յատկութիւնները, կը բար-
 դէ մեր ազգին վրայ . Հայութեան ինքը
 սքանչացող է. և անզուսալ է իր հիացումը, ո-
 րով կ'ըսէ.

Այս ազգ է միայն որ ի սկզբանէ մինչեւ ցայ-
 սօր ի չորից հազարաց ամաց հետէ՝ բարեմոյն
 վարս կենաց ստացեալ է.

Եւ կը շարունակէ ըսել, թէ «այս ազգ
 է որ զսքանչելի չափաւորութեան իւրոյ տա-
 րազ յամենայն աեղիս ցուցանէ, լուրջ գո-
 լովլ որպէս զՍմանեանն, աշխոյժ որպէս ըզ-
 Պարսն, սակաւապէտ որպէս զՀրեայն, նըր-
 բամիտ որպէս զՅոյն, կրօնասէր որպէս

զՍպանիացի, ժիր հաւատարիմ որպէս ըզ-
չելվետիացի, ժումկալ և մաքուր որպէս
զՀոլանտացի, մտահարուստ իբր զԳերմա-
նացին, զուարթամիտ իբր զԳաղղիացին,
հզօր ի կարծիս որպէս զԼեհն, խորագէտ
որպէս զԼուսիտանացին, վաճառական որպէս
զԱնգդիացին, յաջողաձեռն որպէս զԽոտալա-
ցին, յառաջատես և շահախնդիր որպէս զՎե-
նետկեցին, և շափաւոր որպէս զարդարեւ
Հայ :

(Կոյճ Էջ 367).

790

Ըստ Հ. Ալիշանի Հարենիքը անպետ և
անկրօն գիտուններու պէտք չունի, այլ
Հայրենիք մեր արանց լաւաց և ողջամտաց
կարուտ են :

(Կոյճ 1846 Էջ 358).

791

Եւ ըստ Հ. Ալիշանի, Հայրենիքի լաւն ու
բարին՝ միասին շենք կարող փայփայել. կը
գրէ.

Ազգին պակասութիւնը պարտըկել՝ խելացութիւն է, բայց պակասութիւնը չի ճանչնալ՝ մեծանիելքութիւն է:

Բայց ո՞ր բժիշկը խորհուրդ կու տայ որ պարտըկենք հիւանդութիւնը, այդ պարտըկելուն մէջ մենք խելք չենք գտներ:

(Բաղմավեա 1849 էջ 65).

792

Ամբողջ ազգին կրթութեան համար Հ. Ալիշան ունի իր յատուկ գաղափարը: Մայրայեղ միջոցներէն կը զգուշանայ. ըստ իր կարծեաց, ազգին առաջնորդները ո՛չ շատ կճող, և ո՛չ ալ շատ փայփայող պէտք են ըլլալ: Կը գրէ.

Ազգը միշտ վար զարնել, անդադար պակասութիւններն յիշել, ողբալ, արհամարհել, ասոնք մարդուն սիրտը կը կոտրեն, թուլացընեն, յուսահատեցընեն, կատղեցընեն. միշտ գովեն և գովելի ցուցընելն ալ՝ սիրտը կ'ուռեցընեն, միտքը կուրացընեն, սնապարծ ազգասէր մը կ'ընեն, օդու մէջ պարող մը՝ որ հաստատութիւն չունի, ու խելացին փուփ մը ըսէ՝ վար կ'իյնայ:

(Բաղմավեա 1849 էջ 66).

793

Հ. Ալիշան ընդհանրապէս ազգը խարազանելով ուղղելուն դէմ է.

Հատ կը սխալին անոնք որ ազգը կ'ուզեն շարժել յանդիմանելով, կծու ձայնով, կը կարծեն թէ փոսը ընկած էշ մը կը վերցընեն հրելով, մշտելով, կանչուըռտելով, հայհոյելով, այս բանս շարժելու տեղ՝ աւելի կը ջլատէ. կը կոտրէ ուժը, արդէն հիւանդ մարմինը աւելի կը վատուժցընէ: Նոյնպէս ասոր հակառակ չափազանց փայփայելն շողոքորթելն ալ կրնայ չարաչար գիրութիւն մը բերել հիւանդ սրտին՝ որ նոյնպէս վասակար է անոր:

(Կոյք էջ 66).

794

Հայրենիքի նուազը հիանալի է, երբ կը հընչէ նահապեաի քնքուշ սրինգէն.

Հայրենեաց հարուստ է հող, ջուրն անուշ, Քանց օտար վարդ՝ քաղցր է հայրենեաց փուշ. Հայաստանի օդն է քաղցր ու բարակ Հովերն են անուշ, պայծառ են վըտակք. Ջուրն ու պըտուղն համ տան անմահութեան, Խոտն ոսկեզօծէ զգառներուն բերան.

(Հայրութի էջ 269).

795

Քաջ են մեր հայեր, Հայաստան ծնաւ
քաջեր անհամար. այսպէս կ'երգէ «Հայոց
աշխարհիկ»ի խօսնակ Նահապետը.

Հատ կըտրընուորայք հանեց Հայաստան,
Հատ բելեր փլուցին քաջքն Հայկի նըման.
Հոռոմն, Ասորին, Մար, Սըկիւթ, Պարսիկ
Հայոց թըրերուն եղան պատառիկ.
Այս սարեր, ձորեր ու դաշտերս ամէն
Կարմիր են քրտնել, կարմիր խըմել են.
(Հայուռեկ Էջ 272).

796

**Քաջալերական է Նահապետի սա խօս-
քը.**

Թող աշխարհաց լուր լինի՝
Որ քանի եմք կենդանի
Հայաստան ոչ տի մեռնի...
(Նոյն Էջ 338).

797

Եւ «Հայ հանճար»ի երգը, թէեւ յուսա-
հատ է, սակայն դեռ յոյս կու տան այս
երկու առղերն.

Հայաստան անկեր
Բայց ոչ է անցեր:

(Նոյն էջ 344) .

798

**ՄԵՆՔ ՓՈՔՐ ԵՆՔ, ԲԱյց ՄԵՐ ԱՆՑԵՎԱԼ
ԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, և Քաջութիւնները ՓՈՔՐ ՀԵՆ.**

Զի թէպէտ և եմք ածու փոքր և թուռվ յոյժ
ընդ փոքրու սահմանեալ և զօրութեամբ տկար և
ընդ այլով յոլով անգամ նուանեալ թագաւորու-
թեամբ. սակայն բազում զործք արութեան զը-
տանին գործեալ և ի մերում աշխարհիս, և ար-
ժանի գրոց յիշատակի. զորոց և ոչ մի ոք ի
նոցանէ պէտք յանձին կալաւ մատենազրել:

(Խոր. Պատմ. էջ 20).

799

**ՀԱՅԱՍԷՐՆ ԱԼԻՍ ԱՎՈՆ ՊԼԵՔՈՒԷԼ՝ ՊՈՍԳՈՆԻ
Արմենիա անգլիերէն հանդէսին Նոյեմբեռ
թիւին մէջ հրատարակած է հայութեան մա-
սին տաղանդաւոր և նշանաւոր եւրոպացի
անձնաւորութեանց հետեւեալ գեղեցիկ բացա-
արութիւններն: «Պատուարժան ՃՇԿՄՆ Պրայս՝
«Ամերիկեան Հանրապետութեան» հեղինակը
որ Հայաստան ճամբորդած և ժողովուրդը
ուսումնասիրած է՝ սապէս կը գրէ.**

Ամբողջ Արեւմտեան Ասիաքնակ ցեղերուն մէջ, Հայերը թէ մտաւորական և բարոյական զարգացման ընդունակութեամբ, և թէ կամքի ու նպատակի բնական յամառութեամբ աւելի յառաջադէմ են իրենց բոլոր գրացիներէն, ոչ միայն թուրքերէն, թաթարներէն, Փիւրաներէն և Պարսիկներէն, այլ և Ծուսներէն։ Անոնք զօրաւոր ցեղ մըն են, ոչ միայն ամուր ջղերով և նեարդներով, – Փիզիգաապէս գործունեայ և կորովի, այլ և ուղեղի գերազանց ուժով։

Տիկին իզապէլլա Պըրտ Պիշըր, հանրածանօթ Անգլիացի ճանապարհորդուհին, խոստովանելէ յետոյ թէ Հայոց զէմ իր ունեցած կանխակալ կարծիքին յաղթելու պէտք ունեցած է՝ կ'ըսէ։

Կարելի չէ ուրանալ թէ հայը ամինէն կարող, կորովի ձեռներէց և յանդուգն ցեղն է Արեւմըտեան Ասիոյ մէջ, Փիզիգաապէս գերազանց և մտաւորապէս սուր, և ամէն բանէ աւելի այնպիսի ցեղ մը, որ կրնայ ամէն տեսակէտով բարձրացուիլ մեր մակարդակին։ Քանի որ ոչ կրօնքի, ոչ գոյնի, ոչ բարքերու, և ոչ ալ մտքի կամ ուժի ստորակայութիւն կայ իբր պատուար մեր և իրենց միջնւ։ Իրենց խորագիտութիւնը և գործի ընդունակութիւնը նշանաւոր են, և վաճառականական ինչ ձեռնարկ որ կայ փոքր Ասիոյ մէջ՝ գրեթէ ամբողջովին իրենց ձեռքն է։

Լամարդին Հայերը կը կոչէ «Արեւելքի

Զուիցերիացիները » . Տիւլորիէ զանոնք Հուլանատացիներու հիս կը բաղպատէ, իսկ ամերիկեան միսիոնարները զանոնք կը նկարագրեն իբրեւ « Արեւելեան թուրքիոյ Անկուլո-Մաքոններ » : Տր. Կրէյս Ն. Փիմպօլ Հայաստանի կեղրոնը տարիներով ապրելէ յետոյ՝ Հայերը կը նկարագրէ իբրեւ « Ճեռներէց ոգիսվ և յատաջագիմութեան ոգիսվ լի ցեղ մը, յատկանիշներով մեզի շատ նըման և ամէն տեսակ հնարաւորութիւններով հարուսա » : — Հայերուն մասին բան մը գիտցողներէն ոչ մէկը կ'ուրանայ անոնց խելացիութիւնը և կարողութիւն։ Անոնց դէմեղած մեղագրանքը այն է թէ վստահելի չեն, և այս ամբասատանութիւնը լինդհանրապէս ամենայն խստութեամբ կը կատարուի այնպիսիներէն, որ անոնց մասին ամենէն քիչ աեղեկութիւնը ունին։ — Տր. Մայրս Համլին, Ռիօվըրդ Գոլէճի հիմնադիրը որ 35 տարի թուրքիա ապրած է, ուսում տարածելով, գրած է որ « Հայերը ազնուական ցեղ մըն են » : — Տր. Ճէյմս Լ. Պարթին, Օտար Միսիոնարութեանց Ամերիկեան Պօր-

տին քարտուղարը և Եփրատ Գոլէճի նախկին հախագահը, կը գրէ, « Այսպէս զիտեմ որ Հայերը ժառանգապէս կրօնասէր, ոշխատասէր, հաւատարիմ ազգ մըն են, մըստային կարողութեամբ աշխարհիո և ոչ մէկ ազգէն վար կը մնան: Ասիկա կ' լսեմ՝ ութը տարի կապակցութիւն ունեցած ըլլալով Եփրատ Գոլէճի հետ-որ շարունակարար 500էն 625 հայեր ունի իր ուսանողներուն ցուցակին մէջ, — և վերատեսչութիւն բրած ըլլալով ուրիշ գպրոցներա վրայ, որ նոյնպէս 4000 հայ աշակերտներ ունեցած են»: — Օր. Ֆլորէնս Է. Ֆլնչէմ, Է. Պոլոսյ Ամերիկեան աղջկանց վարժարանին աւագ ուսուցահին որ տարիներով հայ աշակերտուհիներ զաստիարակած է, ինծի լուած է որ զանոնք գտած է ոչ միայն քաջ ուսանողուհիներ, այլ և խիստ վստահելի աղջիկներ: — Լորա Պալրըն Հայերու մասին գրած է.

Դժուար պիտի ըլլար թերեւս ուրիշ ազգի մըտարեգրութեանց մէջ գտնել աւելի նուազ ոճիրներ, քան տարեգրութեանը մէջ այս ազգին որուն առաքինութիւնները խաղաղութեան պտուղները են, և մոլութիւնները իրենց կրած հարըստահարութիւններուն հետեւանքը:

Տառը տարի առաջուան ջարգերէն ի վեր
ինծի վիճակած է շատ մը հայ փախստա-
կաններ զրկել իրեւ տան սպասաւորներ,
անոնց տէրերէն կամ տիրուհիներէն տեղե-
կութիւն լնդունիլ անոնց մասին, և յաճախ
անոնց հեաքը չկորսնցընել տարուէ տարի:
Ուղղամառութեան հակառակ միայն մէկ օրի-
նակ պատահեցաւ բոլոր զրկածներուս մէջ:
Շատերը իրենց տէրերուն համարումէն զատ,
սէրն ալ վասակած են: Իմ հայոց մէջ ու-
նեցած անձնական ծանօթներուս և բարե-
կամներուս մէջ կան մի քանիներ որ իմ ճանչ-
ցած մարտերուս ամենալաւերէն են: — Հայերու
մէջ ինչպէս ուրիշ ամէն ազգերուն մէջ, ա-
մէն տեսակ մարդ կայ, լաւ գէշ և անորոշ:
Քանի որ Հայերը «Ճարպիկ» ցեղ մըն են,
երբոր անոնցմէ մէկը ինքզինքը անպիտա-
նութեան տայ, առաջին կարգի սինլքոր մը
կրնայ ըլլալ. բայց ընդհանրապէս ճշմարիտ
է, ինչպէս Պատ. Էտակին Մ. Պլիս, —
Կ. Պոլիս Հայերու մէջ երկար փորձառու-
թիւն մը ունենալէ յետոյ ըստած է, որ «այս
ցեղը աւելի շատ և աւելի մօտ կերպով

ճանչցողները՝ զայն աւելի բարձր կերպով
ալ կը յարգեն » :

(Լոռստրեր թիւ 8 տարի 1904) .

800

Ա՞ր ազգին բարուց համար ամեն բան
ըսուած է . մեր թերութեանց ամենէն ուժեղ
ձաղկողը խորենացին եղած է . Ծրդատ
Քրիստոնէութիւնը կ'ուզէ սիրցընել նախա-
րարաց, սակայն ի զուր . հայը ունի իր
բնատուր յամառութիւնը . նորամառութեան
դիւրաւ տեղիք չի տար .

Այլ զիստասրտութիւն կամիմ ասել, թէ և
զամբարհաւաճութիւն ազգիս մերոյ յիսկզբանց
և այսր, որպէս անհամբոյր բարույ և ճշմար-
տութեան անհարազատ կամ թէ բնութիւն ու-
նելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւն ...

(Խոր. Պատմ. էջ 367) .

801

Նախարարները զբաղած են հարճերով և
կիներով . Ծրդատայ խրաները շատ զառն
կ'անցնին : Որովհ քարոզիչ թագաւորը յու-
սահատած քարայրներու մէջ կը քաշուի կը

ճգնի։ Եղեռնական է պատմութիւնը, պատմիչը՝ նոյնինքն թող խորենացին Մովսէս ըլլայ. «Աստանօր ամաչեմ տսել զճշմարտութիւնն մանաւանդ թէ զանօրէնութիւն և զամբարշտութիւն ազգիս մերոյ, և զմեծի ողբոց և արտասուաց արժանի սոցա գործս։ Քանզի զիետ առաքեալ, կոչեն զնա՝ լինել ըստ կամաց նորա, և ունել զթագաւորութիւնն։ Խսկ ի չհաւանել սրբոյն տան նմա արբումն, որպէս անդ ուրեմն ի հինսն աթենացիքն Սոկրատայ զմոլեխինզն. և կամ թէ զմերն խսկ ասել, կատաղեալ երրայեցիքն ըմպելի լեղեաւ խառնեալ Աստուծոյ մերոյ։ Եւ զայս արարեալ շիջուցին յինքեանց զբազմափայլ ճառագայթն աստուածպաշտութեան»։ Խորենացին յուզուած այս տիրանենդ գործով, Նախարարութեան այդ վաստ արարքը կը համարի ամբողջ ազգին ոճիրը. ու կը բացազանչէ.

Ազգ թիւր և դառնացող, ազգ՝ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր, և ոչ հաւատարմացաւ Աստուծոյ ոզի նորա։

Պատմիչն կ'ըսէ թէ մեծ երախտաւորի։

մը հետ եթէ այլպէս վարուեցան ի՞նչ կը յաւսան այլք... Խորենացին և իր ակումբը այս անձնանուէր գրագիտաց կաճառը ի՞նչ կ'ակնկալե՞ն. «Արդ ընդ եթէ սուրբս Աստուծոյ, և որք ի թագաւորութենէ յաղագս Աստուծոյ զի՞նքեանս նուաստացուցին՝ այս է, այլ զի՞նչ մեր բանս առ Աստուծոյ յաղագս ի ձէնջ վտանգիցս, որոց վաանգք և աղքատութիւն սեպհական է։ Այլ սակայն ասացից։ Ո՞ ոք ի ձէնջ թոշակս յաղագս մեր, ո՞վ ոք վարդապետացն մաղթանս, ո՞վ ոք բան յօժարեցուցանող կամ յորդորական, ո՞վ ոք յերթալս մեր բեռնաբարձս, ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց։ Թողից զայլն, զի և ոչ զլեզուս չարս և զտգիտութիւնս, հանգերձ սնոտի փառամոլութեամբն և կատաղի լեզուաբանունութեամբն, սահմահարեցէք. այլ նիւթ նոցա անմտութեան զձեր ուսումնտեացդ տալով բարս, բորբոքեցէք առաւել քան զհնոցն Բաբելովնի»։

(Խոր. Պատմ. Էջ 368-70)։

802

Խորենացին իր պատմութիւնը ողբերգութեամբ կը վերջացընէ. իր այդ էջը հայկական եղերերգութիւն մըն է, Հայաստանի և հայութեան տիրունի նկարագիրը. ծերունիքերթողահայրն մեր Խորենացին Մոլսէս կ'ողբերգէ.

Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն. զի բարձաւթագաւոր և քահանայ, խորհրդական և ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն, դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն:

(Խոր. Պատմուք. Էջ 546).

803

Եւ կը շարունակէ իր տիրուր վշտերգը. Ողորմիմ քեզ, եկեղեցի հայաստանեայց, խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմբին, ի քաշէն զրկեալ հովուէ և հովուակցէ:

(Կոյճ Էջ 546).

804

Հայաստանի վարիչներն ալ կը պախարակուին.

Իշխանք ապստամբք, գողակիցք գողոց, կըծ-
լիք, կծծիք, ժլատք, ազահք, յափշտակողք, աշ-
խարհաւերք, աղտեղասէրք, ծառայիցն համա-
միտք:

(Նոյն էջ 554)։

805

Հայաստանի մէջ ալ խաղաղութիւն չկայ.

Զի թագաւորք տիրեալք խիստք և չարաշարք,
բեռինս բառնալով ծանունս և դժուարակիրս,
հրամանս տալով անտանելիսս. վերակացուք ան-
հարթարարք, անողորմք. սիրելիք դաւաճանեալք
թշնամիք զօրացեալք. հաւատ վաճառեալ ընդ
սնոտի կենցաղոյս։ Հէնք եկեալ անհատք և յո-
լովից կողմանց, գերփումն տանց և յափշտակու-
թիւն ստացուածոց, կապումն զլիսաւորաց և
բանտք յայտնեաց, յօտարութիւն վտարումն ա-
զառաց և անթիւ նեղութիւնք ռամկաց, առումն
քաղաքաց և քանդումն ամրոցաց, աւերումն ա-
ւանաց և հրդեհումն շինուածոց, սովք անբաւք
և հիւանդութիւնք և մահք բազմօրինակք. աս-
տուածպաշտութիւնն մոռացեալ և ակնկալութիւն
գեհենի։

(Խոր. Պատմ. էջ 555-6)։

806

**Ցէրութեան մը վարիչէն ոչ վայելագեղ
պերճանք, այլ խելք և վարչական տաղանդ
կը պահանջուի։ Կը գրէ առակախօսն վար-
դան։**

Ժողովեցան թուունք և ընդրեցին զսիրայմարքն
վասն գեղեցկութեան իւրոյ. աւծին զնայ թա-
գաւոր. զայ աղաւնին և ասէ. ով բարի թագա-
նոր, եթէ նեղեն զմեզ արծիւքն, դու զինչ աւգ-
նութիւն կարես առնել մեզ։

**Կը մեկնէ. «Թէ թագաւորին ոչ միայն
գեղեցկութիւն (վայելէ), այլ և քաջութիւն
և պատերազմական զաւրութիւն յամենայն
կողմանց»։**

(Ժողոված. առակ. Վարդ. Էջ 35).

807

**Առաջնորդին շաա խոհականութիւն կարե-
ւոր է. Եղնիկ կը գրէ.**

Տգէտ և անընտրող առաջնորդ՝ ի բժշկելն խո-
ցէ. և յուղղելն խորտակէ, ի սիրոյ տեղ՝ ատե-
լութիւն ցուցանէ, և յատելութեան՝ զսէր. և
խառնափնդորելով գեղքարսն անվաստակ հանէ։

(Եթիկ Էջ 311).

808

Միեւնոյն բարոյախօսը հոգեկան պետե-
րուն կ'ուղղէ սա խօսքերը. «Որ սիւն եղեալ
է և զբոլոր շինուածն յինքն հաստատեալ,
եթէ խորտակի՝ զամենեսեան ի վայր կոր-
ծանէ։ Այսպէս և առաջնորդն թէ ոչ ըստ
կամաց Աստուծոյ վարի, զամենայն եղբայ-
րութիւնն սատանայի մատնէ. և փոխանակ
առաջնորդութեանն՝ կորստեան պատճառ լի-
նի։ Մեծ հերձուած և անրժշկելի չարիք է
այնպիսի առաջնորդութիւնն.

Զի մարդիկ յօրինակն առաւել հային, քան
 ի ճշմարտութիւնն :

(ԵՊԲԿ Էջ 311)։

809

Նոյն վարդապետը առաջնորդներու ազա-
հութեան համար՝ խսախւ կը զրէ.

Առաջնորդ ազահ, որ է կուապաշտ, աւազա-
 կապետ է... ամենայն աւուր սպանութիւն գոր-
 ծէ։

(ԵՊԲԿ Էջ 312)։

810

Առաջնորդը պէտք է հպատակներուն ցաւովը ցաւի, թէ ոչ.

Եթէ ամենայն եղբարցն հիւանդութիւնն քեզ ոչ ցաւէ, մի՛ լինիր առաջնորդ։

Եւ դարձեալ առաջնորդին կը պատուիրէ.

Եթէ զանարժանն ըստ պիտոյիցն ոչ յանդիմանես, մի՛ լինիր վարդապետ։

(Նոյն էջ 313)։

811

Խիկար գիւանագիտական ոա պատուէրը և խուրհուրդը կու տայ։

Որդեակ թէ լսես քան ինչ ի տան արքունի, մնոյ և թագոյ զնայ ի սրտի քում և մի ումնք ի վեր հանիցես...

(Խիկար էջ 10)։

812

Մենք ի վաղուց անիծեր ու պախարակած ենք ազգային բնիկ ու յատուկ թերութիւնները. մեր պատմիչները, մանաւանդ խորենացին՝ իր զրշով ամէն տեսակ հոգե-

կան տիսուր պակասութիւններ գտած է մեր վրայ. սակայն կը սքանչանայ և կը հրաշանայ մեր վրայ. Բուզանդ Շապուհ պարսից թագաւորին սա խօսքերը յիշատակած է, իբրեւ վկայութիւն հայկական տիրասիրութեան.

Երանի՞ որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրասէր և միաբան միամիտ զօրաց:

Միեւնոյն պատմիշը այսպիսի յատկութիւն մը արձանագրած է նաեւ Մամիկոնեան Վասակի համար։ Պարսից թագաւորին ախոռապետը մեր Արշակ թագաւորին սա անարդական խօսքը կ'ըսէ. «Այծից Հայոց արքայ, ե՛կ նիստ ի խրձան խոտոյ ի վերայ»։ Հայոց Մեծաց սպարապետն Մամիկոնեան Վասակ, այդ խօսքը լսելուն, բարկութիւնը չի կարենալով զսպել, «ի վեր առեալ զսուսերն՝ զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղւոջն զախոռապետն արքային Պարսից՝ գլխատէր... զի ոչ կարաց ժոյժ ունել զիւրոյ թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եղեալ՝ լաւ հաշուէր բա-

զում անգամ, քան զաեաան իւրոյ լսել ըպ-
վատթարութեան թշնամանս » :

(Բուզանձ Ե. 4.)

813

**Սպարապեան Վահան Մամիկոնեան առ
պարսիկն Միհրան դիտել կու աայ.**

Տէր՝ որ յիւր ի ծառայից զլաւ և զվատթար
չգիտէ ընտրել, և ըստ արժանի իւրաքանչիւր
ումեք մատակարարել զպիտոյսն ոչ կամի, այն-
պիսին լաւ ծառայի տէր գժուարաւ կարէ լի-
նել:

Այս առղերը կարելի է յիշեցընել այն
վարիչներուն, աանուաէրանց և թագաւորաց,
որոնք կը պակսին իրենց վարչական գոր-
ծերուն մէջ:

(Ղազար Փարպեցի ՀԵ).

814

Միեւնոյն պատմիչը կը գրէ նոյնպէս.

Զի գնդի՝ որոյ զօրագլուխն վատ է, գնդին
լաւ լինել չէ հնար. և աշխարհի՝ որոյ իշխանքն
յետին են, աշխարհին այնմ անհնար է յառա-
շադէմ և անուանի լինել:

(Նոյն ՀԵ).

815

Վաղեմի ազգեր՝ թագաւորի մասին շատ
վեհ և ազնիւ գաղափարով խորհած են.
ինքնակալ իշխանութիւնը անշուշտ զիրենք-
երկրային առտուածներ ըրած է։ Վարդան
պատմիչ կը գրէ.

Սիրոք թագաւորաց ի ձեռն Աստուծոյ են։
(Վարդան Պատմ. Պ. 9).

816

Նոյն պատմիչը առ Հեթում թագաւոր,
մտերմաբար կ'ըսէ. «Լուաք ի Քրիստոսէ,
ամէն մարդոյ հրեշտակ կայ պահապան, և

Զեզ՝ որ ազգի գլուխ և թագաւոր էք՝ ինքն
գլուխն Քրիստոս է պահապան անմեկնելի։
(Հայապատ. Բ. Էջ 469).

817

Հայրենիք ինչ որ ալ ըլլայ, միշտ սիրե-
լի է. փոյթ չէ որ կործանուած աւերակ է,
փոյթ չէ որ իր մաքուր ջրերն պղտորած
են. կ'երգէ Պէշիկթաշլեան,

Թէպէտ թռչնիկն ու հովս Հայոց
Աւերակաց շրջին վերայ,

Թէպէտ պղտոր վըտակն Հայոց
 Նոճիներու մէջ կը սողայ,
 Նոքա հառաչք են Հայրենեաց
 Նոքա չերթան սըրտէս ի բաց:
 (Պշտկու. Մասենգրութիւնք էջ 79).

818

Վեհապետերուն, վարիչներուն և թագաւոր-
 ներուն համար ճշմարտութիւն մըն է Պէշիկ-
 թաշշեանի կոռնակի բերնով սա ըսածն, թէ.

Իշխանական թագին զարդերը՝ խայթոցներ
 փուչեր նեղութիւն հոգն ու տագնապն է, ու իշ-
 խան ըսածդ ընծայներով զարդարած զոհ մըն
 է:

(Նոյն էջ 154).

819

Բանաստեղծը իր «կոռնակ» թատերգու-
 թեան մէջ կ'ողբայ մեր ազգութիւնը.

Զքեզ ողբամ թշուառ ազգ. օտար սուրը մէկ
 կողմանէ կ'ուտէ զքեզ, մէկալ կողմանէ ազգու-
 թաց մատնիչներու ձեռք մատնուած հայութեան
 նախատինք, սիրտդ կը կրծեն ու կը լափեն, ու
 խստասիրտ բռնաւոր մը օձու պէս սրտէդ բու-
 սեր ամեն կողմ կը սողայ ու կը սուլէ, ո՛հ թը-
 շուան ժամանակ, թշուան ազգ:

(Նոյն էջ 178).

820

Մեր թշնամին ուզած է և կ'ուզէ ջնջել հայ
խելքի, հայ տաղանդի սիրուն յատկութիւն-
ները. մեր գրչի տէր դէմքերը այդ գրկանք-
ներու չեն կրցած համբերել, այդ պաշտելի
անհամբերներէն է նաև մեր վիպասան Ա-
րովեանը, կը գրէ.. «Ես հօ էս՝ Եւրոպա-
յամն էլ որ չէի կարգում բազի գրքերում,
թէ, Հայ ազգը պէտք է՝ որ սիրտ չի՛ ու-
նեցած ըլի, որ էնքան բաները գլխավն անց
են կացել, մէկ մարդ չէ՛ գուրս եկել, որ
մէկ սրտի բան գրի. ինչ կայ՝ եկեղեցու
վրայ ա, Աստուծու ու սրբերի, բայց հե-
թանոս Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Պոֆո-
կլի գրքերը՝ երէխեքն էլ զլիստակներին ու-
նէին, շունքի բոլոր Եւրոպացիք են անխելք,
անհաւատ, որ Աստուծու բանը թողած, էս-
պէս ծուաի մուաի բաների հետ էին ընկել,
յիմարտւթիւն կրէր. թէ չէ մեր Նարեկը
թողած, ախր ի՞նչպէս էին նրանք էր գրքե-
րին հաւանում։ Լաւ զիտում էի, որ մեր
ազգը էնպէս չէ՛ր, ինչպէս նրանք ասում էին,
ամա ի՞նչ անես, անաղան ջաղացի քարն՝

Էլ չ : պատիա գալիս , ում ասես » : Արսվեան
Եւրոպայի այդ նախառական խօսքը մաս-
ծելով , չհամազուիր , վասն զի .

Թէ Կտրիչ մարդ ասես , մեր միջումն հազա-
րաւորն էլել ու էս օր էլ կան . թէ խելօք խօսք
ասես , մեր պառաւներն ել հազարը գիտեն : թէ
աղ ու հաց ասես , սէր , բարեկամութիւն , քա-
ջութիւն , երևելի անձինք՝ ասես , մեր գեղըցոնց
սիրան էլ ա լիքը այսպէս մոգերով :

Խեղճ վիպասանը կ'ըսէ . « Հապէս բաներ
մտածելով , օրս ու ումբրս մաշվել էր » :
(Վեր Հայոստաճի էջ 5).

821

Հայուն անունը մեծ է , գործերը յառա-
ջադիմական և կարողութիւնը հայակապ .

Ստամբօլ են գնում Հայի տղերքը՝ վազիր ու
փաշայ են դառնում . թէհրան են ընկնում՝ նա-
զիր ու խան :

(Նոյն էջ 189) .

822

Ազգասէր հայութիւնը անձնանուիրաբար
կ'ուզէ մնալ իր մայրենի հողին մէջ , քան
օտարութեան տխուր հանգստառթիւնը վայե-

լել և կորսուիլ. կտրիճ հայրենասէրը, իր օճախէն զինքը արտաքսող թշնամիին կ'ըսէ.

Ի՞նչ կասես՝ տօս, մենք մեր խողը չենք թուղայ:

(Նոյն էջ 288).

823

Սիրելի է վաթանը, հայրենասէրը մատաղ է անոր զլիսին.

Ա՛ն վաթան, վաթան՝ քու հողին դուրբան,
քո ծխին զուրբան, քո ջրին դուրբան.

Է՞ս փառքն ունէիր, էս պատիւն առաջ,
Որ հմիկ աւիրվիլ, մնացել ես անջան:

(Նոյն էջ 289).

824

Եւ հայրենիքի քաջագործութեանց և հալածանաց վկայ՝ սրբազն սարին դարձած՝ կ'երգէ վիպասանը.

Կանգնել ես՝ էղպէս զլուխդ ամպին խփած՝
Այ խեղճ ալեւոր, երեսդ փակած.

Ի՞նչ կըլէր՝ Մասիս, ախ գեռ աչքդ բաց՝
Սրի չտայիր քո որդիքն էրված:

(Նոյն էջ 240).

825

**ՔԵՐԹՈՂՆԿԵՐՈւ ՔՆԱՐԻԻՆ ԲԱՌՆ Է ՀԱՅՐԵՆԱ-
ՍԻՐՈՒԹԵԱՆ ԿՐԱԿՐ. ՎԱՅՐԿԻԵՆԱԲԱՐ Այդ ՄՐՐ-
ԲԱՋԱՆ ԿՐԱԿԻՆ ԱՄԷՆ ԲՆԱԿԱՆ Ու ԳԵՐԲՆԱ-
ԿԱՆ ՎԵՀՈՎԹԻՒՆ ԳՈՀ Կ'ՐԱԼՈՒՆ . ԱՐՈՎԵԱՆ
Կ'ԵՐՊԷ.**

Թո՞ղ հոգիս դժոխվը գնայ, խորովվի՝
Խմ սուրբ նախնեաց տէզ, իմ ազիզ Անի,
Ելի որ մարմինս մէկ քարի տակի
Ըլի քո ծոցումն, ինձ դրախտ պէտքը չի:
(Նոյն էջ 252).

826

**ԹԱԳԱւՈՐԷՆ ԿԸ պահանջուի անկեղծ վար-
չութիւն, սակայն դժբախտաբար զիւանագի-
տական պահանջներով հիւանդացած ամէն
իշխանութիւն և աւագութիւն իր քաղաքակա-
նութեան կը զսհէ ոռկեղէն անկեղծու-
թիւնը, կարծես առանց կեղծ քաղաքակա-
նութեան կարելի չէ թագաւորել, և կարծես
բոլորովին ճշմարիտ է Հ. Արսէն Բագրատու-
նի քերթողին այս տողը.**

Որ զկեղծեաց չուսաւ զարուեստ, ոչ գիտաս-
ցէ թագաւորել:

(Հայկ Դիւցագն էջ 396).

827

Առանց հպատակի տէրութիւն, իշխանութիւն չի կրնար ըլլալ. և առանց ծառայի մեծութիւն չըլլար: Ակաշկերտցիք կ'ըսեն.

ինչան քար մենծ եղնի,
առանց խճի (մանր քար) չը կանի (չ'կանգնիր):

Առակս կը մեկնուի. «**Առանց ժողովրդի՝ իշխանութիւն. և առանց փոքրերու կամ ծառայողներու՝ մեծութիւն չի կրնար գոյութիւն ունենալ»:**

(ԱՊ. Հանդես գիրք VII, VIII, 1901 էջ 466).

828

Ոմանք տէրութիւնը, իշխանութիւնը՝ բըռնակալութիւն կը կարծեն, և իրենց հպատակները սարուկ. այդպիսիներուն կը մաղթեն.

Աստուած հայուն բոր տայ.
ամա եղունկ չի տայ:

Մեկնութիւնն է. «**Հայ մը երբ պաշտօնի գլուխ անցնի՝ իր իշխանութիւնը չարաշար կը գործածէ իրեններուն դէմ:** Հետեւաբար լաւ է չարչարուել, նեղուել, չ'ունենալ մի-

ջոց անկէ ազատելու, քան իշխել և իրեն-ները չարչարել ու նեղել»:

(Կոյք Ել 488).

829

Հայութիւնը ամէն տեղ թշուառ է և տառապեալ, ափսոսանքի ենթարկուած, անոր համար հայկական ռռակը ըստած է.

ինչ տեղ հայ.

ինտեղ «վայ»:

(Կոյք Ել 491).

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ա. Ռ Ա Մ Ն Ե Ր

Ագուաւին ասին դշերի միջին մըն ա սիրուն,
ասեց. իմ ճհւտը:
Ագուաւին ձէնը, թէ որ Աստուած լոէր, վար-
դեւորին (Վարդավառին) ձին կը գար:
Ալքատը ունէր հաց ու պանիր, գիշերը քունը
չի տանիլ:

Ամառ ձմեռը մի խելքն ինչ անի:
Ամէն բանը իրա տեղն ունի:
Ամէն բանի սիպտկացնիլը լաւ չի:
Ամէն փորձանքին մին մին խրատ:
Ամէն օր տատը զաթայ չի ուտիլ:
Այս օրվան գործդ վաղվան մի թողուր.
Անէծքն անիծողին կը դառնայ,
Անձրեւ օր հաւերին ջուր տուհղ շատ կընի:
Ապրիլ կայ էրկաթ ա, ապրիլ կայ էրծաթ ա:
Առաջ մոտածէ ետոյ սկսէ:
Առաւօտուայ շառը լաւ ա քանց իրիկուայ խէ-
րը:

Ասել են ա՛ռ ու տո՛ւր, ոչ թէ ա՛ռ ու կո՛ւ:
Արինն արնով չեն լուանալ:

Բանն արա՛, յետոյ պարծեցի՛ր,
Բարեկամի հետ կեր ու խում արա՛, առուտուր
մի՛ անիլ:
Բարկացող մարդը շուտ կը պառաւի:
Բլբուլը իր դարտը կը լայ, ազռաւը դա՛ռ դա՛ռ
կանի:
Բօշէն փաշայ չի գառնալ:

Գառը գարնան, ձինը ձմռան:
Գեղ կը նստես, գաւառ կը հաշես:
Գիժը դատի, խելօքն ուտի:
Գիժը իւրեան ձգել է հորը, քառասուն խելօք
չեն կարողացել հանել:
Գինի խմողը կը հարբի, կոի գնացողը կը մեռ-
նի:
Գող՝ սրտումը դող:
Գողը գողէն գողացաւ, Աստուած վերեվէն զար-
մացաւ:

Դարտակ կարասի ձայնը բարձր դուրս կու գայ:
Դուռդ փակ պահի՛ր, հարեւանդ գող մի՛ բռնիլ:
Դրուստ խօսողի գտակը ծակ կըլի:

Երկաթը տաք կը ծեծեն:
Երկար խօսելով փլաւ չի եփուիր, բրինձ և իւղ
հարկաւոր է:
Եօրդանիդ գեօրայ ոտդ մեկնի՛ր:

Զանգակի ձէնը հեռուանց լաւ ա գալի:

Էծը իր ոտիցը կախ կտան, ոչխարն իր:
Էն ջրիցը վախեցիր, որ ոչ թշում ա, ոչ խըշ-
շում:

Ընչանք երեխըն լաց չըլնի, մէրը ծիծ չի տալ:
Ընչանք չի գայ յետինը, չի յիշուիլ առաջինը:
Ընչանք դու հասկանաս, ուղտի պոչը գետինը
կը հասնի:

Թագաւորն էլ թագի լայաղ պտի:
Թագաւորութիւնը իրանից կը քանդուի:
Թունդ քացախն իր ամանը կը ճափացնի:
Թուրքն անիծած՝ խօսքն օրհնած:
Թուրքերն անիրաւ, խօսքերն իրաւ:
Թուրքին ընչանք չի ծեծես, խօնախայ չի դառ-
նալ:
Թրի կտրածը կը սաղանայ, լեզուինը չի սաղա-
ժամիցը ես եմ գալի, ողորմի Աստուածը դու
ես ասում:

Իմաստունի հետ քար կրի, յիմարի հետ փլաւ
մի ուտիլ:
Իմ ու քուն տուն ա քանդում:
Ինչ կը բրթես, էն կը խրթես:
Ինչ տեղ հաց, ընտեղ կաց:
Ինչ տեղ պանիր. ընտեղ բանիր:
Իրա համար քնում ա, ուրիշի համար երազ
տեսնում:

Լէնին ճար կայ, նեզին ճար չկայ:

Խալինի աջքը քեզ համար լիս չի տալ:
Խեզն զիլի անումն ա կոտրած, աղուէսը աշ-
խարհք քանդեց:

Դրագը որ վէր ընկնի, կացնաւորը էլ շատանայ:
Դրագը քանի բար շատ ունենայ, զլուխը կախ
կը քցի:

Կճուճը թօլ էլաւ, խուփը գտաւ:
Կնիկ արմատի մազն երկէն կըլի, խելքը կարճ:
Կուժ քեզ ասեմ, կալայ գու լսի:
Կուշոը սպազմին մանր կը բրթի:

Հայի յետի խելքն իմն ըլի:
Հայի խելքը գլխաւմն ա, Վրացաւ խելքը աջքաւ-
մը:
Հասդ ու բարակն մի գին ա, վայ գայ բարակ
մանողին:
Հաբեւանիւ կսիրեմ, որ ձաւիս ազ անի:

Զին ու ջորին կռուեցին, մըշ տեղը էշը սատա-
կեց:

Մանկուց դադումը (վասդակ), ծերուց զաւա-
զան ա:
Մէկ մի տալ, որ երկու չուզի:
Մէկ խելքը լաւ է, երկուսը եւս առաւել:
Վի ձեռը ծափ չի տալ:
Վի ծազկով գարունք չի գալ:

Մի մուկն օխտը կարաս ա մուռտառել։
Մտնելուց առաջ միտք արա, թէ ի՞նչպէս դու
գաս։

Նեղութենին լէնութիւն կայ, լէնութենին նե-
ղութիւն։

Շանը քանի քար քցես կհաչայ։
Շունը կը հաչայ, քարվանը կը քօչայ։

Ոմն սիրէ վարդ, ոմն մանուշակ։
Ով որ փող ունի՝ խելք չունի. ով որ խելք ու-
նի՝ փող չունի։
Որ տեղ որ գնաս, էն տեղի գտակը ծածկի։
Ով ոք փքանայ, շուտով չքանայ։
Ուղտը գտալով չեն ջրիլ։
Ուրագն իւր կոթը չի տաշիլ։

Չունիս փող, մտիր հող։

Չուրն իր ճամփէն կըգտնի։

Սառած օձն առաջ տաքացնողին կկծի։
Սարերի տեղ ձորերն են որոտում։
Սոխ ու հաց, սիրտը բաց։
Սուտը կը ոտնաւորի, բայց չէ երթալ։

Վիրեւ թքեմ՝ երեսս ա, նելքեւ թքեմ՝ միրուքս
ա։

Տուն քանդողի տունն Աստուած կքանդի:

Քնածն ու մեռածը մին ա:



